Ճանապարհային նշաններ և երթևեկության անվտանգություն

ցանկ

	Միջազգային կոնվենցիաներ ճանապարային երթևեկության անվտանգության հարցերի վերաբերյալ:	1
Թեմա 1	Ծանոթություն, առարկայի նպատակի և թեմատիկայի սահմանում,	
Թեմա 2	Վրաստանի օրենքը ճանապարհային երթևեկության անվտանգության մասին և նրանում կիրառված տերմինները:	
Թեմա 3	Պետական քաղաքականություն ճանապարհային երթևեկության ոլորտում: Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման պահանճները:	
Թեմա 4	Ճանապարհային նշանների և նրանց բնութագիրը. Նախազգուշացնող նշաններ	
Թեմա 5	Ճանապարհային նշանների և նրանց բնութագիրը.. Առավելության նշաններ, արգելող նշաններ	
Թեմա 6	Ճանապարհային նշանների և նրանց բնութագիրը. Թելադրող նշաններ	
Թեմա 7	Ճանապարհային նշանների և նրանց բնութագիրը.. Տեղեկատվական ցուցանշական նշաններ	
Թեմա 8	Ճանապարհային նշանների և նրանց բնութագիրը. Սպասարկման նշաններ, լրացուցիչ տեղեկատվական նշաններ (ցուցատխատակներ)	
Թեմա 9	Ճանապարհային գծանշումներ. Հորիզոնական գծանշումներ	
Թեմա 10	Ճանապարհային գծանշումներ – ուղղաձիգ գծանշումներ	
Թեմա 11	Ճանապարհային երթևեկության կանոները–երթևեկության ընդհանուր պարտականություններ: Տրանսպորտային միջոցների շահագործման ենթարկելը. Պաշտոնատար անձանց պարտականություններ. Տրանսպորտայն միջոցների վրա ամրացվող ճանաչման նշանները.	

Թեմա 12 Հատուկ ազդանշանների կիրառումը. Հետիոտնի և ուղևորի պարտականությունները:

Թեմա 13 Լուսացույցի և կարգավորողի ազդանանները: Վթարային ազդանշան:

Թեմա 14 Երթևեկության սկիզբը, մանեվրումը: տրասնպորտային միջոցների դասավորությունը երթևեկեի մասում: երթևեկության արագությունը:

Թեմա 15 Վազանցը: Հանդիպակացի կողանցումը: Տրսնպորտային միջոցի կանգառը և կայանումը:

Թեմա 16 Խաչմերուկի անցումը: Հետիոտնային անցումներ և երթուղային տրանսպորտային միջոցների կանգառ:Երթևեկություն երկաթուղային գծանցներով. Երթևեկություն ավտոմայրուղներով: Երթևեկություն բնակելի գոտիներում: Երթուղային տրանսպորտային միջոցների առավելությունը:

Թեմա 17 Արտաքին լուսային սարքերի և ձայնային ազդանշանների կիրառումը: Քարշակումը: Ուսումնական վարումը: Մարդկանց փոխադրումը: Բեռների փոխադրումը: Լրաուցիչ պահանջներ հեծանիվի, մոպեդի լծասայլաակի երթևեկության և անասունների քշման նկատմամբ:

Թեմա 18 Պատասխնատվություն Վրասանի ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման մասին օրենքի խախտման համար: Քաղվածք Վրաստանի վարչական իրավախախտումների օրենսգրքից – ճանապարհային երթևեկության կանոնների խախտումներ, որոնց համար ըստ Վրաստանի օրենսգրքի սահմանված է վարչական պատասխանատվություն:

Կարգապահության նպատակն է.

- Ունկնդիրը գիտակցի ճանապարհային երթևեկության անվտանգության ոլորտում միասնական միջազգային ստանդարտների անհրաժեշտության հարցը:
- Ունկնդիրը ծանոթանա միջազգային իրավական նորմերին:
- Ունկնդիրը սովորի ճանապարհային երթևեկության անվտանգության ոլորտում ազգային օրենսդրությունը:
- Ունկնդիրը ծանոթանա ճանապարհային երթևեկության խախտման դեպքերում Վրաստանի օրենդրությամբ սահմանված վարչական պատասխանատվության հարցերին:

Թեմա № 1
Միջազգային կոնվենցիաներ ճանապարհային երթևեկության անվտանգության հարցերի վերաբերյալ
ճանապարհային նշանների և ճանապարհային երթևեկության կանոնների ծագման պատմությունը

Դասական հասկացողությամբ կարելի է ասել, որ ճանապարհային նշանները մարդու կողմից հատուկ ստեղծված և ճանապարհի երկայնքով նրա եզրին տեղադրված առարկաներ են, որոնք ճանապարհից օգտվողներին տալիս են տեղեկություն նրանց համար ցանկալի ուղղության, բնակելի վայրերի, մինչև այդ վայրերը հասնելու մոտավոր հեռավորության մասին, ինչպես նաև ճամփորդության ժամանակ անհրաժեշտ և պետքական տեղեկություն: Եթե հաշվի առնենք այս բացատրությունը, բնական է՝ կառաջանա այսպիսի կարծիք, որ ճանապարհային նշանները հնարավոր է ծագել են ավտոմեքենայի ստեղծումից շատ ավելի առաջնային դարաշրջանում: Այս կարծիքը ճիշտ է, որը և հաստատվում է պատմական փաստերով: Մարդկության զարգացման հետ համապատասխան անհրաժեշտ եղավ որոշակի նշաններով միասնավորված մարդկանցից ձևակերպված առանձին խմբերի միջև կապի անհրաժեշտություն: Այս կապերից մի քաղաքակիրթ նշանակությունը փոխանակման այսինքն՝ առևտրի նպատակով իրականացվող ճամփորդությունները կլինեին, չնայած ճամփորդությունը կարող էր տեղի ունենալ տարբեր նպատակներով, ուխտագնացության, ճանապարհորդություն, իմացություն ճանաչողական ճանապարհորդություն և այն: Հարաբերությունների առաջին փուլում ուղևորները ցամաքի վրայով տեղափոխվելիս համապատասխանաբար օգտվում էին ավելի հեշտ, բնական խոչընդոտներից ազատ տարածություններից: Չնայած հետագայում պետության կազմավորման ձևավորումը, հասարակական հարաբերությունների բարելավումը հանգեցրեց անհրաժեշտության, որ ի օգուտ ճամփորդության համար շահավետ պայմանների ստեղծվեին արհեստականորեն կարգավորված, բնական խոչընդոտներից մաքրված ուղղություններ, այսինքն՝ ներպետական և միջպետական ճանապարհներ: Նշված ճանապարհներից կօգտվեին ինչպես նաև հետիոտնը - այնպես էլ ձիերով, թե սայլերով տեղափոխվողները: Հենց այս գործընթացն էլ զարգացրեց ճանապարհային մշակույթը: Երկարատև ճամփորդության մասնակից մարդկանց համար հանգստավայրերի առկայության անհրաժեշտություն ծագեց: Հետևաբար ստեղծվեցին տեղեկություն պարունակող առարկաներ, որոնք ներկայացնում էին հեռավորությունը թե ուղղությունը մատնանշող սարքեր մինչև ցանկալի օբյեկտ հասնելու համար:

Ամենահին ճանապարհային նշանները, որոնց մասին տեղեկությունը մինչև մեզ էլ է հասել, եղել են փուլային բաժանագծերը՝ թե հեռավորություն ցույց տալու և թե տեղեկություն ստանալու համար: Հռոմի ամբողջ կայսրությունում տեղադրված էին քարե սյուներ, որոնց վրա նշված էր տարածությունը մինչև Հռոմ: Միջնադարում խաչմերուկներում տարածված էր մուլտիուղղությունների նշաններ, որոնք տալիս էին տեղեկություն քաղաքների և ավանների գտնվելու վայրի ուղղությունների մասին:

Անտիկ դարաշրջանի „փուլային բաժանագծեր“

Առաջին ժամանակակից ծանրաբեռնվածության ճանապարհային նշանները, լայն օգտագործման համար մշակված են եղել բարձր և սովորական հեծանիվների համար 19-րդ դարի 70-ական թվականների վերջերին և 80-ական թվականների սկզբներին: Այս դարաշրջանում հեծանիվը, արագ, անաղմուկ և վարելու համար դժվար միջոց էր, բացի դրանից այդ ժամանակ շատ էր տարածված հեծանիվով անծանոթ ճանապարհներով հեռու տարածության վրա ճամփորդությունը: Այսպիսի ճանափարհորդությունների ամար այն ժամանակվա հեծանվորդական կազմակերպությունները (ինչպես պարզվում է նրանք գոյություն են ունեցել) սկսեցին ճանապարհային նշանների տեղադրում, որոնք զգուշացնում էին հեծնվորդներին ոչ միայն նպատակային օբիեկտի ուղղության և մինչև այս օբիեկտը հասնելու հեռավորության մասին, այլև վտանգավոր հատվածների և առանձնահատուկ ուղղաբերձ ժայռերի մասին: Այս անգամ արդեն այն դարաշրջանում ստեղծվեց նույնպես մի՝ այսօրվա դրությամբ լայն տարածում, ունեցող զգուշացնող ճանապարհային նշանների տիպը:

Տասնիներորդ դարի վերջերին աշխարհում հայտնվեցին առաջին ավտոմոբիլները. Ֆրանսիայում՝ 1893 թվականին, Անգլիայում 1896 թվականին և միևնույն ժամանակ Գերմանիայում: Այս երևույթը ճանապարհային նշանների զարգացում առաջացրեց: Ժամանակակից նշանների առաջին համակարգը մշակվեց 1895 թվականին իտալական տուրիստական ակումբի կողմից: 1900 թվականին տուրիստական միջազգային կազմակերպության լիգայի կոնգրեսը Փարիզում քննարկում էր ճանապարհային նշումների ստանդարտիզացիայի հարցերը: Բայց այդ ժամանակվա համար պետությունների միջև չէր ձևավորված միասնական կարծիք, թե ինչ պահանջների պետք է ենթարկվեր ճանապարհային երթևեկությունը: Եվրոպայի առանձին պետություններ և քաղաքներ ունեին սեփական կարծիք և հայեցողություն վտանգի աստիճանի հետ կապված, որոնք ստեղծում էին ինքնագնաց էկիպաժները“, նրանցից յուրաքանչյուրը փորձում էր ճանապարհային երթևեկության անվտանգության անհատական ստանդարտներ մշակել:

Կարլ Ֆրիդրիհ Բենց – նրա ստեղծած ավտոմեքենայի վրա benc-1

1903թվականին Բրիտանիայի թագավորությունը ընդունեց չորս ազգային ճանապարհային նշաններ, չնայած ճանապարհային նշանների հիմնական ձևերը ընդունվեցին 1908 թվականին Հռոմում անցկացված միջազգային ավտոմոբիլային կոնգրեսում, ճանապարհային երթևեկության իրավական ստանդարտների առանձնահատուկ տեսակետեր կային նաև Գեմանիայում:

20րդ դարի սկզբներին գործում էր օրենք, որի համաձայն ավտոմոբիլների երթևեկությունը թույլատրելի էր միայն սահմանված օրերին և տեղական կառավարման մարմինների կողմից սահմանված ճանապարհներով: Շվեցարիայում պարտադիր էր արագ երթևեկություն, որպեսզի արտադրվող ծուխը չանհանգստացներ հետիոտնին: Ռուսաստանում ավտոմեքենայի վարորդները պարտավոր էին ձիու սայլերի հետ երթևեկության ուղղիները հատելու ժամանակ կանգնեին, որպեսզի կենդանիները չխրտներին և այլն:

Վերջին 100 տարիների ընթացքում աշխարհում տրանսպորտային միջոցների քանակության և համապատասխանաբար տրանսպորտային տեղափոխումների աճի պատճառով աշխարհի շատ երկրներ մշակեցին պատկերազարդված ճանապարհային նշաններ կամ այլ կերպ պարզեցրին դրանք, ինչով և հեշտացրեցին միջազգային երթևեկությունը: Ժամանակակից եվրոպական ճանապարհային նշանների ճանաչման համար լեզվի չիմացությունը խոչընդոտ չի հանդիսանում, ինչը իր հերթին բարձրացնում է ճանապարհային երթևեկության անվտանգության ցուցանիշը: Այսպիսի նշաններում բառերի փոխարեն հիմնականում կիրառվում են խորհրդանշաններ և ուրվագծեր, որոնք հիմնված են միջազգային արձանագրությունների վրա: Առաջին անգամ այս տիպի միջպետական համաձայնություններ եվրոտարածքում առաջացան:

Առաջին միջազգային համաձայնությանը հանգել են Փարիզում 1909 թվականի հոկտեմբերի 11՝ կոնվենցիա «Ավտոմոբիլների տեղափոխման մասին»: Այն բաղկացած էր 15 հոդվածներից և

պարունակում էր այն պարտադիր պահանջների ցուցակը, որը կներկայացվի տրանսպորտային միջոցներին և վարորդներին: Այս կոնվենցիան իր բովանդակությամբ արդեն այն ժամանակ էր քննարկում ավտոմոբիլների կառուցվածքների հիմնախնդիրները և նրանց միջազգային երթևեկության թողնելու հարցը: Այն ժամանակվա համար առկա շրջանաձև չորս նախազգուշացնող նշանների ունիֆիկացում տեղի ունեցավ:

ա – անհարթ ճանապարհ

բ – կտրուկ շրջանցում

գ – երկաթուղային գծանց

դ – ճանապարհների հատում

Սույն կոնվենցիայում մշակվեց վարորդի միջազգային կարգի իրավունքի վկայականի ձև: Նշված վկայականով վարորդներին տրվում էր հնարավորություն վարել տրասնպորտային միջոցներ այլ երկրների տարածքներում: Այս ուղղությամբ հաջորդ քայլը նույնպես Փարիզում դրվեց, 1926 թվականի ապրիլի 24-ին ստորագրվեցին երկու նոր կոնվենցիաներ՝ միջազգային կոնվենցիա «ավտոմոբիլային երթևեկության մասին» և միջազգային կոնվենցիա «ճանապարհային երթևեկության մասին», որոնց նպատակը 1909 թվականի կոնվենցիայի ձևափոխումն ու լայնացումն էր: Ի տարբերություն հին համաձայնության, նոր կոնվենցիան մանրամասնորեն էր պարունակում այն պահանջները, որոնք կներկայացվեին միջազգային երթևեկությանը մասնակից ավտոմոբիլներին և ինչը ամենից կարևորն է՝ առկա շրջանաձև չորս նախազգուշացնող նշանների ձևափոխվեցին, նրանք դարձան եռանկյունի և ավելացան երկու նախազգուշացնող նշաններ՝ մասնավորապես «Կանգառը պարտադիր է « և «Երկաթուղային գծանց առանց ուղեփակոցի»:



Անհարթ ճանապարհ

Կտրուկ շրջադարձ

Ճանապարհներ ի հատում

Երկաթուղայի ն գծանց ուղեփակոցով

Երկաթուղայի ն գծանց առանց ուղեփակոցի

Կանգառը պարտադիր է

Պետք է նշել, որ 1926 թվականի կոնվենցիան լիարժեքորեն չի պարունակում հարցեր ճանապարհային նշանների և ազդանշանների մասին: Այս խնդրի լիարժեքության համար 1931 թվականի մարտի 30 ին Ժնևում համաձայնեցվեց կոնվենցիա «ճանապարհային ազդանշանների միասնականացման վերաբերյալ»,որը ճանապարհային նշանների քանակը մինչև 26-ի հասցրեց: Սկզբում տեղի ունեցավ նրանց խմբավորումը՝ նախազգուշացնող, թելադրող և ցուցանշական նշանների:

Եվրոպային զուգահեռ ճանապարհային երթևեկության անվտանգության միասնական միջազգային համակարգի աշխատանքը շարունակվում էր նաև երկրորդ կիսագնդում: 1943 թվականի դեկտեմբերին, Վաշինգտոնում հավաքված Ամերիկայի քանակակազմի պետությունների ներկայացուցիչները, պանամերիկյան միության հովանավորությամբ համաձայնեցրեցին կոնվենցիան «Ամերիկյան պետությունների միջև ավտոմոբիլային երթևեկության կանոնների մասին»: Այս տարածաշրջանային կոնվենցիան չէր քննարկում նշանների և ազդանշանների խնդիրները:

Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո 1947 թվին ստեղծվեց Միավորված Ազգերի Կազմակերպության եվրոպական տնտեսական հանձնաժողով, որի գլխավոր խնդիր էր ներկայանում ճանապարհային երթևեկության կազմակերպության միասնական միջազգային պահանջների և կանոնների մշակումը: Նշվեց, որ 1926 և 1931 թթ. կոնվենցիաները հնացված են, Միավորված Ազգերի Կազմակերպության տնտեսական և սոցիալական միությունը 1948 թվականի օգոստոսի 28 ին 147 (VII) բանաձևով ընդունեց որոշում, որպեսզի Ժնև հրավիրվեր Միավորված Ազգերի Կազմակեպության կոնֆերանս՝ «ճանապարհային և ավտոմոբիլային տրանսպորտի մասին» կոնվենցիայի համաձայնության համար: Այս կոնֆերանսի աշխատանքը հիմնավորված էր Միավորված Ազգերի Կազմակերպության եվրոպական տնտեսական հանձնաժողովի ներքին տրանսպորտի կոմիտեի կոնվենցիայի նախագիծը և 1943 թվի կոնվենցիան «Ամերիկյան պետությունների միջև ավտոմոբիլային երթևեկության կանոնների մասին», ի վերջո երկու տարվա աշխատանքի արդյունքում 1949 թվ. օգոստոսի 23ին ստորագրվեց միջազգային պայմանագիր «ճանապարհային եթևեկության մասին», և ընդունվեց «ճանապարհային նշանների և ազդանշանների մասին» հատուկ արձանագրություն: Նշված պայմանագրին չմիացան Հյուսիսային և Հարավային Ամերիկայի պետությունները: Այս ամենի գլխավոր պատճառն այն է, որ անգլոամերիկյան երկրները, ի տարբերություն եվրոպական երկրների, ճանապարհային նշաններում խորհրդանշանների փոխարեն օգտագործում էին գրություններ:

Հետագայում պետությունների միջև հարաբերությունների զարգացումը ինքնըստինքյան ծագեցրեց ճանապարհային երթևեկության անվտանգության ոլորտում միջազգային ստանդարտների բարելավման անրաժեշտություն: 1966 թ. հուլիսին Միավորված Ազգերի Կազմակերպության տնտեսական և սոցիալական միությունը որոշում ընդունեց, որ նշված թեմատիկայի հետ կապված ապագա կոնֆերանսի աշխատանքի համար նպատակահարմար էր երկու կոնվենցիաների նախագծի մշակում, որոնք կուղարկվեին պետություններին և հետաքրքրված կազմակերպություններին, որպեսզի նրանք կարողանային համապատասխան առաջարկներ և նկատողություններ ներկայացնել հանձնաժողովին: Նշված աշխատանքի արդյունքում աշխարհի երկրների ներկայացուցիչների կոնֆերանսը կայացավ 1968 թ. հոկտեմբերի 7-ին և ավարտվեց նոյեմբերի 8-ին: Այս հավաքույթը հայտնի է Վիեննայի կոնֆերանս անունով: Նրա աշխատանքին մասնակցեցին 71 երկրներ: Հինգ երկրներ լրացուցիչ հրավիրված էին դիտորդի կարգավիճակով: Կոնֆերանսի ժամանակ ստորագրվեցին երկու կարևորագույն պայմանագրեր՝ կոնվենցիա ճանապարհային երթևեկության մասին և կոնվենցիա ճանապարհային նշանների, . ազդանշանների մասին:

Վիեննայի կոնվենցիայի ընդունումից հետո՝ 1971 թ., մշակվեց եվրոպական համաձայնություն, որը լրացրեց և կոնկրետացրեց առանձին հոդվածներ: Օրինակ՝ որոշեց նախազգուշացնող նշանների եռանկյան (եվրոպական սիստեմ) և շեղանկյան (ամերիկյան սիստեմ) ձևերը: Վիեննայի 1968թ. կոնվենցիայի համաձայն՝ թույլատրվում էր արգելող նշանների վրա անկացվեր կարմիր գույնի թեք գիծ: 1971թ. ընդունված եվրոպական համաձայնությունը այսպիսի գծի անցկացումը պարտավորություն չհամարեց:

1973թ. Միավորված Ազգերի Կազմակերպության եվրոպական տնտեսական հանձնաժողովի կողմից ընդունվեց եվրոպական համաձայնության արձանագրություն՝ «ճանապարհային նշումների վերաբերյալ», որը լրացրեց և կոնկրետացրեց Վիեննայի «ճանապարհային նշանների և ազդանշանների վերաբերյալ » կոնենցիայի առանձին հոդվածները:

Նշված համաձայնությունը և արձանագրությունը, նախատեսելով Վիեննայի կոնվենցիան՝ «ճանապարհային երթևեկության վերաբերյալ», իրավական ուժի մեջ մտավ 1977 թ. մայիսի 21-ին, իսկ կոնվենցիան՝ «ճանապարհային նշանների և ազդանշանների վերաբերյալ»՝ 1978 թ. հունիսի 6-ին:

Վրաստանը՝ որպես անկախ պետություն, նշված միջազգային իրավական ակտերին միացավ 20 դարի 90-ական թվականներին:

Այսպիսի ճանապարհային երթևեկության անվտանգության և կազմակերպության ոլորտում կարևոր միջազգային ակտեր են ներկայացնում 1968թ. Վիեննայում համաձայնեցրած՝

- **Կոնվենցիա «ճանապարհային երթևեկության մասին»**
- **Կոնվենցիա «ճանապարհային նշանների և ազդանշանների մասին»,**

ինչպես նաև 1971 թ. եվրոպական համաձայնությունը՝ այս կոնվենցիայի ավելացումների մասին:

Երկրների կողմից նշված կոնվենցիաներին միանալը և նրանց հետագա վավերացումը պայմանավորված էր ձգտմամբ՝ ստեղծել ճանապարհային երթևեկության անվտանգության միասնական միջազգային համակարգ, որը կհեշտացներ ստորագրող երկրների միջև միջազգային ավտոմոբիլային տեղափոխումների կատարումը, կբարձրացներ ճանապարհներով երթևեկության անվտանգությունը: Նույն նպատակով երկրները վերցրեցին պարտավորվածություն՝ սեփական օրենսդրությունը միջազգայն համակարգերի հետ համաձայնության բերել:

Վերոհիշյալ ամենը նախատեսելով՝ համաձայն Վրաստանի սահմանադրության՝ այս միջազգային իրավական ակտերը ներկայացնում են ազգային օրենսդրության օրգանական մասը: Այս ամենից ելնելով՝ նրանց գիտելիքը պարտադիր է ճանապարհային երթևեկության անվտանգության ոլորտում աշխատող անձանց համար:.

«Ճանապարհային երթևեկության մասին» կոնվենցիան բաղկացած է վեց գլխից և 56 հոդվածներից, որոնց միանում են նաև յոթ կցումներ: Այդ իրականությունը նախատեսելով՝ այս կոնվենցիան ստորագրող բոլոր երկրները միաժամանակ չեն ստորագրել կոնվենցիան՝ «ճանապարհային նշանների և ազդանշնների մասին», նրանցում տրված մի քանի դրույթներ լիովին կամ էլ չնչին տարբերությամբ համընկնում են իրար:

Կոնվենցիայի ներածական մասում ասված է, որ ցանկանում են երթևեկության միատեսակ կանոնների ընդունումով միջազգային ճանապարհային երթևեկության հեշտացում և ճանապարհներին անվտանգության բարձրացում, պայմանագիրը կնքող կողմերը համաձայնության եկան կարևոր դրույթների շուրջ: Նշված հարցրը հոդվածների կարգով է գրված կոնվենցիայում:

Առաջին գլխում ձևակերպված են ընդհանուր դրույթներ.

- Կոնվենցիայում կիրառված տերմինների բացատրությունները
- Կոնվենցիայի յոթ կցումների ցուցակը, որոնք են՝
  - կցում 1. Ավտոմոբիլի և կցորդով միջազգային երթևեկության թույլտվության պարտավորությունից շեղում;
  - կցում 2. Միջազգային երթևեկության մեջ եղած ավտոմոբիլների և կցորդների գրանցումային համարը,

- կցում 3. Միջազգային երթևեկության մեջ եղած ավտոմոբիլների և կցորդների տարբերակիչ նշանները,
- կցում 4. Միջազգային երթևեկության մեջ եղած ավտոմոբիլների և կցորդների ճանաչման նշանները;
- կցում 5. Տեխնիկական պայմաններ ավտոմոբիլների և կցորդների վերաբերյալ
- կցում 6. Ազգային վարորդի վկայական
- կցում 7. Միջազգային վարորդի վկայական

➢ պայմանագիրը կնքող կողմերի պարտականությունները

Երկրորդ գլուխը վերաբերում է ճանապարհային երթևեկության կանոններին: Այս կանոնների համաձայն՝ ստորագրող կողմերը ձևակերպում են ազգային օրենսդրությունը: Ներքևում տրված է մի քանի ընդհանուր դրույթի ցուցակ: Այս դրույթներն են՝

➢ ճանապարհային նշանների և ազդանշանների նշանակությունը
➢ ճանապարհային երթևեկության կարգավորման իրավասու անձանց ազդանշանները
➢ միջազգային կանոններ, որոնք հաշվի պետք է առնեն ճանապարհային երթևեկության բոլոր մասնակիցները
➢ վարորդների պարտավորությունները
➢ պահանջներ անասունների նախիրը քշելիս
➢ երթևեկելի մասում դասավորվածությունը վերաբերվում է ավտոմեքենաներին, հեծանիվներին և այլն
➢ վազանց , երթևեկություն շարքերում
➢ հանդիպակացի կողանցում;
➢ արագություն և դիստանցիա,
➢ մանևրումի հետ կապված ընդհանուր նշումներ
➢ քաղաքային տրանսպորտի կանոնավոր գծերի վրա տեղափոխումներ կատարող տրասնպորտային միջոցների հետ կապված առանձնահատուկ նշումներ
➢ երթևեկության ուղղության փոխում
➢ խաչմերուկներ և ճանապարհի զիջման պարտականություն;
➢ նշումներ հետիոտնի համար;
➢ կանգառ և կայանում;
➢ ավտոմայրուղիներ և նմանատիպ ճանապարհներ;
➢ հեծանիվների, կախված շարժիչով հեծանիվների և մոտոցիկլների վարորդների հետ կապված առանձնահատուկ կանոններ
➢ համապատասխան նշանով նշված բնակելի գոտիներում կիրառվելիք հատուկ կանոններ համապատասխան նշանով նշված բնակելի գոտիներում
➢ հատուկ կանոններ ճանապարհային վերանորոգման կամ շինարարական աշխատանքներ կատարող անձանց նկատմամբ;
➢ ձայնային և լուսային ազդանշաններ;
➢ տրանսպորտային միջոցի բեռը;
➢ ուղևորների փոխադրում;
➢ լույսերի օգտագործման պայմանները և այլն:

Նշված պայմանները արտացոլված են ճանապարհային երթևեկության անվտանգության մասին ազգային ժողովրդական օրենսդրության մեջ:

Երրորդ գլխում սահմանված են ավտոմոբիլները և կցորդները միջազգային երթևեկության թողնելու պայմանները:

- գրանցում;
- գրանցման համարը;
- գրանցող պետության տարբերակիչ նշանը;
- ճանաչման նշանները;
- տեխնիկական պահանջները, տրասնպորտային միջոցների զննում և այլն:

Չորրորդ գլխում խոսվում է վարորդի վկայականների հանձման, նրանց օգտագործման ժամկետի և իրավասության դադարեցման մասին:

Հինգերորդ գլխում ձևակերպված է հեծանիվները և կախովի շարժիչով հեծանիվները միջազգային երթևեկության թողնելու պայմանները:

Վերջում՝ վեցերրորդ գլխում, ձևակերպված են եզրափակիչ դրույթները, ինչպիսիք են՝ կոնվենցիային միանալու և նրա վավերացման պայմանները, ստորագրող երկրի տարածքում նրա ուժի մեջ մտնելու, ինչպես նաև լուծարելու պայմանները և այլն:

Կոնվենցիայի վերջին հոդվածում ասված է, որ անգլերեն, իսպաներեն, չինարեն, ռուսերեն և ֆրանսերեն լեզուներով՝ որպես միակ կրկնօրինակ, կազմած այս կոնվենցիայի բնագիրը, դրա հետ միասին, բոլոր հինգն էլ, տեքստը հավասարաչափ նույնությամբ, պահպանելու համար հանձնվում է Միավորված Ազգերի Կազմակերպության գլխավոր քարտուղարին, որը համապատասխանաբար հաստատված պատճենները ուղարկում է այս կոնվենցիայում նշված բոլոր պետություններին:

Ինչը հաստատելու համար իրենց պետությունների կողմից այս գործին համապատասխան, իրավասու անձինք ստորագրեցին այս կոնվենցիան:

Կոնվենցիան կատարվել է Վիեննայում, 1968 թ. նոյեմբերի 8 ին:

Երկրորդ կարևոր միջազգային ակտը ճանապարհային երթևեկության անվտանգության բնագավառում «Ճանապարհային նշանների և ազդանշանների մասին» կոնվենցիան է: Այն կազմված է վեց գլուխներից և 48 հոդվածներից : Կոնվենցիայի ներածական մասում ասվում է, որ ընդունված միատեսակ ճանապարհային նշանները, ազդանշանները և ճանապարհային գծանշումները միջազգային ասպեքտում պարտադիր են միջազգային երթևեկության հեշտացման և ճանապարհներին երթևեկության անվտանգության բարձրացման համար: Պայմանագիրը կնքող կողմերը համաձայնեցին հետևյալի շուրջ.

կոնվենցիայի առաջին գլուխը սովորաբար տրամադրված է ընդհանուր դրույթներին:

- Այս դրույթում բերված տերմինների նշանակությունները (ինչպես վերևում նշեցինք, դրանց բացատրություններից մի քանիսը համընկնում է ճանապարհային երթևեկության մասին կոնվենցիայում կիրառված տերմինների բացատրություններին);
- Կովենցիայի երեք կցումները, որոնք կազմում են այս կոնվենցիայի անբաժան մասը: Առաջին կցումն ունի ենթակետեր՝
  - Կցում 1. Ճանապարհային նշաններ;
    - ✓ մաս 1: նախազգուշացնող նշաններ;
    - ✓ մաս 2: անցնելու առավելության իրավունքի նշաններ;
    - ✓ մաս 3: արգելող և սահմանափակող նշաններ;
    - ✓ մաս 4: թելադրող նշաններ;

- ✓ մաս 5: հատուկ թելադրանքի նշաններ;
- ✓ մաս 6: տեղեկատվական նշաններ, օբյեկտների և սպասարկման նշաններ;
- ✓ մաս 7: ուղղությունը թելադրող և տեղեկատվական նշաններ;
- ✓ մաս 8: լրացուցիչ նշաններ (ցուցատախտակներ);

- կցում 2. Ճանապարհային գծանշումներ;

➢ կցում 3. ազդանշանային նշանների, գծանշումների և ցուցատախտակների գունավոր պատկերները, որոնց մասին խոսվում է առաջին կցման մեջ:

➢ պայմանագիրը կնքող կողմերի պարտավորությունները ;

➢ պայմանագիրը կնքող կողմերի պարտականությունները ;

Կոնվենցիայի երկրորդ գլխում ձևակերպված է ճանապարհային նշանների և ազդանշանների դասակարգումը: Այս կոնվենցիայի համակարգում տարբերում են հետևյալ կարգի ազդանշանային նշաններ.

- Վտանգի մասին նախազգուշացնող նշաններ: Այս նշանների նպատակն է՝ ճանապարհից օգտվողներին զգուշացնել ճանապարհների վրա առկա վտանգների և նրանց բնույթի մասին:
- Հատուկ թեադրանքի նշաններ: Այս նշանների նպատակն է՝ ճանապարհից օգտվողներին տեղեկացնել պարտավորությունների, սահմանափակումների և հատուկ արգելքների մասին, որոնք նրանք պետք է պահպանեն: Դրանք բաժանվում են՝
  - ✓ Առավելության նշաններ;
  - ✓ Արգելող կամ սահմանափակող նշաններ;
  - ✓ Թելադրող նշաններ;
  - ✓ Հատուկ թելադրանքի նշաններ;
- Ցուցանշող նշաններ. Այս նշանների նպատակն է՝ ճանապարհից օգտվողներին տալ նրանց երթևեկության երթուղու վերաբերյալ անհրաժեշտ տեղեկություն կամ այլ օգտավետ մատնանշում, դրանք բաժանվում են.
  - ✓ Տեղեկատվական նշաններ, օբյեկտներ և սպասարկման նշաններ;
  - ✓ Ուղղությունը թելադրող և տեղեկատվական նշաններ;
    - ▪ նախապես ուղղությունը թելադրող;
    - ▪ ուղղությունը թելադրող;
    - ▪ ուղերթային մակնիշներ;
    - ▪ ցուցանշող անվանումներ;
    - ▪ հաստատող նշաններ;
    - ▪ թելադրող նշաններ;
  - ✓ լրացուցիչ ցուցատախտակներ:

Այն դեպքում, երբ սույն կոնվենցիան տալիս է ընտրության հնարավորություն մի քանի նշանների և գծանշումների միջև, պայմանագիրը կնքող կողմերը վերցնում են պարտավորություն՝ իրենց տարածքում օգտագործելու միայն մի նշան կամ մի գծանշում: Պայմանագիրը կնքող կողմերը նույն նշանը կամ գծանշումը ընտրելու համար պետք է համաձայնության հասնեն տարածաշրջանի մակարդակով:

Նշանները կանգնեցվում են այնպես, որ վարորդները, ում համար որ դրանք նախատեսված են, հեշտ և ժամանակին կարողանան նրանց ընկալել: Սովորաբար դրանք կանգնեցնում են երթևեկության ուղղության ճանապարհի համապատասխան կողմում, բայց դրանք կարող են տեղադրվել ճանապարհի երթևեկելի մասի վերևում: Ցանկացած նշան, տեղադրված երթևեկության ուղղության համապատասխան կողմում, պետք է կրկնված լինի երթևեկելի մասի

վերևում կամ ճանապարհի հանդիպակաց կողմում, եթե տեղական պայմաններն այնպիսին են, որ նշանը կարող է ժամանակին չնկատվի տրասնպորտային միջոցների վարորդների կողմից, որոնց համար էլ դրանք նախատեսված են:

Նրա համար, որ ճանապարհային նշանները, մասնավորապես նախազգուշացնող նշանները և հատուկ թելադրանքի նշանները, բացի կանգառը կամ կայանումը սահմանող նշաններից, բնակելի գոտիներում լուսավորված ճանապարհներին լավ տեսանելի լինեն և հեշտությամբ ըմբռնվեն, նպատակահարմար է դրանք լուսավորվեն կամ լինեն լուսանդրադարձիչ նյութով կամ սարքավորումներով, այն պայմանով, որ դրանք չեն շլացնի ճանապարհից օգտվողների աչքերը:

Դրանից հետո կոնվենցիայում առանձին - առանձին բնութագրված է ճանապարհային նշանների յուրաքանչյուր խումբը:

Երրորդ գլխում նկարագրված են լուսային ճանապարհային ազդանշանները, այսինքն՝ լուսացույցի ազդանշանները և յուրաքանչյուր գույնի նշանակությունն ու պահանջները ճանապարհային երթևեկության մասնակիցների համար:

Չորրորդ գլխում բնութագրված են ճանապարհային գծանշումները: Կոնվենցիայի համապատասխան՝ երթևեկելի մասում գծանշումները (ճանապարհային նշումները) օգտագործվում են այն դեպքում, երբ իրավասու մարմինները երթևեկության կարգավորման նպատակով անպայման փոխում են դրանք՝ ճանապարհից օգտվողների զգուշացման կամ կողմնորոշման համար: Այս նշումները կարող են կիրառվել ինչպես անկախորեն, այնպես էլ այլ ճանապարհային ազդանշանային նշանների հետ միասին, նրանց թելադրանքի ուժեղացման կամ ճշտման համար:

Հինգերորդ գլխում խոսվում է տարբեր ճանապարհային նշանների և ազդանշանների մասին, նրանց նշանակության և օգտագործման պայմանների մասին: Այդ ազդանշաններն են՝

- վերանորոգման աշխատանքների ազդանշան;
- նշում, որը պատրաստված է լուսանդրադարձիչ սարքավորումներով կամ լուսավորման օգնությամբ (ճանապարհի երթևեկելի մասում առկա թմբերի կամ անվտանգության կղզիների նշումներ կատարելը հանձնարարված է սպիտակ և դեղին լույսերով ու լուսանդրադարձիչ սարքավորումներով);
- երկաթուղային անցման մոտ, գնացքի մոտենալու, ուղեփակոցի կամ կիսաուղեփակոցի սպասվելիք փակման վերաբերյալ զգուշացման համար դրված է ազդանշան և այլն;

Վեցերորդ գլուխը տրամադրված է եզրափակիչ դրույթին: Նրանում քննարկված է կոնվենցիայի հետ միացման և նրա վավերացման պայմանները, ստորագրող երկրի տարածքում նրա ուժի մեջ մտնելու, ինչպես նաև լուծարման պայմանները և այլն: Կոնվենցիայում նշված է, որ նա բաց է բոլոր պետությունների ստորագրման համար՝ Նյու Յորքում Միավորված Ազգերի Կազմակերպության գլխավոր հաստատությունում մինչև 1969 թ. դեկտեմբերի 31-ը՝ Միավորված Ազգերի Կազմակերպության անդամների կամ ցանկացած մասնագիտացված կազմակերպության անդամների համար, ատոմային էներգիայի միջազգային գործակալության անդամների համար, միջազգային դատարանի կարգավիճակ ունեցող կողմերի համար և Միավորված Ազգերի Կազմակերպության գլխավոր համաժողովի կողմից հրավիրված ցանկացած այլ պետության համար դառնալ այս կոնվենցիայի կողմ:

Անգլերեն, իսպաներեն, չինարեն, ռուսերեն և ֆրանսերեն լեզուներով՝ որպես միակ կրկնօրինակ կազմած այս կոնվենցիայի բնագիր, դրա հետ միասին բոլոր, հիգն էլ, տեքստը

հավասարաչափ նույնությամբ, պահպանելու համար հանձնվում է Միավորված Ազգերի Կազմակերպության գլխավոր քարտուղարին, որը համապատասխանաբար հաստատված պատճեները ուղարկում է այս կոնվենցիայում նշված բոլոր պետություններին:

Կոնվենցիան կատարվել է Վիեննայում 1968 թ. նոյեմբերի 8 ին:

Թեմա № 2

Վրատանի օրենքը «ճանապարհային երթևեկության մասին» և նրանում օգտագործված տերմինները

ՄԻջազգային պայմնագրերում օգտագործված մի քանի տերմիններ, որոնք նշանակություն ունեն ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովության հարցերի համար

«ժողովրդական (ազգային) օրենսդրություն»-ը նշանակում է այս պայմանագիրը կնքող կողմերի տարածքում գործող ժողովրդական (ազգային) կամ տեղական կանոնների և կարգերի միասնություն:

1.**«միջազգային երթևեկության մեջ գտնվող» համարվում է** տրանսպորտային միջոցը, եթե նա՝

- պատկանում է ֆիզիկական կամ իրավական անձի, որն այս պետության մեջ չի ապրում;
- չի գրանցված այս պետության մեջ;
- այս պետության մեջ ժամանակավոր է գտնվում:

2. **«ճանապարհ»** *–տրանսպորտային միջոցի երթևեկության համար օգտագործվող կահավորված կամ հարմարեցված հողային գոտի կամ արհեստական կառույցի մակերես:*

Անավարտ կետերում ճանապարհի գլխավոր էլեմենտներն են.

ա – տեղավորման գիծ;
բ – ճանապարհի հարթություն;
գ – երթևեկելի մաս;
դ – ճանապարհաեզր;
ե – կյուվետներ:

Բնակելի գոտում ճանապարհի գխավոր էլեմենտներն են՝
ա – ճանապարհի լայնություն;
բ – երթևեկելի մաս;
գ – երթևեկության գիծ;
դ – բաժանող գիծ;
ե – մայթ;
վ –տրամվայի գիծ.

3.**«մերձակա տարածք»** – տրասպորտային միջոցների միջանցիկ երթևկության համար (բակ, կայանատեղեր, փակ տարածքներ, ավտոլցավորման կայաններ և այլն) չնախատեսված, ճանապարհին անմիջականորեն սահմանակից տարածք:

4.**«խաչմերուկներ»** –միևնույն մակարդակի վրա ճանապարհների հատման, միացման կամ անջատման տարածք; ներառյալ այդպիսի հատումով, միացումով և անջատումով առաջացած տարածքը:

5.**«գլխավոր ճանապարհ»** – 2,1 2,3,1 – 2,3,3 կամ 5,1 ճանապարհային նշաններով նշված ճանապարհը, որը անցման առավելության հնարավորություն է տալիս վարորդին ճանապարհը հատող երկրորդական ճանապարհի վրա երթևեկող տրանսպորտային միջոցի հետ համեմատած: Արհեստական ծածկույթով ճանապարհ է համարվում գլխավոր ճանապարհը գրունտային ճանապարհի հետ համեմատած: Ճանապարհամերձ տարածությունից դուրս եկող ճանապարհը համարվում է երկրորդական:

6.**«ավտոմոբիլային ճանապարհ»** – 5,3 տեղեկատվական ցուցանիշով նշված ճանապարհ, որը ապահովում է ավտոտրասպորտային միջոցների անվտանգ երթևեկություն:

7.**«ավտոմայրուղի»**– համապատասխան նշանով նշված ավտոտրասպորտային միջոցների երթևեկության համար սարքած ճանապարհ, որը հանդիպակաց երևեկության բաժանման համար ունի բաժանարար գոտի: Մի մակարդակի վրա հատում չունի ճանապարհի, եկաթգծի կամ տրամվայի գծի և հետիոտնային արահետի հետ:

8.**«երթուղային տրասնպորտային միջոց»**–ընդհանուր օգտագործման (ատոբուս, տրոլեյբուս, տրամվայ) տրանսպորտային միջոց, որը որոշված երթուղով տեղափոխում է ուղևորներին:

9.**«տրանսպորտային միջոցների կազմը»**–ընդհանուր առմամբ շարժվող, համակցված տրանսպորտային միջոցներ:

10. **«ավտոմոբիլ»** –ճանապարհով մարդկանց և բեռներ փոխադրելու համար օգտագործվող տրանսպորտային միջոց, քարշակման համար նախատեսված տրանսպորտային միջոց: Այս հասկացությունը իր մեջ ներառում է տրոլեյբուսները, այսինքն՝ էլէկտրահաղորդիչով միացված տրանսպորտային միջոցները:

11. **«ավտոմոբիլ»** – հասկացությունը իր մեջ չի ներառում այնպիսի տրանսպորտային միջոցներ, ինչպիսիք են գյուղատնտեսական տրակտորները:

12. **«թեթև կցորդ»** - ամեն տեսակի կցորդներ, որոնց թույլատրելի առավելագույն զանգվածը չի գերազանցում 750 կգ- (1650 ֆունտ).

13. **«կիսակցորդ»** – կցորդ, որը պատկանում է ավտոմոբիլին այն կերպ, որ նրա մի մասը հենվում է ատոմոբիլին, իսկ ավտոմոբիլը քաշում է կիսակցորդի և նրա բեռի զանգվածի կարևոր մասը:

14. **«վարորդ»** – տրանսպորտային միջոցը ղեկավարող անձ: Վարորդի հետ է հավասարեցվում նաև վարել սովորեցնողը, ինչպես նաև ճանապարհով բեռնակիր և հեծկան կենդանիներ և անասուններ քշող անձը:

15. **«կազմավորված հետիոտնային շարասյուն»** –մարդկանց խումբ, որը միաժամանակ նույն ուղղությամբ շարժվում է ճանապարհով:

16. **Հետիոտնին հավարասեցված անձ, որը տանում է** տմանկական, հիվանդի կամ հաշմանդամային սայլակի կամ ցանկացած այլ փոքր չափի տրանսորտային միջոցի առանց շարժիչի, հեծանիվի կամ կախովի շարժիչով հեծանիվ տանող անձ, ինչպես նաև հաշմանդամները, որոնք հաշմանդամային սայլակը շարժման մեջ են բերում ինքնուրույն կամ տեղաշարժվում են հետիոտնի արագությամբ:

Կանգառ-մինչև 5 րոպե ուղևորին նստելու, իջնելու և (կամ) տրանպոսրտային միջոցը բեռնելու, բեռնաթափելու համար անհրաժեշտ ժամանակով տրանսպորտային միջոցն անշարժ վիճակի բերելը:.

17. **հարկադրված կանգառ** – տրանսպորտային միջոցն անշարժ վիճակի բերելը՝ տեխնիկական անսարքության, վարորդի կամ ուղևորի առողջական վիճակի կամ ճանապարհին անսպասելիորեն ի հայտ եկած խոչընդոտի պատճառով:

18. **Կայանում՝** 5 րոպեից ավելի տրանսպորտային միջոցն անշարժ վիճակի բերելը, բացառությամբ տրանսպորտային միջոցը բեռնելու, բեռնաթափելու համար:

19. **Օրվա մութ ժամանակ՝** արեգակնային լուսավորության բացակայության ժամանակահատվածը:

20. **թույլատրելի առավելագույն զանգված՝** վարորդով, ուղևորներով և բեռով բեռնված, լրակազմված ու լիցքավորված տրանսպորտային միջոցի զանգված, որն արտադրող կազմակերպությունը սահմանել է որպես առավելագույն թույլատրելի: Նրա մեջ մտնում է՝ վառելիք, զովացուցիչ հեղուկ, պաշարային նյութերը, վարորդի աշխատանքային գործիքները, վարորդի և ուղևորների զանգվածը: Որպես մեկ ամբողջություն շարժվող տրանսպորտային միջոցների միակցված շարժակազմի թույլատրելի առավելագույն զանգված է համարվում դրա կազմում գտնվող բոլոր տրասնպորտային միջոցների թույլատրելի առավելագույն զանգվածների գումարը:

Վրաստանի օրենքը «Ճանապարհային երթևեկության անվտանգության մասին» ուժի մեջ է 1999 թ. հունիսի 16-ից: Այս օրենքը կարգավորում է Վրաստանի տարածքում ճանապարհային անվտանգության իրավական հիմքերը՝ երկրի սահմանադրության հետ համապատասխան:

Օրենքը սահմանում է ճանապարհային երթևեկության ապահովության բնագավառում Վրաստանի գործադիր իշխանության, տեղական ինքնակառավարման իրավասության, ինչպես նաև տրանսպորտային միջոցի շահագործումն իրականացնող իրավական անձանց և անհատ ձեռներեցների պարտականությունները, ճանապարհային երթևեկության անվտանգության հիմնական պահանջները ճանապարհների նախագծման, շինարարության, վերափոխման, վերանորոգման ժամանակ, տրանսպորտային միջոցի և նրա բաղադրիչ մասի, լրացուցիչ սարքավորումների, պաշարային մասերի և բաղադրող մասի գրանցման, վարորդի իրավունք ստանալը, պետական տեխնիկական զննման կանոնները և պայմանները:

Նրանում միավորված են ճանապարհային երթևեկության կանոնները, առանց որի իմացության անհնարին է տրանսպորտային միջոցի անվտանգ ղեկավարումը, և նրա իմացությունը անհրաժեշտ է ավտոմոբիլի և մոտոցիկլի յուրաքանչյուր սեփականատիրոջ համար: Սրա հետ կանոնների պահանջների անթերի կատարումը պարտադիր է ճանապարհային երթևեկության բոլոր մասնակիցների համար:

Այս օրենքը սահմանում է Վրաստանի տարածքում ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման իրավական հիմքը Վրաստանի սահմանադրության հետ համապատասխան:

Վրաստանի օրենքը ճանապարհային երթևեկության մասին
Գլուխ I
Ընդհանուր դրույթներ

հոդված 1. Օրենքում օգտագործված տերմինները

Այս օրենքում օգտագործված տերմինները ունեն հետևյալ նշանակությունը՝

ա) ավտոմայրուղի՝ 5.1 նշանով նշված ճանապարհ;

ա[1]) ավտոտրանսպորտային միջոց՝ շարժիչավոր տրանսպորտային միջոց կամ տրանսպորտային միջոցների զուգորդված կոմբինացիա, որը օգտագործվում է ճանապարհով մարդ և բեռ փոխադրելու համար: (28.04.2006. 2964)

ա) անբավարար տեսանելիություն՝ ճանապարհի տեսանելիությունը 300-ից պակաս տարածության վրա մառախուղի, անձրևի, ձյունաթափի ժամանակ և այլն;

բ) վազանցք՝ զբաղեցրած գոտուց դուրս գալու հետ կապված երթևեկող տրանսպորտային միջոցի վազանցում;

գ) բաժանարար գոտի ՝ ճանապարհի հարակից երթևեկելի մասերը բաժանող, կառուցվածքորեն և (կամ) համապատասխան գծանշումով առանձնացված տարր, որը նախատեսված չէ տրանսպորտային միոցների և հետիոտների երթևեկության կամ կանգառի համար;

ե) ճանապարհ ՝ առնվազն մեկ եթևեկելի մաս ունեցող, իսկ առկայության դեպքում նաև տրամվայի գծեր, մայթեր, կողնակներ և բաժանարար գոտիներ ներառող և տրանսպորտային միջոցների երթևեկության համար օգտագործվող կահավորված կամ հարմարեցված հողային գոտի կամ արհեստական կառույցի մակերես:

զ) ճանապարհի զիջում (խոչընդոտի չառաջացում)՝ ճանապարհային երթևեկության մասնակիցը չի սկսում կամ չի շարունակում երթևեկությունը, չի դիմում ոչ մի մանևրի, եթե նրա նկատմամբ երթևեկության առավելություն ունեցող այլ մասնակցի հարկադրում է փոխել երթևեկության ուղղությունը կամ արագությունը;

է) բնակավայր՝ կառուցապատ տարածք, որի ելքն ու մուտքը նշված են բնակավայրի ճանապարհային նշաններով 5.2.2–5.2.5;

ը) Կայանում՝ 5 րոպեից ավելի տրանսպորտային միջոցը նպատակադրվածորեն անշարժ վիճակի բերելը, բացառությամբ տրանսպորտային միջոցը բեռնելու, բեռնաթափելու համար;

թ) օրվա մութ ժամանակ՝ արեգակնային լուսավորության բացակայության ժամանակահատվածը;

ժ) հեծանիվ՝ առնվազն երկու կամ ավելի անիվ ունեցող դրա վրա գտնվող մարդու մկանային ուժով, մասնավորապես ոտնակի կամ բռնակի օգնությամբ շարժման մեջ դրվող տրանսպորտային միջոց, բացառությամբ հաշմանդամային սայլակի;

ի) հարկադրված կանգառ ՝տրանսպորտային միջոցն անշարժ վիճակի բերելը՝ տեխնիկական անսարքության, վարորդի կամ ուղևորի առողջական վիճակի կամ ճանապարհին անսպասելիորեն ի հայտ եկած խոչընդոտի պատճառով;

խ) կարգավորող՝ ճանապարհային ոստիկնության, զինվորական ավտոտեսչության աշխատակից, ճանապարհային շահագործման ծառայության աշխատող, երկաթգծի անցումային հերթապահ, որոնք ունեն համապատասխան ինքնության վկայական և անձնակազմի անդամությունը վկայող սարքավորումները (զգեստ կամ տարբերակիչ նշան, կարմիր ազդանշանով սկավառակ կամ լուսանդրադարձիչ, կարմիր լուսարձակ և այլն);

ծ) մեխանիկական տրանսպորտային միջոց՝ շարժիչով տրանսպորտային միջոց, բացառությամբ մոպեդի, ինչպես նաև բոլոր տեսակի տրակտոր և ինքնագնաց մեքենայի;

կ) մերձակա տարածք՝ տրասպորտային միջոցների միջանցիկ երթևկության համար (բակ, կայանատեղեր, փակ տարածքներ, ավտոլցավորման կայաններ և այլն) չնախատեսված, ճանապարհին անմիջականորեն սահմանակից տարածք

հ) կցորդ՝ շարժիչով չկահավորված տրանսպորտային միջոց, որը նախատեսված է մեխանիկական տրանսպորտային միջոցով շարժման մեջ դրվելու և դրա կազմում որպես մեկ ամբողջություն երթևեկելու համար;

հ[1]) բջջային կոմունիկացիայի միջոց՝ ցանկացած սարքավորում , որի միջոցով հնարավոր է անընդհատ հեռախոսային խոսակցություն երկու կամ երկուսից ավելի ֆիզիկական անձանց միջև կամ (և) տեքստային տեղեկատվության առաքում և ընդունում; (23.06.2003. 1747)

ձ) մոպեդ՝ մինչև 50 սմ^3 բանվորական ծավալի շարժիչով և մինչև 40 կմ/ժ առավելագույն արագությամբ երկանիվ կամ եռանիվ տրանսպորտային միջոց: Մոպեդին են հավասարեցվում նաև կախովի շարժիչով հեծանիվը և համարժեք տեխնիկական բնութագրեր ունեցող այլ տրանսպորտային միջոցը;

ղ) մոտոցիկլ՝ երկանիվ կցորդով կամ առանց կցորդի տրանսպորտային միջոց: Մոտոցիկլետին են հավասարեցվում եռանիվ կամ քառանիվ մեխանիկական տրանսպորտային միջոցները, որոնց զանգվածը կահավորված վիճակում չի գերազանցում 400 կգ-ը;

ճ) երթևեկության գոտի՝ երթևեկելի մասի գծանշված կամ չգծանշված երկայնական գոտի, որի լայնությունը բավարար է տրանսպորտային միջոցների մեկ շարքով երթևեկության համար;

մ) կազմակերպված տրանսպորտային շարասյուն՝ կապույտ կամ կապույտ և կարմիր գույնի փայլատակող միացրած լույսերով առաջատար տրանսպորտային միջոցով ուղեկցվող, երթևեկության միևնույն գոտում միմյանց հաջորդող, մշատական միացրած լուսարձակներով երթևեկող երեք կամ ավելի մեխանիկական տրանսպորտային միջոցներից կազմված խումբ;

յ) երկաթուղային գծանց՝ ճանապարհի նույն մակարդակի վրա երկաթուղու առանձնացված պաստառ ունեցող ուղիների հատումը;

ն) ճանապարհային երթևեկություն՝ ատոմոբիլային ճանապարհով տրանսպորտային միջոցով կամ նրա բացառությամբ մարդու և բեռի տեղափոխման ժամանակ առկա հարաբերությունները;

շ) ճանապարհային երթևեկության մասնակից՝ ճանապարհային երթևեկությանը անմիջականորեն մասնակցող անձ՝ վարորդ, ուղևոր և հետիոտն;

ո) ճանապարհային երթևեկության կազմակերպում՝ ճանապարհային երթևեկության կարգավորմանն ուղղված իրավական, տեխնիկական և կազմակերպչական համալիր միջոցառումներ,

ջ) ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովում՝ ճանապարհատրանսպորտային պատահարների կանխարգելմանը և դրանց հետևանքների ծանրության նվազեցմանն ուղղված գործունեություն;

չ) ճանապարհատրանսպորտային պատահար՝ ճանապարհով տրանսպորտայինմիջոցի շարժման ընթացքում և դրա մասնակցությամբ առաջացած դեպք, որի հետևանքով զոհվել կամ վիրավորվել են մարդիկ, կամ վնասվել են տրանսպորտային միջոցներ, բեռներ, կառույցներ;

պ) երթևեելի մաս՝ ճանապարհի տարր՝ նախատեսված ոչ ռելսագնաց տրանսպորտային միջոցների երթևեկության համար;

ջ) տրանսպորտային միջոցի ընդհանուր զանգված՝ բեռով, վարորդով և ուղևորներով լիցքավորած, լրակազմված իրավիճակում գտնվող տրանսպորտային միջոցի զանգված, որը սահմանել է արտադրող կազմակերպությունը;

ռ) մայթ՝ հետիոտնի տեղաշարժվելու համար նախատեսված երթևեկելի մասը հարող կամ նրանից որևէ եղանակով առանձնացված ճանապարհի տարր;

ս) առավելություն՝ վարորդի առավելությունը կամ իրավունքը երթևեկության այլ մասնակիցների նկատմամբ, երթևեկությունն առաջինը սկսելու նպատակադրված ուղղությամբ;

վ) հետիոտն՝ –տրանսորտային միջոցից դուրս՝ ճանապարհի վրա գտնվող անձ, բացառությամբ ճանապարհի վրա աշխատանքներ իրականացնող անձի: Հետիոտնին հավասարեցվում է առանց շարժիչի, հաշմանդամային սայլակով տեղաշարժվող հեծանիվ, մոպեդ, մոտոցիկլետ տանող կամ բեռնասայլակ, սահնակ, մանկասայլակ կամ հաշմանդամային սայլակ քաշող, հրող անձը;

տ) հետիոտնային անցում՝ –երթևեկելի մասի առանձնացված հատված, որը նախատեսված է հետիոտնի ճանապարհով անցնելու համար և նշված է 5.16.1, 5.16.2 կետերով կամ/և 1.14.1–1.14.3 գծանշումներով: (թե գծանշումներ չկան, հետիոտնային անցման լայնությունը սահմանվում է 5.16.1 և 5.16.2 նշանների միջև ընկած հեռավորությամբ:

ր) քարշակով շարժակազմ – շարժիչով տրանսպորտային միջոց, որը նախատեսված է շահագործման համար կիսակցորդի հետ միասին; (23.06.2006. 3395)

ց) ինքնագնացք – բեռնատար ավտրտրանսպորտաին միջոց կցորդի հետ միասին; (23.06.2006. 3395)

ց[1]) ավտոտրանսպորտային միջոցի ճանապարհի համար որակավորման ընթացիկ թեստավորում (քննություն)՝ (հետագայում – ճանապարհի համար որակավորման քննություն) – տեխնիկական գործառությունների և ընթացակարգերի համալրում, որի միջոցով պարբերաբար ստուգվում է ավտոտրանսպորտային միջոցի անվտանգության հիմնական տարրերի տեխնիկական վիճակը և վնասակար նյութերի բաղադրությունը (29.12.2006. 4221),

ց[2]) լծորդված ավտոբուս – բաժանմունքներից կազմված ավտոբուս: Այսպիսի ավտոբուսի բաժանմունքներում հնարավոր պետք է լինի ուղևորների անսահմանափակ տեղաշարժում: Այս բաժանմունքների միացումն ու անջատումը հնարավոր է միայն արտադրող կազմակերպության կողմից (23.06.2006. 3395)

ց[3]) կոնտեյներ – 1972 թ. „կոնտեյներների հետ կապված մաքսային կոնվենցիայով նախատեսված բացատրություն; (25.12.2009 2474)

ց[4]) ավտոփոխադրիչ – հատուկ ավտոտրանսպորտային միջոց, որը նախատեսված է ավտոմոբիլների և անիվներով թեթև տրակտորների տեղափոխման համար: (25.12.2009 2474)

Հոդված 2. Վրաստանի օրենսդրություն ճանապարհային երթևեկության անվտանգության մասին

Ճանապարհային երթևեկության անվատանգության մասին Վրաստանի օրենսդրությունը կազմված է Վրաստանի սահմանադրությունից, միջազգային պայմանագրերից և համաձայնագրերից, այս օրենքից և այլ նորմատիվ ակտերից:

Թեմա № 3
Պետական քաղաքականություն ճանապարհային երթևեկության անվտանգության բնագավառում:
Ճանապարհային երթևեկության անվտանգության պահանջները
Գլուխ II
Պետական քաղաքականություն ճանապարհային երթևեկության անվտանգության բնագավառում

Հոդված 3. Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովում

Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման միջոցներն են՝

- ավտոմոբիլային, վերգետնյա քաղաքային էլեկտրոտրանսպորտով և ճանապարհային տնտեսության գործունեության կարգավորում;
- ճանապարհային երթևեկության կազմավորում;
- ճանապարհային երթևեկության անվտանգության միջոցառումների նյութական և ֆինանսական ապահովում;
- անձի կողմից ճանապարհային երթևեկության անվտանգության կանոնների պահանջների և ուսման կարգավորում;
- ճանապարհային երթևեկության անվտանգության բժշկական ապահովման միջոցառումների համալրության մշակում;
- տրանսպորտային միջոցի, նրա հետ կապված մթերքների և ճանապարհային տնտեսության գործունեության հավաստագրում՝ «մթեքի և ծառայության հավաստագրման մասին» Վրաստանի օրենքով սահմանված կարգով,
- ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման հարցերի հետ կապված կանոնների, ստանդարտների, տեխնիկական նորմերի և ուրիշ նորմատիվ ակտերի մշակում, ինչպես նաև նրանց կատարման հարցում պետական վերահսկում և ստուգում:

Օրենքի -3րդ հոդվածում ձևակերպված են ճանապարհային անվտանգության ապահովման միջոցները: Տարբեր տեսակի տրանսպորտային միջոցների երթևեկության կարգավորումը նախատեսում է նրանց երթևկությունը առանց խոչընդոտների: Ասենք բոլոր տեսակի երթուղային միջոցները միաժամանակ չեն գտվում բնակելի վայրի մի քանի հատվածներում, որպեսզի տեղի չունենա ավտոմոբիլային ճանապարհների ծանրաբեռնում կամ էլ այն տարածքում, որտեղ ավտոմոբիլային ճանապարհների անցաթողումը ցածր է, հետևաբար բարձր է ավտոմոբիլային եերթևեկության ինտենսիվությունը: Այս հիմնախնդիրը կարելի է լուծել մեկ այլ միջոցի կիրառմամբ, եթե այն հնարավոր է, ասենք մետրոյի օգտագործմամբ: Շատ երկրներում այս նպատակով ակտիվորեն կիրառվում է տրամվայը, որը աշխատում է ճանապարհային երթևեկության հատուկ ռեժիմով: Օրինակ՝ պատկերացնենք ք. Թբիլիսիում պետական համալսարանի, ֆիլհարմոնիայի և Գմիրթամոեդանի երթուղային եռանկյունու մեջ տրանսպորտային միջոցների նույն ուղղությամբ երթևեկելու գրաֆիկը: Մի քանի քաղաքներում կարելի է օգտագործել զուգահեռ երթևեկության աղյուսակներ կամ դարձափոխային երթևեկություն:

Ճանապարհային երթևեկության կազմակերպման մեջ նախատեսվում է ճանապարհային երթևեկության կարգավորման տեխնիկական միջոցների էֆեկտիվ ընտրություն և կիրառում (լուսացույցեր, ճանապարհային նշաններ և գծանշումներ): Իհարկե այս բոլոր միջոցառումները

ֆինանսավորման կարիք ունեն: Երթևեկության կազմակերպման և վերահսկման ժամանակակից տեխնիկական միջոցները պատկանում են թանկարժեք միջոցներին թվին:

Առանձնահատուկ նշանակություն ունի ճանապարհային երթևեկության մասնակիցների գիտելիքների մակարդակի բարձրացումը, ճանապարհային երթևեկության կանոնների իմացությունը: Այս ուղղությամբ հնարավոր է ուսումնական ծրագրերի իրականացում:

Նշված հարցի կարգավորման անհրաժեշտ պայման է հանդիսանում ճիշտ և էֆեկտիվ իրավական բերկետների մշակում, որը պետք է հիմնվի ճանապարհային անվտանգության բնագավառում առկա վիճակագրական տվյալների լիարժեք անալիզին:

հոդված 4. Ճանապարհային երթևեկության անվտանգության ոլորտում Վրաստանի գործադիր իշխանության և տեղական ինքնակառավարման ու կառավարման մարմինների իրավասությունները:

Վրաստանի գործադիր իշխանության իրավասությունն է՝

- Մասնակցություն Վրաստանի տարածքում ճանապարհային անվտանգության ապահովման ոլորտում միասնական պետական քաղաքականության ձևավորման մեջ;
- Ճանապարհային երթևեկության անվատնգության ապահովման կամ այս օրենքով սահմանված կարգով իրավական հիմքի ստեղծում;
- Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման հարցերի շուրջ ստանդարտների, տեխնիկական նորմերի և ուրիշ նորմատիվ ակտերի միասնական համակարգի ստեղծում;
- Ճանապարհային երթևեկության անվատնգության ապահովման ոլորտի գործունեության վրա հսկողություն;
- Վրաստանի կողմից միջազգային պայմանագրերի և համաձայնագրերի իրականացում ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման ոլորտում:

Տեղական ինքնակառավարման և կառավարման մարմինները, Վրաստանի սահմանադրության հետ համապատասխան սեփական ձեռնհասության շրջանակներում անկախորեն լուծում են ճանապարհային երթևեկության անվատնգության ապահովման հարցերը:

Վրաստանի միջպետական ատոմոբիլային ճանապարհները պատկանում են այն տեղական ինքնակառավարման հրահանգման ոլորտին, որի վարչական սահմաններում են գտնվում դրանք: Նույն այս մարմիններն էլ իրավասու են՝ ճանապարհային երթևեկության անվտանգության հարցերով հետաքրքրված այլ տարածքային վարչական մարմինների հետ համաձայնեցնելով մշակել ճանապարհային երթևեկության կազմակերպման առանձնահատուկ պայմաններ:

Հոդված 5. Ճանապարհային երթևեկության անվտանգության իրավիճակի հիմնական ցուցանիշների պետական գրանցման կազմակերպում

- Վրաստանի տարածքում իրականացվում է ճանապարհային երթևեկության անվտանգության իրավիճակի ցուցանիշների պետական գրանցում: Դրանք են՝
  - Ճանապարհատրանսպորտային պատահար և դրանցում վնասված մարդիկ
  - Տրասնպորտային միջոցների և վարորդները;
  - Ճանապահային երթևեկության կանոնները խախտողները;
  - Ճանապահային երթևեկության վարչական իրավախախտումների և քրեական գործի հանցագործությունների թիվը;

  Ինչպես նաև ճանապարհային երթևեկության անվտանգության իրավիճակի և նրա անվտանգության գործունեությունն արտացոլող այլ ցուցանիշներ:

Օրենքով սահմանված խնդիրների լիարժեք և էֆեկտիվ կատարման համար անհրաժեշտ է ճանապարհային երթևեկության ոլորտում առկա իրավիճակի վիճակագրական հետազոտություն և նրա անալիզի հիման վրա էֆեկտիվ աշխատանքային պլանների մշակում և իրականացում: Այս ուղղությամբ ստեղծված են տարբեր կառավարական միջկառույցային խմբեր, որոնք ակտիվորեն համագործակցում են ճանապարհային երթևեկության անվտանգության ոլորտով հետաքրքրված բոլոր հասարակական ինստիտուտների հետ:

- Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման բնագավառում պետական գրանցման քաղաքականությունը և նրա իրագործումը հենվում են պետական գրանցումային համակարգին:

- Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման բնագավառում պետական գրանցումը վարելու, գրանցումային տեղեկանքներով օգտվելու, հաշվետվության տվյալների սեղծման կարգը սահմանվում է Վրաստանի օրեսնդրությամբ:

Գլուխ III
Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման ծրագրեր

Հոդված 6. Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման ծրագրեր

- պետական քաղաքականության անցկացման նպատակով Ճանապարհային երթևեկության անվտանգության ոլորտում ստեղծվում են պետական և տեղական ծրագրեր, որոնք նախատեսում են ճանապարհատրանսպորտային պատահարների քանակության և նրանցից ծագող վնասի նվազեցում:

- Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման պետական ծրագրերը հաստատում է Վրաստանի նախագահը կամ Վրաստանի խորհրդարանը:

- Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման պետական և տեղական ծրագրերը ֆինանսավորվում են համապատասխան բյուջեից:

Գլուխ IV
Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման պահանջները

Հոդված 7. Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման հիմնական պահանջները ճանապարհի նախագծման, շինարարության, վերանորոգման և նորոգման ժամանակ

- Վրաստանի տարածքում Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման նպատակով, ճանապարհի նախագծումը, շինարարությունը, վերանարոգումը և նորոգումը իրականացվում է Վրաստանի օրենսդրությամբ սահմանված կարգով:

- Կառուցված, վերանորոգված և նորոգված ճանապարհի շահագործման ընդունումը կատարվում է շինարարական նորմերի և կարգերի պահպանմամբ և Վրաստանի օրենսդրությամբ սահմանված կարգով:

- ճանապարհի, շինարարության, վերանարոգման և նորոգման որակի համար պատասխանատու է պատվիրատուն:

- Կառուցված, վերանորոգված և նորոգված ճանապարհը շահագործման ընդունելուց հետո նրա տեխնիկական դրության համար պատասխանատու է այս ճանապարհի սեփականատերը:

Հոդված 8. Ճանապարհով տրանսպորտային միջոցի երթևեկության սահմանափակում և դադարեցում

Ճանապարհով տրանսպորտային միջոցի երթևեկության սահմանափակում կամ ժամանակավոր դադարեցումը իրականացվում է՝

- Ավտոմոբիլային ճանապարհի անսարքության կամ սահմանափակ տեսանելիության պայմաններում;
- Ճանապարհային երթևեկության անվտանգության և մարդու կյանքի, առողջության և գույքի պահպանման նպատակով,
- Գործադիր իշխանության և տեղական ինքնակառավարման ու կառավարման համապատասխան մարմինների կողմից, նրանց իրավասության շրջանակներում;
- Առանձին օպերատիվ-հետախուզական գործողությունների անցկացման նպատակով, Վրաստանի ներքին գործերի նախարարի հրամանով;
- Անհրաժեշտության դեպքում անհետաձգելի օպերատիվ-հետախուզական միջոցառումների անցկացման ժամանակ, Վրաստանի քրեական դատավարության օենսգրքով սահմանված կարգով:

Առանձին օպերատիվ-հետախուզական և հետաքննական գործողությունների անցկացման ժամանակ, պահանջի դեպքում տրանսպորտային միջոցի վարորդը պարտավոր է պարետային ոստիկանին նետկայացնել միայն ինքնությունն հաստատող փաստաթուղթ:

Հասարակական կարգուկանոնի և անվտանգության ապահովման նպատակով երբեմն անհրաժեշտ է դառնում ավտոմոբիլային ճանապարհների առանձին մասերում երթևեկության սահմանափակում: Օրենքում ուղղակի կերպով գրված է այս սահամանափակման իրավասու մարմինների և նրանց կիրառման հիմունքների մասին:

Հոդված 9. Տրանսպորտային միջոցի, նրա բաղադրիչ մասերի, լրացուցիչ սարքավորումների, պաշարային մասերի և բաղադրիչների գրանցում

- Վրաստանի տարածքում տրանսպորտային միջոցը, կցորդը, համարակալված մեքենայի հանգույցը ենթակա են գրանցման:

- Նշված գրանցումը իրականացնում է Հանրային Իրավունքի Իրավաբանական Անձ՝ Վրաստանի Ներքին Գործերի Նախարարության Ծառայության Գործակալությունը:

- Նոր պատրաստված ինքնաշեն կամ փոփոխված կառույցով , կամ ագրեգատներով և հանգույցներով հավաքած, լրացուցիչ սարքավորումներով նոր կահավորված տրանսպորտային միջոցի գրանցումը բացառված նրա երթևեկության անվտանգության ապահովման պահանջների հետ համապատասխան հավաստիացնող փաստաթղթի արգելված է:

Հոդված 10. Տրաանսպորտային միջոցի շահագործման ժամանակ ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման հիմնական պահանջները՝

- ճանապարհային երթևեկությանը մասնակից տրանսպորտային միջոցի տեխնիկական վիճակը պետք է ապահովի ճանաարհային երթևեկության անվտանգությունը:
- ճանապարհային երթևեկությանը մասնակից տրանսպորտային միջոցի տեխնիկական դրության համար պատասխանատու է՝ տրանսպորտային միջոցի սեփականատերը կամ այն անձը, որը իրականացնում է տրանսպորտային միջոցի շահագործումը:

Նշված հոդվածում խոսվում է անվտանգության տիպօրինակի մասին, որը կայացվում է ձեռնհաս վարչական մարմինների կողմից: Տրանսպորտային միջոցները պետք է բավարարեն դրանք: Որպես օրինակ կարելի է բերել դեկի մեխանիզմի սարքին լինելը, անձրևային եղանակին ապակիների մաքրիչների սարքին լինելը, օրվա և գիշերվա մութ ժամանակին գաբարիտային լուսարձակների սարքին լինելը, արգելակային համակարգի սարքին լինելը և այլն: Նշված պահանջները չպաշտպանելու համար Վրաստանի օրենսդրությունը պատասխանատվություն է ստանձնում տրանսպորտային միջոցի շահագործումն իրականացնող անձի նկատմամբ:

Հոդված 11. ճանապարհի որակավորման քննություն (29.12.2006. 4221)

Վրաստանի տարածքում շահագործման մեջ առկա և սահմանված կարգով գրանցված ավտոտրասնպորտային միջոցը ենթակա է ճանապարհի որակավորման քննության ակրեդիտացիայի միասնական ազգային մարմնի՝ ակրեդիտացիայի կենտրոնի կողմից ակրեդիտացված քննության (հետագայում – թեստավորման կենտրոն):

ճանապարհի որակավորման քննություն կարելի է անցնել ցանկացած թեստավորման կենտրոնում՝ հաշվի չառնելով ավտոտրանսպորտային միջոցի գրանցման տեղը կամ անձի իրավաբանական հասցեն:

Թեստավորման կենտրոնին առաջադրված պահանջները սահմանվում են ակրեդիտացիայի միասնական ազգային մարմին՝ ակրեդիտացիայի կենտրոնի կողմից:

Ավտոտրանսպորտային միջոցներին ներակայացված տեխնիկական պահանջները (որոնց համապատասխանության կայացման նպատակով էլ անցկացվում է Ճանապարհի որակավորման քննություն), թեստավորման ցուցանակի և պատրաստման ձևերը, ինչպես նաև տարբեր կարգի ավտատրանսպորտային միջոցների թեստավորման պարբերականությունը՝ սահմանվում է Վրաստանի տնտեսության և կայուն զարգացման նախարարության նորմատիվ ակտով:

Վրաստանի տնտեսության և կայուն զարգացման նախարարության համակարգի մեջ մտնող հանրային իրավունքի իրավաբանական անձ՝ ցամաքային տրանսպորտի գործակալությունը թեստավորման կենտրոնի գրավոր պահանջների հիման վրա ապահովում է՝ Ճանապարհի որակավորման քննությունն անցնելը հավաստիացնող ցուցանակի պատրաստելն ու թեսթավորման կենտրոնին հանձնելը: Պահանջի մեջ պետք է նշվի ցուցանակի քանակը և պետք է ավելացվի ակրեդիտացիան հաստատող փաստաթուղթը:

Ավտոտրանսպորտային միջոցի Ճանապարհի որակավորման քննությունը հանձնելու հավաստիացնող ցուցանակը տալիս է թեստավորման կենտոնը:

Վրաստանի տարածքում շահագործման մեջ առկա և սահմանված կարգով գրանցված ավտոտրանսպորտային միջոցի Ճանապարհի որակավորման քննություն չի անցկացվի, եթե նրա սեփականատերը Վրաստանի օրենսդրությամբ սահմանված ճանապարհային երթևեկության կանոնների խախտման համար ենթարկվել է վարչական պատասխանատվության և պատժի կարգով տուգանվել է և չի վճարել այն սահմանված կարգի համաձայն:

Թեստավորման կենտրոնի համար այս հոդվածի 7-րդ կետով սահմանված իրավախատման մասին տեղեկության տրամադրումն ապահովում է Վրաստանի Ներքին Գործերի Նախարարության պարետային ոստիկանությունը:

Թեստավորման կենտրոնը մինչև ամեն ամսվա 10-ը պարտավոր է՝ Վրաստանի Ներքին Գործերի Նախարարության պարետային ոստիկանությանը ներկայացնել անցած ամսվա ընթացքում թեստավորված ավտոտրանսպորտային միջոցների ցուցակը, ըստ Վրաստանի Ներքին Գործերի Նախարարության կողմից սահմանված կարգի:

Հոդված 12. Ավտոտրանսպորտային միջոցի շահագործման արգելում (28.04.2006. 2964)

Ճանապարհային երթևեկության անվտանգության պահպանման նպատակով արգելվում է՝

- Տեխնիկորեն անսարքին ավտոտրանսպորտային միջոցի շահագործում;
- Ավտոտրանսպորտային միջոցի ապակիների մուգացում առանց Վրաստանի Ներքին Գործերի Նախարարության Պարետային Ոստիկանության համաձայնության:

Ավտոտրանսպորտային միջոցների ապակիների մուգացման կարգը և այն ավտոտրանսպորտային միջոցների ցուցակը, որոնց համար պարտադիր չէ Վրաստանի Ներքին Գործերի Նախարարության Պարետային Ոստիկանության համաձայնությունը, հաստատում է Վրաստանի Ներքին Գործերի Նախարարը:

Նշված հոդվածով սահմանված պահանջների իրականացման և նրա հիման վրա Վրաստանի Ներքին Գործերի նախարարը 2010 թվականի հոկտեմբերի 29-ին արձակեց №917 հրամանը՝ „ավտատրանսպորտային միջոցների ապակիների մուգացման կանոնների և այն տրանսպորտային միջոցների ցուցակի հաստատման մասին, որոնց համար պարտադիր չէ Վրաստանի Ներքին Գործերի Պարետային Ոստիկանության համաձայնությունը: Հրամանի համաձայն իրավասու մարմնի կողմից տրանսպորտային միջոցների մուգացված ապակիներ կիրառելու համաձայնությունը տրվում է հատուկ ծառայություններին և այն պաշտոնատար անձանց, որոնց պաշտպանումը ապահովում է պետությունը (այստեղ կոնկրետացված չէ ոչ ծառայության և ոչ սեփականություն հանդիսացող ավտոմեքենաները: Օրենքի առջև հավասարության սկզբունքը մեզ հնարավորություն է տալիս ենթադրելու, որ հրամանը վերաբերվում է ծառայության ավտոմեքենաներին):

Հոդված 13. Տրասնպորտային միջոցների շահագործումն իրականացնող ֆիզիկական անձանց և անհատ ձեռներեցների պարտականությունները:

Վրաստանի տարածքում տրասնպորտային միջոցների շահագործումն իրականացնող իրավական անձինք և անհատ ձեռներեցները պարտավոր են՝

- Պաշտպանել Վրաստանի սահմանադրությամբ սահմանված կարգով վարորդի աշխատանքի և հանգստի օրակարգը;
- Առողջապահության մարմինների աշխատակիցների հետ միասին ապահովել վարորդի նախաերթական բժշկական ստուգում (բացառությամբ կանոնավոր տեղափոխման և տեղական քաղաքային կանոնավոր երթուղային տեղափոխման դեպքերի), ինչպես նաև իրականացնել ճանապարհատրանսպորտային պատահարների դեպքում վնասվածների համար վարորդի միջոցով առաջին բժշկական օգնություն ցուցաբերելու ունակությունների ձեռքբերման միջոցառումների անցկացում:
- Ապահովել տրանսպորտային միջոցների տեխնիկական վիճակի համապատասխանություն ճանապարհային երթևեկության կանոնների պահանջների հետ, թույլ չտալ անսարքին տրանսպորտային միջոցների շահագործումը:

Վրաստանի վարչական իրավախախտումների օրենսգրքի համաձայն՝ իրավական դեմքին պատկանող այն տրասնպորտային միջոցը, որը ենթակա է ճանապարհի որակավորման քննության՝ պարտադիր թեստավորման ացկացման, առանց այս միջոցառման կատարման տրանսպորտային միջոցը երթևեկելի գոտով վարելու համար իրավական անձը կենթարկվի վարչական պատասխանատվության այն պաշտոնատար անձի կողմից, որը պարտավոր է վերահսկել նշված հարցերը:

Հոդված 14. Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման պահանջները

- Վրաստանի ճանապարհներով տրանսպորտային միջոցների երթևեկությունը սահմանված է աջ կողմով:
- Ճանապարհային երթևեկության կազմակերպման հետ կապված գործողությունները իրականացվում են տեխնիկական միջոցների կոմպլեքսավոր կերպով օգտագործման

հիման վրա, որոնք կարգորոշված են գործող պետական չափորոշիչներով և նախատեսված են ճանապարհային երթևեկության կազմակերպման նախագծերով և աղյուսակներով:

- Ճանապարհային անվտանգության ապահովման նվազեցման հաշվին արգելվում է՝ ճանապարհային երթևեկության կազմակերպման մեջ փոփոխությունների մտցնում, անցաթողման ունակության մեծացման կամ այլ նպատակով:

Հոդված 15. Ճանապարհային երթևեկության մասնակցի ընդհանուր իրավունքները և պարտականությունները

Վրաստանի ճանապարհներով անձի անվտանգ պայմաններում երթևեկության իրավունքը երաշխավորված է պետության կողմից և ապահովված է այս օրենքով:

Ճանապարհային երթևեկության մասնակիցների կողմից իրենց իրավունքների իրականացումները չպետք է սահմանափակի կամ խախտի ճանապարհային երթևեկության այլ մասնակցի իրավունքները:

Ճանապահային երթևեկության մասնակիցը իրավունք ունի Վրաստանի գործադիր իշխանության մարմիններից և հանրային աշխատակիցներից ստանալ՝

- Տեղեկություն ճանապարհային երթևեկության անվտանգության պայմանների մասին;
- Տեղեկություն այս օրենքի 8-րդ հոդվածում նշված ճանապարհային երթևեկության սահմանափակության կամ դադարեցման պատճառների մասին;
- Տեղեկություն մթերքի և ծառայության որակի մասին, որը կապված է ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման հետ;
- Ճանպարհատրանսպորտային պատահարի ժամանակ առաջին բժշկական և այլ տիպի օգնություն:

Ճանապարհային երթևեկության մասնակիցը այս օրենքի սահմանված կարգի համաձայն ազատորեն և առանց խոչընդոտների տեղաշարժվում է ճանապարհով:

Ճանապարհային երթևեկության մասնակիցը իրավունք ունի Վրաստանի կանոնադրությամբ սահմանված կարգով բողոքարկել ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման բնագավառում իրավասու պաշտոնատար անձանց գործողությունները:

Հոդված 16. Տրանսպորտային միջոցներ վարելու իրավունք ստանալու կարգը և պայմանները

Վրաստանի տրանսպորտային միջոցներ վարելու իրավունք ստանալու կարգը և պայմանները սահմանվում են օրենսդրությամբ:

Տրանսպորտային միջոցներ վարելու իրավունք ստանալու կարգը սահմանված է ներքին գործերի նախարարի 2007 թվականի օգոստոսի 10-ի №1098 հրամանով՝ մեխանիկական տրանսպորտային միջոցներ վարելու իրավունք ընձեռելու և վարորդի վկայական տալու հաստատման մասին:

հոդված 17. Մեխանիկական տրանսպորտային միջոցներ վարելու իրավունքի ընձեռնման համար անհրաժեշտ պահանջներ:

Մեխանիկական տրանսպորտային միջոցներ վարելու իրավունքի ընձեռման համար անհրաժեշտ է վարելու իրավունք ստանալու համար քննության հանձնել, բացառությամբ Վրաստանի օրենսդրությամբ սահմանված դեպքերի:

Մեխանիկական տրանսպորտային միջոցներ վարելու իրավունք ստանալու համար քննության կթողնվեն օրենսդրությամբ սամանված որոշակի տարիքի հասած այն անձիք, ովքեր անցել են համապասախան պատրաստում վարորդների պատրաստման ուսումնական հաստատությունում:

„A“ կամ/և „B“ կարգի տրանսպորտային միջոցներ վարելու իրավունք ստանալու համար քննությանը կարող են մասնակցել անկախորեն պատրաստված 18 տարին լրացած անձիք:

Հոդված 17[1]. 17 տարին լրացած անձին վարելու իրավունք ընձեռելու պայմաններն ու դադարեցման (չեղյալ համարելու) հիմունքները:

1. Վրաստանի օրենսդրությամբ սահմանված „A“ կամ/և „B“ կարգի տրանսպորտային միջոցներ վարելու իրավունք ստանալու համար քննությանը կարող է մասնակցել 17 տարին լրացած անձը: Քննությունը բարեհաջող հանձնելու դեքում 17 տարին լրացած վարորդին ընձեռվում է „A“ կամ/և „B“ կարգի տրանսպորտային միջոցներ վարելու իրավունք (Վրաստանի օրենսդրությամբ սահմանված սահմանափակությամբ) և հանձնվում է վարելու իրավունքը հաստատող վարորդական վկայական, որը գործում է Վրաստանի տարածքում:

2. Վրաստանի օրենսդրությամբ սահմանված „A“ կամ/և „B“ կարգի տրանսպորտային միջոցներ վարելու իրավունք ստանալու համար քննությանը 17 տարին լրացած անձին թողնելու համար պահանջվում է ծնողներից մեկի կամ խնամակալի գրավոր համաձայնությունը:

3. Այս հոդվածի առաջին կետով սահմանված կարգով ընձեռած „A“ կամ/և „B“ կարգի տրանսպորտային միջոցներ վարելու իրավունքը դադարեցվում է (չեղյալ է համարվում)՝

ա) անձի 18 տարին լրանալու օրվանից 30-րդ օրացույցային օրվա ժամը 24-ին;

բ) այս կետի „ա“ ենթակետով սահմանված ժամկետում անձի կողմից „A“ կամ/և „B“ կարգի տրանսպորտային միջոցներ վարելու իրավունքի անժամկետ (բացառությամբ սահամանափակումների) ընձեռելու պահանջի դեպքում;

գ) այս կետի „ա“ և „բ“ ենթակետերով մինչև սահմանված հանգամանքներին հասնելը անձի համար Վրաստանի քրեական օրենսգրքով, Վրաստանի վարչական իրավախախտումների օրենսգրքով կամ «թմրանյութային հանցագործության դեմ պայքարի մասին» Վրաստանի օրենքով սահմանված կարգով վարելու իրավունքի վկայականից զրկելու դեպքում, զրկելու ժամկետն անցնելու պահից;

դ) այս օրենքի 19-րդ հոդվածի 2-րդ կետով սահմանած հիմքերից մեկով վարելու իրավունքի վկայականի դադարեցման (չեղյալ համարման) դեպքում :

4. անձին, որին ըստ այս հոդվածի առաջին կետով սահմանված կարգով ընձեռել են „A“ կամ/և „B“ կարգի տրանսպորտային միջոցներ վարելու իրավունք, արգելվում է՝

ա) ուղևորների տեղափոխում երթուղային տրանսպորտային միջոցներով, տաքսիներով կամ/և եկամուտ (շահ) ստանալու նպատակով;

բ) աշխատանքային հարաբերությունների հիման վրա վարորդի կարգավիճակով աշխատել:

5. անձի, որին 17 տարեկան հասակում ընձեռել են վարելու իրավունք, „A“ կամ/և „B“ կարգի տրանսպորտային միջոցներ վարելու իրավունք ստանալու համար քննությանը (թեորիայի և գործնական քննությանը) ստացած դրական գնահատումը իրավական ուժը կորցնում է՝

ա) այս հոդվածի 3-րդ կետի „գ“ ենթակետով սահմանված վարելու իրավունքի դադարեցման (չեղյալ համարելու) հիմքի առաջացման րոպեից;
բ) անհապաղ, եթե այս հոդվածի 3-րդ կետի „ա“ ենթակետով սահմանված վարելու իրավունքի դադարեցման պահից (չեղյալ համարելու), բացառությամբ ոչ ավելի ուշ վարելու իրավունքի անժամկետ (բացառությամբ սահամանափակումների) ընձեռման,
բ.ա) անձը պատժվել է վարչական պատժամիջոցով Վրաստանի վարչական իրավախախտումների օրենսգրքի 116-րդ, 117-րդ կամ 123-րդ հոդվածներով սահմանված որևէ մեկ իրավախախտման համար;
բ.բ) անձին իրավազրկել են վարելու իրավունքից «թմրանյութային հանցագործության դեմ պայքարի մասին» Վրաստանի օրենքով սահմանված կարգով;
գ) Վրաստանի օրենսդրությամբ սահմանված այլ դեպքերում:

6. անձը, որին ընձեռել են այս հոդվածի առաջին կետով սահմանված իրավունք, 18 տարին լրանալուց հետո „A“ կամ/և „B“ կարգի տրանսպորտային միջոցներ վարելու իրավունքի ընձեռումը 17 տարեկան հասակում բարեհաջող կերպով վարելու իրավունքի քննությունը հանձնելու հիման վրա, եթե պահանջարկ ներկայացնելու պահին առկա չեն այս հոդվածի 5-րդ կետով սահմանված հանգամանքներ:

7. անձը, որն այս հոդվածի առաջին կետով սահմանված կարգով հանձնված տրանսպորտային միջոցների վարելու իրավունքից զրկվել է Վրաստանի քրեական օրենսգրքով, Վրաստանի վարչական իրավախախտումների օրենսգրքով կամ «թմրանյութային հանցագործության դեմ պայքարի մասին» Վրաստանի օրենքով սահմանված կարգով, վարելու իրավունքի անժամկետ (բացառությամբ սահմանափակումների) ընդունելության քննությանը կմասնակցի 18 տարին լրացած, վարելու իրավունքի զրկման ժամկետը լրանալուց հետո:

8. Մեխանիկական տրանսպորտային միջոցներ վարելու իրավունքի ընձեռումը իարականացնում է հանրային իրավունքի իրավաբանական անձ՝ Վրաստանի Ներքին Գործերի Նախարարության Ծառայության Գործակալությունը:

9. Մեխանիկական տրանսպորտային միջոցներ վարելու իրավունքն ունեցող անձին Վրաստանի Ներքին Գործերի Նախարարության Ծառայության Գործակալությունը Վրաստանի օրենսդրությամբ սահմանված կարգով տալիս է համապատասխան կարգի տրանսպորտային միջոցներ վարելու վկայական, տրակտոր վարելու վկայական և վարելու միջազգային վկայական:

10. Մեխանիկական տրանսպորտային միջոցներ վարելու իրավունքի ընձեռման, զրկման կամ դադրեցման (չեղյալ համարման) վարելու իրավունքի վերականգման, ինչպես նաև վարելու վկայականի, տրակտոր վարելու վկայականի և վարելու միջազգային իրավունքի ընձեռման, վերականգնման և չեղյալ համարման կարգերը սահմանվում են Վրաստանի ներքին գործերի նախարարի հրամանով:

11. Այս հոդվածի 4-րդ կետով սահմանված հանգամանքների առկա լինելու դեպքում անձը համարվում է վարելու իրավունք չունեցող:

Հոդված 18. Տրասնպորտային միջոցներ վարելու իրավունքի վկայական:

Տրասնպորտային միջոցներ վարելու իրավունքը հաստատվում է վկայականով, որը համապատասխանում է միջազգային նորմերի պահանջներին:

Հոդված 19. Մեխանիկական տրասնպորտային միջոցներ վարելու վկայականի իրավունքի կանգնեցման և դադարեցման (չեղյալ համարման) հիմունքները:

1. Մեխանիկական տրասնպորտային միջոցներ վարելու վկայականի կանգնեցման հիմունքները՝

ա) Բժշկական եզրակացություն վարորդի առողջական վիճակի վատթարացման մասին, որը անհնարին է դարձնում մեխանիկական տրասնպորտային միջոցներ անվտանգորեն վարելը;

բ) Մեխանիկական տրասնպորտային միջոցներ վարելու իրավունքից զրկելը Վրաստանի քրեական օրենդրության կամ Վրաստանի վարչական իրավախախտումների օրենսգրքով սահմանված կարգով;

գ) Մեխանիկական տրասնպորտային միջոցներ վարելու իրավունքից զրկելը «թմրանյութային հանցագործության դեմ պայքարի մասին» Վրաստանի օրենքով սահմանված կարգով,

2. Մեխանիկական տրասնպորտային միջոցներ վարելու իրավունքի դադարեցման (չեղյալ համարման) հիմունքներն են՝

ա) իրավասու մարմնի (պաշտոնատար անձի) կողմից ընդունված որոշումը, եթե գոյություն ունի վարելու իրավունքը դադարեցնելու (չեղյալ համարելու) հիմք;

բ) այս օրենքի 171 հոդվածի 3-րդ կետով սահմանված հիմքերի առկայություն;

գ) անձի վախճանում:

3. Այս հոդվածի առաջին կետով սահմանված հիմունքների առկայության դեպքում անձին արգելվում է մեխանիկական տրասնպորտային միջոցներ վարելը, մինչև վարելու իրավունքի կանգնեցման հիմքերի բնաջնջումը: Կանգնեցրած մեխանիկական տրանսպորտային միջոցի վարելու իրավունքի վերականգնումը իրականացվում է Վրաստանի օրենդրությամբ սահմանված կարգով:

Սա հետաքրքիր է ...

Ավտոմոբիլային արտադրության զարգացման և ընդհանուր առմամբ աշխարհում տեղի ունեցող տեխնիոլոգիական առաջադիմության ֆոնի վրա, ճանապարհատրանսպորտային պատահարներից և դրանց ծանր արդյունքներից ազատվելու խնդիրը ավելի ու ավելի ակտիվ է դառնում քաղաքակիրթ հասարակության համար: Առաջին ավտովթարը, որի հետևանքով մարդ է մահացել, գրանցվել է 1896 թվականին: Դրանից հետո մեկ դարից ավելի ժամանակ է անցել և ավտովթարների հետևանքով մահացածների թիվն էլ աղետալիորեն ավեացել է: Ոչ պաշտոնական տեղեկություններով աշխարհով մեկ 2000 թվականին վերոհիշյալ դեպքերի հետևանքով մահացել են 500 000 մարդ, իսկ մարմնի տարբեր վնասվածքներ ստացել են 15 000 000 մարդ, որոնցից 30% անդամալույծ են մնացել: Վիճակագրության արդյունքը շատ վրդովվելի է, քանի որ ավտովթարների հետևանքով մահացածների և վնասվածների թիվը մի քանի անգամ գերազանցում է ժամանակակից աշխարհի տարբեր տարածաշրջաններում ընթացող դիմադրողական պայքարներում մահացածների և վիրավորվածների թվին:

Հետևաբար աշխարհի առաջատար պետություններում գոյություն ունեցող, ճանապարհային տնտեսության կարգավորման գործով զբաղվում, գիտական կազմակերպություններում առանձնահատուկ ուշադրություն են դարձնում, ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման բնագավառում առկա խնդիրների ուսուցմանը և դրանց անալիզի հիման վրա մշակված կազմակերպչա-տեխնիկական միջոցառումների գործնականում իրականացմանը:

Ավտոմեքենաներում ամրագոտիների, իսկ մոտոտրանսպորտի վրա մոտոսաղավարտի օգտագործում, ինչպես նաև ավտոմեքենայով երթևեկելիս բջջային հեռախոսով խոսակցության արգելում, բացառությամբ այն դեպքերից, երբ հեռախոսից օգտվելը իրականացվում է ավտոմեքենայի մեջ տեղադրված հատուկ հարմարանքով, ավտոմեքենայի ղեկից ձեռքերը

երկարատև չհեռացնելով, այս հարցը ոչ առաջադեմ երկներում ևս ահագին ժամանակ առաջ լուծված հարց է: Այս ամենը առաջին հերթին բարձր որակավորված պրոպագանդայի արդյունք է: Ճանապարհային երթևեկության կանոնների ուսուցման ծրագիրը սկսվում է մանկապարտեզից և ահագին հիմնովին կերպով ուսուցվում է դպրոցներում:

Հետաքրքիր է աշխարհի մի քանի մեծ քաղաքներում իրականացված, ճանապարհային երթևեկության կազակերպման մեթոդներին ծանոթանալը: Օրինակի համար վերցնենք Կահիրեն, որտեղ երթևեկության կազմակերպման խնդրի լուծման ժամանակակից տեխնոլոգիաների կիրառումը ոչ շատ ժամանակ է, ինչ սկսվել է, և քաղաք Տոկիոն, որը նշված խնդրի լուծման հարցում առաջատարներից մեկն է աշխարհում:

Քաղաք Կահիրե՝ 8 միլիոն բնակչությամբ, շրջանում գտնվող գյուղերում բնակվող բնակչությամբ, նրա ընդհանուր քանակությունը հասնում է 18 միլիոնի: Նրանում կան երթևեկող 2 միլիոն ավտոտրանսպորտային միջոցներ, իսկ քաղաքի փողոցները նախատեսված են միայն 750 հազար ավտոմոբիլի համար: Երկրի իշխանությունը առաջին հերթին կարողացավ մի բան անել. զվարճանքի կենտրոնները քաղաքից դուրս հանել: Մոտ ապագայում պլանավորված է քաղաքից դուրս թաղամաս կառուցել, որտեղ կտեղավորվեն երկրի իշխանության հաստատությունների կենտրոնական վարչական կառույցները: Արդյունքում նրանք կխուսափեն մոտավորապես 1 միլիոն մարդու՝ մայրաքաղաք ամենօրյա մուտք գործելուց: Լուրջ խնդիրներ են ծագում ավտոտրանսպորտի կանգառի և կայանման հարցի հետ կապված, անհամար ավտոմեքենաներ կանգնում են ուղղակի ճանապարհի երթևեկելի մասում: Խնդրի կարգավորման նպատակով քաղաքում ընթացիկ նորակառույցների համար որպես պարտադիր պահանջ է սահմանված՝ շինարարական կառույցների առաջին հարկերն օգտագործելը ավտոկայանների համար, բացի դրանից հատուկ սարքավորումների օգտագործմամբ է ընթանում ավտոկայանների կահավորումը: Գործնականում լայն տարածում ունի իրար զուգահեռ փողոցներում միայն միակողմանի ուղղության երթևեկությունը: Մայրաքաղաքում ամենաէֆեկտիվը թունելների և էստակադների կառուցման տենդենցիան է, Հոկտեմբերի 5-ի անվան էստակադի երկարությունը 48 կիլոմետր է:

530 քառակուսի կիլոմետրի վրա կառուցված քաղաքը համարյա թե շրջապատված է 110 կիլոմետր երկարության օղակաձև ա/մայրուղիով, որին արտերիական ճանապարհներով կապված են քաղաքի փողոցները: Արտերիային ճանապարհների հետ երկրորդական ճանապարհների միացումը իրականացվում է միայն էսկալադների միջոցով: Քաղաքի բարձունքում կառույցների վրա մոնտաժված են 180 աստիճանի պտտման և 500 անգամ մեծացման ունակություն ունեցող տեսախցիկներ: Դրանց լուսնկարած նկարին 24 ժամանոց ռեժիմով հետևում են մայրաքաղաքի ճանապարհային ոստիկանության շտաբում: Մոնիտորի վրա ֆիքսված ցանկացած խնդրի դեպքում օպերատորը դեպքի վայր է ուղարկում պարետային ոստիկանությանը:

Ինչ վերաբերում է միջքաղաքային ավտոմոբիլային ճանապարհներին, դրանք մաքսիմալորեն կահավորված են էլեկտրոռադարներով, որոնք արագության գերազանցման ցանկացած փաստի դեպքում էլեկտրոազդանշան են հաղորդում կենտրոնական գրասենյակ, որտեղ խախտումը տպվում է ֆոտոլուսանկարի տեսքով: Ճանապարհային երթեեկության կանոնների խախտման փաստերի վրա հակազդումը, դրանց պատճառով առաջացած

արդյունքների բարդությանը համապատասխան՝ կան ահագին խիստ պատժամիջոցներ՝ մինիմալ փողային տուգանքից մինչև երեք տարի ժամկետով ազատազրկում:

Շատ ավելի հետաքրքիր և բարձր տեխնոլոգիական է երթևեկության կազմակերպման բնագավառը քաղաք Տոկիոյում:

Կենտրոնական կառավարման շտաբում տեղադրված են մեկ 16X4 մետրի և երեք 4X4 մետրի վրա էկրաններ, որոնք առանց մարդու օգնության, համակարգչի միջոցով ցույց են տալիս ճանապարհային երթևեկության վիճակը: Քաղաքում կան նաև 36 միկրոշտաբեր, դրանք նույնպես կապված են կենտրոնական շտաբի հետ: Ավտովթարից 3 րոպե անց կենտրոնական շտաբը դեպքի վայր է ուղարկում պարետային ավտոմեքենա, նրա տեղաշարժը երևում է վերոհիշյալ էկրանի վրա: Ճանապարհներին 360 աստիճանի պտտման հնարավորություն ունեցող անհամար տեսախցիկներ են տեղադրված: Դրանց շնորհիվ կենտրոնական շտաբում տեղադրված մոնիտորների վրա հնարավոր է տեսնել ավտոռբիլային ճանապարհների ցանկացած կետ: Ավտոռբիլային ճանապարհներին մոնտաժված են էլէկտրոռադարներ և ուղղահայաց՝ վերևից ներքև ուղղված ինֆրոկարմիր ինդիկատորներ, որոնք ճառագայթի դադարեցման երկարատևության շնորհիվ ֆիքսում են խցանը և դրա թեթևացման համար ավտոմատորեն փոխում են լուսացույցը: Հաշմանդամների համար գոյություն ունի հատուկ անցագիր, որոնց միջոցով նույնպես հնարավոր է լուսացույցների կառավարումը:

Ամբողջ աշխարհում ամենաբարձր մակարդակի վրա է իրականացված քաղաք Տոկիոյում Էստակադներ տեղադրելու հարցը: Հողային տարածքի մակարդակով տեղադրված Ճանապարհների վրա երթևեկությունը անվճար և սահմանափակ է: Երկրորդ մակարդակի վրա, որը միևնույն ժամանակ առաջին մակարդակի էստակադ է հանդիսանում, երթևեկությունը թույլատրելի է 100 կ/ժ-մբ: Ավտոմբիլային ճանապարհների երրորդ մակարդակի, այսինքն՝ երկրորդ մակարդակի էստակադի վրա երթևեկությունը վճարովի է, իսկ արագությունը՝ անսահմանափակ:

Երթևեկության կանոնների ցանկացած խախտում արձանագրում է համակարգիչը, որը հետագայում կատարում է տրասնպորտային միջոցի նույնականացում: Մոնիտորի վրա դուրս է ելնում նրա կողմից անցյալում կատարած խախտումների մասին տեղեկություն: Դրանից հետո միանգամից ուղարկվում են ճանապարհային պարետները, հրշեջների և բժշկական օգնության մեքենաների հետ միասին՝ մեղավորին բռնելու համար: Լուսացույցին մոտենալուն պես օպերատիվ մեքենաների մեջ տեղադրված համակարգիչների միջոցով ավտոմատ կերպով տեղի է ունենում լուսացույցի կանաչ լույսերի միացումը:

Փողոցներում շատ են նաև էլեկտրոնային տեղեկատվական ցուցատախտակները, որոնց վրա տեղադրված են տեղեկություններ ճանապարհային պայմանների, էկոլոգիական վիճակի, մասին և առաջարկված են ալտերնատիվ ճանապարհներ: Նմանատիպ տեղեկություն կարելի է ստանալ սեփական ավտոմեքենաների մեջ մոնտաժված համարգիչների մոնիտորներից:

Տոկիոն առանձնանում է հասարակական տրանսպորտի վիճակի բարձր մակարդակով: Նրանց համար ավտոմոբիլային ճանապարհների վրա առանձնացված են հատուկ, առավելություններով գոտիներ: Նրանցով երթևեկել կարող են՝ ոստիկանության, հրշեջ և բժշկական ավտոմեքենաները: Քաղաքում կան մետրոյի 7 ուղղահայացորեն տարբեր մակարդակների վրա տեղադրված 17 գծեր:

Քաղաքում ապրում են 13 միլիոնից ավելի մարդ: Պետք է նշենք, որ նա աշխարհում ամենամեծ մեգապոլիսի կենտրոն է, որտեղ ընդհանուր առմամբ ապրում է 35 միլիոն մարդ: Այս փաստի կապակցությամբ, լրացուցիչ կերպով օրվա ընթացքում Տոկիո է ժամանում 3.5 միլիոն մարդ: Տոկիոյի փողոցներով սիստեմատիկորեն երթևեկում են մի քանի միլիոն տրանսպորտային մջոցներ, բայց փողոցներում չի զգացվում թեթևացում: Իդեալականորեն կարգավորած երթևեկության կազմակերպման շնորհիվ տեղի ունեցավ այն, որ 2000 թվականին Տոկիոյում տեղի ունեցած ավտովթարների արդյունքում ոչ պաշտոնական տեղեկություններով մահացել են միայն 123 մարդ:

Թեմա № 4
Ճանապարհային նշանները և նրանց բնութագիրը

Ճանապարհային նշանները եթևեկության անվտանգության կարգավորման և ապահովան կարևոր միջոց են համարվում:

- Նրանք զգուշացնում են ճանապարհային երթևեկության մասնակիցներին տարբեր վտանգավոր տեղամասերի մոտենալու մասին;
- Կարգավորում են խաչմերուկները, երթևեկելի մասերի հատման և ճանապարհի նեղ մասերի անցման հաջորդականությունը;
- Սահմանափում կամ արգելում են փողոցների և ճանապարհների առանձին մասերում մի քանի տրանսպորտային միջոցների եթևեկություն;
- Թույլատրում են երթևեկել որոշակի ուղղությամբ;
- Ճշտում են գլխավոր նշանների երթեկության գոտին, ժամանակը, տարածությունը մինչև օբյեկտը կամ սահմանափակում են նրանց գործողությունները:

Ճանապարհային նշանները ազգային օրենսդրության պահանջների և 10807-78 ստանդարտի համաձայն բաժանվում են 7 խմբի, դրանք են՝

1. *նախազգուշացնող;*
2. *առավելության;*
3. *արգելող;*
4. *թելադրող;*
5. *տեղեկատվական- ցուցանշական;*
6. *սպասարկման;*
7. *լրացուցիչ տեղեկության նշաններ:*

1. Նախազգուշացնող նշանները եթևեկության մասնակիցներին, վարորդներին (կամ հետիոտնին) տեղեկացնում են ճանապարհային այն վտանգավոր տեղամասին մոտենալու մասին, որով երթևեելիս անհրաժեշտ է ձեռնարկել իրավիճակին համապատասխան միջոցառումներ:

Նախազգուշանող ճանապարհային նշանները Վրաստանում հավասարակողմ եռանկյունու ձև ունեն, սպիտակ գույնի են և շուրջ բոլորը կարմիր գույնով են ընդգծված: Եռանկյան մի գագաթը միշտ վերև է ուղղված:

2. Առավելության –նշանները սահմանում են խաչմերուկներով, երթևեելի մասերի փոխհատումներով կամ ճանապարհի նեղ հատվածներով անցման հերթականությունը: Առավելության նշանները կարող են լինել տարբեր ձևերի (շրջանաձև, քառակուսի, եռանկյուն,

շեղանկյուն կամ ութանկյուն): Նշանների ընկալումը կարելի է երկու կողմից էլ:

3. Արգելող նշանների նպատակն է տեղեկացնել ճանապարհային երթևեկության մասնակիցներին պարտականությունների, սահմանափակումների և հատուկ արգելքների մասին, որոնք նրանք պետք է պահպանեն: Արգելող նշանները սահմանափակում են երթևեկությունը և չեղյալ են համարում անցյալում ընդունած սահմանափակումները: Արգելող նշանները շրջանաձև են, սպիտակ գույնի և ունեն կարմիր եզրաշերտ:

4. Թելադրող նշանները ճանապարհային եթևեկության մասնակիցներին ցույց են տալիս երթևեկության թույլատրելի ուղղությունները, նվազագույն արագությունը, հետիոտների և որոշակի կարգի տրանսպորտային միջոցների համար նախատեսում են շարժման ուղղությունները, ինչպես նաև մատնանշում են ճանապարհին եղած խոչընդոտների մասին:

Թելադրող նշանները ընդհանրապես շրջանաձև են, գունավորված են կապույտ գույնով և նրա վրայի խորհրդանշանները պատկերված են սպիտակ գույնով:

5. Հատուկ թելադրանքի նշանները մտցնում կամ վերացնում են երթևեկության որոշակի ռեժիմներ: Ինչպես նաև տալիս են տեղեկություն բնակելի վայրերի և այլ օբյեկտների գտնվելու մասին:

'Հատուկ թելադրանքի նշանները հիմնականում լինում են քառակուսի կամ ուղղանկյունաձև, ունեն երկնագույն ֆոն և սպիտակ գույնի նշումներ: Բացառությամբ մի քանի նշաններից, որոնք սպիտակ, կանաչ կամ դեղին են՝ սև նշումներով:

6. Սպասարկման նշանները ճանապարհային երթևեկության մասնակիցներին տեղեկացնում են որոշակի օբյեկտների գտնվելու վայրի մասին: Սպասարկման նշանները ուղղանկյունաձև են, երկնագույն, նրանց վրա պատկերված են ավելի փոքր չափի սպիտակ ուղղանկյուններ սև կամ կարմիր գույնի նշումներով:

7. Լրացուցիչ տեղեկության նշանները (ցուցատախտակներ) ցույց են տալիս կամ սահմանափակում են այն նշանների ազդեցությունները, որոնց հետ նրանք կիրառվում են:

Լրացուցիչ տեղեկության նշանները (ցուցատախտակներ) ուղղանկյունաձև են: Դրանք հիմնականում սպիտակ են, սև երիզով կամ սև, կարմիր կամ դեղին նշումներով:

Առանձնահատուկ դեպքերում տրանսպորտային միջոցների նշման նպատակով նրանց վրա ամրացվում են ճանաչողական նշաններ, որոնք ճանապարհային երթևեկության կանոններում առանձնացված են որպես առանձին խումբ:

Բոլոր նշաններին տրվել են հատուկ համար (ինդեքս), որը կազմված է երկու թվանշաններից: Առանջին նշանը խումբն է ցույց տալիս, իսկ երկրորդը՝ նշանի հերթական համարը խմբի ներսում:

2.1 Գլխավոր ճանապարհ - 2 թվանշանը հուշում է, որ նշանը պատկանում է 2-րդ խմբին՝ առավելության նշաններին, իսկ մեկ թվանշանը հուշում է, որ այս նշանը առավելության նշանների շարքում հերթականությամբ առաջինն է:

Նշանների բոլոր խմբերն ունեն որոշակի ձև ու գույն, որոնք կարևոր հատվածի վրա նրանց ճանաչելու հնարավորություն են տալիս: Ճանապարհային նշանները օգտագործվում են ինչպես ստացիոնար (սյան վրա ամրացված երկարատև գործածման), այնպես էլ ժամանակավոր հենարանների վրա: Եթե ստացիոնար կամ ժամանակավոր ճանապարհային նշանների պահանջները փոխհակադարձ են, վարորդը կողմնորոշվում է ժամանակավոր նշաններից: Ինչպես նաև, եթե՝ հենարանի վրա պատկերված ժամանակավոր ճանապարհային նշանների և գծանշումների գոտիների նշանակությունը փոխհակադարձ են, վարորդները կողմնորոշվում են ճանապարհային նշաններով:

Ճանապարհային երթևեկության մասնակիցը պարտավոր է կատարել ճանապարհային նշանների, ճանապարհային ազդանշանների, կարգավորողի և ճանապարհային գծանշումների ցուցումները նույնիսկ այն դեպքում, երբ այս ցուցումները նրանց թվում են որպես ճանապարհային եթևեկության այլ կանոնների նկատմամբ փոխհակադարձ պահանջ:

Ճանապարհային երթևեկության մանսակցին արգելվում է փակել, վնասել կամ ինքնակամ կերպով կանգնեցնել ճանպարհային նշաններ, լուսացույցներ և երթևեկության կազմակերպման այլ միջոցներ:

Ճանապարհային երթևեկության մասնակիցները կատարում են լուսացույցի ազդանշանների պահանջները նաև այն դեպքում, երբ դրանք հակադիր են անցման առավելությունը որոշող ճանապարհային նշանների պահանջներին, ինչպես նաև կատարում են կարգավորողի ազդանշանների և հրահանգների պահանջները այն դեպքում նաև, եթե դրանք հակադիր են լուսացույցի, ճանապարհային նշանների և ճանապարհային նշանների կանոնների պահանջներին:

Ճանապահային նշանները տեղադրվում են երթևկեության ուղղության համապատասխան կողմում, և նրանց ազդեցությունը տարածվում է երթևեկության համար բաց ճանապարհի երթևեկելի մասի ամբողջ տարածքով: ճանապարհային նշանների ազդեցությունը կարող է սահմանափակ լինել մեկ կամ մի քանի երթևեկության գոտով:

1. <u>Նախազգուշացնող նշաններ</u>

Նախազգուշացնող նշանները վարորդներին զուշացում են փողոցի կամ ճանապարհի վտանգավոր մասերին մոտենալու մասին: Վարորդը նախազգուշացնող նշանից հետո պետք է ուշադիր լինի և նվազեցնի արագությունը այնքան, որ անհրաժեշտության դեպքում նախքան վտանգավոր մասը կարողանա տրանսպորտային միջոցը ժամանակին կանգնեցնել:

Նախազգուշացնող նշանների ձևն է՝ կարմիր երիզով եռանկյունի՝ սպիտակ կամ դեղին ֆոնով:

Նախզգուշացնող նշանները սահմանափակումը չեն կարգավորում, բայց պարտավորում են վարորդներին լարել ուշադրությունը և ընտրել համապատասխան արագություն: Նշված

նշանները բնակավայրերում տեղադրվում են 50-100 մ հեռավորության վրա, իսկ բնակավայրերից դուրս՝ 150-300մ հեռավորության վրա:

Նախազգուշացնող նշանները ընդամենը 43 են:

Նախազգուշացնող նշաններից հաջորդ վեցը բնակավայրերից դուրս մեզ հանդիպում են երկու անգամ նախքան վտանգավոր մասը: Այս նշաններն են՝ նշան 1, 1; 1, 2; 1,9; 1, 10; 1, 21; 1, 23; առաջին նշանը տեղադրվում է 150-ից մինչև 300 մ հեռավորությաան վրա, իսկ երկրորդը՝ 50մ- ից ոչ պակաս նախքան վտանգավոր մասը:

Քննարկենք առանձին- առանձին:

1.1

1.1 Երկաթուղային գծանց ուղեփակոցով՝

Զգուշացնում է ճանապարհային երթևեկության մասնակիցներին ուղեփակոցով կահավորված երկաթուղային գծանցին մոտենալու մասին: Բնակավայրից դուրս նշանը տեղադրվում է երկու տեղում, առաջինը՝ 150-300 մետրի վրա, իսկ երկրորդը՝ 50 մետրի վրա մինչև երկաթուղային գծանց: Եթե երկաթուղային գծանցը գտնվում է բնակելի վայրում, նշանը տեղադրվում է մեկ տեղում, 50-100 մետրի վրա: Անհրաժեշտության դեպքում նախազգուշացնող նշան 1.1-ը կարելի է տեղադրել նաև ուրիշ հեռավորության վրա՝ 7.1.1 «հեռավորություն մինչև օբյեկտ» լրացուցիչ տեղեկության ցուցատախտակի հետ միասին:



7.1.1 հեռավորություն մինչև օբյեկտ. ցույց է տալիս ընթացքի ուղղությամբ նշանից մինչև վտանգավոր հատվածի սկիզբը, համապատասխան սահմանափակում մտցնելու տեղը կամ առջևում գտնվող որոշակի օբյեկտ (վայր) եղած հեռավորությունը:

1.2 Երկաթուղային գծանց առանց ուղեփակոցի՝

Զգուշացնում է վարորդներին առանց ուղեփակոցի երկաթուղային գծանցի մասին:

Բնակավայրից դուրս նշանը նախքան ուղեփակոցը տեղադրվում է երկու տեղում, առաջինը՝ 150-300 մետրի վրա, իսկ երկրորդը՝ 50 մետրի վրա մինչև երկաթուղային գծանց: Բնակելի վայրում՝ նշանը դրվում է մեկ տեղում, 50-100 մետրի վրա: Անհրաժեշտության դեպքում նախազգուշացնող նշան 1.1-ը կարելի է տեղադրել նաև ուրիշ հեռավորության վրա՝ 7.1. 2 «հեռավորություն մինչև օբյեկտ» լրացուցիչ տեղեկության ցուցատախտակի հետ միասին:

1.2

Ուշադրություն!!!

նշաններ 1.1 - **Երակթուղային գծանց ուղեփակոցով** ***և 1.2 -*** **Երկաթուղային գծանց առանց ուղեփակոցի բնակելի վայրերից դուրս անպայմանորեն կրկնվում են** ***և հերթականությամբ երկրորդ նշանը դրվում է օբյեկտից 50 մ-ից ոչ***

պակաս հեռավորության վրա:

1.3.1

1.3.1 Միագիծ երկաթուղի

Զգուշացնում է, որ երկաթուղային անցումը միագիծ է և դա առանց ուղեփակոցի է: Տեղադրվում է անմիջապես երկաթուղու գծանցի մոտ:

Եթե գծանցն ունի լուսացույց, ապա նա ամրացվում է դրա հետ մասին, իսկ լուսացույցի նշանը չլինելու դեպքում դրվում է ամենամոտ գծից 20մ-ից ոչ պակաս հեռավորության վրա:

1.3.2 Բազմագիծ երկաթուղի

Զգուշացնում է բազմագիծ երկաթուղով կահավորված առանց ուղեփակոցի երկաթուղային գծանցի մասին: Տեղադրվում է 1.3.1 նշանին համանման կերպով:

1.3.2



1.4.1 1.4.2 1.4.3

1.4.1 1.4.2 1.4.3 Մոտեցում երկաթուղային գծանցին

Նշանները լրացուցիչ կերպով զգուշացնում են վարորդին երկաթուղային գծանցին մոտնալու մասին և դրվում են միայն բնակավայրերից դուրս: 1.4.1 տեղադրվում է ճանապարհի աջ կողմում 1.1 կամ 1.2 նշանների տակ 50-100 մ. 1.4.3:

Ինչպես նաև տեղադրվում են աջ կողմում կամ 1.1 կամ 1.2 նշանների հետ միայն 150-300 մ վրա:

Իսկ 1.4.2 նշանը անկախորեն տեղադրվում է այս երկու նշանների միջև:

1.4.4 1.4.5 1.4.6 Մոտեցում երկաթուղային գծանցին

1.4.4, 1.4.5 և 1.4.6 նշանները, 1.4.1,1.4.2,1.4.3 նշանները համանման կերպով տեղադրվում են ճանապարհի ձախ կողմում վերջիներիս զուգահեռ:



1.4.4 1.4.5 1.4.6

1,5

1.5 Հատում տրամվայի գծի հետ

Վարորդին զգուշացնում է տրամվայի գծի հետ հատման մոտեցման մասին, քանի որ նա պարտավոր է ճանապարհը տրամվային զիջել:

Այսպիսով տրամվայն ունի առավելություն բացառությամբ այն դեպքերի, երբ նա դուրս է գալիս դեպոյից կամ ներս է մտնում դեպո:

Բնակելի վայրում տեղադրվում է տրամվայի գծի հատումից 50-100 մ վրա, իսկ բնակելի վայրից դուրս 150-

300 մետրի վրա:

1.6 Հավասարազոր ճանապարհների հատում

1.6

Ճանապարհային երթևեկության մասնակիցներին զգուշացնում է հավասարազոր ճանապարհների հատման մասին: Բնակելի վայրի դուրս նշանը տեղադրվում է 150-300 մետրի վրա, իսկ բնակելի վայրում 50 մ –ի վրա նախքան վտանգավոր հատվածը: Մինչև այս նշանը վարորդը ճանապարհը պիտի համարի հավասարազոր, նույնիսկ եթե մի ճանապարհը պատված է լավ ծածկույթով, իսկ երկրորդը առանց ծածկույթի է (հողային):

1.7

1.7 Հատում շրջանաձև երթևեկության հետ

Ճանապարհային երթևեկության մասնակիցներին զգուշացնում է բարդ խաչմերուկին մոտենալու մասին, որտեղ կազմակերպված է շրջանաձև երթևեկություն և խաչմերուկի դիմաց տեղադրված է 4.3 «շրջանաձև երթևեկություն» թելադրող նշանը: Բնակելի վայրից դուրս նշանը տեղադրվում է 150-300 մետի վրա, իսկ բնակելի վայրում 50-100 մետրի վրա նախքան խաչմերուկը:

4.3 Շրջանաձև երթևեկություն

Նշանը վարորդին պարտավորեցնում է երթևեկել խաչմերուկներով և հրապարակներով սլաքներով ցույց տրված ուղղությամբ մինչև սահմանակից փողոց կամ ճանապարհ դուրս գալը:

1.8 Լուսացույցային կարգավորում

1.8

Խաչմերուկ, հետիոտնային անցում կամ ճանապարհի տեղամաս, որտեղ երթևեկությունը կարգավորվում է լուսացույցով: Նշանը դրվում է այն դեպքում, երբ տեսադաշտը 100 մ-ից պակաս է, այն տեսնելուն պես վարորդն արդեն պատրաստ է դրան, և նրա համար արգելակող ազդանշանը արդեն անսպասելի չի դառնում (այսինքն՝ նա չի դիմի կտրուկ մանևրումի):

Բնակելի վայրից դուրս նշանը դրվում է 150-300 մետրի վրա, իսկ բնակելի վայրում՝ 50-100 մետրի վրա մինչ վնատգավոր հատված:

1.9

1.9 Բացվող կամուրջ

Ճանապարհային երթևեկության մասնակիցներին զգուշացնում է բացվող կամրջի կամ լաստանավային անցումին մոտենալու մասին: Բնակելի վայրից դուրս նշանը դրվում է 150-300 մետրի վրա, իսկ բնակելի վայրում՝ 50-100 մետրի վրա մինչ վնատգավոր հատված: Բնակելի վայրից դուրս նշանը կրկնվում է: Երկրորդ նշանը տեղադրվում է մինչ վտանգավոր հատվածի սկիզբը ոչ պակաս 50մ հեռավորության վրա:

Ուշադրություն!!!

Նշաններ 1.9 բացվող կամուրջ, 1.10 ելք դեպի առափ բնակելի վայրերից դուրս անպայման կրկնվում է և հերթականությամբ երկրորդ նշանը տեղադրվում է օբյեկտից ոչ պակաս քան 50 մ հեռավորության վրա:

1.10

1.10 Ելք դեպի առափ

Ճանապարհային երթևեկության մասնակիցներին զգուշացնում է առափ կամ ափ դուրս գալու մասին(գետի, լճի կամ ծովի ափ): Բնակելի վայրից դուրս նշանը դրվում է 150-300 մետրի վրա, իսկ բնակելի վայրում 50-100 մերտի վրա մինչ վնատգավոր հատված: : Բնակելի վայրից դուրս նշանը կրկնվում է: Երկրորդ նշանը տեղադրվում է մինչ վտանգավոր հատվածի սկիզբը ոչ պակաս 50մ հեռավորության վրա:

1.11.1 Վտանգավոր շրջադարձ

Ճանապարհային երթևեկության մասնակիցներին զգուշացնում է դեպի աջ ուղղված վտանգավոր կամ սահմանափակ տեսանելիության շրջադարձին մոտենալու մասին: Բնակելի վայրից դուրս նշանը տեղադրվում է 150-300 մետրի վրա, իսկ բնակելի վայրում՝ 50-100 մետր հեռավություն վրա մինչ վնատգավոր հատված: Հնարավոր է կանգնեցնել նաև 3.24 ՝ 5.18 նշանների հետ միասին:

1.11.1

1.11.2

1.11.2 Վտանգավոր շրջադարձ

Ճանապարհային երթևեկության մասնակիցներին զգուշացնում է դեպի ձախ ուղղված վտանգավոր կամ սահմանափակ տեսանելիության շրջադարձին մոտենալու մասին: Բնակելի վայրից դուրս նշանը տեղադրվում է 150-300 մետրի վրա, իսկ բնակելի վայրում՝ 50-100 մետր հեռավություն վրա մինչ վնատգավոր հատված: Հնարավոր է կանգնեցնել նաև 3.24 ՏՆ 5.18 նշանների հետ միասին:

3.24 Առավելագույն արագության սահմանափակում
Արգելվում է եթևեկել նշանի վրա նշվածից բարձր արագությամբ: Նշանը տեղադրվում է անմիջապես արգելված տարածքի առջևում:

5.18 Թույլատրված արագություն
Ցուց է տալիս երթևեկության երաշխավորված արագությունը ճանապարհի տվյալ հատվածով:

1.12.1

1.12.1 Վտանգավոր շրջադարձներ

Ճանապարհային երթևեկության մասնակիցներին զգուշացնում է առաջին շրջադարձով դեպի աջ ուղղված վտանգավոր կամ սահմանափակ տեսանելիության շրջադարձին մոտենալու մասին: Բնակելի վայրից դուրս նշանը տեղադրվում է 150-300 մետրի վրա, իսկ բնակելի վայրում՝ 50-100 մետր հեռավություն վրա մինչ վնատգավոր հատված: 1.12.1 վտանգավոր շրջադարձեր նշանների հետ միասին կարող է կիրառվել 7.2.1 «ազդեգության գոտի» լրացուցիչ ցուցատախտակը, որը նշում է վնատգավոր հատվածի երկարությունը:

7.2.1 Ազդեցության գոտի“

Ցույց է տալիս նախազգուշացնող նշաններով նշված ճանապարհի վտանգավոր հատվածի երկարության կամ արգելող և հատուկ թելադրանքի նշանների ազդեցության գոտին:



1.12.2 Վտանգավոր շրջադարձներ

1.12.2

Ճանապարհային երթևեկության մասնակիցներին զգուշացնում է առաջին շրջադարձով դեպի ձախ ուղղված վտանգավոր կամ սահմանափակ տեսանելիության շրջադարձին մոտենալու մասին: Բնակելի վայրից դուրս նշանը տեղադրվում է 150-300 մետրի վրա, իսկ բնակելի վայրում 50-100 մետր հեռավություն վրա մինչ վնատգավոր հատված: 1.12.2 վտանգավոր շրջադարձեր նշանների հետ միասին կարող է կիրառվել 7.2.1 «ազդեգության գոտի» լրացուցիչ ցուցատախտակը, որը նշում է վնատգավոր հատվածի երկարությունը:

1.13

1.13 Կտրուկ վայրէջք

Ճանապարհային երթևեկության մասնակիցներին զգուշացնում է վտանգավոր վայրէջքի առկայության մասին, որի թեքվածությունը նշանի վրա տրված է տոկոսներով: Բնակելի վայրից դուրս նշանը տեղադրվում է 150-300 մետրի վրա, իսկ բնակելի վայրում՝ 50-100 մետր հեռավություն վրա մինչ վնատգավոր հատված:

1.13 «Ուղղաձիգ վայրէջք» նշանի հետ միասին կարող է կիրառվել 7.2.1 «Ազդեցության գոտի» լրացուցիչ տեղեկության ցուցատախտակ, որը մատնանշում է վտանգավոր հատվածի երկարությունը: Ճանապարհային նշաններ 1.13 «Ուղղաձիգ վայրէջք» և 1.14 «Ուղղաձիգ վերելք» կարելի է տեղադրել անմիջապես վայրէջքի կամ վերելքի սկզբում, եթե վայրէջքը և վերելքը հաջորդում են իրար:

1.14 Կտրուկ վերելք

1.14

Ճանապարհային երթևեկության մասնակիցներին զգուշացնում է վտանգավոր վերելքի առկայության մասին, որի թեքվածությունը նշանի վրա տրված է տոկոսներով: Բնակելի վայրից դուրս նշանը տեղադրվում է 150-300 մետրի վրա, իսկ բնակելի վայրում՝ 50-100 մետր հեռավություն վրա մինչ վնատգավոր հատված:

1.14 «Ուղղաձիգ վերելք» նշանի հետ միասին կարող է կիրառվել 7.2.1 «Ազդեցության գոտի» լրացուցիչ տեղեկության ցուցատախտակ, որը մատնանշում է վտանգավոր հատվածի երկարությունը: Ճանապարհային նշաններ 1.13 «Ուղղաձիգ վայրէջք» և 1.14 «Սայթաքուն վերելք» կարելի է տեղադրել անմիջապես վայրէջքի կամ վերելքի սկզբում, եթե վայրէջքը և վերելքը հաջորդում են իրար:

1.15

1.15 Սայթաքուն ճանապարհ

Ճանապարհային երթևեկության մասնակիցներին զգուշացնում է ճանապարհի սայթաքուն հատվածին մոտենալու մասին, որտեղ մեծ է սայթաքելու մտավախությունը: Բնակելի վայրից դուրս նշանը տեղադրվում է 150-300 մետրի վրա, իսկ բնակելի վայրում՝ 50-100 մետր հեռավություն վրա մինչ վնատգավոր հատված: Անհրաժեշտության դեպքում նախազգուշացնող նշան 1.15-ը կարելի է տեղադրել այլ տարածության վրա ևս 7.1.1 «Հեռավորությունը մինչև օբյեկտ» լրացուցիչ տեղեկության ցուցատախտակի հետ միասին:

1.16

1.16 Անհարթ ճանապարհ

Ճանապարհային երթևեկության մասնակիցներին զգուշացնում է ճանապարհի երթևեկելի մասի անհարթ մակերեսի հատվածին մոտնալու մասին (ալիքավորություն, խանդակներ, կամուրջների հետ ոչ սահուն լծորդումներ և այլն): Բնակելի վայրից դուրս նշանը տեղադրվում է 150-300 մետրի վրա, իսկ բնակելի վայրում 50-100 մետր հեռավություն վրա մինչ վնատգավոր հատված: Անհրաժեշտության դեպքում նախազգուշացնող նշան 1.16-ը կարելի է տեղադրել այլ տարածության վրա ևս 7.1.1 «Հեռավորությունը մինչև օբյեկտ» լրացուցիչ տեղեկության ցուցատախտակի հետ միասին:

1.17

1.17 Խճի արտանետում

Ճանապարհային երթևեկության մասնակիցներին զգուշացնում է ճանապարհի այն հատվածին մոտենալու մասին , որով երթևեկելիս հնարավոր է տրանսպորտային միջոցների անիվների տակից խճի արտանետում: Բնակելի վայրից դուրս նշանը տեղադրվում է 150-300 մետրի վրա, իսկ բնակելի վայրում 50-100 մետր հեռավություն վրա մինչ վնատգավոր հատված: Անհրաժեշտության դեպքում նախազգուշացնող նշան 1.17-ը կարելի է տեղադրել այլ տարածության վրա ևս 7.1.1 «Հեռավորությունը մինչև օբյեկտ» լրացուցիչ տեղեկության ցուցատախտակի հետ միասին:

1.18.

1.18.1 Ճանապարհի նեղացում

Ճանապարհային երթևեկության մասնակիցներին զգուշացնում է ճանապարհի երթևեկելի մասի կամ ճանապարհի երկու կողմից կտրուկ նեղացման մասին:

Բնակելի վայրից դուրս նշանը տեղադրվում է 150-300 մետրի վրա, իսկ բնակելի վայրում 50-100 մետր հեռավություն վրա մինչ վնատգավոր հատված: Անհրաժեշտության դեպքում նախազգուշացնող նշան 1.18.1 -ը կարելի է տեղադրել այլ տարածության վրա ևս 7.1.1 «Հեռավորությունը մինչև օբյեկտ» լրացուցիչ տեղեկության ցուցատախտակի հետ միասին: 1

1.18.2

1.18.2 Ճանապարհի նեղացում աջից

Ճանապարհային երթևեկության մասնակիցներին զգուշացնում է ճանապարհի երթևեկելի մասի կամ ճանապարհի աջ կողմից կտրուկ նեղացման մասին: Բնակելի վայրից դուրս նշանը տեղադրվում է 150-300 մետրի վրա, իսկ բնակելի վայրում՝ 50-100 մետր հեռավություն վրա մինչ վտանգավոր հատված: Անհրաժեշտության դեպքում նախազգուշացնող նշան 1.18. 2 -ը կարելի է տեղադրել այլ տարածության վրա ևս 7.1.1 «Հեռավորությունը մինչև օբյեկտ» լրացուցիչ տեղեկության ցուցատախտակի հետ միասին:

1.18.3

1.18.3 Ճանապարհի նեղացում ձախից

Ճանապարհային երթևեկության մասնակիցներին զգուշացնում է ճանապարհի երթևեկելի մասի կամ ճանապարհի ձախ կողմից կտրուկ նեղացման մասին: Բնակելի վայրից դուրս նշանը տեղադրվում է 150-300 մետրի վրա, իսկ բնակելի վայրում՝ 50-100 մետր հեռավություն վրա մինչ վտանգավոր հատված: Անհրաժեշտության դեպքում նախազգուշացնող նշան 1.18. 3-ը կարելի է տեղադրել այլ տարածության վրա ևս 7.1.1 «Հեռավորությունը մինչև օբյեկտ» լրացուցիչ տեղեկության ցուցատախտակի հետ միասին

1.19

1.19 Երկկողմ երթևեկություն

Ճանապարհային երթևեկության մասնակիցներին զգուշացնում է միակողմ երթևեկության ճանապարհի հատվածի ավարտման և հանդիպակաց երթևեկության ճանապարհի հատվածի մոտեցման մասին: Տվյալ դեպքում անհրաժեշտ է նվազեցնել արագությունը և զբաղեցնել աջ կողմը: Բնակելի վայրից դուրս նշանը տեղադրվում է 150-300 մետրի վրա, իսկ բնակելի վայրում 50-100 մետր հեռավություն վրա մինչ վնատգավոր հատված: Անհրաժեշտության դեպքում նախազգուշացնող նշան 1. 19-ը կարելի է տեղադրել այլ տարածության վրա ևս 7.1.1 «Հեռավորությունը մինչև օբյեկտ» լրացուցիչ տեղեկության ցուցատախտակի հետ

միասին:

1.20

1.20 Հետիոտնային անցում

Ճանապարհային երթևեկության մասնակիցներին զգուշացնում է 5.16.1 և 5.16.2 ճանապարհային նշաններով և 1.14.1-1.14.3 ճանապարհային գծանշումներով նշված հետիոտնային անցմանը մոտենալու մասին կամ ճանապարհի երթևեկելի մասում հետիոտնի հնարավոր հայտնվելու մասին: Բնակելի վայրից դուրս նշանը տեղադրվում է 150-300 մետրի վրա, իսկ բնակելի վայրում՝ 50-100 մետր հեռավություն վրա մինչ վնատգավոր հատված: Անհրաժեշտության դեպքում նախազգուշացնող նշան 1.20 -ը կարելի է տեղադրել այլ տարածության վրա ևս 7.1.1 «Հեռավորությունը մինչև օբյեկտ» լրացուցիչ տեղեկության ցուցատախտակի հետ միասին:

1.21

1.21 Երեխաներ

Ճանապարհային երթևեկության մասնակիցներին զգուշացնում է ճանապարհի երթևեկելի մասում երեխաների հայտնվելու հատվածին մոտենալու մասին: Ամրացվում է դպրոցների, մանկական հաստատությունների մոտ: Վարորդը պետք է ուշադիր լինի, նա պիտի նվազեցնի արագությունը և ճանապարհի այդ հատվածը անցնի հատուկ ուշադրությամբ: Բնակելի վայրից դուրս նշանը տեղադրվում է 150-300 մետրի վրա, իսկ բնակելի վայրում՝ 50-100 մետր հեռավություն վրա մինչ վնատգավոր հատված: Բնակելի վայրից դուրս նշանը կրկնվում է, երկրորդ նշանը տեղադրվում է 50 մ հեռավորության վրա մինչ վտանգավոր հատված: Անհրաժեշտության դեպքում նախազգուշացնող նշան 1.21 -ը կարելի է տեղադրել այլ տարածության վրա ևս 7.1.1 «Հեռավորությունը մինչև օբյեկտ» լրացուցիչ տեղեկության ցուցատախտակի հետ միասին:

Ուշադրություն !!!

Նշան 1.21 Երեխաներ, Բնակելի վայրերից դուրս անպայման կրկնվում է և հերթականությամբ երկրորդ նշանը դրվում է մինչև օբյեկտ առնվազն 50 մ հեռավորության վրա:

1.22

1.22 Հատում հեծանվային արահետի հետ

Ճանապարհային երթևեկության մասնակիցներին զգուշացնում է հեծանվային արահետին մոտենալու մասին: Վարորդը պետք է ուշադիր լինի և նվազեցնի արագությունը: Բնակելի վայրից դուրս նշանը տեղադրվում է 150-300 մետրի վրա, իսկ բնակելի վայրում 50-100 մետր հեռավություն վրա մինչ վնատգավոր հատված: Անհրաժեշտության դեպքում նախազգուշացնող նշան 1.22 -ը կարելի է տեղադրել այլ տարածության վրա ևս 7.1.1 «Հեռավորությունը մինչև օբյեկտ» լրացուցիչ տեղեկության ցուցատախտակի հետ միասին:

1.23 Ճանապարհային աշխատանքներ

1.23

Ճանապարհային երթևեկության մասնակիցներին զգուշացնում է ճանապարհի երթևեկելի մասում ճանապարհային աշխատանքներ անկացնելու մասին: Այստեղ հատուկ զգուշություն է հարկավոր գիշերվա ժամերին և սահմանափակ տեսանելիության պայմաններին: Պետք է արագությունը զգալիորեն նվազեցնել և ապահովել ճանապարհի համապատասխան լուսավորում: Բնակելի վայրից դուրս նշանը տեղադրվում է 150-300 մետրի վրա, իսկ բնակելի վայրում՝ 50-100 մետր հեռավություն վրա մինչ վտանգավոր հատված: Բնակելի վայրից դուրս նշանը կրկնվում է, երկրորդ նշանը տեղադրվում է 50 մ հեռավորության վրա մինչ վտանգավոր հատված: Երթևեկելի մասում կարճատև ճանապարհային աշխատանքներ անցկացնելիս ճանապարհային նշան 1.23 «Ճանապարհային աշխատանքներ»-ը կարելի է տեղադրել աշխատանքներ անցկացնելու վայրից 10-15 մ հեռավորության վրա: Անհրաժեշտության դեպքում նախազգուշացնող նշան 1.23 -ը կարելի է տեղադրել այլ տարածության վրա ևս 7.1.1 «Հեռավորությունը մինչև օբյեկտ» լրացուցիչ տեղեկության ցուցատախտակի հետ միասին:

Ուշադրություն !!!

Նշան 1.23 Ճանապարհային աշխատանքներ բնակելի վայրերից դուրս պարտադիր կրկնվում է և հրթականությամբ երկրորդ նշանը տեղադրվում է մինչև օբյեկտ առնվազն 50 մ հեռավորության վրա:

1.24 Անասունների քշում

1.24

Ճանապարհային երթևեկության մասնակիցներին զգուշացնում է ճանապարհին ընտանի կենդանիների հայտվելու մասին: Վարորդը պետք է նվազեցնի արագությունը և անհրաժեշտության դեպքում կանգնեցնի տրանսպորտը:

Բնակելի վայրից դուրս նշանը տեղադրվում է 150-300 մետրի վրա, իսկ բնակելի վայրում 50-100 մետր հեռավություն վրա մինչ վնատգավոր հատված: Անհրաժեշտության դեպքում նախազգուշացնող նշան 1.24-ը կարելի է տեղադրել այլ տարածության վրա ևս 7.1.1 «Հեռավորությունը մինչև օբյեկտ» լրացուցիչ տեղեկության ցուցատախտակի հետ միասին:

1.25

1.25 Վայրի կենդանիներ

Ճանապարհային երթևեկության մասնակիցներին զգուշացնում է ճանապարհին վայրի կենդանիների հայտվելու մասին: Վարորդը պետք է ընտրի այնպիսի արագություն, որ հարկ եղած դեպքում խուսափի ընդհարումից:

Բնակելի վայրից դուրս նշանը տեղադրվում է 150-300 մետրի վրա, իսկ բնակելի վայրում 50-100 մետր հեռավություն վրա մինչ վնատգավոր հատված: Անհրաժեշտության դեպքում նախազգուշացնող նշան 1.25-ը կարելի է տեղադրել այլ տարածության վրա ևս 7.1.1 «Հեռավորությունը մինչև օբյեկտ» լրացուցիչ տեղեկության ցուցատախտակի հետ միասին:

1.26 Քարերի անկում

1.26

Ճանապարհային երթևեկության մասնակիցներին զգուշացնում է ճանապարհի այն հատվածին մոտենալու մասին, որտեղից հնարավոր է քարերի անկում, փլուզումներ կամ սողանք: Բնակելի վայրից դուրս նշանը տեղադրվում է 150-300 մետրի վրա, իսկ բնակելի վայրում 50-100 մետր հեռավություն վրա մինչ վտանգավոր հատված: Անհրաժեշտության դեպքում նախազգուշացնող նշան 1.26-ը կարելի է տեղադրել այլ տարածության վրա ևս 7.1.1 «Հեռավորությունը մինչև օբյեկտ» լրացուցիչ տեղեկության ցուցատախտակի հետ միասին:

1.27

1.27 Կողային քամի

Ճանապարհային երթևեկության մասնակիցներին զգուշացնում է ճանապարհի այն հատվածին մոտենալու մասին, որտեղից սպասելի է ուժեղ կողային քամի, որը կխանգարի մեքենայի ուղղագիծ երթևեկությանը: Վարորդը պիտի ապահովի ավտոմոբիլի հնազանդությունը արագության սահմանափակմամբ և ղեկը պահելով:

Բնակելի վայրից դուրս նշանը տեղադրվում է 150-300 մետրի վրա, իսկ բնակելի վայրում 50-100 մետր հեռավություն վրա մինչ վնատգավոր հատված: Անհրաժեշտության դեպքում նախազգուշացնող նշան 1.27 -ը կարելի է տեղադրել այլ տարածության վրա ևս 7.1.1 «Հեռավորությունը մինչև օբյեկտ» լրացուցիչ տեղեկության ցուցատախտակի հետ միասին:

1.28

1.28 Ցածրաթռիչք ինքնաթիռներ

Ճանապարհային երթևեկության մասնակիցներին զգուշացնում է աերոդրոմի ճանապարհին մոտիկ գտնվելու մասին և հնարավոր է հայտվեն ցածր բարձրության վրա թռնող ինքնաթիռներ կամ ուղղաթիռներ, որոնց աղմուկը չպիտի վախեցնի կամ շփոթեցնի վարորդին: Բնակելի վայրից դուրս նշանը տեղադրվում է 150-300 մետրի վրա, իսկ բնակելի վայրում՝ 50-100 մետր հեռավություն վրա մինչ վտանգավոր հատված: Անհրաժեշտության դեպքում նախազգուշացնող նշան 1.28 -ը կարելի է տեղադրել այլ տարածության վրա ևս 7.1.1 «Հեռավորությունը մինչև օբյեկտ» լրացուցիչ տեղեկության ցուցատախտակի հետ միասին:

1.29

1.29 Թունել

Ճանապարհային երթևեկության մասնակիցներին զգուշացնում է թունելին մոտենալու մասին, որտեղ չկա արհեստական լուսավորում կամ էլ մի այնպիսի թունելի մասին, որի մուտքի պորտալում սահմանափակ է տեսանելիությունը: Բնակելի վայրից դուրս նշանը տեղադրվում է 150-300 մետրի վրա, իսկ բնակելի վայրում 50-100 մետր հեռավություն վրա մինչ վտանգավոր հատված: Անհրաժեշտության դեպքում նախազգուշացնող նշան 1.29-ը կարելի է տեղադրել այլ տարածության վրա ևս 7.1.1 «Հեռավորությունը մինչև օբյեկտ» լրացուցիչ տեղեկության ցուցատախտակի հետ միասին:

1.30 Այլ վտանգներ

1.30

Ճանապարհային երթևեկության մասնակիցներին զգուշացնում է, ճանապարհի այնպիսի հատվածի մասին, որտեղ առկա են թվարկած նախազգուշացնող նշաններով չնախատեսված վտանգներ: Այսպիսի դեպքերում վարորդը պետք է երթևեկի հատուկ ուշադրությամբ, նվազեցնի արագությունը և հետևի ճանապարհին: Բնակելի վայրից դուրս նշանը տեղադրվում է 150-300 մետրի վրա, իսկ բնակելի վայրում՝ 50-100 մետր հեռավորություն վրա մինչ վտանգավոր հատված: Անհրաժեշտության դեպքում նախազգուշացնող նշան 1. 30-ը կարելի է տեղադրել այլ տարածության վրա ևս 7.1.1 «Հեռավորությունը մինչև օբյեկտ» լրացուցիչ տեղեկության ցուցատախտակի հետ միասին:

1.3

1.1

1.31.1 Շրջադարձի ուղղություն

Նշաններ 1.31.1 և 1.31.2 սահմանափակ տեսանելիությամբ ճանապարհի փոքր շառավղով կորացման վրա երթևեկության ուղղություն: Ճանապարհի նորոգվող հատվածի շրջանցման ուղղություն:

1.3

1.2

1.31.2 Շրջադարձի ուղղություն

Նշաններ 1.31.1 և 1.31.2 Սահմանափակ տեսանելիությամբ ճանապարհի փոքր շառավղով կորացման վրա երթևեկության ուղղություն: Ճանապարհի նորոգվող հատվածի շրջանցման ուղղություն:

1.3

1.3

1.31.3 Շրջադարձի ուղղություն

Տ-աձև խաչմերուկում կամ ճանապարհի ճյուղավորման վրա երթևեկության ուղղություններ: Ճանապարհի նորոգվող հատվածի շրջանցման ուղղություններ:

1.1, 1.2, 1.5–1.30 նշանները տեղադրվում են մինչև վտանգավոր հատվածի սկիզբը բնակավայրերից դուրս 150-300մ, իսկ բնակավայրերում՝ 50–100 մ հեռավորության վրա: Անհրաժեշտության դեպքում նշանները կարող են տեղադրվել և այլ հեռավորության վրա: Այդ դեպքում հեռավորությունը նշվում է 7.1.1 ցուցանակի վրա: .

1.13 և 1.14 նշանները կարող են տեղադրվել առանց 7.1.1 ցուցանակի, անմիջապես վայրէջքից կամ վերելքից առաջ, եթե վայրէջքները և վերելքները միմյանց հաջորդում են:

1.23 նշանը, երթևեկելի մասի վրա կարճատև աշխատանքներ կատարելիս կարող է տեղադրվել առանց 7.1.1 ցուցանակի, աշխատանքի կատարման վայրից 10-15 մ հեռավորության վրա:

1.1, 1.2, 1.10, 1.21 և 1.23 նշանները բնակավայրերից դուրս կրկնվում են: Երկրորդ նշանը տեղադրվում է վտանգավոր հատվածի սկզբից 50 մ ոչ պակաս հեռավորության վրա:

1.3.1 և 1.3.2 նշանները տեղադրվում են անմիջապես երկաթուղային անցման սկզբից:

1.31.1, 1.31.2 և 1.31.3 նշանները տեղադրվում են անմիջապես փոքր շառավղով կորացման, վերանորոգվող հատվածի շրջանցման տեղի սկզբից:

1. Թվարկեցե՛ք ճանապարհային նշանների հիմնական ֆունկցիաները:
2. Թվարկեցե՛ք ճանապարհային նշանների հիմնական խմբերը:

Ստուգողական հարցեր ինքնաստուգման համար.

3. Ո՞ր ճանապարհային նշաններն են եռանկյունաձև, սպիտակ, կարմիր երիզով:
4. Ո՞ր ճանապարհային նշաններն են շրջանաձև, սպիտակ, կարմիր երիզով:
5. Ի՞նչպես պետք է վարվի վարորդը, երբ մշտական և ժամանակավոր ճանապարհային նշանների պահանջները հակասում են իրար:
6. Ձեր կարծիքով ճանապարհային նշանների խմբերին ինչո՞ւ են տվել կոնկրետ գույն և ձև:
7. Ինչի՞ մասին են տեղեկացնում ուղևորներին նախազգուշացնող նշանները:
8. Ո՞ր նշաններեն են հանդիպում մեզ երկու անգամ բնակելի վայրից դուրս:
9. Նշված նշաններին վտանգավոր հատվածից ի՞նչ հեռավորության վրա ենք հանդիպում առաջին անգամ, երկրորդ անգամ:
10. Ո՞ր նշաններն են տեղադրվում միայն բնակելի վայրերից դուրս:
11. Ո՞ր դեպքերում չունի առավելություն երթևեկող տրամվայը:
12. Ինչի՞ մասին է զգուշացնում վարորդին 1.6. նշանը:
13. 1.7; 1.8; 1.9 նշանները ի՞նչ հեռավորության վրա են գտնվում բնակելի վայրում, բնակելի վայրից դուրս:
14. Մինչև վտանգավոր հատվածը ի՞նչ հեռավորության վրա են հանդիպում մեզ 1.11.1, 1.11.2; 1.12.1;1.12.2- նշանները բնակելի վայրում , բնակելի վայրից դուրս:
15. Ո՞ր նախազգուշացնող նշանին ենք հանդիպում լրացուցիչ տեղեկության ցուցանակի՝ 7.2.1 «Երթևեկության գոտի»-ի մոտ:
16. Ո՞ր նախազգուշացնող նշանին ենք հանդիպում լրացուցիչ տեղեկության ցուցանակի՝ 7.1.1 «Հեռավորություն մինչև օբյեկտ» -ի մոտ:
17. Ո՞ր նախազգուշացնող նշանն է կրկնվում բնակելի վայրերից դուրս:
18. Օբյեկտից ի՞նչ հեռավորության վրա պետք է տեղադրվի նշանը:
19. Ո՞ր նախազգուշացնող նշանն է տեղադրվում օդակայանին մոտ:
20. Ի՞նչ պիտի ապահովի վարորդը՝ 1.27. «Կողային քամի» նշանին հանդիպելիս:

Թեմա № 5
Ճանապարհային նշանները և նրանց բնութագիրը

2 . Առավելության նշաններ

Առավելության նշանները սահմանում են խաչմերուկներով, երթևեկելի մասերի փոխհատումներով կամ ճանապարհների նեղ հատվածներով անցման հերթականությունը: Նշանը կարգավորում է չկարգավորվող խաչմերուկներով անցման առավելությունը: Առավելության նշանները տեղադրվում են ճանապարհի սկզբից կամ կրկնվում է անմիջապես խաչմերուկից առաջ: Եթե գլխավոր ճանապարհի ուղղությունը փոխվում է, ուրեմն նշանի տակ տեղադրվում է լրացուցիչ տեղեկության ցուցանակ: Առավելության նշանները ընդամենը ինն են:

Մի քանի առավելության նշաններ ունեն բնութագրով տարբերվող ձևեր, որպիսի ընկալվի նաև հանդիպակաց կողմից:

2.1

2.1 Գլավոր ճանապարհ

Նշանը կարգավորում է չկարգավորող խաչմերուկների անցման հերթականությունը և վարորդին տալիս է անցման առավելություն: Տեղադրվում է ճանապարհի սկզբից և կրկնվում են անմիջապես խաչմերուկներից առաջ: Եթե փոխվում է գլխավոր ճանապարհի ողղությունը, ուրեմն նշանի տակ տեղադրվում է 7.13 «Գլխավոր ճանապարհի ուղղությունը» լրացուցիչ տեղեկության ցուցանակ, որը ցույց է տալիս գլխավոր ճանապարհի ուղղության շարունակությունը հետագայում:

Գլխավոր ճանապարհին վարորդը օգտվում է առավելությունից, չնայած ճանապարհը պետք է զիջի հատուկ ձայնային ազդանշանով, կապույտ կամ կարմիր գույնի միացրած լուսարձակիչներով կահավորված տրանսպորտին և նրա հետ երթևեկող շարասյանը:

2.2 Գլխավոր ճանապարհի վերջ

2.2

Նշանը ցույց է տալիս 2.1 նշանով կահավորված ճանապարհի վերջը, որտեղ վարորդին էր տրված անցման առավելությունը: Նշանը տեղադրվում է անմիջապես գլխավոր ճանապարհի վերջում:

2.3.1

2.3.1 Հատում երկրորդական ճանապարհի հետ

Ցույց է տալիս, որ ճանապարհը երկու կողմից հատում է երկրորդական ճանապարհը, որտեղ վարորդին տրվում է չկարգավորվող խաչմերուկի անցման առավելություն: Բնակելի վայրում նշանը տեղադրվում է 150-300մ, իսկ բնակելի վայրից դուրս՝ 50-100 մ հեռավորության վրա մինչ վտանգավոր հատվածը:

2.3.2 Երկրորդական ճանապարհի հարում աջից

2.3.2

Ցույց է տալիս, որ գլխավոր ճանապարհին աջից հարում է երկրորդական ճանապարհ, որտեղ վարորդին տրվում է չկարգավորված խաչմերուկից անցման առավելություն: Բնակելի վայրում նշանը տեղադրվում է 150-300մ, իսկ բնակելի վայրից դուրս՝ 50-100 մ հեռավորության վրա մինչ վտանգավոր հատվածը:

2.3.3

2.3.3 Երկրորդական ճանապարհի հարում ձախից

Ցույց է տալիս, որ գլխավոր ճանապարհին ձախից հարում է երկրորդական ճանապարհ, որտեղ վարորդին տրվում է չկարգավորված խաչմերուկից անցման առավելություն: Բնակելի վայրում նշանը տեղադրվում է 150-300մ, իսկ բնակելի վայրից դուրս՝ 50-100 մ հեռավորության վրա մինչ վտանգավոր

հատվածը:

2.4 Զիջեք ճանապարհը

2.4

Նշանը զգուշացնում է, որ հատող ճանապարհով երթևեկող տրանսպորտն ունի անցման առավելություն և վարորդը պետք է զիջի ճանապարհը, իսկ անհրաժեշտության դեպքում կանգնի և թողնի բոլոր տեսակի տրանսպորտներին, որոնք երթևեկում են հատող ճանապարհով, սակայն 7.13 «Գլխավոր ճանարհի ուղղություն» ցուցանակի առկայության դեպքում գլխավոր ճանապարհով ընթացող տրանսպորտային միջոցներին: Նշանը տեղադրվում է անմիջապես խաչմերուկի առջև:

Որպեսզի մենք այս նշանը տարբերենք և չշփոթենք նման այլ նշանների հետ, նա տեղադրվում է գագաթով դեպի ցած:

Արագընթաց ճանապարհներով երթևեկող վարորդներին ժամանակին զգուշացնելու նպատակով նշանը տեղադրվում է լրացուցիչ տեղեկության 7.1.1 կամ 7.1.2 «Հեռավորություն մինչև օբյեկտ» նշանի (ցուցանակի) հետ միասին:

2.5

2.5 Երթևեկությունը առանց կանգառի արգելվում է

Նշանը արգելում է հատող ճանապարհով առանց կանգառի անցումը, այսինքն՝ արգելվում է երթևեկել առանց «կանգ» գծից առաջ (դրա բացակայության դեպքում հատվող երթևեկելի մասի եզրից առաջ) կանգնելու: Վարորդը պետք է զիջի ճանապարհը հատող ճանապարհով երթևեկող բոլոր տրանսպորտային միջոցներին, իսկ 7.13 «Գլխավոր ճանապարհի ուղղություն» լրացուցիչ տեղեկության ցուցանակի առկայություն դեպքում գլխավոր ճանապարհով ընթացող տրանսպորտային միջոցներին: Նշանը տեղադրվում է սահմանափակ տեսանելիություն ունեցող խաչմերուկներում կամ այնպիսի հատվածներում, որտեղ առանց կանգառի երթևեկությունը կարող է առաջացնել ընդհարման վտանգի հնարավորություն:Եթե նշանը տեղադրվում է անմիջապես խաչմերուկից առաջ, ինչպես նաև երկաթուղային գծանցից կամ կարանտինային պահակետից առաջ, ապա վարորդը պարտավոր է կանգնել «կանգ» գծից առաջ, իսկ դրա բացակայության դեպքում նշանից առաջ:

Քանի որ ճանապարհային անվտանգության նպատակով այս նշանին տրվում է հատուկ նշանակություն, նա տարբերվում է բոլոր ճանապարհային նշաններից, ունի ուղանկյան ձև, որը ապահովում է նրա նկատելը ցանկացած բարդ կլիմայական պիրոռեգուլար խաչմերուկներում: 2.1, 2.4 և 2.5 նշաններն ամրացնում են լուսացույցի սյուների վրա, որպեսզի լուսացույցի սարքին կամ անսարքին լինելու դեպքում (չկարգավորվող խաչմերուկ) վարորդը ղեկավարվի առավելության նշանով:

2.6 Առավելություն հանդիպակաց երթևեկության նկատմամբ

2.6

Նշանը տեղադրվում է ճանապարհի նեղ հատվածի վրա և պարտավորում է վարորդին ճանապարհը զիջել հանդիպակաց երթևեկությանը:

Վարորդին արգելում է մուտք գործել ճանապարհի նեղ հատված, եթե դա կարող է դժվարացնել հանդիպակաց երթևեկությունը: Վարորդը պարտավոր է զիջել ճանապարհի նեղ հատված հակադիր կողմից մուտք գործած կամ դրան մոտեցող հանդիպակաց տրանսպորտային միջոցներին: Նշանը տեղադրվում է ճանապարհի նեղ հատվածից առաջ: Անհրաժեշտության դեպքում կարող է տեղադրվել 7.1.1 «Հեռավորություն մինչև օբյեկտ» լրացուցիչ տեղեկատվական նշանի հետ միասին:

2.7

2.7 Առավելություն հանդիպակաց երթևեկության նկատմամբ

Նշանը տեղադրվում է ճանապարհի նեղ հատվածից առաջ և վարորդին տալիս է երթևեկության առավելություն:

Զգուշացնում է վարորդին ճանապարհի նեղ հատվածին մոտենալու մասին, որտեղ անցման առավելությունը տրվում է հանդիպակաց երթևեկությանը:

3 . Արգելող նշաններ

Արգելող նշանները փողոցների և ճանապարհների առանձին հատվածներում երթևեկության <u>սահմանափակման կամ կարգավորման</u> համար են ստեղծված: Հիշված նշանները արգելում կամ չեղյալ են համարում հնում արգելված երթևեկությունը և մտցնում են հատուկ սահմանափակումներ:

Արգելող նշանների նպատակն է տեղեկացնել ճանապարհի մասնակիցներին պարտավորությունների, սահմանափակումների և հատուկ արգելքների պահպանման մասին: Արգելող նշանները ներկայացնում են սպիտակ ֆոնով, շուրջը լայն կարմիր երիզով, 0,6 մ-ից ոչ պակաս տրամագծով շրջան:

<u>Նշանները տարբերվում են իրենց նշանակության և գործողության գոտուն համապատասխան</u>:

<u>Արգելող նշանները ընդամենը 35 են:</u>

3.1

3.1 Մուտքն արգելված է

Նշանն արգելում է տվյալ ուղղությամբ տրանսպորտային միջոցների մուտքը: Այն տեղադրվում է միակողմանի երթևեկության փողոցի կամ ճանապարհի վերջում կամ այնպիսի տեղերում, որտեղ անվտանգության տեսակետից երթևեկությունը արգելված է: Նշանի գործողությունը չի

տարածվում երթուղային տրասնպորտի վրա:

3.2

3.2 Երթևեկությունն արգելված է

Նշանը արգելում է բոլոր տեսակի տրանսպորտային միջոցների երթևեկումը ճանապարհի որոշակի հատվածներով կամ որոշակի տարածության վրա: Նշանը տեղադրվում է անմիջապես ճանապարհի հատվածից առաջ, որտեղ տարածվում է որոշակի արգելքը: Նշանի ազդեցությունը չի տարածվում՝

- երթուղային տրասնպորտային միջոցների վրա;
- տրասնպորտային միջոցների վրա, որոնք ծառայում են նշված գոտում գտնվող ձեռնարկությանը կամ պատկանում են նույն գոտում բնակվող կամ աշխատող անձի: Այս դեպքում տրասնպորտային միջոցը մտնում է նշված գոտի և դուրս է գալիս այդտեղից նշանակված վայրին մոտ գտնվող ամենամոտիկ խաչմերուկ;
- տրասնպորտային միջոցների կամ հաշմանդամին տեղափոխող այլ տրանսպորտային միջոցների վրա, որոնք վարում են առաջին կամ երկրորդ խմբի հաշմանդամները:

Ուշադրություն !!!

3.1 , 3.2 , 3.3 , 3.18.1 , 3.18.2 , 3.19 , 3.27 նշանների ազդեցությունը չի տարածվում. որոշված երթուղով ընթացող երթուղային տրասնպորտային միջոցների վրա (ավտոբուս, միկրոավտոբուս,տրամվայ,տրոլեյբուս):

Այս նշանը չի վերաբերում նաև՝ 1-ին և 2-րդ խմբի հաշմանդամներին կամ նրանց տեղափոխողներին, ինչպես նաև քաղաքացիներին, որոնք բնակվում կամ աշխատում են այս գոտում գտնվող ձեռնարկություններում:

Ուշադրություն: 3.2 , 3.3 , 3.4 , 3.5 , 3.6 , 3.7 , 3.8 , 3.9 , 3.32 , 3.33 նշանները արգելում են համապատասխան տիպի տրանսպորտային միջոցների երթևեկություն երկու ուղղությամբ:

3.3 Մեխանիկական տրանսպորտների երթևեկությունն արգելված է

3.3

Նշանը արգելում է բոլոր տեսակի մեխանիկական տրանսպորտային միջոցների երթևեկությունը ճանապարհի որոշակի հատվածով կամ որոշակի տարածքով: Նշանը տեղադրվում է ճանապարհի հատվածից անմիջապես առաջ, որտեղ տարածվում է նշված արգելքը: Նշանի ազդեցությունը չի տարածվում՝

-երթուղային տրանսպորտային միջոցների վրա;

- տրանսպորտային միջոցների վրա, որոնք ծառայում են նշված գոտում գտնվող ձեռնարկությանը կամ պատկանում են նույն գոտում բնակվող կամ աշխատող անձի: Այս դեպքում տրասնպորտային միջոցը մտնում է նշված գոտի և դուրս է գալիս այդտեղից նշանակված վայրին մոտ գտնվող ամենամոտիկ խաչմերուկ;

- տրասնպորտային միջոցների կամ հաշմանդամին տեղափոխող այլ տրանսպորտային միջոցների վրա, որոնք վարում են առաջին կամ երկրորդ խմբի հաշմանդամները:

3.4

3.4 Բեռնատար ավտոմոբլների երթևեկությունն արգելված է

Արգելվում է 3.5 տոննայից ավելի (եթե նշանի վրա զանգվածը չի նշված) կամ նշանի վրա նշվածից մեծ թույլատրելի առավելագույն զանգված ունեցող բեռնատար ավտոմոբիլների և տրանսպորտային միջոցների շարժակազմերի, ինչպես նաև տրակտորների և ինքնագնաց մեքենաների երթևեկությունը: Նշանը չի արգելում այն տրանսպորտային միջոցների երթևեկությունը, որոնք ծառայում են նշված գոտում գտնվող ձեռնարկությանը կամ պատկանում են նույն գոտում բնակվող կամ աշխատող անձին: 3.4 նշանը չի արգելում այն բեռնատար ավտոմոբիլների երթևեկությունը, որոնց ბორტებზე կան թեք, սպիտակ գծեր կամ հատկացված են ուղևորների տեղափոխման համար:

Այս դեպքում տրասնպորտային միջոցը մտնում է նշված գոտի և դուրս է գալիս այդտեղից նշանակված վայրին մոտ գտնվող ամենամոտիկ խաչմերուկ: Ինչպես նաև այն բեռնատար ավտոմոբիլների երթևեկությունը, որոնց թափքի վրա կան թեք, սպիտակ գծեր կամ հատկացված են ուղևորների տեղափոխման համար: Նշանը տեղադրվում է անմիջապես ճանապարհի հատվածից առաջ, որտեղ տարածվում է որոշակի արգելքը:

3.5 Մոտոցիկլների երթևեկությունն արգելված է

3.5

Նշանը արգելում է մոտոցիկլների երթևեկությունը ճանապարհի որոշակի հատվածով կամ որոշակի տարածքով: Նշանը տեղադրվում է անմիջապես արգելքի գոտուց առաջ: Տրասնպորտային միջոցների վրա, որոնք ծառայում են նշված գոտում գտնվող ձեռնարկությանը կամ պատկանում են նույն գոտում բնակվող կամ աշխատող անձի: Այս դեպքում տրասնպորտային միջոցը մտնում է նշված գոտի և դուրս է գալիս այդտեղից նշանակված վայրին մոտ գտնվող ամենամոտիկ խաչմերուկ:

3.6

3.6 Տրակտորի երթևեկությունն արգելված է

Նշանը արգելում է տրակտորների և ինքնագնաց մեքենաների երթևեկությունը: Նշանը տեղադրվում է անմիջապես արգելքի գոտուց առաջ: Տրասնպորտային միջոցների վրա, որոնք ծառայում են նշված գոտում գտնվող ձեռնարկությանը կամ պատկանում են նույն գոտում բնակվող կամ աշխատող անձի: Այս դեպքում տրասնպորտային միջոցը մտնում է նշված գոտի և դուրս է գալիս այդտեղից նշանակված վայրին մոտ գտնվող ամենամոտիկ խաչմերուկ:

3.7 Կցորդով երթևեկությունն արգելված է

Արգելվում է ցանկացած տեսակի կցորդով բեռնատար ավտոմոբիլների և տրակտորների երթևեկությունը, ինչպես նաև մեխանիկական տրանսպորտային միջոցների քարշակումը: Նշանը արգելում է մոտոցիկլերի երթևեկությունը ճանապարհի որոշակի հատվածով կամ որոշակի տարածքով: Նշանը տեղադրվում է անմիջապես արգելքի գոտուց առաջ: Տրասնպորտային միջոցների վրա, որոնք ծառայում են նշված գոտում գտնվող ձեռնարկությանը կամ պատկանում են նույն գոտում բնակվող կամ աշխատող անձի: Այս դեպքում տրասնպորտային միջոցը մտնում է նշված գոտի և դուրս է գալիս այդտեղից նշանակված վայրին մոտ գտնվող ամենամոտիկ խաչմերուկ:

3.7

3,8

3.8 Լծասայլերի երթևեկությունն արգելված է

Արգելվում է լծասայլերի, լծասահնակների, հեծկան կամ բեռնակիր կենդանիներով երթևեկությունը և անասուններ քշելը: Նշանը տեղադրվում է անմիջապես արգելքի գոտուց առաջ: Տրասնպորտային միջոցների վրա, որոնք ծառայում են նշված գոտում գտնվող ձեռնարկությանը կամ պատկանում են նույն գոտում բնակվող կամ աշխատող անձի: Այս դեպքում տրասնպորտային միջոցը մտնում է նշված գոտի և դուրս է գալիս այդտեղից նշանակված վայրին մոտ գտնվող ամենամոտիկ խաչմերուկ:

3.9 Հեծանիվներով երթևեկությունն արգելված է

3.9

Նշանն արգելում է հեծանիվների և մոպեդների երթևեկությունը:

Դրվում է ինտենսիվ երթևեկության և քաղաքի ճանապարհների վրա, որտեղով անցնում են ընդհանուր օգտագործման տրանսպորտի երթուղիները և որտեղ երթևեկության ընթացքում կարող են խոչընդոտներ ստեղծվել: Այս դեպքում հեծանվորդը պետք է իջնի հեծանիվից և հեծանիվը քշելով տանի: Տեղադրվում է անմիջապես արգելքի գոտուց առաջ:

3.10

3.10 Հետիոտների երթևեկությունն արգելված է

Անվտանգության նպատակով նշանը արգելում է հետիոտնի երթևեկությունը ճանապարհների որոշակի հատվածներով (թունելներով, խաչմերուկներով, էստակադներով), որտեղ չկան հետիոտնային անցումներ կամ արահետներ: Արգելքը վերաբերում է միայն հետիոտներին և տեղադրվում է արգելքի գոտուց անմիջապես առաջ: 3.10 նշանի ազդեցությունը տարածվում է ճանապարհի միայն այն կողմով, որտեղ այն տեղադրված է:

3.11 Զանգվածի սահմանափակում

Արգելվում է տրանսպորտային միջոցների, այդ թվում նաև տրասնպորտային միջոցների շարժակազմերի երթևեկությունը, որոնց ընդհանուր փաստացի զանգվածը մեծ է նշանի վրա նշվածից: Ինչպես կարգն՝ է նշանը տեղադրում են ինժեներական կառույցներից (կամուրջներ, էստակդներ և այլն) առաջ, որոնք կարող են վնասվել տրասնպորտային միջոցների մեծ զանգվածի պատճառով:

3.12

3.12 Սռնու վրա բեռնվածության սահմանափակում

Արգելվում է այն տրանսպորտային միջոցների երթևեկությունը, որոնց որևէ սռնու վրա բեռնվածությունը մեծ է նշանի նրա նշվածից:

Հաշվում են հետևյալ կերպ՝ երկու սռնիով ավտոմոբիլի առաջին սռնու վրայի բեռնվածությունը կազմում է փաստացի զանգվածի 1/3 մասը, իսկ հետևինինը՝ 2/3մասը: Երեք կամ ավելի սռնիի դեպքում բեռնվածությունը հավասարապես մասնատվում է և համապատասխանաբար կազմում 1/3 տոննա զանգված: Օրինակ, եթե մեքենան երեք սռնանի է և նա կարողանում է տանել 12 տոնա բեռ, նա կարող է այս նշանով անցնել, քանի որ 12-ի երրորդ մասը 4-ն է: Իսկ երկու սռնանի մեքենային նույն բեռով այս նշանով անցնելը արգելվում է:

3.13 Բարձրության սահմանափակում

3.13

Արգելվում է այն տրասնպորտային միջոցների երթևեկությունը, որոնց եզրաչափային բարձրությունը բեռով կամ առանց բեռի ավելի է նշանի վրա նշվածից: Նշանը տեղադրվում է կամուրջներից, կամարներից և այլ տեղերից առաջ, որտեղ եզրաչափային բարձրության գերազանցումը վարորդին չի տալիս անվտանգ անցման հնարավորություն:

3.14

3.14 Լայնության սահմանափակում

Արգելվում է այն տրասնպորտային միջոցների երթևեկությունը, որոնց եզրաչափային լայնությունը բեռով կամ առանց բեռի ավելի է նշանի վրա նշվածից: Նշանը տեղադրվում է նեղ կամուրջներից, թունելներից և այլ տեղերից առաջ, որտեղ եզրաչափային լայնության գերազանցումը վարորդին չի տալիս անվտանգ անցման հնարավորություն:

3.15 Երկարության սահմանափակում

3.15

Արգելվում է տրասնպորտային միջոցների, ինչպես նաև ավտոգնացքների երթևեկությունը, որոնց եզրաչափային երկարությունը բեռով կամ առանց բեռի ավելի է նշանի վրա նշվածից: Նշանը տեղադրվում է ճանապարհի շատ նեղ հատվածներից, վտանգավոր և փոքր շառավղով շրջադարձներից առաջ, որտեղ դժվարանում են մաններում կատարել ավտոգնացքները և միացրած ավտոբուսները և վտանգ են սպառնում երթևեկությանը:

3.16

3.16 Նվազագույն միջտարածության սահմանափակում

Արգելվում է տրասնպորտային միջոցների երթևեկությունը, որոնց միջև ընկած տարածությունը փոքր է նշանի վրա նշվածից: Նշանը տեղադրվում է անմիջապես արգելքի գոտու առաջ: 3.16 նշանի ազդեցությունը տարածվում է մինչև դրված տեղին հաջորդող ամենամոտ խաչմերուկը, իսկ բնակելի վայրում խաչմերուկի բացակայության դեպքում՝ մինչև բնակելի վայրի վերջը: Նշանների ազդեցությունը տարածվում է նաև ճանապարհի մերձակա տարածքի ելքի, դաշտային, անտառային և այլ երկրորդական ճանապարհների հատումների (միացումների) վրա, որոնց դիմաց չի տեղադրված համապատասխան նշան: 3.16 նշանի ազդեցության գոտին կարող է կարճանալ 7.2.1 «Գործողության գոտի» լրացուցիչ տեղեկության ցուցանակի օգտագործմամբ:

3.17 Մաքսային կետ (պորտալ)

3.17

Արգելվում է առանց կանգառի անցումը մաքսային կետի (Վրաստանի տնտեսական սահմանի մոտ գտնվող հսկիչ կետ) մոտով: Նշանը տեղադրվում է անմիջապես հսկիչ կետի մոտ:

3.17.2

3.17.2 Վտանգ

Արգելվում է, առանց բացառության, բոլոր տրանսպորտային միջոցների հետագա երթևեկությունը ճանապարհատրանսպորտային պատահարի, հրդեհի, վթարի և այլ վտանգի կապակցությամբ: Նշանը տեղադրվում է անմիջապես ագելքի կետից առաջ:

3.18.1 Աջ շրջադարձն արգելված է

3.18.1

Նշանը արգելում է վարորդին դեպի աջ շրջադարձ կատարել: Երթևեկությունը թույլատրելի է ուղիղ, ձախ և հետադարձ ուղղությամբ: Նշանի ազդեցությունը տարածվում է երթևեկելի մասի այն հատումներով, որոնց առջևում նույնպես դրանք կան: Նշանի ազդեցությունը չի տարածվում երթուղային տրանսպորտային միջոցների վրա:

3.18.2

3.18.2 Ձախ շրջադարձն արգելված է

Նշանը արգելում է վարորդին դեպի ձախ շրջադարձ կատարել, հետդարձը թույլատրելի է: Նշանի ազդեցությունը տարածվում է երթևեկելի մասի այն հատումներով, որոնց առջևում նույնպես դրանք կան: Նշանի ազդեցությունը չի տարածվում երթուղային տրանսպորտային միջոցների վրա :

3.19 Հետադրաձն արգելված է

3.19

Արգելում է երթուղային տրանսպորտային միջոցների հետադարձը: Նշանը տեղադրվում խաչմերուկներից առաջ կամ էլ այնպիսի տեղերում, որտեղ ճանապարհի լայնության պատճառով դժվարանում է հետադարձը և այս մաններումով վտանգ է առաջանում ճանապարհային երթևեկության մյուս մասնակիցների, հետիոտնի համար: Խաչմերուկից առաջ տեղադրված նշանի ազդեցությունը տարածվում է երթևեկելի մասի այն հատումներով, որոնց առջևում նույնպես դրանք կան: Նշանի ազդեցությունը չի տարածվում երթուղային տրանսպորտային միջոցների վրա :

3.20

3.20 Վազանցն արգելվում է

Արգելվում է բոլոր տեսակի տրանսպորտային միջոցների վազանցը, բացառությամբ 30 կմ/ժ-ից պակաս արագությամբ ընթացող տրանսպորտային միջոցների՝ մոպեդի և առանց կցասայլակի երկանիվ մոտոցիկլի: Նշանը տեղադրվում է անմիջապես արգելքի գոտուց առաջ: 3.20 նշանի ազդեցությունը տարածվում է նշանի տեղադրման վայրից մինչև մոտակա խաչմերուկը, իսկ բնակելի վայրում, եթե առկա չեն խաչմերուկներ, ապա մինչև բնակելի վայրի վերջը: Նշանների ազդեցությունը տարածվում է նաև ճանապարհի մերձակա տարածքի ելքի, դաշտային, անտառային և այլ երկրորդական ճանապարհների հատումների (միացումների) վրա, որոնց դիմաց չի տեղադրված համապատասխան նշան: 3.20 նշանի ազդեցության գոտին կարող է փոքրանալ 7.2.1 «Գործողության գոտի» լրացուցիչ տեղեկության ցուցանակի օգտագործմամբ:

Այս նշանը (23457-86 պետական տիպօրինակի համապատասխան) ինչպես կարգ, օգտագործվում է այնպիսի ճանապարհներով, որտեղ երկու ուղղությամբ երթևեկող մեկ, երկու կամ երեք գիծ կա և ճանապարհային պայմանների՝ ոչ պարզ տեսանելիության և ինտենսիվ երթևեկության պատճառով վազանցը կարող է երթևեկության ապահովությանը վտանգ առաջացնել:

3.21 Վազանցի արգելման գոտու վերջ

Այս նշանը ցույց է տալիս 3.20 նշանի ազդեցության գոտու վերջը:

3.21

3.22

3.22 Բեռնատար ավտոմոբիլներով վազանցն արգելված է

Բոլոր տեսակի տրանսպորտային միջոցներով վազանցն արգեվում է՝ բացառությամբ մոտոցիկլների, առանց կցասայլակի երկանիվ մոտոցիկլների, թեթև մարդատար ավտոմոբիլների, ավտոբուսների և մինչև 3,5 տոննա թույլատրելի առավելագույն զանգված ունեցող բեռնատար ավտոմոբիլների: Տրակտորին արգելվում է բոլոր տեսակի տրանսպորտային միջոցների վազանցը, բացառությամբ լծասայլակի և հեծանիվի: Նշանը տեղադրվում է անմիջապես արգելքի գոտու առջև: 3.22 նշանների ազդեցությունը տարածվում է նշանի տեղադրումից մինչև առաջին խաչմերուկ, իսկ բնակելի վայրում, եթե առկա չեն խաչմերուկներ, ապա մինչև բնակելի վայրի վերջը: Նշանների ազդեցությունը տարածվում է նաև ճանապարհի մերձակա տարածքի ելքի, դաշտային, անտառային և այլ երկրորդական ճանապարհների հատումների (միացումների) վրա, որոնց դիմաց չի տեղադրված համապատասխան նշան: 3.22 նշանի ազդեցության գոտին փոքրանում է ազդեցության

գոտու վերջում 3.23 **Բեռնատար ավտոմոբիլներով վազանցի արգելման գոտու վերջ** նշանի կամ 7.2.1 «Գործողության գոտի» լրացուցիչ տեղեկության ցուցանակի օգտագործմամբ:

3.23 Բեռնատար ավտոմոբիլներով վազանցի արգելման գոտու վերջ

Այս նշանը ցույց է տալիս 3.22 նշանի ազդեցության գոտու վերջը:

3.23

3.24

3.24 Առավելագույն արագության սահմանափակում

Արգելվում է երթևեկել նշանի վրա նշվածից բարձր արագությամբ (կմ/ժ): Նշանը տեղադրվում է անմիջապես արգելքի գոտու առաջ: 5.22 «Բնակելի վայրի սկիզբ» նշանով նշված բնակելի վայրի առաջ դրված 3.24 «**Առավելագույն արագության սահմանափակում»** նշանի ազդեցությունը տարածվում է վայրը ցույց տվող մինչև 5.22 նշանը:

3.24 նշանի ազդեցությունը տարածվում է նշանի տեղադրումից մինչև առաջին խաչմերուկ, իսկ բնակելի վայրում, եթե առկա չեն խաչմերուկներ, ապա մինչև բնակելի վայրի վերջը: Նշանների ազդեցությունը տարածվում է նաև ճանապարհի մերձակա տարածքի ելքի, դաշտային, անտառային և այլ երկրորդական ճանապարհների հատումների (միացումների) վրա, որոնց դիմաց չի տեղադրված համապատասխան նշան:

Նշանի ազդեցության գոտին կարող է փոքրանալ հետևյալ դեպքերում՝

Նշանից հետո 3.25 նշանը տեղադրելով;

Նշանից հետո արագության այլ տվյալների նույն նշանի տեղադրմամբ;

Նշանից հետո 3.31 նշանը տեղադրելով;

Նշանի մոտ 7.2.1 ցուցանակի կիրառմամբ;

Նշանի մոտ կարելի է օգտագործել 7.16 և դա տարածվում է միայն այն դեպքերում, երբ ճանապարհի մակերեսը խոնավ է: Ինչպես նաև ճանապարհի երթևեկելի մասի վերևում կարող է տեղադրվել 7.14 նշանի հետ միասին, որտեղ կորոշի արագության ռեժիմը համապատասխան գծի վրա:

3.25 Առավելագույն արագության սահմանափակման գոտու վերջ

Այս նշանը ցույց է տալիս 3.25 նշանի ազդեցության գոտու վերջը:

3.25

3.26

3.26 Ձայնային ազդանշան տալն արգելված է

Արգելվում է օգտվել ձայնային ազդանշաններից, բացի այն դեպքերից, երբ այն տրվում է ճանապարհատրանսպորտային պատահար կանխելու համար: Նշանը տեղադրվում է անմիջապես արգելքի գոտուց առաջ: 3.26 նշանի ազդեցությունը տարածվում է նշանի տեղադրումից մինչև առաջին խաչմերուկ, իսկ բնակելի վայրում, եթե առկա չեն խաչմերուկներ, ապա մինչև բնակելի վայրի վերջը: Նշանների ազդեցությունը տարածվում է նաև ճանապարհի մերձակա տարածքի ելքի, դաշտային, անտառային և այլ երկրորդական ճանապարհների հատումների (միացումների) վրա, որոնց դիմաց չի տեղադրված համապատասխան նշան:

3.26 նշանի ազդեցության գոտին կարող է փոքրանալ 7.2.1 «Գործողության գոտի» լրացուցիչ տեղեկության ցուցանակի օգտագործմամբ:

3.27 Կանգառն արգելված է

3.27

Արգելվում են տրանսպորտային միջոցների կանգառն ու կայանումը: Նշանը տեղադրվում է անմիջապես արգելքի գոտու առաջ: Նշանի ազդեցությունը չի տարածվում երթուղային տրանսպորտային միջոցների վրա: 3.27 նշանը կարելի է օգտագործել 1.4 գծանշումի հետ միասին, այս դեպքերում Նշանների ազդեցության գոտին սահմանվում է գծանշման երկարությամբ: 3.27 նշանի ազդեցությունը տարածվում է ճանապարհի այն մասում, որտեղ տեղադրված է: 3.27 նշանի ազդեցությունը տարածվում է նշանի տեղադրումից մինչև առաջին խաչմերուկ, իսկ բնակելի վայրում, եթե առկա չեն խաչմերուկներ, ապա մինչև բնակելի վայրի վերջը: Նշանների ազդեցությունը տարածվում է նաև ճանապարհի մերձակա տարածքի ելքի, դաշտային, անտառային և այլ երկրորդական ճանապարհների հատումների (միացումների) վրա, որոնց դիմաց չի տեղադրված համապատասխան նշան:

3.27 նշանի ազդեցության գոտին փոքրանում է նրա ազդեցության գոտու վերջում 7.2.3 «Ազդեցության գոտի» լրացուցիչ ցուցանակի կրկնումով, 3.27-3.30 նշանների տեղադրումով կամ 7.2.2 «Ազդեցության գոտի» ցուցանակի կիրառմամբ:

Ուշադրություն !!!

3.1 , 3.2 , 3.3 , 3.18.1 , 3.18.2 , 3.19 , 3.27 նշանների ազդեցությունը չի տարածվում՝ որոշված երթուղով ընթացող երթուղային տրանսպորտային միջոցների վրա (ավտոբուս, մ/ավտոբուս, տրամվայ, տրոլեյբուս):

Նշանի ազդեցության գոտին կարող է փոքրանալ և/կամ ճշտվել

Նշանների հետ 7.2.2 7.2.3 7.2.4 7.5.4 7.5.5 7.5.6 7.5.7 ցուցանակների օգտագործմամբ;

7.2.2 մատնանշում է նշանի ազդեցության գոտին: Կոնկրետ դեպքերում նշանի ազդման գոտին 10 մ է:

7.2.3 մատնանշում է նշանի ազդեցության գոտու վերջը,

7.2.4 ցուցանակը զգուշացնում է, որ վարորդը գտնվում է նշանի ազդեցության գոտում,

7.5.4; 7.5.5 ;7.5.6 ;7.5.7 «Ազդման ժամանակը» ցուցանակները նշում են օրվա և գիշերվա ժամերը և շաբաթվա այն օրերը, երբ գործում են նշանները:

3.28 Կայանելն արգելված է

3.28

Արգելվում է տրանսպորտային միջոցների կայանում: Նշանը տեղադրվում է անմիջապես արգելքի գոտու առաջ: Նշանի ազդեցությունը չի տարածվում տաքսիների վրա, որոնց միացված է հաշվիչ և այն տրանսպորտային միջոցներին, որոնց վարում են առաջին կամ երկրորդ խմբի հաշմանդամները կամ նրանց տեղափոխող այլ տրանսպորտային միջոցները: 3.28 նշանը կարելի է օգտագործել 1.10 գծանշումի հետ միասին, այս դեպքերում նշանների ազդեցության գոտին սահմանվում է գծանշումի երկարությամբ: 3.28 նշանի ազդեցությունը տարածվում է ճանապարհի միայն այն կողմում, որտեղ դա տեղադրված է: 3.28 նշանի ազդեցությունը տարածվում է նշանի տեղադրումից մինչև առաջին խաչմերուկ, իսկ բնակելի վայրում, եթե առկա չեն խաչմերուկներ, ապա մինչև բնակելի վայրի վերջը: Նշանների ազդեցությունը տարածվում է նաև ճանապարհի մերձակա տարածքի ելքի, դաշտային, անտառային և այլ երկրորդական ճանապարհների հատումների (միացումների) վրա, որոնց դիմաց չի տեղադրված համապատասխան նշան:

3.28 նշանի ազդեցության գոտին փոքրանում է նրա ազդեցության գոտու վերջում 7.2.3 «Ազդեցության գոտի» լրացուցիչ ցուցանակի կրկնումով, 3.27-3.30 նշանների տեղադրումով կամ 7.2.2 «Ազդեցության գոտի» ցուցանակի կիրառմամբ:

3.29

3.29 Կայանելն արգելված է ամսվա կենտ օրերին

Արգելվում է տրանսպորտային միջոցների կայանում ամսվա կենտ օրերին: Նշանը տեղադրվում է անմիջապես արգելքի գոտու առաջ: Նշանի ազդեցությունը չի տարածվում տաքսիների վրա, որոնց միացված է հաշվիչ և այն տրանսպորտային միջոցների վրա, որոնք վարում են առաջին կամ երկրորդ խմբի հաշմանդամները կամ նրանց տեղափոխող այլ տրանսպորտային միջոցները: 3.29 և 3.30 նշանները միաժամանակ օգտագործելիս տրանսպորտային միջոցի ճանապարհի մի կողմից մյուսին տեղափոխելու համար օգտագործման ժամանակն է ժամը 19-ից մինչև 21-ը: 3.29 նշանի ազդեցությունը տարածվում է ճանապարհի միայն այն կողմում, որտեղ այն տեղադրված է: 3.29

նշանի ազդեցությունը տարածվում է նշանի տեղադրումից մինչև առաջին խաչմերուկ, իսկ բնակելի վայրում, եթե առկա չեն խաչմերուկներ, ապա մինչև բնակելի վայրի վերջը: Նշանների ազդեցությունը տարածվում է նաև ճանապարհի մերձակա տարածքի ելքի, դաշտային, անտառային և այլ երկրորդական ճանապարհների հատումների (միացումների) վրա, որոնց դիմաց չի տեղադրված համապատասխան նշան:

3.29 նշանի ազդեցության գոտին փոքրանում է նրա ազդեցության գոտու վերջում 7.2.3 «Ազդեցության գոտի» լրացուցիչ ցուցանակի կրկնումով, 3.27-3.30 նշանների տեղադրումով կամ 7.2.2 «Ազդեցության գոտի» ցուցանակի կիրառմամբ:

3.30 Կայանելն արգելված է ամսվա զույգ օրերին

3.30

Արգելվում է տրանսպորտային միջոցների կայանում ամսվա զույգ օրերին: Նշանը տեղադրվում է անմիջապես արգելքի գոտուց առաջ: **3.30** Նշանի ազդեցությունը չի տարածվում տաքսիների վրա, որոնց միացված է հաշվիչ և այն տրանսպորտային միջոցների վրա, որոնք վարում են առաջին կամ երկրորդ խմբի հաշմանդամները կամ նրանց տեղափոխող այլ տրանսպորտային միջոցները: 3.29 և 3.30 նշանները միաժամանակ օգտագործելիս տրանսպորտային միջոցի ճանապարհի մի կողմից մյուսին տեղափոխելու համար օգտագործման ժամանակն է ժամը 19-ից մինչև 21-ը: **3.30** նշանի ազդեցությունը տարածվում է ճանապարհի միայն այն կողմում, որտեղ այն տեղադրված է: **3.30** նշանի ազդեցությունը տարածվում է նշանի տեղադրումից մինչև առաջին խաչմերուկ, իսկ բնակելի վայրում, եթե առկա չեն խաչմերուկներ, ապա մինչև բնակելի վայրի վերջը: Նշանների ազդեցությունը տարածվում է նաև ճանապարհի մերձակա տարածքի ելքի, դաշտային, անտառային և այլ երկրորդական ճանապարհների հատումների (միացումների) վրա, որոնց դիմաց չի տեղադրված համապատասխան նշան:

3.30 նշանի ազդեցության գոտին փոքրանում է նրա ազդեցության գոտու վերջում 7.2.3 «Ազդեցության գոտի» լրացուցիչ ցուցանակի կրկնումով, 3.27-3.30 նշանների տեղադրումով կամ 7.2.2 «Ազդեցության գոտի» ցուցանակի կիրառմամբ:


3.31

3.31 Բոլոր սահմանափակումների գոտու վերջ

Նշանը ցույց է տալիս 3.16, 3.20, 3.22, 3.24, 3.26, 3.27, 3.28, 3.29, 3.30 արգելող նշանների ազդեցության գոտու վերջ:

3.22 Վտանգավոր բեռներով տրանսպորտային միջոցների երթևեկությունն արգելված է

3.22

Արգելվում է այն տրանսպորտային միջոցների երթևեկությունը, որոնք կահավորված են «Վտանգավոր բեռ» ճանաչման նշանով: Նշանը տեղադրվում է անմիջապես արգելքի գոտու առաջ:

Ուշադրություն: 3.2 , 3.3 , 3.4 , 3.5 , 3.6 , 3.7 , 3.8 , 3.9 , 3.32 , 3.33 նշանները արգելում են համապատասխան տիպի տրանսպորտային միջոցների երթևեկություն երկու ուղղությամբ:

3.24

3.24 Պայթուցիկ և դյուրավառ բեռներով տրանսպորտային միջոցների երթևեկությունն արգելված է

Արգելվում է այն տրանսպորտային միջոցների եթևկությունը, որոնք կահավորված են «Վտանգավոր բեռ» ճանաչման նշաններով և ըստ 19433-88 պետական ստանդարտի նախատեսված են 1.22-2.4, 3.1, 3.2 5.2 դասերի վտանգավոր բեռներ տեղափոխելու համար: Նշանը տեղադրվում է անմիջապես արգելքի գոտուց առաջ:

3.2–3.9 և 3.33 նշանները երկու ուղղությամբ էլ արգելում են համապատասխան տեսակների տրանսպորտային միջոցների երթևեկությունը:

Նշանների ազդեցությունը չի տարածվում՝

ա) 3.1–3.3, 3.18.1, 3.18.2, 3.19, 3.27 – ընդհանուր օգտագործման տրանսպորտային միջոցների վրա;

բ) 3.2–3.8 – այն տրանպորտային նշանների վրա, որոնք սպասարկում են ազգդման գոտում գտնվող օբյեկտները, ինչպես նաև պատկանում կամ սպասարկում են նշված գոտում բնակվող կամ աշխատող քաղաքացիներին: Այդ դեպքերում տրանսպորտային միջոցները պետք է նշված գոտի մուտք գործեն և այնտեղից դուրս գան օբյեկտին մոտակա խաչմերուկից;

գ) 3.28–3.30 – տաքսիների վրա, որոնց միացված են հաշվիչներ;

դ) 3.2, 3.3, 3.28–3.30 – առաջին և երկրորդ խմբերի հաշմանդամների կողմից ղեկավարվող կամ նրանց փոխադրող տրանսպորտային միջոցների վրա;

3.18.1, 3.18.2 նշանների ազդեցությունը տարածվում է – երթևեկելի մասերի այն հատումների վրա, որոնցից առաջ տեղադրված են համապատասխան նշանները;

3.16, 3.20, 3.22, 3.24, 3.26–3.30 նշանների ազդեցությունը տարածվում է – նշանի տեղադրման տեղից մինչև դրանից հետո գտնվող մոտակա խաչմերուկը, իսկ բնակավայրերում խաչմերուկի բացակայության դեպքում մինչև բնակավայրի վերջը: Նշանների ազդեցությունը չի ընդհատվում ճանապարհին մերձակա տարածքներից ելքի և դաշտային, անտառային և այլ երկրոդական ճանապարհների հատման (հարման) տեղերում, եթե դրանցից առաջ համապատասխան նշաններ տեղադրված չեն:

5.22 նշանով նշված բնակելի վայրից առաջ տեղադրված 3.24 նշանի ազդեցությունը տարածվում է մինչև վայրը նշող 5.22 նշանը:

Նշանների ազդման գոտին տարածվում է՝

ա) 3.16 և 3.26 նշանների համար – 7.2.1 ցուցանակի կիրառմամբ,

բ) 3.20, 3.22, 3.24 նշանների համար – նրանց ազդեցության գոտու վերջում համապատասխանաբար 3.21, 3.23, 3.25 նշանների տեղադրմամբ կամ 7.2.1 ցուցանակի կիրառմամբ: 3.24 նշանի համար ազդեցության գոտին տարածվում է երթևեկության առավելագույն արագության այլ մեծությամբ նույն 3.24 նշանի տեղադրմամբ;

գ) 3.27–3.30 նշանների համար – նրանց ազդեցության գոտու վերջում 7.2.3 ցուցանակի կիրառմամբ 3.27–3.30 նշանները տեղադրելով կամ 7.2.2 ցուցանակի տեղադրմամբ: 3.27 նշանի կիրառում 1.4 գծանշման հետ, իսկ 3.28 նշանը – 1.10 գծանշմաան հետ համատեղ, ընդ որում նշանների ազդման գոտին որոշվում է գծանշման երկարությամբ:

3.10, 3.27–3.30 նշանների ազդեցությունը տարածվում է միայն ճանապարհի այն կողմում, որտեղ դրանք տեղադրված են:

Ստուգողական հարցեր ինքնաստուգման համար

1. **Ի՞նչ են սահմանում առավելության նշանները:**
2. **Ի՞նչ ձևի են լինում առավելության նշանները:**
3. **Մինչև օբյեկտ ի՞նչ հեռավորության վրա են տեղադրվում առավելության նշանները և մինչև ու՞ր է տարածվում նրանց պահանջները:**
4. **Ի՞նչ են սահմանում թելադրող նշանները:**
5. **Ի՞նչ ձևի են լինում թելադրող նշանները:**
6. **Ո՞րտեղ են տեղադրվում նրանք և ու՞ր են տարածվում նրանց պահանջները:**
7. **Ո՞ր նշանների ազդեցությունը չի տարածվում երթուղային տրանսպորտային միջոցների վրա:**

Թեմա № 6
Ճանապարհային նշանները և նրանց բնութագիրը

4. Թելադրող նշաններ

Թելադրող նշանները ցույց են տալիս երթևեկության թույլատրելի ուղղությունները, նվազագույն արագությունը, ինչպես նաև հետիոտների, հեծանվորդների և որոշակի կարգի տրանսպորտային միջոցների համար նախատեսում են շարժման ուղղությունները:

Թելադրող նշանները (բացի 4.9.1-4.9.3 նշանների) շրջանաձև են, նրանց վրա պատկերված խորհրդանշաններով:

Թելադրող նշանները տեղադրվում են ճիշտ այն տեղում, որտեղ նրանք գործում են:

Թելադրող նշանների ազդեցությունը չի տարածվում որոշված երթուղով ընթացող ընդհանուր օգտագործման տրանսպորտային միջոցների վրա:

<u>Թելադրող նշանները ընդամենը 18 են:</u>

Նշված նշանները մտցնում կամ չեղյալ են համարում երթևեկության սահմանված ռեժիմը:

4.1.1

4.1.1 Երթևեկությունն ուղիղ

Վարորդին պարտավորեցնում են երթևեկել միայն ուղիղ: Նշանի ազդեցությունը տարածվում է երթևեկելի մասի այն հատվածում, որից առաջ նշանն է տեղադրված: 4.1.1 **Երթևեկությունն ուղիղ** նշանի ազդեցությունը, որը տեղադրված է ճանապարհի սկզբում, տարածվում է մինչև մոտակա խաչմերուկը: Նշանը չի արգելում ճանապարհին մերձակա տարածք կամ բակ մտնելու համար դեպի աջ շրջադարձ կատարել: Նշանի ազդեցությունը չի տարածվում երթուղային տրանսպորտային միջոցների վրա:

4.1.2

4.1.2 Երթևեկությունը դեպի աջ

Վարորդին պարտավորեցնում են երթևեկել միայն աջով: Նշանի ազդեցությունը տարածվում է երթևեկելի մասի այն հատվածում, որից առաջ նշանն է տեղադրված: Նշանի ազդեցությունը չի տարածվում երթուղային տրանսպորտային միջոցների վրա:



4.1.3

4.1.3 Երթևեկությունը դեպի ձախ

Վարորդին պարտավորեցնում են երթևեկել միայն ձախով: Նշանի ազդեցությունը տարածվում է երթևեկելի մասի այն հատվածում, որից առաջ նշանն է տեղադրված: Նշանի ազդեցությունը չի տարածվում երթուղային տրանսպորտային միջոցների վրա:

4.1.4

4.1.4 Երթևեկությունն ուղիղ կամ դեպի աջ

Վարորդին պարտավորեցնում են երթևեկել միայն ուղիղ կամ աջով: Նշանի ազդեցությունը տարածվում է երթևեկելի մասի այն հատվածում, որից առաջ նշանն է տեղադրված: Նշանի ազդեցությունը չի տարածվում երթուղային տրանսպորտային միջոցների վրա:



4.1.5

4.1.5 Երթևեկությունն ուղիղ կամ դեպի ձախ

Վարորդին պարտավորեցնում են երթևեկել միայն ուղիղ, ձախ կամ հետադարձ: Նշանի ազդեցությունը տարածվում է երթևեկելի մասի այն հատվածում, որից առաջ նշանն է տեղադրված: Նշանի ազդեցությունը չի տարածվում երթուղային տրանսպորտային միջոցների վրա:

4.1.6

4.1.6 Երթևեկությունն դեպի աջ կամ դեպի ձախ

Վարորդին պարտավորեցնում են երթևեկել միայն ուղիղ, ձախ կամ հետադարձ ուղղությամբ: Նշանի ազդեցությունը տարածվում է երթևեկելի մասի այն հատվածում, որի առաջ նշանն է տեղադրված: Նշանի ազդեցությունը չի տարածվում երթուղային տրանսպորտային միջոցների վրա:

Երթևեկությունը թույլատրելի է միայն նշանի վրա նշված ուղղությամբ: Ձախ շրջադարձ թույլատրող նշանները թուլատրում են նաև հետադարձը:

4.1.1–4.1.6 նշանները կարող են կիրառել տվյալ հատման վայրում երթևեկության ուղղությունների ձևի սլաքների տեսքով:
4.1.1–4.1.6 նշանների ազդեցությունը չի տարածվում ընդհանուր օգտագործման տրանսպորտային միջոցների վրա:
4.1.1–4.1.6 նշանների ազդեցությունը տարածվում է երթևեկելի մասերի այն հատման վրա, որից առաջ տեղադրված է նշանը:
Ճանապարհի հատվածի սկզբում տեղադրված 4.1.1 նշանի ազդեցությունը տարածվում է մինչև մոտակա խաչմերուկը: Նշանը չի արգելում աջ շրջադարձը դեպի բակեր և ճանապարհին մերձակա այլ արածքներ:

4.2.1

4.2.1 Արգելքի շրջանցումն աջից

Շրջանցումը թույլատրվում է միայն սլաքով ցույց տրված կողմից:

4.2.2

4.2.2 Արգելքի շրջանցումը ձախից

Շրջանցումը թույլատրվում է միայն սլաքով ցույց տրված կողմից:

4.2.3

4.2.3 Արգելքի շրջանցումն աջից կամ ձախից

Շրջանցումը թույլատրվում է ինչպես աջ, այնպես էլ ձախ կողմից:

4.3 Շրջանաձև երթևեկություն

4.3

Նշանը պարտավորում է վարորդին խաչմերուկներով կամ հրապարակով երթևեկել սլաքներով ցույց տրված ուղղությամբ մինչև սահմանակից մի փողոց կամ ճանապարհ դուրս գալը:

Նշանի ազդեցությունը տարածվում է այն հրապարակի կամ խաչմերուկի վրա, որից առաջ նշանն է տեղադրված: Այն խաչմերուկի վրա, որտեղ կարգավորված է շրջանաձև երթևեկությունը, 4.3 նշանը չի որոշում անցման առավելություն: Այսպիսի խաչմերուկով անցնելն ու չկարգավորվող խաչմերուկով անցնելը համանման է ընդհանուր սկզբունքներին:

4.4

4.4 Թեթև ավտոմեքենաների երթևեկություն

Թույլատրելի է թեթև ավտոմոբիլի, ավտոբուսի, մոտոցիկլի, բեռնատար ավտոմոբիլի և այլ երթուղային տրանսպորտային միջոցների երթևեկություն, որոնց թույլատրելի առավելագույն զանգվածը չի գերազանցում 3,5 տոննային: Նշանը երթևեկության իրավունք է տալիս նաև այլ տրանսպորտային միջոցներին, որոնք սպասարկում են ազդման գոտում գտնվող օբյեկտները, ինչպես նաև պատկանում կամ սպասարկում են նշված գոտում բնակվող կամ աշխատող քաղաքացիներին: Այդ դեպքերում տրանսպորտային միջոցները պետք է նշված գոտի մուտք գործեն և այնտեղից դուրս գան օբյեկտին մոտակա խաչմերուկից: Նշանը կարող է օգտագործվել լրացուցիչ տեղեկության 7.3.1 , 7.3.2 , 7.3.3 «գործողության ուղղություններ» նշանների (ցուցատախտակների) հետ համատեղ:

4.5 Հեծանվային արահետ

4.5

Թույլատրվում է երթևեկել միայն մոպեդներով և հեծանիվներով: Մայթի կամ հետիոտնային արահետի բացակայության դեպքում հեծանվային արահետով կարող են երթևեկել նաև հետիոտները: Նշանը տեղադրվում է հեծանվային արահետի առկայության դեպքում:

4.6

4.6 Հետիոտնային արահետ

Երթևեկության իրավունք է տրվում միայն հետիոտներին, իսկ մնացած ճանապարհային երթևեկության մասնակիցներին արգելվում է այս արահետով շարժվել: Նշանը տեղադրվում է հետոտնային արահետի առկայության դեպքում կամ ճանապարհի այլ հատվածներում, որտեղ հնարավոր է հետիոտների երթևեկությունը, և դա կրկնվում է արահետի, ճանապարհի հետ ամեն հատումից հետո:

Երթևեկում են միայն հետիոտները, իսկ հեծանիվների տեղափոխումը կարելի է ձեռքով գլորելով:

4.7 Նվազագույն արագության սահմանափակում

4.7

Նշանը թույլատրում է երթևեկել միայն նշանի վրա կամ ավելի բարձր արագությամբ: Տեղադրվում է քաղաքի առանձին ավտոմայրուղիներում կամ մի քանի երթևեկելի գոտու վերևում լրացուցիչ տեղեկության «Երթեկության գոտի» ցուցանակին համատեղ, որպեսզի չսահմանափակի արագընթաց տրանսպորտային միջոցների երթևեկությունը:

4.8

4.8 Նվազագույն արագության սահմանափակման գոտու վերջ

Ցույց է տալիս 4.7 «**Նվազագույն արագության սահմանափակում**» նշանի ազդեցության գոտու վերջ:

4.9.1


4.9.2


4.9.3

4.9.1 4.9.2 4.9.3 Վտանգավոր բեռ

«Վտանգավոր բեռ» ճանաչման նշանով կահավորված տրանսպորտային միջոցների երթևեկությունը թույատրվում է միայն նշանի վրա սլաքով ցույց տրված ուղղությամբ՝

4.9.1 – դեպի ձախ, 4.9.2 – ուղիղ, 4.9.3 – դեպի աջ:

Թեմա № 7
Ճանապարհային նշանները և նրանց բնութագիրը

5. Հատուկ թելադրանքի (տեղեկատվական - ցուցանշական)

Հատուկ թելադրանքի նշանները մտցնում կամ վերացնում են երթևեկության որոշակի ռեժիմներ, ինչպես նաև տալիս են տեղեկություն բնակելի վայրերի և այլ օբյեկտների վիճակի մասին:

Հատուկ թելադրանքի նշանները 42 են, այս նշանները սկսվում են 5.1-ով և վերջանում են 5.19.2.-ով:

Այս նշանները վարորդին տալիս են տարբեր տեղեկություններ և ցույց են տալիս, թե որ կետին են հասնում կամ ինչպես կարելի է հասնել նշված կետին:

Նրանք իրենցից ներկայացնում են սպիտակ, կապույտ կամ կանաչ ֆոնի վրա ուղղանկյունաձև նշաններ, (5.21.1 – բացի ուղղություն ցույց տվող նշանից), որոնց վրա սև կամ սպիտակ խորհրդանշաններով են պատկերված անհրաժեշտ տեղեկությունները: Գոյություն ունեն նաև դեղին ֆոնի վրա պատկերված նշաններ:

5.1

5.1 Ավտոմայրուղի

Նշանն ունի կանաչ ֆոն, տեղադրվում է այն ճանապարհի սկզբում, որտեղ գործում են կանոնների ավտոմայրուղիներով երթևեկության կարգը սահմանող պահանջները և հատկացված են ավտոտրանսպորտային միջոցների երթևեկության համար, որը չի ծառայում ճանապարհաեզրերի սեփականությանը և որ՝

- բացառությամբ առանձին տեղերի կամ ժամանակավոր կարգի, երկու ուղղությամբ երթևեկելու համար առկա են իրարից բաժանող գոտիներ կամ յուրահատուկ դեպքերում այլ հնարքներով բաժանված տարբեր երթևեկելի մասեր:

- նույն մակարդակի վրա չունի հատում ճանապարհի, երկաթուղու կամ տրամվայի գծերի հետ, ինչպես նաև հետիոտնային և հեծանվային արահետների հետ:

Ավտոմայրուղու վրա արգելվում է՝

ա) հետիոտնի, ընտանեկան կենդանիների, հեծանվորդների, մոպեդի, տրակտորի և ինքնագնաց մեքենաների, ինչպես նաև այլ տրանսպորտային միջոցների երթևեկությունը, որոնց արագությունը տեխնիկական բնութագրությամբ կամ նրանց վիճակի պատճառով փոքր է 40 կմ/ժ-արագությունից,

բ) երկրորդ գծից այն կողմ, այն բեռնատար ավտոմոբիլների երթևեկությունը, որոնց թույլատրելի առավելագույն զանգվածը գերազանցում է 3,5 տոննան;

գ) կանգառ 5.15 «Կայանատեղի» և 6.11 «Հանգստատեղի» նշաններով նշված հատուկ կանգառային հրապարակից դուրս;

դ) հետադարձը և մուտք գործելը բաժանարար գծի տեխնիոլոգիական ընդհատումներով

ե) հետադարձ երթևեկություն,

զ) ուսումնական երթ:

Նշանը տեղադրվում է ավտոմայրուղի դուրս գալուց առաջ նախքան խաչմերուկը, ինչպես նաև կարելի է տեղադրել 7.1.1 , 7.1.3 , 7.1.4 ցուցանակների հետ համատեղ:

5.2

5.2 Ավտոմայրուղու վերջ

Ցույց է տալիս ճանապարհային նշան 5.1-ով «Ավտոմայրուղի» նշված ճանապարհի վերջ, որի վրա տարածվում էր ավտոմայրուղով երթևեկության կարգը սահմանող պահանջները: Ունի կանաչ ֆոն, տեղադրվում է ավտոմայրուղու վերջում: Կրկնողաբար, վարորդներին զգուշացնելու նպատակով, կարող է տեղադրվել մինչև ավտոմայրուղու վերջը 400-1000 մետր հեռավորության վրա լրացուցիչ տեղեկության 7.1.1 «Հեռավորություն մինչև օբյեկտ» նշանի հետ համատեղ:

5.3

5.3 Ճանապարհ ավտոմոբիլների համար

Նշանն ունի երկնագույն ֆոն, տեղադրվում է ճանապարհի սկզբում, որը սահմանված է միայն ավտոմոբիլների, ավտոբուսների և մոտիցիկլերի երթևեկության համար: «Ճանապարհային երթևեկության անվտանգության մասին» Վրաստանի օրենքի 35-րդ հոդվածի, 3-րդ կետի համաձայն՝ 5.3 «**Ճանապարհ ավտոմոբիլների համար**» ճանապարհային նշանը նշված ճանապարհի վրա տարածում է ավտոմայրուղով երթևեկության կարգը սահմանող պահանջները:

Նշանը տեղադրվում է ճանապարհի սկզբում կամ դրանից առաջ 7.1.1 , 7.1.3 , 7.1.4 ցուցանակների հետ համատեղ:

5.4

5.4 Ավտոմոբիլների համար Ճանապարհի վերջ

Ցույց է տալիս ճանապարհային նշան 5.3-ով «**Ճանապարհ ավտոմոբիլների համար**» » նշված ճանապարհի վերջ: Ունի երկնագույն ֆոն, տեղադրվում է ավտոմոբիլային ճանապարհի վերջում: Կրկնողաբար, վարորդներին զգուշացնելու նպատակով, կարող է տեղադրվել մինչև ավտոմոբիլային ճանապարհի վերջը լրացուցիչ տեղեկության 7.1.1 «Հեռավորություն մինչև օբյեկտ» նշանի հետ համատեղ, որտեղ նշված կլինի նշանի և ավտոմոբիլային ճանապարհի միջև ընկած հեռավորությունը:

5.5

5.5 Միակողմ երթևեկությամբ ճանապարհ

Ցույց է տալիս ճանապարհ կամ երթևեկելի մաս, որով տրանսպորտային միջոցների երթևեկությունը իրականանում է մի կողմով և ամբողջ լայնությամբ: Այստեղ հետդարձն արգելված է: Նշանը երկնագույն ֆոնով քառակուսու ձև ունի, տեղադրվում է միակողմ երթևեկությամբ ճանապարհի կամ երթևեկելի մասի սկզբում:

5.6

5.6 Միակողմ երթևեկությամբ ճանապարհի վերջ

Ցույց է տալիս միակողմ երթևեկությամբ ճանապարհի կամ երթևեկելի մասի վերջ: Նշանը երկնագույն ֆոնով քառակուսու ձև ունի, տեղադրվում է միակողմ երթևեկությամբ ճանապարհի կամ երթևեկելի մասի վերջում: Կրկնողաբար կարող է տեղադրվել նախքան միակողմ երթևեկությամբ ճանապարհը լրացուցիչ տեղեկության 7.1.1 «Հեռավորություն մինչև օբյեկտ» նշանի հետ համատեղ, որտեղ նշված կլինի նշանի և միակողմ երթևեկությամբ ճանապարհի միջև ընկած հեռավորությունը:

5.7.1

5.7.2

5.7.1 5.7.2 Ելք դեպի միակողմ երթևեկությամբ ճանապարհ

Ցույց է տալիս, որ դուրս ենք գալիս հատող ճանապարհ կամ երթևեկելի մաս, որի ամբողջ լայնությամբ կազմակերպված է միակողմ երթևեկություն՝ ձախից աջ 5.7.1, կամ աջից ձախ 5.7.2. ուղղություններով: Նշանները երկար ուղղանկյունաձև են, երկնագույն ֆոնով, տեղադրվում են անմիջապես խաչմերուկից առաջ:

5.8.1

5.8.1 Երթևեկության ուղիները գոտիներով

Ցույց է տալիս երթևեկության գոտիների քանակը և երթևեկության թույլատրելի ուղղությունը բոլոր գոտիներում: Տեղադրվում է անմիջապես խաչմերուկից առաջ ճանապարհի վերևում և տարածվում է ամբողջ խաչմերուկով, անհրաժեշտության դեպքում կարելի է տեղադրել 50-150 մ առաջ:

Խաչմերուկից առաջ տեղադրված 5.8.1 **Երթևեկության ուղիները գոտիներով նշանի** ազդեցությունը տարածվում է ամբողջ խաչմերուկով, եթե նրանից հետո տեղադրված ուրիշ 5.8.1 նշանը այլ նշանակություն չունի: 5.8.1 «**Երթևեկության ուղիները գոտիներով»** նշանը թույլատրում է ձախ եզրային գոտուց շրջադարձ և հետադարձ կատարել:

5.8.2 Երթևեկության ուղիները գոտիով

5.8.2

Ցույց է տալիս երթևեկության գոտիների քանակը և երթևեկության թույլատրելի ուղղությունը բոլոր գոտիներում: Խաչմերուկից առաջ տեղադրված 5.8.2 **Երթևեկության ուղիները գոտիով** նշանի ազդեցությունը տարածվում է ամբողջ խաչմերուկով, եթե նրանից հետո տեղադրված ուրիշ 5.8.2 նշանը այլ նշանակություն չունի: 5.8.2 «**Երթևեկության ուղիները գոտիներով»** նշանը թույլատրում է ձախ եզրային գոտուց շրջադարձ և հետադարձ կատարել: Անհրաժեշտության դեպքում կարելի է տեղադրել 50-150 մ առաջ:



5.8.3

5.8.3 Գոտու սկիզբ

Ցույց է տալիս արգելակման գոտու կամ վերելքի վրա լրացուցիչ գոտու սկիզբը: Եթե լրացուցիչ գոտուց առաջ տեղադրված 5.8.3 այս նշանի վրա պատկերված է 4.7 «Նվազագույն արագության սահմանափակում», ապա այն տրանսպորտային միջոցների վարորդները, որոնք չեն կարող շարունակել երթևեկությունը հիմնական գոտիով առնվազն նշանի վրա ցույց տրված արագությամբ, պետք է վերադասավորվեն լրացուցիչ գոտի:

5.8.4 Գոտու սկիզբ

Տվյալ ուղղությամբ երթևեկության համար նախատեսված եռագոտի ճանապարհի միջին գոտու հատվածի սկիզբը:

5.8.4

5.8.5

5.8.5 Գոտու վերջ

Ցույց է տալիս թափառքի գոտու կամ վերելքի վրա լրացուցիչ գոտու վերջը:

5.8.6 Գոտու վերջ

Տվյալ ուղղությամբ երթևեկության համար նախատեսված եռագոտի ճանապարհի միջին գոտու հատվածի վերջը:

5.8.6



5.8.7

5.8.7 Երթևեկության ուղղությունը գոտիներով

Ցույց է տալիս եռագոտի ճանապարհի յուրաքանչյուր գոտում երթևեկության ուղղություն: Եթե 5.8.7 «**Երթևեկության ուղղությունը գոտիներով»** նշանի վրա պատկերված է որևէ տրանսպորտային միջոցի երթևեկությունն արգելող նշան, ապա այդ տրանսպորտային միջոցի երթևեկությունը նշված գոտիով արգելվում է: 5.8.7 սլաքների համապատասխան քանակով նշանը կարելի է կիրառել այն ճանապարհով, որն ունի չորս կամ ավելի գոտիներ: Փոփոխվող պատկեր ունեցող 5.8.7 և 5.8.8 նշաններով տեղի է ունենում դարձափոխային եթևեկության կազմակերպում:



5.8.7

5.8.7 Երթևեկության ուղղությունը գոտիներով

Ցույց է տալիս եռագոտի ճանապարհի յուրաքանչյուր գոտում երթևեկության ուղղություն: 5.8.8 սլաքների համապատասխան քանակով նշանը կարելի է կիրառել այն ճանապարհով, որն ունի չորս կամ ավելի գոտիներ: Փոփոխվող պատկեր ունեցող 5.8.7 ջ 5.8.8 նշաններով տեղի է ունենում դարձափոխային եթևեկության կազմակերպում:

5.9 Երթուղային տրանսպորտային միջոցների գոտի

Ցույց է տալիս երթուղային տրանսպորտային միջոցների համար հատկացված երթևեկության գոտի, որով երթևեկությունը իրականացվում է տրանսպորտային միջոցների ընդհանուր հոսքի ուղղությամբ: Նշանի ազդեցությունը տարածվում է երթևեկության գոտով, որի վերևում այն տեղադված է և կրկնվում է խաչմերուկից հետո: Եթե խաչմերուկից հետո նշանը չի կրկնվում, նշանի ազդման գոտին համարվում է ավարտված: Ճանապարհի աջ կողմում տեղադրված նշանի ազդեցությունը տարածվում է աջ գոտու վրա:

5.9

5.10.1

5.10.1 Երթուղային տրանսպորտային միջոցների համար հատկացված գոտիով ճանապարհ

Ցույց է տալիս ճանապարհ, որով երթուղային տրանսպորտային միջոցները երթևեկում են հատուկ առանձնացված գոտիով, տրանսպորտային միջոցների ընդհանուր հոսքին հակադարձ: Նշանը կախվում է ճանապարհի սկզբում, երթուղային տրանսպորտային միջոցների համար հատուկ առանձնացված գոտու վերևում:

5.10.2 5.10.3 Ելք դեպի երթուղային տրանսպորտային միջոցների համար հատկացված գոտիով ճանապարհ



5.10.2 5.10.3

Նշանները ցույց են տալիս, որ դուրս ենք գալիս հատող ճանապարհի վրա, որով երթուղային տրանսպորտային միջոցները երթևեկում են հատուկ առանձնացված գոտիով, տրանսպորտային միջոցների ընդհանուր հոսքին հակադարձ աջից դեպի ձախ 5.10.2, կամ ձախից դեպի աջ 5.10.3:

5.10.4

5.10.4 Երթուղային տրանսպորտային միջոցների համար հատկացված գոտիով ճանապարհի վերջ

Ցույց է տալիս երթուղային տրանսպորտային միջոցների համար հատկացված գոտիով ճանապարհի վերջը:

5.11.1 Հետադարձի տեղ

5.11.1

Նշում է հետադարձի տեղը: Նշանը արգելում է ձախ շրջադարձը: Տեղադրվում է ճանապարհի աջ կողմում անմիջապես հետադարձի տեղից առաջ կամ կախվում է նրա վերևում:

5.11.2

5.11.2 Հետադարձի գոտի

Ցույց է տալիս հետադարձի համար գոտու երկարությունը: Նշանը արգելում է ձախ շրջադարձը: Տեղադրվում է ճանապարհի աջ կողմում անմիջապես հետադարձի տեղից առաջ կամ կախվում է նրա վերևում:

5.12 Ավտոբուսի և/կամ տրոլեյբուսի կանգառի տեղ

5.12

Ցույց է տալիս որոշված երթուղով ընթացող ավտոբուսի և/կամ տրոլեյբուսի կանգառի տեղ: Բնակելի վայրում վարորդը պարտավոր է ճանապարհը զիջել այն ավտոբուսին և տրոլեյբուսին, որոնք երթևեկությունը սկսում են գծանշված կանգառից: Իսկ ավտոբուսի և տրոլեյբուսի վարորդները միայն այն դեպքում են սկսում երթևեկությունը, երբ համոզվում են, որ նրանց զիջում են ճանապարհը: Վարորդին արգելվում է տրանսպորտային միջոցի կանգառը երթուղային տրանսպորտային միջոցների գծանշված կանգառի հրապարակում, իսկ երբ դա չկա, երթուղային տրանսպորտային միջոցի կանգառի տեղի ցուցանակին 15 մետր մոտիկ, եթե դա խոչընդոտ է ներկայացնում երթուղային տրանսպորտային միջոցների երթևեկության համար:

5.13

5.13 Տրամվայի կանգառի տեղ

Ցույց է տալիս տրամվայի գծանշված կանգառի տեղ: Վարորդը ճանապարհը պետք է զիջի եթևեկելի մասի մեջտեղում, միևնույն ուղղությամբ ընթացող տրամվայի գծանշված կանգառում կանգնած դեպի տրամվայ երթևեկող կամ տրամվայի դռան կողմից անցնող հետիոտնին:

5.14

5.14 Թեթև մարդատար տաքսիների կայանման տեղ

Ցույց է տալիս թեթև մարդատար տաքսիների գծանշված կայանման տեղ: Վարորդին արգելվում է տրանսպորտային միջոցի կայանումը տաքսիների գծանշված կայանման հրապարակում, իսկ երբ դա չկա, տաքսիների կայանման տեղի ցուցանակին 15 մետր մոտիկ, եթե դա խոչընդոտ է ներկայացնում թեթև մարդատար տաքսիների երթևեկության համար:

5.15

5.15 Կայանման տեղ

Նշանը կիրառվում է տրանսպորտի համար հատուկ առանձնացված կայանման հրապարակների նշման համար:

Կարելի է տեղադրել 7.6.1 , 7.6.2 , 7.6.3 , 7.6.4 , 7.6.5 , 7.6.6 , 7.6.7 , 7.6.8 , 7.6.9 ցուցանակների հետ համատեղ, ինչը նշում է ավտոմոբիլների և մոտոցիկլերի մայթին մոտ կանգնեցման ձևերի մասին:

Կարելի է տեղադրել նաև 7.7 , 7.8 , 7.9 ցուցանակների հետ համատեղ և նշել համապատասխան գործողությունները:

5.16.1 5.16.2 Հետիոտնային անցում

5.16.1 և 5.16.2 նշանները տեղադրվում են ճանապարհին՝ հետիոտնի կազմակերպված անցման նշման համար: Շատ դեպքերում կիրառվում է հորիզոնական գծանշումների հետ համատեղ, իսկ նրա բացակայության դեպքում 5.16.2 տեղադրվում է ճանապարհից աջ անցման մոտակա սահմանի վրա, սակայն 5.16.1-ը ճանապարհից ձախ անցման հեռավոր սահմանի վրա (այսինքն անցումից հետո):

5.16.1

5.16.2

5.17.1

5.17.2

5.17.1 5.17.2 Ստորգետնյա հետիոտնային անցում

Նշանները հուշում են ստորգետնյա հետիոտնային անցման գտնվելու տեղի մասին: Հետիոտնը պարտավոր է ճանապարհի երթևեկելի մասը անցնել միայն ստորգետնյա անցման միջոցով:

5.17.3 5.17.4 Վերգետյա հետիոտնային անցում

Նշանները հուշում են վերգետնյա հետիոտնային անցման գտնվելու տեղի մասին: Հետիոտնը պարտավոր է ճանապարհի երթևեկելի մասը անցնել միայն վերգետնյա անցման միջոցով:

5.17.3

5.17.4

5.18.

5.18 Առաջարկվող արագություն

Ճանապարհի տվյալ հատվածում երթևեկելու համար նախընտրելի արագություն: Նշանի ազդեցությունը տարածվում է մինչև ամենամոտ խաչմերուկը, իսկ 5.18 նշանը նախազգուշացնող նշանի հետ համատեղ կիրառելիս ազդման գոտին սահմանվում է վտանգի գոտու երկարությամբ: Այս նշանը առաջարկում է երթևեկել նշված արագությամբ, թույլատրելի է նաև փոքր արագությամբ երթևեկությունն էլ, եթե իհարկե դա չի խանգարի այլ տրանսպորտներին:

5.19.1. 5.19.2 5.19.3 Փակուղի

Այս նշանները ցույց են տալիս ուղիղ, ձախից կամ աջից միջանցիկ անցում չունեցող ճանապարհ: Նշանը տեղադրվում է ճանապարհի սկզբում կամ մինչև երթևեկելի մասի հատումը: Այս նշանները չեն արգելում երթևեկություն այն ճանապարհով, որը չունի միջանցիկ երթևեկություն:

5.19.1 5.19.2

5.19.3



5.20.1

5.20.1 Ուղղությունների նախնական ցուցիչ

Ցույց է տալիս երթևեկությունների ուղղություն դեպի նշանի վրա նշված բնակավայրեր և այլ օբյեկտներ: 5.20.1 նշանը օգտագործվում է ճանապարհի այն հատվածի շրջանցման նշման համար, որոնց վրա տեղադրված է 3.11–3.15 արգելող նշաններիիղ մեկը: 5.20.1 նշանի վրա կարող են պատկերվել նաև 5.29.1 «Ճանապարհի (երթուղու) համարը և ուղղությունը» նշանի պատկերը, ավտոմայրուղու, օդանավակայանի պատկերանշանները, մարզական և այլ պատկերագրեր, նշանի վրա կարող են պատկերվել երթևեկության առանձնահատկությունների մասին տեղեկացնող այլ նշանների պատկերներ: 5.20.1 նշանի ներքևի մասում նշվում է նշանի տեղադրման վայրից մինչև խաչմերուկ կամ արգելակման գոտու սկիզբ եղած հեռավորությունը: Բնակելի վայրից դուրս տեղադրված 5.20.1 նշանի վրա կանաչ կամ կապույտ ֆոնը ցույց է տալիս,որ երթևեկություն դեպի նշված բնակելի վայր կամ օբյեկտ իրականացվում է համապատասխան ավտոմայրուղով կամ ուրիշ ճանապարհով: Բնակելի վայրում տեղադրված 5.20.1 նշանի վրա կանաչ կամ կապույտ ֆոնը ցույց է տալիս,որ երթևեկություն դեպի նշված բնակելի վայր կամ օբյեկտ տրված բնակելի վայրը անցնելուց հետո իրականացվում է համապատասխան ավտոմայրուղով կամ ուրիշ ճանապարհով: Սպիտակ ֆոնը ցույց է տալիս, որ նշված օբյեկտը գտնվում է տվյալ բնակելի վայրում: Նշանները տեղադրվում են մինչև խաչմերուկները կամ նվազեցման գոտու սկիզբը ոչ պակաս 300 մետրի վրա, իսկ բնակելի վայրերում՝ ոչ պակաս 50 մետր հեռավորության վրա: Ավտոբանի վրա տեղադրվում է արգելակման գոտու սկզբից 800 մերտի վրա:

5.20.2 Ուղղությունների նախնական ցուցիչ

5.20.2

Ցույց է տալիս երթևեկությունների ուղղություն դեպի նշանի վրա նշված բնակավայրեր. 5.20.2 նշանի վրա պատկերվում է նաև 5.29.1 «Ճանապարհի (երթուղու) համարը և ուղղությունը» նշանի պատկերը, ավտոմայրուղու, օդանավակայանի պատկերանշանները, մարզական և այլ պատկերագրեր: Բնակելի վայրից դուրս տեղադրված 5.20.1 նշանի վրա կանաչ կամ կապույտ ֆոնը ցույց է տալիս,որ երթևեկություն դեպի նշված բնակելի վայր կամ օբյեկտ իրականացվում է համապատասխան ավտոմայրուղով կամ ուրիշ ճանապարհով: Բնակելի վայրում տեղադրված 5.20.1 նշանի վրա կանաչ կամ կապույտ ֆոնը ցույց է տալիս,որ երթևեկություն դեպի նշված բնակելի վայր կամ օբյեկտ տրված բնակելի վայրը անցնելուց հետո իրականացվում է համապատասխան ավտոմայրուղով կամ ուրիշ ճանապարհով: Սպիտակ ֆոնը ցույց է տալիս, որ նշված օբյեկտը գտնվում է տվյալ բնակելի վայրում: Նշանները կախվում են խաչմերուկից առաջ բնակելի վայրերից 100 մետրի վրա, իսկ բնակելի վայրում՝ ոչ պակաս քան 50 մետրի վրա:

5.20.3

5.20.3 Երթևկության սխեմա

Նշանը ցույց է տալիս խաչմերուկներում որոշ մանևրների արգելման դեպքում շաժման երթուղի կամ բարդ խաչմերուկներում երթևեկության թույլատրելի ուղղություններ:

Նշանները տեղադրվում են խաչմերուկից առաջ բնակելի վայրերում 50-100 մ, բնակելի վայրից դուրս՝ 150-300մ վրա:

5.21.1 Ուղղության ցուցիչ

5.21.1

Ցույց է տալիս դեպի բնակելի վայր և այլ օբյեկտներ շարժվելու ուղղությունները: Նշանի վրա կարող է նշված լինել հեռավորությունը մինչև նշված օբյեկտ, ավտոմայրուղի, օդանավակայանի պատկերանշաններ, մարզական և այլ պատկերագրեր: Նշանը տեղադրվում է անմիջապես խաչմերուկից կամ շրջադարձից առաջ: Բնակելի վայրից դուրս տեղադրված 5.21.1 նշանի վրա կանաչ կամ կապույտ ֆոնը ցույց է տալիս,որ երթևեկություն դեպի նշված բնակելի վայր կամ օբյեկտ իրականացվում է համապատասխան ավտոմայրուղով կամ ուրիշ ճանապարհով: Բնակելի վայրում տեղադրված 5.21.1 նշանի վրա կանաչ կամ կապույտ ֆոնը ցույց է տալիս,որ երթևեկություն դեպի նշված բնակելի վայր կամ օբյեկտ տրված բնակելի վայրը անցնելուց հետո իրականացվում է համապատասխան ավտոմայրուղով կամ ուրիշ ճանապարհով: Սպիտակ ֆոնը ցույց է տալիս, որ նշված օբյեկտը գտնվում է տվյալ բնակելի վայրում:

5.21.2

5.21.2 Ուղղությունների ցուցիչ

Ցույց է տալիս դեպի բնակելի վայր և այլ օբյեկտներ շարժվելու ուղղությունները (երթևեկության ուղղությունները մինչև երթուղու կետերը): Նշանի վրա կարող է նշված լինել հեռավորությունը մինչև նշված օբյեկտ, ավտոմայրուղի, օդանավակայանի պատկերանշաններ, մարզական և այլ պատկերագրեր: Նշանը տեղադրվում է անմիջապես խաչմերուկից կամ շրջադարձից առաջ: Բնակելի վայրից դուրս տեղադրված 5.21. 2 նշանի վրա կանաչ կամ կապույտ ֆոնը ցույց է տալիս, որ երթևեկություն դեպի նշված բնակելի վայր կամ օբյեկտ իրականացվում է համապատասխան ավտոմայրուղով կամ ուրիշ ճանապարհով: Բնակելի վայրում տեղադրված 5.21. 2 նշանի վրա կանաչ կամ կապույտ ֆոնը ցույց է տալիս,որ երթևեկություն դեպի նշված բնակելի վայր կամ օբյեկտ տրված բնակելի վայրը անցնելուց հետո իրականացվում է համապատասխան ավտոմայրուղով կամ ուրիշ ճանապարհով: Սպիտակ ֆոնը ցույց է տալիս, որ նշված օբյեկտը գտնվում է տվյալ բնակելի վայրում:



5.22

5.22 Բնակելի գոտի

Բնակավայր կամ բնակավայրի սկիզբ: Նշանի ազդման գոտում (մինչև 5.23 նշանը) գործում են բնակավայրերում գործող երթևեկության կարգը սահմանող պահանջները:

5.23 Բնակելի գոտու վերջ

5.23

Ցույց է տալիս 5.22. նշանի ազդման գոտու վերջ, վայր, որտեղից սկսած տվյալ ճանապարհին իրենց ուժը կորցնում են բնակավայրերում երթևեկության կարգը սահմանող պահանջները:

5.24

5.24 Բնակավայրի սկիզբ

Նշանը կապույտ ֆոնի վրա է, ցույց է տալիս բնակավայր կամ բնակավայրի սկիզբ, որտեղ տրված ճանապարհին չեն գործում բնակավայրերում երթևեկության կարգը սահմանող պահանջները:

5.25 Բնակավայրի վերջ

5.25

Ցույց է տալիս 5.24 նշանով նշված բնակավայրի վերջը:

5.26

5.26 Օբյեկտի անվանում

Ցույց է տալիս բնակավայրից բացի այլ օբյեկտի անվանումը(գետ, լիճ, լեռնանցք, տեսարժան վայր և այլն): Տեղադրվում է անմիջապես օբյեկտից առաջ կամ նախքան դրանք 7.1.1, 7.1.3 ան 7.1.4 «Հեռավորություն մինչև օբյեկտ » լրացուցիչ տեղեկության նշանի հետ համատեղ:

5.27 Հեռավորությունների ցուցիչ

5.27

Ցույց է տալիս մինչև երթուղու վրա գտնվող բնակավայրերը եղած հեռավորությունը (կմ):

5.28

5.28 Կիլոմետրային նշան

Ցույց է տալիս մինչև ճանապարհի սկիզբը կամ վերջը եղած հեռավորությունը:

5.29.1 Ճանապարհի (երթուղու համարը) և ուղղությունը

Ցույց է տալիս ճանապարհին (երթուղուն) շնորհված համարը:

Կանաչ ֆոնով տեղադրվում է ավտոմայրուղիների վրա, իսկ կապույտով՝ ավտոմոբիլային ճանապարհների վրա:

5.29.1

"E" տառը ցույց է տալիս, որ ճանապարհը մտնում է եվրոմայրուղիների համակարգ, իսկ թվանշանը ցույց է տալիս համարը: Տեղադրվում է ճանապարհի սկզբում և կրկնվում է ամեն 15–20 կմ-ից:

5.29.2 Երթուղու համարը և ուղղությունը

Ցույց է տալիս ճանապարհի (երթուղու) համարը և ուղղությունը: Տեղադրվում է խաչմերուկներից առաջ:

5.29.2

5.30.1 Երթևեկության ուղղություն բեռնատար ավտոմոբիլների համար

5.30.1

Ցույց է տալիս բեռնատար ավտոմոբիլների, տրակտորների և ինքնագնաց մեքենաների համար առաջարկվող երթևեկության ուղղությունը, եթե խաչմերուկում դրանց երթևեկությունը որևէ ողղությամբ արգելված է:

5.30.2

5.30.2 Երթևեկության ուղղություն բեռնատար ավտոմոբիլների համար

Ցույց է տալիս բեռնատար ավտոմոբիլների, տրակտորների և ինքնագնաց մեքենաների համար առաջարկվող, այս դեպքում դեպի աջ, երթևեկության ուղղությունը, եթե խաչմերուկում դրանց երթևեկությունը որևէ ողղությամբ արգելված է:

5.30.3 Երթևեկության ուղղություն բեռնատար ավտոմոբիլների համար

5.30.3

Ցույց է տալիս բեռնատար ավտոմոբիլների, տրակտորների և ինքնագնաց մեքենաների համար առաջարկվող, այս դեպքում դեպի ձախ, երթևեկության ուղղությունը, եթե խաչմերուկում դրանց երթևեկությունը որևէ ողղությամբ արգելված է:

5.31

5.31 Շրջանցման սխեմա

Ցույց է տալիս երթևեկության համար ժամանակավոր փակ ճանապարհի հատվածի շրջանցման երթուղի: Տեղադրվում է անմիջապես շրջանցման գոտու սկզբում կամ նախքան բնակելի վայրը 150-300 մ, բնակելի վայրում մինչև խաչմերուկը 50-100 մ վրա:

5.32.1

5.32.2

5.32.3

5.32.1. 5.32.2 5.32.3 Շրջանցման ուղղություն

Ցույց է տալիս երթևեկության համար ժամանակավոր փակ ճանապարհի հատվածի շրջանցման ուղղություն՝ դեպի աջ, դեպի ձախ կամ ուղիղ: Նշանը տեղադրվում է շրջանցման սկզբում և կրկնվում է բոլոր խաչմերուկներում, որոնք գտնվում են շրջանցման երթուղու վրա:

5.33 Կանգ - գիծ



5.33

Ցույց է տալիս լուսացույցի (կարգավորողի) արգելող ազդանշանի դեպքում տրանսպորտային միջոցների կանգառի տեղ: Տեղադրվում է ճանապարհի աջ կողմում կամ կախվում է ճանապարհի եթևեկելի մասի վերևում և շատ դեպքերում կիրառվում է հորիզոնական գծանշման «Կանգ» գծի հետ:

5.34.1

5.34.1 Այլ երթևեկելի մաս վերադասավորվելու նախնական ցուցիչ

Բաժանարար գոտիով ճանապարհի երթևեկելի մասի երթևեկության համար փակ հատվածի շրջանցման երթևեկելի մաս վերադառնալու համար երթևեկության ուղղություն:

5.34.2 Այլ երթևեկելի մաս վերադասավորվելու նախնական ցուցիչ

Նշված է երթևկության ուղղություն աջակողմյան եթևեկելի մաս վերադառնալու համար:

5.34.2

5.35

5.35 Դարձափոխային երթևեկություն

Ցույց է տալիս ճանապարհի այն հատվածի սկիզբը, որտեղ մեկ կամ մի քանի գոտիներով երթևեկության ուղղությունը կարող է փոխվել հանդիպակացի:

5.36 Դարձափոխային երթևեկության վերջ

Ցույց է տալիս 5.35 «**Դարձափոխային երթևեկություն**» նշանի ազդման գոտու վերջը:

5.36

5.37

5.37 Ելք դեպի դարձափոխային երթևեկությամբ ճանապարհ

Ցույց է տալիս, որ հատվող ճանապարհին կամ նրա մի քանի գոտիներով կազմակերպված է դարձափոխային երթևեկություն: Նշանը տեղադրվում է երթևեկվող ճանապարհի բոլոր ելքերի մոտ:

5.38 Բնակելի գոտի

5.38

Ցույց է տալիս, որ տրանսպորտը երթևեկում է բնակելի գոտում, որտեղ հետիոտնի երթևեկությունը թույլատրելի է ինչպես մայթով, այնպես էլ երթևեկելի մասում: Այստեղ առավելությունը տրված է հետիոտնին, բայց նա չպետք է խոչընդոտ հանդիսանա տրասնպորտի համար: Թույլատրելի արագությունն է 20 կմ/ժ:

5.39

5.39 Բնակելի գոտու վերջ

Ցույց է տալիս 5.38 «**Բնակելի գոտի»** նշանի ազդման գոտու վերջ:

Բնակելի վայրից դուրս տեղադրված 5.20.1, 5.20.2, 5.21.1 և 5.21.2 նշանների վրա կանաչ կամ կապույտ ֆոնը ցույց է տալի, որ երթևեկություն դեպի նշված բնակելի վայր կամ օբյեկտ իրականացվում է համապատասխան ավտոմայրուղով կամ ուրիշ ճանապարհով:

Բնակելի վայրում տեղադրված 5.20.1, 5.20.2, 5.21.1 և 5.21.2 նշանների վրա կանաչ կամ կապույտ ֆոնը ցույց է տալիս,որ երթևեկություն դեպի նշված բնակելի վայր կամ օբյեկտ տրված բնակելի վայրը անցնելուց հետո իրականացվում է համապատասխան ավտոմայրուղով կամ ուրիշ ճանապարհով: Սպիտակ ֆոնը ցույց է տալիս, որ նշված օբյեկտը գտնվում է տվյալ բնակելի վայրում:

Թեմա № 8
Ճանապարհային նշանները և նրանց բնութագիրը

6. Սպասարկման (սերվիս) նշանները

Սպասարկման նշանները ճանապարհային երթևեկության մասնակիցներին տեղեկություն են տալիս համապատասխան օբյեկտի գտնվելու վայրի մասին: Սպասարկման նշանները ներկայացնում են երնագույն ֆոնով ուղղանկյուններ, որոնց վրա պատկերված է ավելի փոքր չափի սպիտակ ուղղանկյուն սև կամ կարմիր գույնի նշումներ: Իսկ նշանի ներքևի մասում երկնագույն գոտում սպիտակ գույնի նշումներով կարող են պատկերված լինել հեռավորությունը և ուղղության սլաքը մինչև օբյեկտ կամ ինչպես նաև մակագրեր օբյեկտի անվանմամբ: .

Նշանները տեղադրվում են օբյեկտներից առաջ կամ նախքան այն: Բնակելի վայրերից դուրս նշանները դրվում են 60-80 կմ, 15-20 կմ և 400-800 մ-վրա մինչև նշանի վրա պատկերված օբյեկտը: Բացի դրանից բնակելի վայրում սպասարկման նշանները նախքան նշված օբյեկտը պետք է տեղադրվեն 100-150 մ վրա:

6.1

6.1 Առաջին բժշկական օգնության կետ

Նշանը տեղեկություն է տալիս այն օբյեկտի մասին, որտեղ հնարավոր է ցույց տալ առաջին բժշկական օգնություն:

6.2

6.2 Հիվանդանոց

Օբյեկտ, որտեղ վնասվածին կարելի է ցույց տալ բժշկական օգնություն և տեղավորել ստացիոնարում:

6.3

6.3 Ավտոլցավորման կայան

Ցույց է տալիս օբյեկտ, որտեղ կարելի է մեքենան սարքի հրավիրել, պաշարային նյութեր:

6.4

6.4 Ավտոմոբիլների տեխնիկական սպասարկում

Օբյեկտ, որտեղ հնարավոր է անցնել տեխնիկական սպասարկում:

6.5

6.5 Ավտոմոբիլների լվացում

Ցույց է տալիս օբյեկտ, որտեղ կարելի է մեքենայի լվացում:

6.6

6.6 Հեռախոս

Ցույց է տալիս հեռախոս-ավտոմատի կամ հաղորդակցության ծառայության գտնվելու վայրի մասին:

6.7

6.7 Սննդի կետ

Նշանը ցույց է տալիս սննդի կետի գտնվելու վայրի մասին:

6.8

6.8 Խմելու ջուր

Նշանը ցույց է տալիս խմելու ջրի գտնվելու վայրի մասին:

6.9

6.9 Հյուրանոց կամ մոթել

Նշանը ցույց է տալիս այն օբյեկտի (հյուրանոց-մոթել) գտնվելու վայրի մասին, որտեղ վարորդը և ուղևորները կարող են մնալ և հանգստանալ:

6.10

6.10 Հանգրվան

Նշանը ցույց է տալիս զբոսաշրջիկների հանգստյան օբյեկտի գտնվելու վայրի մասին:

6.11

6.11 Հանգստի վայր

Նշանը ցույց է տալիս ճանապարհի մոտակայքում հանգստի վայրի գտնվելու տեղի հեռավորության և ուղղության մասին:

6.12

6.12 Ճանապարհային ոստիկանության ճանապարհապարետային ծառայության պահակակետ

Նշանը ցույց է տալիս ճանապարհային ոստիկանության ճանապարհապարետային ծառայության պահակակետի գտնվելու վայրի մասին:

Նշված նշանների վրա հնարավոր է նշել մինչև օբյեկտ մնացած հեռավորությունը կամ ուղղությունը:

7. <u>Լրացուցիչ տեղեկատվության նշաններ (ցուցանակներ)</u>

Լրացուցիչ տեղեկատվության նշանները ճշտում են հիմնական նշանների ազդման գոտիները, ժամանակը, հեռավորությունը մինչև օբյեկտ, գործողության ուղղությունը և այլն, կամ սահմանափակում են նրանց ազդեցությունները:

Նշված նշանները մտցված են բոլոր մնացած նշանները ճշտելու և սահմանափակելու համար: Ցույց է տալիս, թե որ տրանսպորտին է արգելվում անցնել, ինչպես նաև նշում է նշանների ազդման գոտիները, ժամանակը, հեռավորությունը մինչև օբյեկտ, գործողության ուղղությունը և այլն:

<u>Լրացուցիչ տեղեկատվության նշանները (ցուցանակները)</u> ներկայացնում են սպիտակ գույնի ուղղանկյուն սև երիզով և սև, կարմիր կամ դեղին նշումներով նշաններ: Բացառություն է հանդիսանում կարմիր ֆոնի վրա սև պատկերանշաններով ստեղծված 7.19 –« Վտանգավոր բեռ» ճանապարհային նշանը:

<u>Լրացուցիչ տեղեկատվության նշանները (ցուցանակները)</u> տեղադրվում են անմիջապես այն նշանի ներքևում, որոնց հետ նրանք օգրագործվում են: 7.2.2-7.2.4, 7.13 ցուցանակները տեղադրվում են նշանների կողքին, եթե այդ նշանները դասավորված են երթևեկելի մասի, ճանապարհեզրի կամ մայթի վերևում:

<u>Լրացուցիչ տեղեկատվության նշանները (ցուցանակները)</u>.<u>ընդամենը</u> 50 են:



7.1.1

7.1.1 Հեռավորություն մինչև օբյեկտ

Ցույց է տալիս ընթացքի ուղղությամբ նշանից մինչև վտանգավոր հատվածի սկիզբը համապատասխան սահմանափակում մտցնելու տեղը կամ առջևում գտնվող որոշակի օբյեկտ (վայր) եղած հեռավորությունը:

Նախազգուշացնող նշանների հետ կիրառելիս դրանք նշում են հեռավորությունը նշանից մինչև վտանգավոր տեղի սկիզբը:

Առավելության և արգելող նշանների հետ կիրառելիս սկզբից ևեթ նշում են տեղը, որտեղից սկսվում է նշանի ազդեցությունը:

Հատուկ թելադրանքի նշանների հետ կիրառվելիս տեղեկություն է տալիս կայանման տեղի, ավտոբանի սկսվելու և վերջանալու մասին և այլն:

Ուշադրություն !!! 7.1.1 ; 7.1.2 ; 7.1.3 ; 7.1.4 նշանների նշանակության իմացությունը պարտադիր է !!!
Շշփոթել «Ազդման գոտի» – նշանի հետ !!!

7.1.2 Հեռավորություն մինչև օբյեկտ

7.1.2

Ցույց է տալիս 2.4 «զիջեք ճանապարհը» նշանից մինչև խաչմերուկ եղած հեռավորությունը, երբ խաչմերուկից անմիջապես առաջ տեղադրված է 2.5 «Երթևեկությունն առանց կանգառի արգելվում է» նշանը:



7.1.3



7.1.4

7.1.3 7.1.4 Հեռավորություն մինչև օբյեկտ

Այս և 7.1.4 նշանները նշում են հեռավորություն մինչև օբյեկտ և նրա գտնվելու վայրը ճանապարհից դեպի ձախ կամ դեպի աջ: Հիմնականում կիրառվում են 5.1 , 5.3 , 5.15 , 5.16.1 , 5.16.2 , 5.17.1 , 5.17.2 , 5.17.3 , 5.17.4 հատուկ թեադրանքի նշանների հետ համատեղ և նշում են հեռավորություն և ուղղություն մինչև ավտոբան, ավտոմոբիլային ճանապարհ, կայանման տեղ, հետիոտնային անցում և այլն:

7.2.1 Ազդման գոտի

7.2.1

Ցույց է տալիս նախազգուշացնող նշաններով կահավորված ճանապարհի վտանգավոր հատվածի երկարությունը կամ արգելող և տեղեկատու ցուցիչ նշանների ազդման գոտին:

7.2.2

7.2.2 Ազդման գոտի

Այս նշանը 3.27 , 3.28 , 3.29 և 3.30 արգելող նշանների հետ համատեղ ցույց է տալիս, որ այս նշանների ազդեցության գոտի է հանդիսանում ցուցանակի վրա նշված հեռավորությունը (այս դեպքում 10 մետրը):

7.2.3 Ազդման գոտի

Նշանը ցույց է տալիս 3.27 , 3.28 , 3.29 և 3.30 արգելող նշանների ազդեցության գոտու վերջը:

7.2.3

7.2.4

7.2.4 Ազդման գոտի

Նշանը ցույց է տալիս 3.27, 3.28, 3.29 և 3.30 արգելող նշանների ազդեցության գոտու մեջ գտնվելու մասին:

Որպես կարգ տեղադրվում է 7.2.2 և 7.2.3 նշանների մեջտեղում (որպեսզի մեկ անգամ ևս հիշեցնի վարորդին արգելման գոտու մեջ գտնվելու մասին):

7.2.5 7.2.6 Ազդման գոտի

Նշանները ցույց են տալիս 3.27, 3.28, 3.29 և 3.30 արգելող նշանների ազդման ուղղությունը և ազդման գոտին, հրապարակների, շենքի ճակատի և այլ տեղերի երկայնքով կանգառի կամ կայանման արգելման դեպքում:



7.2.5



7.2.6

7.2.2 նշում են 3.27–3.30 արգելող նշանների ազդման գոտին;

7.2.3 նշում են 3.27–3.30 նշանների ազդման գոտու վերջը;

7.2.4 վարորդին տեղեկություն է տալիս 3.27–3.30նշանների ազդման գոտում գտնվելու մասին;

7.2.5, 7.2.6 նշում են 3.27–3.30 նշանների ազդման ուղությունը և գոտին, հրապարակի,

շենքի ճակատի և այլ տեղերի մի կողմի երկայնքով կանգառի կամ կայանման արգելման դեպքում:

7.3.1 7.3.2 7.3.3

7.3.1 7.3.2 7.3.3 Ազդման ուղղություններ

Նշանները ցույց են տալիս խաչմերուկից առաջ տեղադրված այլ ճանապարհային նշանների ազդման ուղղությունները կամ երթևեկության ուղղությունները դեպի անմիջապես ճանարարհին մոտ գտնվող օբյեկտներ:

7.4.1 Տրասնպորտային միջոցի տեսակ

7.4.1

Ցուցանակը տարածում է նշանի ազդեցությունը այն բեռնատար ավտոմոբիլի վրա (այդ թվում նաև կցորդով), որոնց թույլատրելի առավելագույն զանգվածը գերազանցում է 3.5 տ (այսինքն մեծ է 3.5 տոննայից):

7.4. Տրասնպորտային միջոցի տեսակ

7.4.2

Ցուցանակը նշանի ազդեցությունը տարածում է բոլոր տեսակի կցորդով բեռնատար ավտոմոբիլների և տրակտորների վրա, ինչպես նաև քարշակումն իրականացնող տրասնպորտային միջոցների վրա:

7.4.3

7.4.3 Տրասնպորտային միջոցի տեսակ

Ցուցանակը նշանի ազդեցությունը տարածում է ավտոմոբիլների, այդ թվում այն բեռնատար ավտոմոբիլների վրա, որոնց թույլատրելի առավելագույն զանգվածը հավասար կամ պակաս է 3.5 տոննայից:

7.4.4 Տրասնպորտային միջոցի տեսակ

 7.4.4

Ցուցանակը նշանի ազդեցությունը տարածում է ավտոբուսների և ուղևորների տեղափոխման համար նախատեսված բեռնատար ավտոմոբիլների վրա:

7.4.5

7.4.5 Տրասնպորտային միջոցի տեսակ

Ցուցանակը նշանի ազդեցությունը տարածում է միայն տրակտորների և ինքնագնաց մեքենաների վրա:

7.4.6

7.4. Տրասնպորտային միջոցի տեսակ

Ցուցանակը նշանի ազդեցությունը տարածում է մոտոցիկլների (մոտոսայլակի) և քառանիվ տրանսպորտային միջոցների վրա, որոնց քաշը առանց բեռի չի գերազանցում 400 կգ:

7.4.7

7.4.7 Տրասնպորտային միջոցի տեսակ

Ցուցանակը նշանի ազդեցությունը տարածում է միայն հեծանիվների վրա:

7.4.8 Տրասնպորտային միջոցի տեսակ

 7.4.8

Ցուցանակը նշանի ազդեցությունը տարածում է «Վտանգավոր բեռ» ճանաչողական նշանով կահավորված տրանսպորտային միջոցների վրա:

7.5.1

7.5.1 Շաբաթ, կիրակի և տոն օրեր

Ցուցանակը ցույց է տալիս, որ նշանը գործում է միայն շաբաթ կիրակի և տոն օրերին:

7.5.2 Աշխատանքային օրեր

7.5.2

Ցուցանակը ցույց է տալիս, որ նշանը ազդում է միայն աշխատանքային օրերին:



7.5.3

7.5.3 Շաբաթվա օրեր

Ցուցանակը ցույց է տալիս, որ նշանը գործում է միայն ցուցանակի վրա սահմանված օրերին (այս դեպքում միայն երկուշաբթի և երեքշաբթի):

7.5.4 Գործողության ժամանակ



7.5.4

Այս, 7.5.5 , 7.5.6 , 7.5.7 ցուցանակները կիրառվում են արգելող, թելադրանքի, տեղեկատու-ցուցիչ նշանների հետ համատեղ և ցույց են տալիս օրվա այն ժամերը և շաբաթվա այն օրերը, որոնց ընթացքում նշանը գործում է:

7.6.1

7.6.2

7.6.3

7.6.4

7.6.5

7.6.6

7.6.7

7.6.8

7.6.9

Տրանսպորտային միջոցի կանգնեցման ձևը կայանման տեղերում

Այս ցուցանակները կիրառվում են 5.15 «Կայանման տեղ» տեղեկատու-ցուցիչ նշանի հետ համատեղ և ցույց են տալիս ավտոմիբիլների և մոտոցիկլերի կանգնեցման ձևերը մայթամերձ կայանման տեղերում:

7.6.1 ցույց է տալիս բոլոր տրանսպորտային միջոցները պետք է կանգնեն երթևեկելի մասի վրա, մայթի երկարությամբ:

7.6.2–7.6.9 ցույց են տալիս թեթև ավտոմոբիլների և մոտոցիկլների կանգնեցման ձևերը մայթամերձ կայանման տեղում:

7.7

7.7 Կայանում չգործարկված շարժիչով

Ցուցանակը ցույց է տալիս, որ 5.15 նշանով կահավորված կայանման վայրում կայանելը թույլատրելի է միայն չգործարկված շարժիչով:

7.8 Վճարովի ծառայություններ

7.8

Տեղեկացնում է, որ մատուցվող ծառայությունները վճարովի են:



7.9

7.9 Կայանման տևողության սահմանափակում

Տեղեկացնում է 5.15 «Կայանման տեղ» նշանով կահավորված կայանման վայրում տրանսպորտային միջոցի գտնվելու առավելագույն տևողության մասին:

7.10 Ավտոմոբիլների զննման տեղ

7.10

Տեղեկացնում է, որ **5.15** կամ **6.11** նշաններով

կահավորված հրապարակում առկա է՝ տրանսպորտային միջոցի զննման համար նախատեսված փոս կամ էստակադա:



7.11

7.11 Թույլատրելի առավելագույն զանգվածի սահմանափակում

Տեղեկացնում է, որ նշանի ազդեցությունը միայն այն տրասնպորտային միջոցների վրա, որոնց թույլատրելի առավելագույն զանգվածը մեծ է ցուցանակի վրա նշվածից (այս մեծությունը կարող է փոփոխվել)

7.12 Վտանգավոր կողնակ

7.12

Նախազգուշացնում է, որ նորոգման աշխատանքների կատարման պատճառով կողնակ մուտք գործել վտանգավոր է: Կիրառվում է 1.23 «Ճանապարհային աշխատանքներ» նշանի հետ:

7.13

7.13 Գլխավոր ճանապարհի ուղղություն

Ցույց է տալիս գլխավոր ճանապարի ուղղությունը խաչմերուկում և կիրառվում է խաչմերուկից առաջ դրված 2.1 «Գլխավոր ճանապարհ», 2.4 «Զիջել ճանապարհը», և 2.5 «Երթևեկությունն առանց կանգառի արգելվում է» նշանների հետ:

7.14 Երթևեկության գոտի

7.14

Ցուցանակը կիրառվում է արգելող և թելադրող նշանների հետ և ցույց է տալիս երթևեկության այն գոտին, որի վրա տարածվում է նշանի կամ լուսացույցի ազդեցությունը:

7.15

7.15 Կույր հետիոտներ

Ցուցանակը տեղեկացնում է, որ հետիոտնային անցումից օգտվում են կույրերը և կիրառվում է «Հետիոտնային անցում» 1.20, 5.16.1, 5.16.2 նշանների և լուսացույցի հետ:

„Խոնավ ծածկույթ

7.16

Ցուցանակը տեղեկացնում է, որ նշանի ազդեցությունը տարածվում է այն ժամանակահատվածի վրա, որի ընթացքում երթևեկելի մասի ծածկույթը խոնավ է:

7.17

7.16 Հաշմանդամներ

Ցուցանակը տեղեկացնում է, որ 5.15 նշանի ազդեցությունը տարածվում է միայն այն մոտոսայլակների և ավտոմոբիլների վրա, որոնք վարում են հաշմանդամները, և որոնք կահավորված են »Հաշմանդամ» ճանաչման նշանով:

7.18 Բացի հաշմանդամներից

7.18

Ցուցանակը տեղեկացնում է, որ նշանի ազդեցությունը տարածվում է միայն այն մոտոսայլակների և ավտոմոբիլների վրա, որոնք վարում են հաշմանդամները, և որոնք կահավորված են »Հաշմանդամ» ճանաչման նշանով:

7.19

7.19 Վտանգավոր բեռի դասը

Ցույց է տալիս վտանգավոր բեռների դասի (դասերի) համարն ըստ պետական ստանդարտի 19433-88, որոնց տեղափոխման տրանսպորտային միջոցների վրա տարածվում է

նշանի ազդեցությունը:

Ցուցանակը տեղադրվում է անմիջապես այն նշանի տակ, որոնց հետ դրանք կիրառվում են:

7.2.2–7.2.4, 7.13 ցուցանակները տեղադրվում են նշանի կողքին, եթե այդ նշանները տեղադրված են երթևեկելի մասի, կողնակի կամ մայթի վերևում: Եթե ժամանակավոր (շարժական կանգնակ) և ստացիոնար ճանապարհային նշանները հակասում են իրար, վարորդը ղեկավարվում է ժամանակավոր նշաններից:

Կարող ենք հանդիպել նաև ուրիշ ցուցանակների, որոնք ոչ թե սահմանափակում են երթևեկությունը, այլ օգնում են վարորդներին:

Թեմա № 9
Ճանապարհային նշաններ և նրանց բնութագիրը

1. Հորիզոնական գծանշում

Հորիզոնական գծանշում (գիծ, սլաք, մակագիր և այլ նշումներ երթևեկելի մասի վրա) մտցնում է երթևեկության որոշակի ռեժիմներ և կարգեր: Հորիզոնական գծանշումները սպիտակ գույնի են, բացառությամբ դեղին գույնի 1.4, 1.10 և 1.17 գծերի:



1.1. Բաժանում է հանդիպակաց ուղղությունների տրանսպորտային հոսքերը, նշում ճանապարհի վտանգավոր վայրերը՝

- Երթևեկության գոտիների սահմանները;
- Նշում է երթևեկելի մասի սահմանները, ուր մուտքն արգելված է ;
- Նշում է տրանսպորտային միջոցների կայանման տեղերի սահմանները և այն ճանապարհի երթևեկելի մասի եզրերը, որոնք երթևեկության պայմաններով չեն պատկանում ավտոմայրուղուն:
- Այս գծի հատումն արգելված է !
- Թույլատրելի է միայն երթևեկելի մասի եզրը նշող և վարորդի աջ կողմում գտնվող գծի հատումը տրանսպորտը կողնակում կանգնեցնելու նպատակով !

Այն դեպքում, երբ կանգնակի վրա տեղադրված ժամանակավոր ճանապարհային նշանների և գծանշումների նշանակությունը հակասում են միմյանց, վարորդները պետք է ղեկավարվեն (առավելությունը պետք է տան) նշաններով !!!



1.2 -Գիծ (ընդհանուր հոծ գիծ) – ցույց է տալիս ավտոմայրուղու երթևեկելի մասի եզրերը: 1.2 գծի հատումը թույլատրելի է տրանսպորտային միջոցը ճանապարհեզրին կանգնեցնելու համար:



1.3. Բաժանում է ճանապարհին հանդիպակաց ուղղություններով ընթացող տրանսպորտային հոսքերը,՝ որոնք ունեն չորս և ավելի երթևեկության գոտիներ:1.3 գծի հատումն արգելված է:



1.4 Դեղին հոծ գիծ, որը ցույց է տալիս այն տեղերը, որտեղ կանգառն արգելված է: Կիրառվում է ինքնուրույն կամ 3.27 նշանը հետ և գծվում եթևեկելի մասի եզրին մոտ կամ եզրաքարի վերին մակերևույթին:



1.5 Բաժանում է երկու կամ երեք երթեկության գոտի ունեցող ճանապարհների հանդիպակաց ուղղությունների տրանսպորտային հոսքերը, իսկ մեկ ուղղությամբ երկու և ավելի երթևեկության գոտի ունեցող ճանապարհներին ցույց է տալիս երթևեկության գոտիների սահմանները: 1.5 գծի հատումը թույլատրելի է ցանկացած կողմից:



1.6 Գիծ - (մոտեցման գիծ, ընդհատվող գիծ, որի յուրաքանչյուր գծիկի երկարությունը երեք անգամ գերազանցում է այդ գծիկների միջև ընկած տարածությունը):

- Նախազգուշացնում է երթևեկության հանդիպակաց կամ համընթաց ուղղությունների տրանսպորտային հոսքերը բաժանելու 1.1 կամ 1.11 գծանշանին մոտենալու մասին;
- Գծերի հատումը թույլատրելի է ցանկացած կողմից;



1.7 Գիծ (ընդհատվող գիծ կարճ գծիկներով և նրանց հավասար տարածություններով)-ցույց է տալիս երթևեկության գոտիները խաչմերուկի սահմաններում; Գծերի հատումը թույլատրելի է ցանկացած կողմից:



1.8 Գիծ (ընդհատվող լայն գիծ), որը ցույց է տալիս երթևեկելի մասի հիմնական և թափառքի կամ արգելակման գոտիների միջև սահմանը խաչմերուկներում, ճանապարհների տարբեր մակարդակների հատումներում, ավտոբուսների կանգառի կետերի վայրերում և այլն: Գծերի հատումը թույլատրելի է ցանկացած կողմից:



1.9 Ցույց է տալիս երթևեկության այն գոտիների սահմանները, որտեղ իրականացվում է դարձափոխային կարգավորում, իսկ եթե դարձափոխային լուսացույցները անջատված են տրասնպորտային հոսքերը բաժանում է հակադիր ուղղությունների:

1.9. Գծի հատումը թույլատրելի է այն դեպքում, եթե դա գտնվում է վարորդի կողմից դեպի աջ, և դարձափոխային նշանը չկա կամ անջատված է : Երբ միացված է դարձափոխային լուսացույցը, 1.9 գծի հատումը թույլատրելի է ցանկացած կողմից այն դեպքում, եթե նա բաժանում է գոտիները, որտեղ երթևեկությունը թույլատրելի է մեկ ուղղությամբ: Դարձափոխային լուսացույցի անջատման դեպքում վարորդը պարտավոր է անմիջապես վերադասավորվել դեպի աջ 1.9 գծից այն կողմ: Եթե անջատված է դարձափոխային լուսացույցը, հանդիպակաց ուղղությամբ երթևեկող տրանսպորտային հոսքը բաժանող 1.9 գծի հատումն արգելված է: !



1.10 Ընդհատվող դեղին գիծ, որը ցույց է տալիս այն տեղերը, որտեղ կայանելն արգելված է: Կիրառվում է ինքնուրույն կամ 3.28 արգելող նշանի հետ և գծվում երթևեկելի մասի եզրի մոտ կամ եզրաքարի վերին մակերևույթին:



1.11 Բաժանում է հանդիպակաց կամ համընթաց ուղղությունների տրանսպորտային հոսքերը ճանապարհի այն հատվածներում, որտեղ վերադասավորումը թույլատրվում է միայն մեկ գոտուց, ինչպես նաև ցույց է տալիս հետադարձի կայանման հրապարակների մուտքը, ելքը և նման տեղերը, որտեղ երթևեկությունը թույլատվում է միայն մեկ ուղղությամբ:

- Գծի հատումը թույլատրելի է ինչպես ընդհատվող, այնպես էլ չընդհատվող կողմերից, սակայն միայն վազանցը և շրջանցումը ավարտելուց հետո:

1.12 «Կանգ-գիծ» ցույց է տալիս այն տեղը, որտեղ վարորդը պետք է կանգ առնի լուսացույցի (կարգավորողի) արգելող ազդանշանի կամ 2.5 նշանի առկայություն դեպքում:





1.13 Ցույց է տալիս այն տեղը, որտեղ վարորդն անհրաժեշտության դեպքում պետք է կանգ առնի և զիջի հատող ճանապարհով երթևեկող տրանսպորտային միջոցներին: Կարող է օգտագործվել 2.4 առավելության նշանի հետ:



1.14.1 «Զեբր» ցույց է տալիս հետիոտնային չկարգվորվող անցում:



1.14.2 «Զեբր» ցույց է տալիս հետիտնային չկարգվորվող անցում: Գծանշման սլաքները ցույց են տալիս հետիոտների երթևեկության ուղղությունը:



1.14.3 Գծերը ցույց են տալիս հետիոտնային անցում, որտեղ երթևեկությունը կարգավորվում է լուսցույցով:



1.15 Գծերը ցույց են տալիս այն տեղը, որտեղ հեծանվային արահետը հատում է ճանապարհի երթևեկելի մասը:



1.16.1 (1.16.2 և 1.16.3) ցույց են տալիս տրանսպորտային հոսքերի բաժանման կամ միացման տեղերում ուղղորդ կղզյակներ:



1.17 Դեղին գիծ, որը ցույց է տալիս ընդհանուր օգտագործման տրանսպորտային միջոցների կանգառի կետերը և տաքսիների կայանման վայրերը:



1.18 Ցույց է տալիս խաչմերուկում երթևեկության թույլատրելի ուղղություններն ըստ գոտիների: Կիրառվում է ինքնուրույն կամ 5.8.1 և 5.8.2 նշանների հետ: Ձախ եզրային գոտուց ձախ շրջադարձ թույլատրող գծանշումը թույլարտում է նաև հետադարձ: !



1.19 Նախազգուշացնում է երթևեկելի մասի նեղացման տեղի (այն հատվածի, որտեղ տվյալ ուղղությամբ եթևեկության գոտիների թիվը նվազում է) կամ հանդիպակաց տրանսպորտային հոսքերը բաժանող 1.1 կամ 1.11 գծանշմանը մոտենալու մասին:Առաջին դեպքում գծանշումը կարող է կիրառվել 1.18.1, 1.18.2 , 1.18.3 նախազգուշացնող նշանների հետ համատեղ:



1.20 Նախազգուշացնում է վարորդին 1.13 գծանշմանը մոտենալու մասին:



1.21 «STOP» գրառումը- նախազգուշացնում է 1.2 գծանշմանը մոտենալու մասին, եթե այն կիրառվում է 2.5 առավելության նշանի հետ:



1.22 Գրառումը ցույց է տալիս ճանապարհի (երթուղու) համարը:



1.23 Գրառումը ցույց է տալիս ընդհանուր օգտագործման տրանսպորտային միջոցների երթևեկության համար նախատեսված հատուկ գոտին:

1.1 և 1.3 գծերը հատելն արգելվում է:

Տրանսպորտային միջոցը ճանապարհաեզրին կանգնեցնելու համար թույլատրելի է երթևեկելի մասի եզրը նշող և վարորդի աջ կողմում դասավորված 1.1 և 1.2 գծերի հատումը:

1.5–1.8 գծերը թույլատրելի է հատել ցանկացած կողմից:

1.9. Դարձափոխային լուսցույցների բացակայության կամ անջատված լինելու դեպքում 1.9 գծանշումը թույլատրվում է հատել, եթե այն գտնվում է վարորդից աջ, իսկ միացված դարձափոխային լուսացույցի դեպքում ցանկացած կողմից, եթե այդ գծերը բաժանվում են երթևեկության համընթաց ուղղությամբ գոտիների: Դարձափոխային լուսացույցի անջատման դեպքում վարորդը պետք է անհապաղ վերադասավորվի 1.9 գծանշումից դեպի աջ: Անջատված դարձափոխային լուսացույցների դեպքում, երթևեկության հանդիպակաց ուղղությունների տրանսպորտային հոսքերը բաժանող 1.9 գծանշումը հատելն արգելվում է:

1.11 գիծը թույլատրվում է հատել ընդհատվող գծի, իսկ վազանցը կամ շրջանցումն ավարտելիս նաև հոծ գծի կողմից: .

Եթե կանգնակով պատկերված ժամանակավոր ճանապարհային նշանների և գծանշումների նշանակությունը հակասում են միմյանց, վարորդները ղեկավարվում են ճանապարհային նշաններով:

Թեմա № 10
Ճանապարհային գծանշումներ և նրանց բնութագիրը

2. Ուղղահայաց գծանշում

Ուղղաձիգ գծանշումները ճանապարհային կառույցների և կահավորման տարրերի վրա սպիտակ և սև գոլերի զուգակցություն է, որը ցույց է տալիս դրանց եզրաչափերը, ուղեկամուրջների հենարանները, թունելների հենամիջային կառույցները, եզրապատերի ճակատային մասերը, եզրաքարերը և ծառայում որպես ճանապարհային երթևեկության մանսակիցների տեսողական կողմնորոշման միջոց:









2.1 Ցույց է տալիս ճանապարհային կառույցների ուղղահայաց էլեմենտներ՝

Լուսավորման սյուներ, ծառեր, բուֆերային սարքավորումներ և այլն, երբ դրանք վտանգ են հանդիսանում երթևեկող տրանսպորտային միջոցի համար:

2.2. Ցույց է տալիս թունելի, կամուրջների և ուղեկամուրջների և այլ կառույցների էլեմենտների ստորին եզրը, որոնք տեղադրված են 5 մ-ից պակաս բարձրության վրա ճանապարհի երթևեկելի մասից և որոնց տակով մասնապես կամ ընդհանրապես անցնում է երթևեկելի մասը:

2.3. Ցույց է տալիս բաժանարար գոտիների և անվտանգության կղզյակների վրա տեղադրված կլոր կարճասյուները:

2.4. Ցույց է տալիս ուղղորդ սյունիկները, ուղեցցերը, ցանկապատերի հենակները և այլն:

2.5. Ցույց է տալիս ճանապարհային սահմանափակման ցանկապատերի կողային մակերևույթը, Ճանապարհի ուղիղ հատվածներում, տարբեր մակարդակի հատման տեղերի վրա, 50 մ-ից պակաս շառավղով կորացումները, կտրուկ վայրէջքները և երթևեկելի մասի նեղացման տեղերը:

2.6. Ցուց է տալիս ճանապարհային սահմանափակման ցանկապատերի կողային մակերևույթը՝

Ի տարբերություն 2.5 գծանշումով սահմանվածի, ճանապարհի այլ հատվածներում:

2.7. Ցույց է տալիս ճանապարհի երթևեկելի մասից 1 մ-ից մոտիկ տեղադրված

բարձրացված ուղղորդ կղզյակները, անվտանգության կղզյակները, եզրաքարերը և ցանկապատերի կողային մակերևութը, փոքր շառավղով կորացումները, ճանապարհի նեղացման տեղերը, ջրափերը և այլ վտանգավոր հատվածների անցումային տեղերը:

Թեմա № 11

Ճանապարհային երթևեկության կանոնները-վարորդի ընդհանուր պարտականությունները: Տրանսպորտային միջոցների շահագործման ենթարկելը: Պաշտոնատար անձանց պարտականությունները: Տրանսպորտային միջոցների վրա ամրացվող ճանաչման նշանները:

Գլուխ V

Ճանապարհային երթևեկության կանոններ

Ճանապարհային երթևեկության մասնակիցների մեջ ամենաակտիվ դերն են խաղում տրանսպորտային միջոցի վարորդը և նրա հետ հավասարեցված անձինք: Համապատասխանաբար օրենսդրությունը այս մարդկանց նկատմամբ շատ ավելի պահանջներ և պարտականություններ է սահմանում՝Ճանապարհային երթևեկության անվտանգության մասին Վրաստանի օրենքի 20-րդ հոդվածի համաձայն:

Հոդված 20. Վարորդի ընդհանուր պարտականությունները

Մեխանիկական տրանսպորտային միջոցի վարորդը իր հետ պարտավոր է ունենալ՝

- Տրանսպորտային միջոցի կարգին համապատասխան վարորդական վկայական, իսկ վարորդական վկայականից զրկվելու դեպքում – տրանսպորտային միջոցը վարելու ժամանակավոր իրավունք;
- Տրանսպորտային միջոցի գրանցման փաստաթուղթը;
- Տրված տրանսպորտային միջոցի օգտագործման, սեփականացման կամ տիրապետման իրավասությունը հաստատող փաստաթուղթ- սեփականատիրոջ չլինելու դեպքում նրա տրանսպորտային միջոցի պետական սահմանը անցնելու կամ երկրի այն տարածք մտնելու դեպքում, որտեղ չի տարածում Վրաստանի իրավազորությունը (24.06.2004. 206)

Մոտոցիկլով երթևեկելիս վարորդը և ուղևորը անպայման պետք է լինեն կոճկված մոտոսաղավարտով:

Միջազգային ճանապարհային երթևեկության մասնակցող մեխանիկական տրասնպորտային միջոցի վարորդը պարտավոր է՝

- Իր մոտ ունենալ երթևեկության մասին կոնվենցիայի համապատասխան գրանցման փաստաթուղթ և վարորդական իրավունքի վկայական ;
- Տրանսպորտային միջոցի վրա ամրացնել այն պետության գրանցման և տարբերակիչ նշանները, որտեղ այդ տրանսպորտը գրանցված է:
-

Տրանսպորտային միջոցի վարորդը պարտավոր է՝

- Ճանապարհորդությունն սկսելուց առաջ ստուգել և ապահովել տրանսպորտային միջոցի տեխնիկական սարքինությունները, նրա շահագործման երթարկելու և ճանաարհային երթևեկության ապահովման համար պաշտոնյա անձանց պատասխանատվության մասին հիմնական դրույթերի համաձայն;
- մեխանիկական տրանսպորտային միջոցը (բացառությամբ տրանսպորտային միջոցների, որոնց կառուցվածքով նախատեսված չի անվտանգության գոտիներ) վարելիս կիրառել անվտանգության գոտին և ապահովել նրանից աջ (կամ ձախ) կողմում նստած ուղևորի անվտանգության գոտու օգտագործումը մայրուղու վրա, բացառությամբ տեղական նշանակության և քաղաքների տարածքում առկա ավտոմոբիլային ճանապարհների; (23.06.2005. 1747)
- չերթևեկել արգելակային համակարգի, ղեկային կառավարման, կցման հարմարանքի (ավտոգնացքի կազմում) անսարքինության դեպքում, օրվա մութ ժամանակին սարքից դուս եկած անջատված լապտերներով (կամ առանց դրանց) և հետին եզրաչափային լույսերով ճանապարհ դուրս չգալ, որտեղ առկա չէ արհեստական լուսավորում, անբավարար տեսանելիության պայմաններում կամ վարորդի դիմացի ապակեմաքրիչի անսարքին վիճակով մառախուղի, անձրևի կամ ձյունաթափի ժամանակ;
- չշարունակել երթևեկել ճանապարհին այլ անասարքություններ առաջանալիս, որոնց ժամանակ արգելվում է տրանսպորտային միջոցի շահագործումը: Պետք է վերացնել այն, իսկ եթե դա անհնարին է, տրանսպորտը տանել կայանման կամ վերանորոգման վայր՝ անվտանգության բոլոր անհրաժեշտ միջոցները նախատեսելով:

ճանապարհային երթևեկության անվտանգության կանոնները խախտելիս վարորդը պարտավոր է ճանապարհային ոստիկանի պահանջով կանգնեցնել տրանսպորտային միջոցը և նրան ներկայացնել՝

- Տրանսպորտային միջոցի կարգին համապատասխան վարորդական վկայական, իսկ վարորդական վկայականից զրկվելու դեպքում՝ տրանսպորտային միջոցը վարելու ժամանակավոր իրավունք;
- տրանսպորտային միջոցի գրանցման փաստաթղթեր;

Վարորդի ալկոհոլային, թմրանյութային կամ այլ տիպի ոչ սթափ վիճակում գտնվելու բավարար հիմքերի առկայության դեպքում ճանապարհային ոստիկանի պահանջով նա պետք է անցնի բժշկական ստուգում՝ սթափության վիճակը որոշելու համար:

Ճանապարհատրանսպորտային պատահարին մասնակցող վարորդը պարտավոր է՝

- անհապաղ կանգնեցնել (տեղից չշարժել) տրանսպորտային միջոցը, միացնել վթարային փարոսի ազդանշանը;
- ձեռնարկել անհրաժեշտ միջոցներ տուժածներին առաջին բժշկական օգնություն ցույց տալու համար, ծայրահեղ դեպքերում համընթաց շարժվող տրանսպորտային միջոցով տուժածին տեղափոխել մոտակա բուժհիմնարկ, իսկ եթե դա անհնարին է օգտագործել սեփական տրանսպորտային միջոցը, այնտեղ հայտնել իր ազգանունը, տրանսպորտային միջոցի գրանցման (պետական)համարանիշը (ներկայացնել անձը հաստատող փաստաթուղթ կամ վարորդական իրավունքի վկայական և

տրանսպորտային միջոցի գրանցման վկայագիր), որից հետո վերադառնալ պատահարի վայր;

- ազատել երթևեկելի մասը, եթե այլ տրանսպորտային միջոցների երթևեկությունը անհնարին է;
- երթևեկելի մասը ազատելու, տուժածին սեփական տրանսպորտային միջոցով բուժհիմնարկ տեղափոխելու անհրաժեշտության դեպքում վկաների մասնակցությամբ նախնականորեն արձանագրել տրանսպորտային միջոցի վիճակը, պատահարի հետ կապված առարկաները, ձեռնարկել բոլոր անհրաժեշտ միջոցները նրանց պահպանման և պատահարի վայրի ցանկապատման համար;
- պատահարի մասին հայտնել ոստիկանություն, գրի առնել վկաների ազգանունները և սպասել ոստիկանության ծառայողների ներկայանալուն:

Եթե ճանապարհատրանսպորտային պատահարի հետևանքով ոչ ոք չի վնասվել, վարորդները կարող են առկա հանգամանքները գնահատելով, համաձայնության հիման վրա նախօրոք կազմել պատահարի սխեման, ստորագրել այն և ներկայանալ ճանապարհային ոստկանության մոտակա պահակակետ կամ ոստիկանական մարմիններ՝ դեպքը գրանցելու համար:

Վարորդին արգելվում է՝

- տրանսպորտային միջոցը վարել ալկոհոլային, թմրանյութային կամ այլ տիպի ոչ սթափ վիճակում, հիվանդության օրոք կամ այլ բժշկական դեղորայքի ազդեցության տակ գտնվելիս, որոնք իջեցնում են ռեակցիան և ուշադրությունը և վտանգ են առաջացնում երթևեության անվտանգությանը;
- տրանսպորտային միջոցով երթևեկելու ժամանակ օգտվել ռադիոկապից և հեռախոսակապից, եթե դրանք կահավորված չեն առանց ձեռքերի օգտագործման այլ սարքերից օգտվելու սարքավորումներով (բացառությամբ հեռախոսակապից բարձրաձայն զրույցի ֆունկցիայով կամ ականջակալերով օգտվելու դեպքերից) (23.06.2005. 1747)
- տրանսպորտային միջոցի վարումը հանձնել անձանց, որոնք գտնվում են ալկոհոլային, թմրանյութային կամ այլ տիպի ոչ սթափ, հիվանդ վիճակում կամ այլ բժշկական դեղորայքի ազդեցության տակ, որոնք իջեցնում են ռեակցիան և ուշադրությունը, ինչպես նաև իրենց մոտ տվյալ կարգի տրանսպորտային միջոցը վարելու համար վարորդական իրավունքի վկայական չունեցող անձանց:

Օրենքի 21-րդ հոդվածում ձևակերպված է տրանսպորտային միջոցի ոստիկանությունում գրանցման պայմանները, ինչպես նաև տրանսպորտային միջոցների հետ կապված պաշտոնատար անձանց պարտականությունները: Ձևակերպված է նաև տարբեր տրանսպորտյին միջոցների վրա համապատասխան ճանաչման նշանների տեղավորման պարտավորությունները և այդ նշանների ստանդարտները:

Հոդված 21. Տրանսպորտային միջոցի շահագործման ենթարկելու և ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման միջոցառումները: Պաշտոնատար անձանց պարտականությունները:

- մեխանիկական տրանսպորտային միջոցների գրանցման ժամկետները սահմանվում են Վրաստանի Ներքին Գործերի նախարարի հրամանով:
- մեխանիկական տրանսպորտային միջոցի (բացառությամբ տրամվայի և տրոլեյբուսի) և կցորդի հատուկ տեղերում ամրացվում են համապատասխան նմուշի գրանցումային նշաններ, իսկ ավտոմոբիլի վրա լրացուցիչ ապակու ներքևի ձախ կողմում տեղադրվում է ճանապարհի որակավորման թեստավորումն անցնելը հաստատող ցուցանակը: (29.12.2006. 4221)
- ճանապարհային երթևեկության անվտանգության և շրջակա միջավայրի պահպանման նպատակով, ճանապարհային երթևեկության մասնակից տրանսպորտային միջոցի տեխնիկական վիճակը և կահավորանքը պետք է պատասխանի համապատասխան ստանդարտներին և կանոններին:
- Ուղևորների տեղափոխման կողային հարթակով բեռնատար ավտոմոբիլը պետք է կահավորվի հատակից 0,3–0,5 մետր բարձրության վրա և կողի վերևի մասից ոչ պակաս 0,3 մետրի վրա ամրացված նստատեղիներով, իսկ երեխաներ տեղափոխելիս կողերի բարձրությունը հատակից չպետք է լինի 0,8 մետրից պակաս: Հետևի կամ կողային բորտերի երկայնքով տեղադրված նստատեղերը պետք է ունենան ամուր հենարաններ:
- Ուսումնական կազմակերպության մեխանիկական տրանսպրոտային միջոցը, որը կիրառվում է ավտոմոբիլ վարել սովորելու համար, պետք է կահավորվի կցորդման և արգելակման լրացուցիչ ոտնակներով:
- Հեծանիվը պետք է ունենա սարքին արգելակ, ղեկ և ձայնային ազդանշան, պիտի կահավորվի առջևում լուսանդրադարձիչով և սպիտակ գույնի լապտերով (օրվա մութ ժամերին կամ անբավարար տեսանելիության պայմաններում երթևեկելու համար), հետևում – լուսանդրադարձիչով կամ կարիր գույնի լապտերիկով, իսկ երկու կողային կողմերում – նարնջագույն կամ կարմիր գույնի լուսանդրադարձիչով:
- Քառանիվ լծասայլակը պիտի ունենա կառուցվածքով նախատեսված սարքին վիճակում գտնվող կանգնեցնելու արգելակային սարքավորում և հակագլորման հենարաններ, պիտի կահավորվի առջևում երկու լուսանդրադարձիչով և սպիտակ գույնի լապտերիկով, հետևում՝ երկու լուսանդրադարձիչով կամ կարմիր գույնի լապտերիկով.
- Տրամվայի և տրոլեյբուսի վրա ամրացվում են համապատասխան մարմինների կողմից շնորհված գրանցումային համարներ:

Տրասնպորտային միջոցների վրա ամրացվում են հետևյալ ճանաչման նշաններ՝



„Ավտոգնացք” – կցորդներով բեռնատար ավտոմոբիլների և անվավոր տրակտորների (1,4 տ և բարձր դասի) խցիկների կտուրների, ինչպես նաև համակցված ավտոբուսների և տրոլեյբուսների թափքի կտուրների առջևի մասում տեղադրված իրարից 150-ից մինչև 300 մմ-հեռավորությանբ հորիզոնական դասավորված, նարնջագույն երեք լապտերիկների տեսքով:

«Բութակներ» – բութակավորված դողերով կահավորված մեխանիկական տրանսպորտային միջոցների հետևի մասում գագաթը վեր կարմիր եզրաշերտով սպիտակ գույնի հավասարակողմ „յ” պատկերանշնով եռանկյան տեսքով (եռանկյան կողմի եկարությունը առնվազն 200 –մմ, եզրաշերտի լայնությունը – կողմի 1/10 չափով);

«Երեխաների փոխադրում» –ավտոբուսի կամ բեռնատար ավտոմոբիլի առջևի և հետևի մասերում 1.21 ճանապարհային նշանի պատկերանշանով, կարմիր գույնի եզրաշերտով դեղին քառակուսու տեսքով (կողմը առնվազն 250, եզրաշերտի լայնությունը կողմի 1/10 չափով);

«Խուլ վարորդ» –խուլ կամ խուլ ու համր վարորդների կողմից վարվող մեխանիկական տրանսպորտային միջոցների առջևի և հետևի մասում՝ գագաթը ներքև ուղղված երևակայական հավասարակողմ եռանկյան անկյուններում երեք սև փոքր շրջանների պատկերով դեղին շրջանի տեսքով (նշանի տրամագիծը՝160մմ, փոքր շրջաններինը՝ 40մմ):

«Վտանգավոր բեռ» – վտանգավոր բեռներ փոխադրող տրանսպորտային միջոցների առջևի և հետևի մասերում ուղղանկյան տեսքով՝ չափսերը՝ 690Х300մմ, որի աջ մասը 400Х300 մմ նարնջագույն է և երկարությամբ բաժանված է երկու հավասար մասերի, իսկ ձախ մասը՝ սպիտակ, սև եզրաշերտով (լայնությունը 15 մմ):

«Ուսումնական տրանսպորտային միջոց» – վարման ուսուցման նպատակով օգտագործվող մեխանիկական տրանսպորտային միջոցների առջևի և հետևի մասերում սև գույնի „Ս” տառի պատկերով, կարմիր եզրաշերտով, սպիտակ գույնի հավասարակողմ եռանկյան տեսքով (կողմը՝ առնվազն 200 մմ, եզրաշերտի լայնությունը՝ մեկ 1/10չափով):

Թույլատրվում է երկկողմանի նշանի տեղադրում թեթև մարդատար ավտոմոբիլների կտուրներին:

«Արագության սահմանափակում» – վտանգավոր, ծանրաքաշ և մեծ եզրաչափեր ունեցող բեռներ փոխադրող կամ 29-րդ հոդվածի 4-րդ կետում սահմանված արագություններից տեխնիկական բնութագրով նախատեսված ցածր արագություն ունեցող տրանսպորտային միջոցների թափքի հետևի ձախ կողմում, թույլատրելի արագության նշումով, 3.24 նշանի տեսքով (տրամագիծը՝ առնվազն 160մմ, եզրաշերտի լայնությունը՝ տրամագծի1/10չափով):

«Մեծ եզրաչափերով բեռ» – անկյունագծով իրար հաջորդող կարմիր և սպիտակ զոլերով, լուսանդրադարձիչ մակերևույթ ունեցող վահանակի տեսքի (չափսերը՝ 400X400 մմ, զոլերի լանությունը՝ 50մմ):

«Երկարաչափ տրանսպորտային միջոց» –բեռով կամ առանց բեռի 20մ-ից ավելի երկարություն ունեցող տրանսպորտային միջոցների, երկու և ավելի կցորդներով ավտոգնացքների (անկախ երկարությունից) հետևի մասում՝ լուսանդրադարձիչ մակերևույթ ունեցող դեղին գույնի, կարմիր եզրաշերտով ուղղանկյան տեսքով (չափերը՝ ոչ պակաս, քան 1200X200մմ, եզրաշերտի լայնությունը՝ 40մմ):

Եթե այդպիսի չափեր ունեցող նշանի տեղադրումը հնարավոր չէ, ապա թույլատրվում է տրանսպորտային միջոցի առանցքին սիմետրիկ տեղադրել 600X200 ոչ պակաս չափսեր ունեցող երկու միանման նշաններ:

Վարորդի ցանկությամբ կարող են տեղադրվել նաև հետևյալ ճանաչման նշանները՝

«Հաշմանդամ» –առաջին և երկրորդ խմբերի հաշմանդամների կողմից վարվող կամ այդպիսի հաշմանդամներ փոխադրող մեխանիկական տրանսպորտային միջոցների առջևի և հետևի մասերում՝՝7.17 նշանի պատկերով, դեղին քառակուսու տեսքի(կողմը՝ 150մմ):

«Բժիշկ» - բժիշկ վարորդների կողմից վարվող ավտոմոբիլների առջևի և հետևի մասում, կարմիր խաչի պատկերով, սպիտակ շրջանով ներգծված, կապույտ գույնի քառակուսու տեսքի(կողմը՝ 140մմ, շրջանի տրամագիծը՝ 125մմ, խաչի գծիկի լայնությունը՝ 25մմ, բարձրությունը՝ 90մմ):

Վարորդը տրասնպորտային միջոցում պարտավոր է ունենալ՝

«Վթարային կանգառի նշան» - ցուցանակը լուսանդրադարձիչ մակերևույթ ունեցող, գագաթը վերև ուղղված, սպիտակ գույնի, կարմիր եզրաշերտով հավասակարկողմ եռանկյան տեսքով (կողմը՝ 450-550մմ, եզրաշերտի լայնությունը՝ 40-50մմ): Այս եռանկյան միջնամասը կարող է դատարկ կամ բաց գույնի ներկով ներկված լինել; կարմիր եզրաշերտերը պետք է ունենան լուսանդրադրձիչի հատկություն; վահանակը այնպես հնարավորինս չափով պետք է կանգնեցնել կայուն ուղղահայաց դիրքով: Տեղադրվում է պարտադիր կագով:

Մեխանիկական տրանսպորտային միջոցներ քարշակելիս ճկուն կապող օղակը նկատելի դարձնելու նպատակով այն պետք է կահավորվի նախազգուշական հարմարանքներով, որոնք անկյունագծով 50մմ լայնությամբ իրար հաջորդող կարմիր և սպիտակ ցույնի զոլերով, 200Х200 մմ չափերի լուսանդրադարձիչ մակերևույթով դրոշակներ կամ վահանակներ են: Ճկուն կապվող օղակի վրա պետք է տեղադրվեն երկուսից ոչ պակաս նախազգուշական միջոցներ:

Կոշտ քարշակման սարքավորումների կառուցվածքը պիտի համապատասխանի 25907-89 պետական ստանդարտի (տիպօրինակ) պահանջներին:

Տրանսպորտային միջոցի շահագործման և տեխնիկական վիճակի համար պատասխանատու պաշտոնատար անձանց արգելվում է՝

- Գիծ դուրս թողնել տեխնիկորեն անսարքին մեխանիկական տրանսպորտային միջոցը, որի շահագործումն արգելված է, ինչպես նաև այն տրանսպորտային միջոցը, որը վերասարքավորված է կանոնների խախտմամբ կամ չի գրանցված սահմանված կարգով, կամ չի անցել ճանապարհային որակավորման քննության (22.02.2011. 4216 ուժի մեջ մտնի 2011 թվականի ապրլի 15-ից):
- տրանսպորտային միջոցի վարումը հանձնել անձանց, որոնք գտնվում են ալկոհոլային, թմրանյութային կամ այլ տիպի ոչ սթափ, հիվանդ վիճակում կամ այլ բժշկական դեղորայքի ազդեցության տակ, որոնք իջեցնում են ռեակցիան և ուշադրությունը, ինչպես նաև իրենց մոտ տվյալ կարգի տրանսպորտային միջոցը վարելու համար վարորդական իրավունքի վկայական չունեցող անձանց;
- հրահանգել տրակտորներով, ինքնագնացով և թրթուրավոր այլ մեքենաներով երթևեկել ասֆալտե և ցեմենտբետոնե ծածկույթ ունեցող ճանապարհներով:

Ճանապարհի, երկաթգծային անցումի և այլ ճանապարհային կառույցների համար պատասխանատու պաշտոնատար անձինք պարտավոր են՝

- ճանապարհը, երկաթգծային անցումը և այլ ճանապարհային կառույցները պահպանել երթևեկության համար անվտանգ վիճակում;
- ձեռնարկել միջոցներ՝ վերացնելու ճանապարհային երթևեկության անվտանգությանը սպառնացող խոչընդոտը՝ անհրաժեշտության դեպքում ճանապարհի տվյալ հատվածում ժամանակավորապես սահմանափակելով կամ արգելելով ճանապարհային երթևեկությունը:

Ճանապարհի վրա աշխատանք կատարելու համար պատասխանատու պաշտոնատար անձը պարտավոր է՝

- աշխատանքը կազմակերպել՝ ապահովելով ճանապարհային երթևեկության անվտանգությունը: Ճանապարհի վրա աշխատանքի կատարման վայրը, ինչպես նաև այդ վայրում տեղակայված ճանապարհային մեքենաները, շինարարական նյութերը, կառուցվածքները և աշխատանքի կատարման համար անրաժեշտ այլ առարկաները նշվում են համապատասխան ճանապարհային նշաններով, ուղղորդ կամ ցանկապատող սարքավորումներով, իսկ օրվա մութ ժամանակ և անբավարար տեսանելիության պայմաններում նաև կարմիր կամ դեղին ազդանանային լուսերով:
- ճանապարհային աշխատանքներն ավարտելուց հետո անհապաղ ապահովել տրանսպորտային միջոցների և հետիոտների անվտանգ երթևեկությունը:

Պաշտոնատար անձինք Վրաստանի օրենսդրությամբ նախատեսված դեպքերում, սահմանված կարգով համապատասխան ծառայությունների հետ համաձայնեցնում են՝

- քաղաքում և ավտոմոբիային ճանապարհով երթևեկության կազմակերպման սխեմաները;
- ճանապարհի, ճանապարհային կառույցների շինարարության, նախագծման և վերանորոգման նախագծեր;
- անմիջապես ճանապարհին մոտ կրպակների, տրանսպարանտների և պլակատների ցուցահանդեսի, գովազդային վահանակների և այլ առարկաների տեղադրումը, որոնք վատթարացնում են տեսանելիությունը և դժվարացնում են հետիոտնի երթևեկությունը;
- երթուղային տրասնպորտային միջոցների երթևեկության երթուղիների և կանգառների կետերը;
- ճանապարհին մասսայական, սպորտային և այլ միջոցառումների անցկացում;
- տրանսպորտային միջոցի վերասարքավորումը, նրա վրա հատուկ լուսավորման և ձայնային ազդանշանների ամրացումը, տրանսպորտային միջոցների թափքի կողքերում թեք սպիտակ զոլերի գծագրումը;
- վտանգավոր, ծանրաքաշ և մեծ եզրաչափերով բեռի տեղափոխումը;
- ավտոգնացքի երթևեկությունը, որի ընդհանուր երկարությունը գերազանցում է 20մ, երկու կամ ավելի կցորդներով ավտոգնացքի երթևեկությունը;
- ճանապարհային երթևեկության անվտանգության մասնագետի, վարման ուսուցման հրահանգչի և վարորդների պատրաստման ծրագրերը;
- ճանապարհների ցուցակը, որոնցով արգելված է ուսումնական վարումը;
- ճանապարհով ցանկացած տիպի աշխատանքներ կատարելը, որոնք խոչընդոտ են առաջացնում տրանսպորտային միջոցների և հետիոտնի երթևեկությանը:

Թեմա № 12

Հատուկ ազդանշանների կիրառումը: Հետիոտնի և ուղևորների պարտականությունները:

Օրենքի 22րդ հոդվածում ձևակերպված են հատուկ ազդանշանների (որոնց մեջ ներառված են կապույտ, կարմիր, նարնջագույն լուսավորման սարքավորումները և հատուկ ձայնային ազդանշանները) կիրառման իրավասությունները և կանոնները: Ինչպես նաև ճանապարհային երթևեկության մասնակիցների պարտականությունները այսպիսի ազդանշաններով կահավորված տրանսպորտային միջոցների մոտենալու դեպքում:

Հոդված 22.Հատուկ ազդանշանների կիրառումը

Օպերատիվ կամ հատուկ ծառայության տրանսպորտային միջոցի վարորդը, որը տրանսպորտային միջոցների վրա միացրել է կապույտ գույնի փարոսիկը և կատարում է անհետաձելի ծառայողական առաջադրանքներ ճանապարհային երթևեկության ապահովման նպատակով, բացի կարգավորողի ազդանշանների, կարող է չպահպանել 25-րդ և 27–37-րդ հոդվածների պահանջները:

Երթևեկության մյուս մասնկիցների նկատմամբ առավելություն ստանալու համար այդպիսի տրանսպորտային միջոցների վարորդները պետք է միացնեն կապույտ գույնի առկայծող փարոսիկը և հատուկ ձայնային ազդանշանը, որը բարձր և ցածր ձայնային երանգների

հերթականություն է: Վարորդներն առավելությունից կարող են օգտվել միայն համոզվելով, որ ճանապարհը իրենց զիջում են:

Այդ իրավունքից օգտվում են նաև այն վարորդները, որոնց տրանսպորտային միջոցները ուղեկցվում են կապույտ և կարմիր գույնի առկայծող փարոսիկներ և հատուկ ձայնային ազդանշան միացրած տրանսպորտային միջոցներով:

Կապույտ գունի առկայծող փարոսիկ և հատուկ ձայնային ազդանշան միացրած տրանսպորտային միջոց մոտենալու դեպքում վարորդները զիջում են ճանապարհը՝ նշված տրանսպորտային միջոցների անխոչընդոտ անցումն ապահովելու համար:

Կապույտ կամ կապույտ և կարմիր գույների առկայծող փարոսիկներ միացրած կանգնած վիճակում գտնվող տրանսպորտային միջոցներին մոտենալիս վարորդը պետք է նվազեցնի արագությունը, որպեսզի անհրաժեշտության դեպքում հնարավորություն ունենա անմիջապես կանգ առնել:

Դեղին կամ նարնջագույն առկայծող փարոսիկները միացրած տրանսպորտային միջոցների վարորդները ճանապարհների շինարարության վերանորոգման, պահպանման կամ մաքրման աշխատանքներ կատարելով և ապահովելով երթևեկության անվտանգությունը, կարող են չպահպանել կանոնների 28-րդ հոդվածի 4–8-րդ և 35-րդ հոդվածի առաջին կետերի, գծանշումների և նշանների պահանջները: Մնացած վարորդները նրանց աշխատանքի մեջ խոչընդոտներ չպետք է ստեղծեն: Դեղին կամ նարնջագույն առկայծող փարոսիկները երթևեկության առավելություն չեն տալիս և ծառայում են երթևեկության մյուս մասնակցներին՝ վտանգի մասին նախազգուշացնելու համար:

Հոդված 23. Հետիոտնի պարտականությունները

- ***Հետիոտները պարտավոր են շարժվել մայթերով կամ հետիոտնային արահետներով,*** իսկ դրանց բացակայության դեպքում՝ կողնակներով: Մեծածավալ իրեր տեղափոխող հետիոտները, ինչպես նաև առանց շարժիչի հաշմադամային սայլակներով երթևեկողները կարող են շարժվել երթևեկելի մասի եզրով, եթե դրանց երթևեկությունը խոչընդոտում են մայթերով և արահետներով շարժվող այլ հետիոտներ: Մայթերի, հետիոտնային արահետների կամ կողնակների բացակայության, ինչպես նաև նրանցով երթևեկելու անհնարինության դեպքում հետիոտները կարող են շարժվել հեծանվային արահետով կամ ճանապարհի երթևեկելի մասի եզրով, մեկ շարքով (բաժանարար գոտիներ ունեցող ճանապարհների երթևեկելի մասի արտաքին եզրով): Հետիոտները երթևեկելի մասով շարժվելիս պետք է քայլեն տրանսպորտային միջոցների հոսքին հանդիպակաց, իսկ առանց շարժիչի հաշմանդամային սայլակներով տեղաշարժվողները, ինչպես նաև մոտոցիկլետ, մոպեդ կամ հեծանիվը ձեռքով տանող անձինք տրանսպորտային միջոցների հոսքին համընթաց:
- Երթևեկելի մասով կազմակերպված հետիոտնային շարասյունների շարժվելը թույլատրվում է միայն աջ կողմով շարքում ոչ ավելի, քան չորս մարդ, տրանսպորտային միջոցների հոսքին համընթաց: Շարասյան ձախ կողմում առջևից և հետևից պետք է գտնվեն կարմիր դրոշակներով ուղեկցողներ, իսկ օրվա մութ ժամանակ և անբավարար տեսանելիության պայմաններում՝ առջևից սպիտակ, իսկ հետևից կարմիր գույնի միացված լապտերիկներով: Երեխաների խմբերը թույլատրվում է տանել միայն մայթերով և հետիոտնային արահետներով, իսկ դրանց

բացակայության դեպքում կողնակներով, բայց միայն օրվա լուսավոր ժամերին և չափահասների ուղեկցությամբ:

- ***Հետիոտները պետք է երթևեկելի մասը հատեն հետիոտնային, ստորգետնյա և վերգետնյա անցումներով, իսկ դրանց բացակայության դեպքում՝ խաչմերուկներում մայթերի կամ կողնակների ուղղությամբ:*** Եթե տեսադաշտում բացակայում են հետիոտնային անցում և խաչմերուկ, բաժանարար գոտի կամ պատնեշ չունեցող ճանապարհները թույլատրվում է հատել երթևեկելի մասի եզրին ուղղահայաց, երկու կողմերից լավ տեսանելի հատվածներում:
- Այն տեղերում, որտեղ երթևեկությունը կարգավորվում է, հետիոտները պետք է ղեկավարվեն կարգավորողի կամ հետիոտնային լուսացույցի, իսկ բացակայության դեպքում՝ տրանսպորտային լուսացույցի ազդանշաններով:
- Չկարգավորվող հետիոտնային անցումներում հետիոտները կարող են դուրս գալ երթևեկելի մաս՝ միայն գնահատելով մոտեցող տրանսպորտային միջոցի արագությունն ու իրենց միջև եղած հեռավորությունը և համոզվելով, որ անցումը անվտանգ է իրենց համար: Հետիոտնային անցումներից դուրս երթևեկելի մասը հատող հետիոտները չպետք է խոչընդոտ ստեղծեն երթևեկող տրանսպորտային միջոցների համար, իսկ կանգնած տրանսպորտային միջոցի կամ տեսանելիությունը սահմանափակող այլ խոչընդոտի հետևից կարող են դուրս գալ, եթե միայն համոզված են, որ մոտեցող տրանսպորտային միջոցներ չկան: .
- Դուրս գալով երթևեկելի մաս՝ հետիոտները չպետք է այնտեղ կանգնեն կամ հապաղեն, եթե անցումն անվտանգ է: Այն հետիոտները, որոնք չեն հասցրել ավարտել անցումը, պետք է կանգ առնեն անվտանգության կղզյակի կամ հակադիր ուղղությունների տրանսպորտային հոսքերը բաժանող գծի վրա: Անցումը կարելի է շարունակել միայն հետագա երթևեկության անվտանգության մեջ համոզվելուց հետո:

Կապույտ կամ կապույտ և կարմիր գույնի առկայծող փարոսիկներ և հատուկ ձայնային ազդանշան միացրած տրանսպորտային միջոցների մոտենալու դեպքում հետիոտները չպետք է սկսեն երթևեկելի մասի հատումը, իսկ այնտեղ գտնվողները պետք է զիջեն ճանապարհը նշված տրանսպորտային միջոցներին և դրանցով ուղեկցվողներին՝ անհապաղ ազատելով երթևեկելի մասը:

- ***Ընդհանուր օգտագործման տրանսպորտային միջոցների և «տաքսու» թույլատրվում է սպասել միայն երթևեկելի մասից բարձրացված սպասահարթակների վրա, իսկ դրանց բացակայության դեպքում մայթերին կամ կողնակներին:*** Բաձրացված սպասահարթակներով չկահավորված կանգառի կետերում թույլատրվում է դուրս գալ երթևեկելի մաս միայն մոտեցող տրանսպորտային միջոցի կանգնելուց հետո: Տրանսպորտային միջոցից իջնելուց հետո պետք է անհապաղ ազատել երթևեկելի մասը:

Հոդված 24. Ուղևորների պարտականությունները

Ուղևորը պարտավոր է՝

Տրանսպորտային միջոցի կանգնելուց հետո նստել և իջնել միայն մայթի կամ կողնակի կողմից, իսկ եթե դա անհնար է, երթևեկելի մասի կողմից, պայմանով, որ այն կկատարվի անվտանգ և խոչընդոտ չի ստեղծի երթևեկության մյուս մասնակիցների համար:

Ուղևորներին արգելվում է՝

- Վարորդի ուշադրությունը շեղել տրանսպորտային միջոցի ղեկավարումից;
- Կողավոր թափքով բեռնատար ավտոմոբիլի թափքում երթևեկելիս կանգնել թափքի կողերին կամ դրանցից բարձր գտնվող բեռի վրա;
- երթևեկության ընթացքում բացել տրանսպորտային միջոցի դռները:

Թեմա № 13

Լուսացույցի կարգավորողի ազդանշանները: Վթարային ազդանշան

Ճանապարհային երթևեկության կազմակերպման տեխնիկական միջոցների մեջ ամենամեծ դերը կատարում են լուսացույցերը: Գոյություն ունեն տարբեր ձևերի և նշանակության լուսացույցեր: Նրանց տիպերի և պանաջների մասին բացատրությունները տրված են օրենքի 25-րդ հոդվածում: Սույն հոդվածում խոսվում է այս օրենքի տերմիններում օգտագործված՝ կարգավորողի կողմից տրված ազդանշանների նշանակության մասին:

Հոդված 25. Լուսացույցի և կարգավորողի ազդանշանները

Լուսացույցներում կիրառվում են կանաչ, դեղին, կարմիր և լուսասպիտակ գույների լուսային ազդանշաններ: Կախված գործածման նպատակից՝ լուսացույցները կարող են լինել տրանսպորտային, հետիոտնային և հեծանվային երթևեկությունը կարգավորող, իսկ դրանց ազդանշանները՝ կլոր (առանց պատկերի), ինչպես նաև պատկերներով սլաքի (սլաքների), հետիոտնի կամ հեծանվի ուրվապատկերի տեսքով և «X»- աձև:

Լուսացույցի կլոր ազդանշաններն ունեն հետևյալ նշանակությունները՝

- ***Կանաչ ազդանշանը*** – թույլատրում է երթևեկությունը;
- ***Կանաչ թարթող ազդանշանը*** –թույլատրում է երթևեկությունը և տեղեկացնում, որ նրա գործողության ժամկետը լրանում է և շուտով կմիանա արգելող ազդանշանը (կանաչ ազդանշանի գործողության ավարտին մնացած ժամանակի մասին(վայրկյաններով) վարորդներին տեղեկացնելու համար կարող են կիրառվել թվատախտակներ):
- ***Դեղին ազդանշանն*** –արգելում է երթևեկությունը (բացառությամբ այս կանոնի 14-րդ կետում նախատեսված դեպքի) և նախազգուշացնում ազդանշանի առաջիկա փոփոխման մասին;
- ***Դեղին թարթող ազդանշանը*** –թույլատրում է երթևեկությունը և տեղեկացնում չկարգավորվող խաչմերուկի կամ հետիոտնային անցման առկայության, ինչպես նաև նախազգուշացնում որևէ վտանգի մասին;
- ***Կարմիր ազդանշանը այդ թվում նաև թարթող*** –արգելում է երթևեկությունը: Կարմիր և դեղին ազդանշանների զուգակցումը արգելում է երթևեկությունը և տեղեկացնում կանաչ ազդանշանի առաջիկայում միանալու մասին:

Լուսացույցի կարմիր, դեղին և կանաչ գույների սլաքների տեսքով ազդանշաններն ունեն նույն նշանակությունը, ինչ համապատասխան գույնի կլոր ազդանշանները, սակայն դրանց գործողությունը տարածվում է միայն սլաքներով նշված ուղղության (ուղղությունների)վրա: Այդ դեպքում ձախ շրջադարձ թույլատրող սլաքը թույլատրում է նաև հետադարձը, եթե դա արգելված չէ համապատասխան ճանապարհային նշանով: Նույն նշանակությունն ունի լրացուցիչ սեկցիայի կանաչ սլաքը: Լրացուցիչ սեկցիայի անջատված ազդանշանը արգելում է երթևեկությունն այդ սեկցիայով կարգավորվող ուղղությամբ:

Լուսացույցի հիմնական կանաչ ազդանշանի և սև ուրվագծային սլաքը(սլաքները) վարորդներին տեղեկացնում է լրացուցիչ սեկցիայի առկայության մասին և ցույց է տալիս թույլատրված երթևեկության այլ ուղղություններ, որոնք նախատեսված չեն լրացուցիչ սեկցիայի ազդանշանով:

Եթե լուսացույցի ազդանշանը հետիոտնի (հեծանիվի) ուրվապատկերի տեսքով է, ապա նրա գործողությունը տարածվում է միայն հետիոտների (հեծանվորդների) վրա: Այս դեպքում կանաչ ազդանշանը թույլատրում է հետիոտների (հեծանվորդների) երթևեկությունը, իսկ կարմիրը՝ արգելում: Հեծանվորդների երթևեկությունը կարգավորելու համար կարող է կիրառվել նաև փոքրացված չափերի կլոր ազդանշաններով լուսացույց՝ լրացված սպիտակ գույնի 200X200 մմ չափերի ուղղանկյուն ցուցանակով, հեծանվի սև գույնի պատկերով:

Ճանապարհների վրա կույր հետիոտների հաճախակի հայտնվելու վայրերում, երթևեկելի մասը հատելու հնարավորության մասին նրանց տեղեկացնելու համար, լուսացույցի կանաչ լուսային ազդանշանը կարող է ուղեկցվել տրանսպորտային միջոցների ձայնային (հատուկ) ազդանշաններից տարբերվող ձայնային ազդնշանով:

Տրանսպորտային միջոցների երթևեկությունը երթևեկելի մասի առանձին գոտիներով կարգավորելու համար, մասնավորապես այն գոտիների, որոնցով երթևեկության ուղղությունը կարող է փոխվել հանդիպկացի, կիրառվում են դարձափոխային լուսացույցներ՝ անձև կարմիր և դեպի ներքև ուղղված սլաքի տեսքով, կանաչ ազդանշաններով, որոնք համապատասխանաբար արգելում կամ թույլատրում են երթևեկությունն այն գոտիով, որի վերևում տեղակայված են: Դարձափոխային լուսացույցների հիմնական ազդանշանները կարող են լրացվել անկյունգծով դեպի ներքև՝ աջ կամ ձախ ուղղված սլաքի տեսքով դեպի սլաքով նշված գոտի վերադասավորվելու անհրաժեշտության մասին:

Տրամվայների, ինչպես նաև առանձնացված գոտիով երթևեկող ընդհանուր օգտագործման այլ տրանսորտային միջոցների երթևեկությունը կարգավորելու համար կարող են կիրառվել դասավորված, միագույն լուսնասպիտակ չորս կլոր ազդանշաններ ունեցող լուսացույցներ: Երթևեկությունը թույլատրվում է միայն ներքևի և վերևի ազդանշաններից մեկի կամ մի քանիսի միաժամանակ միացված լինելու դեպքում, ընդ որում, ձախը թույլատրում է երթևեկությունը դեպի ձախ, միջինը՝ ուղիղ, իսկ աջը՝ դեպի աջ: Եթե լուսացույցի վերևի մեկ կամ մի քանի ազդանշաններ միացված են առանց ներքևի ազդանշանի, ապա երթևեկությունն արգելված է:

Երկաթուղային գծանցի վրա տեղակայված կլոր լուսնասպիտակ թարթող ազդանշանը թույլատրում է տրանսպորտային միջոցների երթևեկություն գնացքով: Եթե թարթող լուսնասպիտակ և կարմիր ազդանշաններն անջատված են, ապա երթևեկությունը թույլատրվում է տեսանելիության սահմաններում՝ մոտեցող գնացքի (լոկոմիտովի, երկաթուղային սայլակի) բացակայության դեպքում:



կազմակերպության



ուղղության



երկաթգծի



նախազգուշացնող



Հորիզոնական
դասավորվածություն



լրացուցիչ
սեկցիա



ուղղահայաց
դասավորվածություն

կանգ
ուղիղ և ձախ

ուղիղ

ուղիղ և ձախ









դարձափոխային

Կարմիր
լուսացույցը
(ինչպես նաև
թարթող)
արգելում է
երթևեկությունը

Դեղին լուսացույցը,
արգելում է
երթևեկությունը,
թույլատրելի է միայն
սկսած երթևեկության
ավարտը

Կանաչ
Լուսացույցը
Ցույց է տալիս
երթևեկություն



Թարթող դեղին լույսը թույլատրում է մեծ զգուշությամբ երթևեկել խաչմերուկով:



Թարթող կանաչ լուսացույցը ցույց է տալիս երթևեկություն և միաժամանակ տեղեկացնում վարորդին , որ մի քանի րոպեից կմիանա արգելող լուսացույցը:



Թարթող կարմիր լուսացույցը ցույց է տալիս, որ մի քանի վայրկյանից կվառվի դեղին լուսացոյցը և պետք է պատրաստվել կանաչ լուսացույցի համար:

Լուսացույց

Լուսացույցներում կիրառվում են կանաչ, դեղին, կարմիր և լուսնասպիտակ գույների լուսային ազդանշաններ:

Կանաչ ազդանշանը թույլատրում է երթևեկությունը :

Կանաչ թարթող ազդանշանը թույլատրում է երթևեկությունը տեղեկացնում , որ նրա գործողության ժամկետը լրանում է –և շուտով կմիանա արգելող ազդանշանը:

Դեզին ազդանշնաը արգելում է երթևեկությունը – նախազգուշացնում ազդանշանի առաջիկա փոփոխման մասին:

Դ եղին թարթող ազդանշանը –թույլատրում է երթևեկությունը և տեղեկացնում չկարգավորվող խաչմերուկի կամ հետիոտնային անցման առկայության, ինչպես նաև նախազգուշացնում որևէ վտանգի մասին:

Կարմիր ազդանշանը (այդ թվում նաև թարթող) – արգելում է երթևեկությունը:

Կարմիր և դեղին ազդանշանների զուգակցումը – արգելում է երթևեկությունը և տեղեկացնում կանաչ ազդանշանի առաջիկա միանալու մասին:

Եթե լուսացույցը կահավորված է լրացուցիչ սեկցիայով, տրանսպորտը կարող է երթևեկել սեկցիայում սլաքով ցույց տված ուղղությամբ միայն այն ժամանակ,երբ դա միացված է:

Լուսացույցի հիմնական կանաչ ազդանշանի սև ուրվագծային սլաքը (սլաքները) վարորդներին տեղեկացնում է լուսացույցի լրացուցիչ սեկցիայի առկայության մասին և ցույց է տալիս թույլատրված երթևեկության այլ ուղղություններ, որոնք նախատեսված չեն լրացուցիչ սեկցիայի ազդանշանով:

Դարձափոխային երթևեկության ճանապարհներին կիրառվում են դարձափոխային լուսացույցներ:

Կանաչ – թույլատրվում է երթևեկել այն գոտով, որի վերևում էլ տեղադրված է:

Կարմիր – արգելում է տվյալ գոտով երթևեկություն:

Դեղին – եթե նա առկա է – տեղեկացնում է ազդանշանի առաջիկա փոփոխման և նշված գոտի վերադասավորվելու անհրաժեշտության մասին:

Անջատված դարձափոխային լուսացույցը արգելում է տվյալ գոտի դուրս գալ:

Կարգավորողի ազդանշաններն ունեն հետևյալ նշանակությունը՝

Ձեռքերը պարզված են կողմ կամ իջեցված են՝



- Ձախ և աջ կողերից երթևեկությունը տրամվային թույլատրված է ուղիղ;
- Ոչ ռելսագնաց տրանսպորտային միջոցներին՝ – ուղիղ և աջ;
- Հետիոտներին թույլատրված է հատել երթևեկելի մասը;
- Կարգավորողի թիկունքից և կրծքի կողմից բոլոր տրանսպորտային միջոցների և հետիոտների երթևեկությունն արգելված է;

Աջ ձեռքը պարզված է առաջ՝

- Ձախ կողմից տրամվայի երթևեկություն թույլատրված է դեպի ձախ, ոչ ռելսագնաց տրանսպորտային միջոցներին՝ բոլոր ուղղություններով;
- Կրծքի կողմից բոլոր տրանսպորտային միջոցներին թույլատրված է երթևեկել միայն դեպի աջ;
- Թիկունքից և աջ կողմից բոլոր տրանսպորտային միջոցների երթևեկությունն արգելված է;
- Հետիոտներին թույլատրված է երթևեկելի մասն անցնել կարգավորողի թիկունքի կողմով:

Ձեռքը բարձրացված է վեր՝

Դեղին ազդանշանի միանալու կամ կարգավորողի ձեռքը բարձրացնելու դեպքում այն վարորդները, որոնք հնարավորություն չունեն առանց կտրուկ արգելակելու կանգնել կանոններով նշված տեղերում, կարող են շարունակել երթևեկությունը: Այդ ազդանշանի դեպքում երթևեկելի մասի վրա գտնվող հետիոտները պետք է ազատեն այն, իսկ եթե դա հնարավոր չէ, կանգ առնեն հանդիպակաց ուղղությունների տրանսպորտային հոսքերը բաժանող գծի վրա:

Կարգավորողը կարող է ձեռքով տալ վարորդների ու հետիոտների համար հասկանալի նաև այլ ազդանշաններ և դրա համար օգտագործել ցուցածող կամ, այդ այդ թվում կարմիր ազդանշանով կամ լուսանդրադարձիչով սկավառակ:

Կարգավորողը տրանսպորտային միջոցը կանգնեցնելու մասին պահանջը հաղորդում է բարձրաձայն խոսող սարքավորումով կամ տրանսպորտային միջոցի կողմ ուղղված ժեստով: Այս դեպքում վարորդը կանգնում է նշված տեղում:

Երթևեկության մասնակիցների ուշադրությունն իր վրա հրավիրելու համար՝ ազդնշան տալ նաև սուլիչով:

Լուսացույցի (դարձափոխային) կամ կարգավորողի արգելող ազդանշանի դեպքում վարորդը պետք է կանգ առնի «Կանգ-գիծ» գծանշման (5.33 նշանի մոտ),իսկ դրա բացակայության դեպքում՝

- Խաչմերուկում հատվող երթևեկելի մասի առջև՝ հաշվի առնելով կանոնները (32-րդ հոդվածի 4-րդ կետի „դ" ենթակետին համապատասխան) չստեղծել խոչընդոտ հետիոտների համար;
- Երկաթուղային գծանցից առաջ այս կանոնի 34-րդ հոոդվածի 4-րդ կետի պահանջներին համապատասխան;
- Այլ վայրում լուսացույցի կամ կարգավորողի առջև խոչընդոտ չստեղծելով՝ թույլատրելի ուղղություններով երթևեկող տրանսպորտային միջոցների և հետիոտների համար:

Դեղին ազդանշանը միանալու կամ կարգվորողը ձեռքը բարձրացնելու դեպքում , այն վարորդները, որոնք հնարավորություն չունեն առանց կտրուկ արգելակելու կանգնել կանոններով նշված տեղերում, կարող են շարունակել երթևեկությունը: Այդ ազդանշանի դեպքում երթևեկելի մասի վրա գտնվող հետիոտները պետք է ազատեն այն, իսկ եթե դա հնարավոր չէ, կանգ առնեն հանդիպակաց ուղղությունների տրանսպորտային հոսքերը բաժանող գծի վրա:

Վարորդներն ու հետիոտները պետք է կատարեն կարգավորողի կարգադրությունների և ազդանշանների պահանջները, ինչպես այն դեպքերում, եթե դրանք հակասում են լուսացույցի ազդանշաններին ու ճանապարհային նշանների կամ գծանշումների պահանջներին:

Երկաթուղային գծանցներում լուսացույցի կարմիր թարթող ազդանշանի հետ միաժամանակ կարող է տրվել նաև ձայնային ազդանշան, որը երթևեկության մասնակիցներին լրացուցիչ տեղեկացնում է գծանցով երթևեկությունն արգելելու մասին:

Հոդված 26. Վթարային լուսային ազդանշան

Վթարային լուսային ազդանշանը պետք է միացված լինի՝

- Ճանապարհատրանսպորտային պատահարի դեպքում;
- Կանգառն արգելված տեղերում՝ հարկադրված կանգառի դեպքում;
- Լապտերների լույսից վարորդի շլացման դեպքում;
- Քարշակման դեպքում (քարշարկվող տրանսպորտային միջոցի վրա);
- Վարորդը վթարային լուսային ազդանշանը պետք է միացնի նաև այլ դեպքերում, երբ վտանգի մասին անհրաժեշտ է նախազգուշացնել երթևեկության մասնակիցներին:

Թեմա № 14

Երթևեկության սկիզբը և մանևրումը: Տրանսպորտային միջոցների դասավորությունը երթևեկելի մասում: Երթևեկության արագություն:

Այս թեմայում տրված հոդվածներում ձևակերպված են ճանապարհային երթևեկության անվտանգության այն հիմնական պահանջները, որոնց խախտումները ճանապարհատրանսպորտային պատահարների հիմնական պատճառներն են հանդիսանում, դրանք են՝ երթևեկության սկիզբը, մանևրումը, երթևեկության արագությունը և այլն:

Հոդված 27. Երթևեկության սկիզբը և մանևրումը

Երթևեկությունն սկսելուց կամ մանևրում կատարելուց, գոտուց գոտի տեղափոխվելուց, շրջադարձ (հետադարձ) կամ կանգնելուց առաջ վարորդը պետք է տա ազդանշան համապատասխան ուղղության շրջադարձի լուսային ցուցիչով, իսկ եթե այն բացակայում է կամ անսարք է՝ ձեռքով: Մանևրը պետք է լինի անվտանգ և խոչընդոտ չստեղծի երթևեկության այլ մասնակիցներին: Ազդանշան տալը պարտադիր չէ, եթե տրանսպորտային միջոցն առանց վերադասավորում կատարելու շարժվում է ճանապարհի հատակագծում կորագծային հատվածով: Ձախ շրջադարձի (հետադարձի) ազդանշանին համապատասխանում է դեպի կողմ ուղղված ձախ ձեռքը կամ արմունկում ուղիղ անկյան տակ դեպի վեր ծալված աջ ձեռքը: Աջ շրջադարձի ազդանշանին համապատասխանում է դեպի կողմ ուղղված աջ ձեռքը կամ արմունկում ուղիղ անկյան տակ դեպի վեր ծալված ձախ ձեռքը: Արգելակման ազդանշնանին համապատասխանում է դեպի վեր պարզված աջ կամ ձախ ձեռքը:

Ազդանշանը պետք է տրվի նախօրոք մինչև երթևեկությունը կամ մանևրն սկսելը և դադարեցվի երթևեկությունը կամ մանևրն ավարտելուց անմիջապես հետո (ձեռքով տրվող ազդանշանը դադարեցվում է երթևեկությունը կամ մանևրն սկսելուց անմիջապես առաջ):Այն պետք է տրվի հստակ, շփոթության մեջ չգցի երթևեկության մասնակիցներին, իսկ մանևրը խոչընդոտ չստեղծի նրանց համար: Ազդանշան տալը երթևեկության մյուս մասնակիցների նկատմամբ առավելություն չի տալիս:

Մերձակա տարածքից ճանապարհ մուտք գործելիս վարորդը պետք է զիջի ճանապարհը դրանով երթևեկող տրանսպորտային միջոցներին և հետիոտներին, իսկ ճանապարհից մերձակա տարածք մուտք գործելիս՝ հետիոտներին և հեծնվորդներին, որոնց երթևեկության ուղին հատում է:

Վերադասավորման ժամանակ վարորդը պետք է ճանապարհը զիջի համընթաց, հարևան երթևեկության գոտիներով առանց ուղղությունը փոխելու շարժվող տրանսպորտային միջոցներին: Համընթաց ուղղությամբ շարժվող տրանսպորտային միջոցների միաժամանակյա վերադասավորման դեպքում ճանապարհը պետք է զիջի ձախից ընթացող տրանսպորտային միջոցի վարորդը:

Շրջադարձից կամ հետադարձից առաջ վարորդը պետք է նախապես զբաղեցնի երթևեկության տվյալ ուղղության համար նախատեսված երթևեկելի մասի համապատասխան եզրային գոտին՝ բացառությամբ այն դեպքերի, երբ մուտք է գործում շրջանաձև երթևեկությամբ խաչմերուկ:

Երթևեկելի մասին համընթաց ուղղության ձախ կողմում, նույն հարթության վրա համընթաց ուղղությամբ տրամվայի գծերի առկայության դեպքում ձախ շրջադարձը և հետադարձը պետք է կատարվեն այդ գծերի վրայից, եթե 5.8.1, 5.8.2 նշաններով երթևեկության այլ կարգավորում նախատեսված չէ: Այդ դեպքում չպետք է խոչընդոտ ստեղծվի տրամվային:

Շրջադարձը պետք է իրականացվի այնպես, որպեսզի երթևեկելի մասերի փոխհատումից դուրս գալիս տրանսպորտային միջոցը չհայտնվի երթևեկության հանդիպակաց կողմում: Աս շրջադարձի ժամանակ տրանսպորտային միջոցը պետք է շարժվի երթևեկելի մասի աջ եզրին հնարավորին չափ մոտ:

Եթե վարորդը տրանսպորտային միջոցի եզրաչափերի կամ այլ պատճառներով հնարավորություն չունի առանց այս կանոնի 5-րդ կետի պահանջները խախտելու կատարել շրջադարձ կամ հետադարձ, ապա թույլատրվում է չպահպանել դրանք՝ խոչընդոտ չհանդիսանալով մյուս տրանսպորտային միջոցների համար և ապահովելով երթևեկության անվտանգությունը:

Խաչմերուկից դուրս ձախ շրաջադարձի և հետադարձի ժամանակ ոչ ռելսազնաց տրանսպորտային միջոցի վարորդը պետք է ճանապարհը զիջի հանդիպակաց տրանսպորտային միջոցներին և համընթաց երթևեկող տրամվային, իսկ եթե երթևեկելի մասի ոչ բավարար լայնության պատճառով շրջադարձը կամ հետադաձը կատարում է ոչ եզրային գոտուց, ապա նաև համընթաց տրանսպորտային միջոցներին: Դրա հետ միասին վարողը պետք է զիջի ճանապարհը համընթաց և հանդիպակաց ուղղություններով երթևեկող տրասնպորտային միջոցներին:

Այն դեպքում, երբ տրանսպորտային միջոցների երթևեկության ուղիները հատվում են, իսկ անցման հերթականությունը կանոններով սահմանված չէ, ճանապարհը պետք է զիջի այն վարորդը, որին տրանսպորտային միջոցը մոտենում է աջից:

Արգելակման գոտի մուտք գործելու մտադրություն ունեցող վարորդը պետք է նախապես վերադասավորվի այդ գոտի, որտեղ միայն իջեցնի արագությունը:

Ճանապարհ մուտք գործելու վայրում, թափառքի գոտու առկայության դեպքում վարորդը պետք է շարունակի երթևեկել դրանով և վերադասավորվի հարևան գոտի՝ զիջելով ճանապարհով ընթացող տրանսպորտային միջոցներին:

Հետադարձն արգելվում է՝

ա) հետիոտնային անցումների վրա;
բ) թունելներում;
գ) կամուրջների, ուղեկամուրջների, էստակադների վրա և դրանց տակ;
դ) երկաթուղային գծանցներում;
ե) ճանապարհին թեկուզ և մեկ ուղղությամբ 100մետրից պակաս տեսանելիության տեղերում;
զ) տրանսպորտային միջոցների կանգառի կետերում:

Տրանսպորտային միջոցների հետընթացը թույլատրվում է, եթե դրա կատարումն անվտանգ է և խոչընդոտ չի ստեղծում երթևեկության մյուս մասնակիցների համար: Հետընթացն արգելվում է խաչմերուկներում և արգելակման գոտում:

Հոդված 28. Տրանսպորտային միջոցների դասավորությունը երթևեկելի մասում

- Ոչ ռելսագնաց տրանսպորտային միջոցների համար երթևեկության գոտիների քանակը որոշվում է գծանշմամբ կամ 5.1, 5.8.7, 5.8.8.նշաններով, իսկ եթե դրանք բացակայում են, ապա վարորդների կողմից հաշվի առնելով երթևեկելի մասի լայնությունը, տրանսպոտրային միջոցների եզրաչափերը և դրանց միջև անհրաժեշտ միջկողային տարածությունը: Հանդիպակաց երթևեկության կողմ է համարվում երթևեկելի մասի լայնության ձախ կեսը՝ չհաշված երթևեկելի մասի լայնացումները:
- Չորս և ավելի գոտի ունեցող, երկկողմանի երթևեկությամբ ճանապարհներին, արգելվում է դուրս գալ ճնապարհի հանդիպակաց երթևեկության համար նախատեսված կողմը:
- Երկկողմ երթևեկությամբ երեք գոտի ունեցող գծանշված (բացառությամբ 1.9 գծանշման) ճանապարներին, որոնցից միջինն օգտագործվում է երկու ուղղություններով երթևեկության համար, թույլատրվում է դուրս գալ այդ գոտի միայն վազանցի , շրջանցման, ձախ շրջադարձի կամ հետադարձի համար: Արգելվում է մուտք գործել ձախ եզրային գոտի, որը նախատեսված է միայն հանդիպակաց երթևեկության համար:
- Վարորդը երթևեկում է երթևեկելի մասի աջ կողին հնարավորին չափ մոտիկ: Արգելվում է աջ գոտու զբաղեցում, երբ աջ գոտին ազատ է:
- Տրանսպորտային միջոցները , որոնց երթևեկության արագությունը չպետք է գերազանցի 40 կմ/ժ, կամ որոնք տեխնիկական պատճառներով չեն կարող զարգացնել այդպիսի արագություն, պետք է շարժվեն եզրային գոտիով, բացառությամբ շրջանցման, վազանցի կամ ձախ շրջադարձից կամ թույլատրված դեպքերում ձախ կողմում կանգառ կատարելուց առաջ վերադասավորվելու դեպքերի:
- Երթևեկության տվյալ ուղղության ձախ կողմում գտնվող համընթաց ուղղության տրամվայի գծերով երթևեկել թույլատրվում է, եթե բոլոր գոտիներն այդ ուղղությամբ զբաղված են, ինչպես նաև վազանցի, արգելքը շրջանցելու, ձախ շրջադարձի կամ հետադարձի ժամանակ՝ հաշվի առնելով կանոնի 27-րդ հոդվածի 5-րդ կետը: Ընդ որում խոչընդոտ չպետք է ստեղծվի տրամվային: Արգելվում է դուրս գալ հանդիպակաց ուղղության տրամվայի գծերով:
- Եթե եթևեկելի մասը գծանշումով բաժանված է գտիների, ապա տրանսպորտային միջոցների երթևեկությունը պետք է խստորեն իրականացվի նշված գոտիներով: Ընդհատվող գծերը կարելի է հատել միայն վերադասավորվելիս:
- Այն ճանապարհով, որով առկա է դարձափոխային երթևեկություն, վարորդը այնպես պետք է վարի տրանսպորտային միջոցը, որ երթևեկելի մասերի հատումից դուրս գալով նա եզրային աջ գիծը զբաղեցնի: Վերադասավորումը թույլատրելի է միայն այն դեպքում, երբ վարորդը կհամոզվի, որ տվյալ ուղղությամբ թույլատրելի է երթևեկությունը նաև այլ գոտիներով:
- Արգելվում է տրանսպորտային միջոցների երթևեկությունը կողնակներով, մայթերով և հետիոտնային արահետներով, (բացառությամբ այս օրենքի 31-հոդվածի առաջին և 43-րդ հոդվածի 2-րդ կետերով սահմանված դեպքերի): Թույլատրվում է

հնարավորության բացակայության դեպքում ճանապարհային և կոմունալ սպասարկման ծառայությունների մեքենաներին երթևեկել, իսկ անմիջապես ճանապարհի կողնակների, մայթերի կամ հետիոտնային արահետների մոտ տեղակայված առևտրային և այլ օբյեկտներ սպասարկող տրանսպորտային միջոցներին ամենակարճ ճանապարհով մոտենալ դրանց՝ ապահովելով երթևեկության անվտանգությունը:

- Վարորդը պետք է իր առջևից ընթացող տրանսպորտային միջոցի միջև պահպանի այնպիսի տարածություն, իսկ կողքով ընթացողներից՝ այնպիսի միջկողային տարածություն, որպեսզի հնարավորություն ունենա խուսափել դրանց հետ բախվելուց:
- Բնակավայրերից դուրս ճանապարհով երթևեկելիս տրանսպորտային միջոցի վարորդը, որի արագությունը չպետք է գերազանցի 40 կմ/ժ, պարտավոր է պահպանել իր առջևից ընթացող տրանսպորտային միջոցի հետ այնպիսի միջտարածություն, որ իրենցից առաջ երթևեկող մյուս տրանսպորտային միջոցները առանց խոչընդոտների կարողանան վերադասավորվել սկզբում զբաղեցրած գոտի: Այս պահանջը չի գործում, եթե վարորդը պատրաստվում է վազանցի, ինչպես նաև ինտենսիվ երթևեկության և կազմակերպված տրասնպորտային շարասյան երթևեկության ժամանակ:

Հոդված 29. Երթևեկության արագությունը

Վարորդը տրանսպորտային միջոցը պետք է վարի սահմանված արագությունը չգերազանցող արագությամբ՝ հաշվի առնելով երթևեկության ինտենսիվությունն ու տրանսպորտային միջոցի և բեռի վիճակն ու առանձնահատկությունները, ճանապարհային օդերևութաբանական պայմանները, մասնավորապես, ճանապարհային ծածկույթի վիճակն ու տեսանելիությունը երթևեկության ուղղությամբ: Վարորդը պետքէ ընտրի այնպիսի արագություն, որը հնարավորություն է տալիս նրան կանոնների պահանջներին համապատասխան ապահովելու տրանսպորտային միջոցի լիարժեք կառավարումը: Երթևեկության համար խոչընդոտ կամ վտանգ առաջանալու դեպքում, որը վարորդն ի վիճակի էր հայտնաբերել, նա պետք է միջոցներ ձեռնարկի արագությունն իջեցնելու՝ ընդհուպ մինչև տրանսպորտային միջոցը կանգնեցնելը:

- Բնակավայրերում տրանսպորտային միջոցների երթևեկությունը թույլատրվում է 60 կմ/ժ ոչ ավելի արագությամբ:
- Աբխազիայի և Աճարիայի ինքնավար հանրապետություններում, քաղաքներում՝ Թբիլիսիում և Քութայիսիում երթևեկության արագությունը (3.24 համապատասխան նշաններ տեղադրելով) կարող է մեծանալ ճանապարհի առանձին հատվածներում, ճանապարհային պայմանները նպաստում են արագության մեծացման հնարավորությանը:
- Բնակավայրերից դուրս երթևեկությունը թույլատրվում է՝
  - 90կմ ժ ոչ ավելի արագությամբ, թեթև մարդատար ավտոմոբիլներին և 3,5 տ ոչ ավելի թույլատրելի առավելագույն զանգված ունեցող բեռնատար ավտոմոբիլներին (110 կմ ժ ոչ ավելի արագությամբ ավտոմայրուղիներով);
  - 80 կմ/ժ ոչ ավելի արագությամբ միջքաղաքային ավտոբուսներին, միկրոավտոբուսներին ու մոտոցիկլետներին՝ բոլոր ճանապարհներին (15.06.2005. 1621)

- 70 կմ/ժ ոչ ավելի արագությամբ՝ մնացած բոլոր ավտոբուսներին, կցորդ քարշակող թեթև մարդատար ավտոմոբիլներին, միկրոավտոբուսներին և 3,5 տ ոչ ավելի թույլատրելի առավելագույն զանգված ունեցող բեռնատար ավտոմոբիլներին 80կմ/ժ ոչ ավելի արագությամբ ավտոմայրուղիներով (15.06.2005. 1621):
- 60 կմ/ժ ոչ ավելի արագությամբ կահավորված թափքում մարդ տեղափոխող բեռնատար ավտոմոբիլներին ;
- Մեծ եզրաչափերով, վտանգավոր կամ ծանրաքաշ բեռ փոխադրելիս՝ գերազանցել փոխադրման պայմանների համաձայնեցման ժամանակ որոշված արագությունը:

Վարողին արգելվում է՝

- Գերազանցել տվյալ տրանսպորտային միջոցի տեխնիկական բնութագրով սահմանած առավելագույն արագությունը;
- Գերազանցել տրանսպորտային միջոցի վրա տեղադրված «Արագության սահմանափակում» ճանաչման նշանով նախատեսված արագությունը;
- Առանց անհրաժեշտության ընթանալ շատ ցածր արագությամբ՝ խոչընդոտելով մյուս տրանսպորտային միջոցների երթևեկությունը;
- Կտրուկ արգելակել, եթե դա անհրաժեշտ չէ ճանապարհատրանսպորտային պատահար կանխելու համար:

Թեմա № 15

Վազանց, Հանդիպակացի կողանցում: Տրանսպորտային միջոցների կանգառը և կայանումը

Վազանցը շարժման մեջ գտնվող մեկ կամ մի քանի տրասնսպորտային միջոցից առաջ անցնելն է՝ կապված հանդիպակաց երթևեկության գոտի դուրս գալու , այնուհետև՝ նախկինում զբաղեցրած գոտի վերադառնալու հետ: Այդ իսկ պատճառով վարորդը պարտավոր է պահպանել օրենքի պահանջները:

Հոդված 30. Վազանց, հանդիպակացի կողանցում

Վազանց սկսելուց առաջ վարորդը պետք է համոզվի, որ՝

- Հանդիպակաց երթևեկության գոտին, որը նա պատրաստվում է զբաղեցնել, բավարար տարածությամբ ազատ է վազանցի համար և որ դրանով խոչընդոտ չի ստեղծի հանդիպակաց ընթացող տրանսպորտային միջոցների համար;
- Իր հետևից նույն գոտիով ընթացող տրանսպորտային միջոցը վազանց չի սկսել, իսկ առջևից ընթացողը վազանցի (ձախ շրջադարձի, հետադարձի) ազդանշան չի տվել;
- Վազանցն ավարտելիս կարող է առանց վազանցվող տրանսպորտաին միջոցի համար խոչընդոտ ստեղծելու վերադառնալ նախկինում զբաղեցրած գոտի:

Ոչ ռելսագնաց տրանսպորտային միջոցների վազանցը թույլատրելի է միայն ձախ կողմից, իսկ այն տրանսպորտային միջոցի վազանցը, որի վարորդը տվել է դեպի ձախ շրջադարձ կատարելու ազդանշան և անցել է այս մանևրի իրականացմանը, կատարվում է աջ կողմից:

Վազանցվող տրանսպորտային միջոցի վարորդին արգելվում է արագությունը բարձարացնելով կամ որևէ այլ գործողությամբ խոչընդոտել վազանց կատարելուն:

Վազանցն ավարտելիս (բացառությամբ թույլատրված աջից վազանց կատարելուց) վարորդը պարտավոր է վերադառնալ նախկինում զբաղեցրած գոտի: Տրված ուղղությամբ երկու կամ ավելի գոտիների առկայության դեպքում վազանցող վարորդը կարող է մնալ այս օրենքի 27-րդ հոդվածի 4-րդ կետով սահմանված ձախ գոտում, եթե նախկինում զբաղեցրած գոտի վերադառնալուն պես նա պետք է սկսի նոր վազանց կատարել, և եթե դա խոչընդոտ չի հանդիսանա նրա հետևում ավելի մեծ արագությամբ երթևեկող տրանսպորտային միջոցի համար:

Վազանցն արգելվում է՝

- Կարգավորվող խաչմերուկներում հանդիպակաց երթևեկության գոտի դուրս գալով և չկարգավորվող խաչմերուկներում ոչ գլխավոր ճանապարհներով երթևեկելիս (բացի շրջանաձև երթևեկությամբ խաչմերուկների, ինչպես նաև առանց կցորդի երկանիվ տրանսպորտային միջոցների կամ թույլատրելի աջ շրջադարձ կատարելու դեպքերի);
- հետիոտնային անցումներում, եթե այնտեղ երթևեկում է հետիոտնը;
- երկաթուղային գծանցների վրա և մինչև 100մ դրանցից առաջ;
- վաանց կամ արգելքի շրջանցում կատարող տրանսպորտային միջոցներին;
- ճանապարհի նեղացումներում, վերելքի վերջում և ճանապարհների սահմանափակ տեսանելիության այլ հատվածներում:

Եթե բնակավայրերից դուրս դանդաղընթաց կամ մեծ եզրաչափեր ունեցող տրանսպորտային միջոցին վազանց կատարելը դժվար է, ապա դրա վարորդը պետք է երթևեկի հնարավորինս աջով, իսկ անհրաժեշտության դեպքում կանգ առնի՝ իր հետևից ընթացող տրանսպորտային միջոցների վարորդներին իրեն վազանցելու կամ կողանցելու հնարվորություն տալու համար:

.

Եթե հանդիպակացին կողանցելը դժվար է, ապա ճանապարհը պետք է զիջի այն վարորդը, որի կողքին առկա է խոչընդոտը: 1.13 և 1.14 նշաններով նշված վերելքում խոչընդոտի առկայության դեպքում ճանապարհը զիջում է երթևեկող տրանսպորտային միջոցի վարորդը:

Հոդված 31. Տրանսպորտային միջոցի կանգառն ու կայանումը

Տրանսպորտային միջոցների կանգառը և կայանումը թույլատրվում են ճանապարհի աջ մասում՝ մայթի մոտ, կամ կողնակին, դրանց բացակայության դեպքում՝ երթևեկելի մասի եզրին: Բնակավայրերում երթևեկելի մասի ձախ կողմում կանգառ ու կայանում թույլատրվում է՝ յուրաքնչյուր ուղղությամբ մեկ երթևեկելի գոտի ունեցող, մեջտեղում տրամվայի գծեր չունեցող ճանապարհներին: Միակողմ երթևեկության ճանապարհներին 3,5 տ ավելի թույլատրելի առավելագույն զանգված ուղեցող բեռնատար ավտոմոբիլներին թույլատրվում է միայն կանգառ բեռնելու և բեռաթափելու համար:

Տրանսպորտային միջոցը տեղակայել թույլատրվում է երթևեկելի մասի եզրին զուգահեռ մեկ շարքով, բացառությամբ այն տեղերի, որոնց եզրաձևերը (երթևեկելի մասի տեղային լայնացում) թույլ են տալիս տրանսպորտային միջոցների դասավորման այլ ձևեր: Առանց կողային կցորդով երկանիվ տրանպորտային միջոցները թույլատրվում է կանգնեցնել երկու շարքով: Երթևեկելի մասին սահմանակից մայթեզրին կայանման նպատակով կանգնեցնել թույլաետվում է միայն

մարդատար ավտոմոբիլները, մոտոցիկլետները, մոպեդները և հեծանիվները, եթե դրանք խոչընդոտ չեն ստեղծի հետիոտնին:

Մայթի վրա կանգառի կամ կայանման կանոնները սահմանում են տեղական ինքնակառավարման ներկայացուցչական մարմինը (30.12.2008 957):

Բնակավայրերից դուրս երկարատև հանգստի, գիշերակացի և այլ նպատակներով կայանել թույլատրվում է միայն դրա համար նախատեսված հրապարակներում կամ ճանապարարհի սահմաններից դուրս:

Կանգառն արգելվում է՝

- Տրամվայի գծերի վրա, ինչես նաև անմիջապես դրանց մոտ, եթե դա կխոչընդոտի տրամվայների երթևեկությանը;
- Եկաթուղային գծանցների վրա, թունելներում, ինչպես նաև էստակադների, կամուրջների, ուղեանցների վրա և դրանց տակ;
- Այն վայրերում, որտեղ կանգնած տրանսպորտային միջոցի և հանդիպակաց ուղղությունների տրանսպորտային հոսքերը բաժանող հոծ գծի կամ բաժանարար գոտու կամ երթևեկելի մասի հակառակ կողմի եզրի միջև տարածությունը 3մետրից պակաս է;
- Հետիոտնային անցումների վրա և մինչև 5 մետր դրանցից առաջ,
- Ճանապարհների երթևեկելի մասի վրա, ինչպես վտանգավոր շրջադարձերի, այնպես էլ երկայնական պրոֆիլի ուռուցիկ բեկվածքներին մոտիկ, թեկուզ մեկ ուղղությամբ 100մետր պակաս տեսանելիության դեպքում;
- Խաչմերուկներում եթևեկելի մասերի հատման վրա և հատվող երթևեկելի մասի եզրից 5 մետր պակաս վայրում, բացառությամբ երթևեկելի մասերի եռակողմ հատման հոծ գծով կամ բաժանարար գոտիով առանձնացված կողմի վրա(շարունակություն չունեցող կողմի դիմաց);
- Ընդհանուր գտագործման տրանսպորտային միջոցների կանգառի կետերից կամ դրանց բացակայության դեպքում , ենդհանուր ոգտագործման տրանսպորտային միջոցների կանգառի կամ տաքսիների կայանման տեղերի ցուցիչներից 15 մետր մոտ, եթե դա խոչընդոտում է կանգառի կետերին մոտեցող կամ դրանից հեռացող ընդհանուր օգտագործման տրանսպորտային միջոցների և տաքսիների երթևեկությունը;
- Այն վայրերում, որտեղ տրանսպորտային միջոցը երթևեկության մասնակիցներից կծածկի լուսացույցի ազդանշանները, ճանապարհային նշանները կամ կխոչընդոտի մյուս տրանսպորտային միջոցների և հետիոտների երթևեկությանը:

Կայանումն արգելվում է՝

- Կանգառն արգելված վայրերում;
- Բնակավայրերից դուրս 2.1 նշանով նշված ճանապարհի երթևեկելի մասի վրա երկաթուղային գծանցներին 50 մոտ:

Կանգառն արգելված վայրերում հարկադրված կանգառ կատարելու դեպքում վարորդը պարտավոր է ձեռնարկել բոլոր անհրաժեշտ միջոցները՝ տրանսպորտային միջոցն այդ վայրից դուրս բերելու համար:

Արգելվում է տրանսպորտային միջոցի դուռը բացելը, եթե դա խոչընդոտ կստեղծի ճանապարհային երթևեկության մյուս մասնակիցների համար:

Վարորդը կարող է իջնել տրանսպորտային միջոցից այն դեպքում , երբ նախօրոք ձեռնարկի տրանսորտային միջոցի ինքնավար երթևեկությունն ու մեկ այլ անձի կողմից նրա օգտագործումը:

Թեմա № 16

Խաչմերուկների անցումը: Հետիոտնային անցումը: ընդհանուր օգտագործման տրասնպորտային միջոցների առավելությունը և դրանց կանգառի կետերը: Երթևեկություն երկաթգծային անցումներով: Երթևեկությունը ավտոմայրուղիներով: երթևեկությունը բնակելի գոտիներում:

Տրանսպորտային երթևեկության ամենադժվար հատվածն է՝ նույն մակարդակի հատման կետերը՝խաչմերուկները: Նրանց վրա երթևեկությունը կարող է կարգավորվել լուսացույցի ազդանշաններով կամ կարգվորողի միջոցով: Անջատված լուսացույցների, նրանց բացակայության դեպքում խաչմերուկը չկարգավորվող է, հետևաբար նրանց անցումն ավելի դվժար է:

Հոդված 32. Խաչմերուկների անցումը

Աջ կամ ձախ շրջադարձ կատարելիս խաչմերուկից դուրս գալիս վարորդը պետք է ճանապարհը զիջի երթևեկելի մասը հատող հետիոտներին և հեծանվային արահետով շարժվող հեծանվորդներին:

Արգելվում է մուտք գործել խաչմերուկ,եթե այնտեղ առաջացել է խցանում, որը վարորդին կհարկադրի այնտեղ կանգ առնել՝ խոչընդոտելով այլ տրանսպորտային միջոցների երթևեկությանը:

Այն խաչմերուկը, որտեղ երթևեկության հերթականությունը որոշվում է կարգավորողի կամ լուսացույցի ազդանշաններով, համարվում է կարգավորվող: Այն խաչմերուկը, որտեղ բացակայում է լուսացույցը, կամ կարգավորողը, չի աշխատում լուսացույցը, կամ միացված է դեղին թարթող ազդանշանը, համարվում է չկարգավորվող, վարորդը պարտավոր է ղեկավարվել չկարգավորվող խաչմերուկների անցման կանոններով և խաչմերուկներում տեղադրված առավելության նշաններով:

Կարգավորվող խաչմերուկ՝

- Լուսացույցի կանաչ ազդանշանի դեպքում ձախ շրջադարձ կամ հետադարձ կատարելիս ոչ ռելսագնաց տրանսպորտային միջոցի վարորդը պետք է ճանապարհը զիջի հանդիպակաց ուղղությունից ուղիղ և դեպի աջ ընթացող տրանսպորտային միջոցներին: Նույն կանոնով պետք է ղեկավարվեն նաև տրամվայի վարորդները միմյանց միջև;

- Լուսացույցի դեղին կամ կարմիր ազդանշանի հետ միաժամանակ միացված սեկցիայի սլաքի ուղղությամբ երթևեկող վարորդը պետք է ճանապարհը զիջի այլ ուղղություններից ընթացող տրանսպորտային միջոցներին;
- Եթե կարգավորողի կամ լուսացույցի ազդանշանները թույլատրում են տրամվայի և ոչ ռելսագնաց տրանսպորտային միջոցների միաժամանակյա երթևեկություն, ապա, անկախ երթևեկության ուղղությունից, առավելություն ունի տրամվայը: Սակայն լուսացույցի դեղին կամ կարմիր ազդանշանի հետ միաժամանակ միացված լրացուցիչ սեկցիայի սլաքի ուղղությամբ երթևեկելու դեպքում տրամվայի վարորդը պետք է ճանապարհը զիջի այլ ուղղություններից մոտեցող տրանսպորտային միջոցներին;
- Լուսացույցի թույլատրող ազդանշանի դեպքում խաչմերուկ մուտք գործած վարորդը պետք է այն ազատի նախընտրած ուղղությամբ անկախ ելքի լուսացույցի ազդանշանից, սակայն եթե խաչմերոկներում տրանսպորտային միջոցի ընթացքի ուղղությամբ տեղադրված լուսցույցներից առաջ առկա է«Կանգ-գիծ» (5.33 նշանները),նա պետք է ղեկավարվի յուրաքանչյուր լուսացույցի ազդանշաններով;
- Վարորդը պետք է ճանապարհը զիջի խաչմերուկի անցումը և երթևեկելի մասի հատումը դեռևս չավարտած հետիոտներին և տրանսպորտային միջոցներին, եթե անգամ արդեն միացել է լուսացույցի թույլատրող ազդանշանը:

Չկարգավորող խաչմերուկ՝

- Երկրորդական ճանապարհով անհավասարազոր ճանապարհների խաչմերուկին մոտեցող տրանսպրտային միջոցի վարորդը պետք է ճնապարհը զիջի գլխավոր ճնապարհով ընթացող տրանսպորտային միջոցնեին անկախ դրանց ետագա երթևեկության ուղղությունից;
- Եթե գլխավոր ճանապարհը խաչմերուկում փոխում է ուղղությոնը, աթա դրանով ընթացող վրորդներն իրենց գործողություններում միմյնց նկատմամբ ղեկավարվում են հավասարազոր ճանապարհների խաչմերուկի անցման կանոններով: Նույն կանոններով միմյանց նկատմամբ պետք է ղէկավարվէն ըկրորդական ճանապարհներով երթևեկող տրանսպորտային միջոցների վարորդները;
- Հավասարազոր ճանապարհների խաչմերուկում ոչ ռելսագնաց տրանսպորտային միջոցի վարորդը պետք է ճանապարհը զիջի աջ կողմից մոտեցող տրանսպորտային միջոցների վարորդներին: Նույն կանոնով միմյանց նկատմամբ պետք է ղեկավարվեն նաև տրամվայների վարորդները: Այդպիսի խաչմերուկում տրամվայը, անկախ շարժման ուղղությունից, առավելություն ունի ոչ ռելսագնաց տրանսպորտային միջոցների նկատմամբ:

Ձախ շրջադարձի կամ հետադարձի ժամանակ ոչ ռելսագնաց տրանսպորտային միջոցի վարորդը չպետք է ճանապարհը զիջի հավասարազոր ճանապարհով հանդիպակաց ողղությունից ուղիղ կամ դեպի աջ ընթացող տրանսպորտային միջոցների վարորդներին: Նույն կանոնով միմյանց նկատմամբ պետք է ղեկավարվեն նաև տրամվայների վարորդները:

Երբ վարորդը չի կարող որոշել ճանապարհի ծածկույթի առկայությունը (օրվա մութ ժամանակ, ցեխ,ձյուն և այլն), և բացակայում են առավելության նշանները, ապա նա պետք է համարի, որ գտնվում է երկրորդական ճանապարհի վրա:

Հոդված 33. Հետիոտնային անցումը: Ընդհանուր օգտագործման տրասնպորտային միջոցների կանգառի կետերը:

Տրանսպորտային միջոցի վարորդը պետք է ճանապարհը զիջի չկարգավորվող հետիոտնային անցումներով երթևեկելի մասը հատող հետիոտներին:

- Եթե որևէ տրանսպորտային միջոց չկարգավորվող հետիոտնային անցումից առաջ դանդաղեցրել է ընթացքը կամ կանգնել, ապա հարևան շարքերով ընթացող մյուս տրանպորտային միջոցները կարող են շարունակել երթևեկությունը միայն համոզվելով, որ այդ տրանսպորտային միջոցի առջևում հետիոտներ չկան:

Կարգավորվող հետիոնային անցումներում, լուսացույցի թույլատրող ազդանշանը միանալուց հետո, վարորդը պետք է հնարավորություն տա հետիոտներին ավարտելու ընտրված ուղղությամբ երթևեկելի մասի հատումը:

- Հետիոտնային անցումից հետո խցանում առաջանալու դեպքում արգելվում է մոտք գործել անցում, եթե դա կհարկադրի վարորդին կանգնել հետիոտնային անցման վրա:
- Բոլորո դեպքերում, այդ թվում նաև հետիոտնային անցումներից դուրս, վարորդը պետք է ճանապարհը զիջի երթևեկելի մասը հատող կույր հետիոտներին: Կույր հետիոտներն իրենց գործողությունների մասին ազդանշան են տալիս սպիտակ ձեռնափայտով:
- Վարորդը պարտավոր է ճանապարհը զիջել կանգառում կանգնած դեպի երթուղային տրանսպորտային միջոց ընթացող կամ այս տրանսպորտի դռան կողմից եկող հետիոտնին, եթե նստելը կամ իջնելը տեղի է ունենում երթևեկելի մասի վրա կամ նրա վրա տեղավորված նստահրապարակից:
- Այն տրանսպորտային միջոցին մոտենալիս, որն ունի «երեխաների փոխադրում» ճանաչման նշանը, վարորդը նվազեցնում է արագությունը, իսկ անհրաժեշտության դեպքում կանգնում է և թողնում երեխաներին անցնել:

Հոդված 34. Երթևեկություն երկաթուղային գծանցներով

Տրանպորտային միջոցների վարորդները երկաթուղային գծերը կարող են հատել միայն երկաթուղային գծանցներով՝ ճանապարհը զիջելով գնացքին (լոկոմոտիվին, երկաթուղասայլակին):

Երկաթուղային գծանցին մոտենալիս վարորդը պետք է ղեկավարվի գծանցի հերթապահի ցուցումներով, լուսցույցների, նշանների, գծանշումների պահանջներով, ուղեփակոցի դիրքով և համոզվի, որ գծանցին գնացք (լոկոմոտիվ, երկաթուղասայլակ) չի մոտենում:

Արգելվում է մուտք գործել գծանց՝

- փակ կամ փակվող ուղեփակոցի դեպքում (լուսացույցի ազդանշանից անկախ);

- լուսացույցի արգելող ազդանշանի դեպքում (ուղեփակոցի առկայությունից կամ դիրքից անկախ) ;
- գծանցի հերթապահի արգելող ազդանշանի դեպքում գծանցի հերթապահի ազդանշան է հանդիսանում հերթապահի կրծքով կամ մեջքով դեպի վարորդին ուղղված դիրքը, ցուցաձողը, կարմիր լապտերը կամ դրոշակը գլխից վեր բարձրացրած կամ ձեռքերը կողմ պարզած;
- եթե գծանցից հետո առաջացել է խցանում , որը վարորդին կհարկադրի կանգնել գծանցի վրա;
- եթե տեսանելիության սահմաններում գծանցին մոտենում է գնացք (լոկոմոտիվ, երկաթուղասայլակ):

արգելվում է նաև՝

- հանդիպակաց երթևեկության գոտի դուրս գալով շրջանցել գծանցից առաջ կանգնած տրասնպորտը;
- ինքնակամ բացել ուղեփակոցը;
- գծանցով փոխադրել ոչ տրանսպորտային վիճակում գտնվող գյուղատնտեսական, ճանապարհային, շինարարական և այլ մեքենաներ ու մեխանիզմներ;
- առանց երկաթգծի ուղեմասի պետի թույլտվության գծանցով երթևեկել դանդաղընթաց մեքենաներով 8 կմ/ժ- ցածր արագությամբ և քարշակել տրակտորային քարշատափաններ:

Երբ գծանցով երթևեկությունն արգելված է, վարորդը պետք է կանգնի «կանգ» գծի, 2.5 նշանի կամ լուսացույցի մոտ, եթե դրանք բացակայում են, ուղեփակոցից ոչ պակաս, քան ***5 մետր, իսկ եթե*** բացակայում է նաև ուղեփակոցը, ապա մոտակա ռելսից ոչ պակաս, քան ***10 մետր հեռավորության վրա:***

Գծանցի վրա հարկադրված կանգառ կատարելու դեպքում վարորդը պետք է անհապաղ իջեցնի ուղևորներին և միջոցներ ձեռնարկի գծանցն ազատելու համար:

Վարորդը պարտավոր է նաև՝

- հնարավորության դեպքում գծի երկայնքով երկու մարդ ուղարկի գծանցի ամեն մի կողմը 1000 մետր հեռավորության վրա (եթե մեկին, ապա վատ տեսանելիության կողմը) նրանց բացատրելով մոտեցող գնացքի մեքենավարին կանգառի ազդանշան տալու կանոնները;
- մնալ տրանսպորտային միջոցի մոտ և տալ ընդհանուր տագնապի ազդանշան;
- գնացք երևալու դեպքում վազի ընդառաջ՝ տալով կանգառի (տագնապի) ազդանշան:

Ընդհանուր տագնապի ազդանշան է ծառայում իրար ետևից տրվող մեկ երկար և երեք կարճ ձայնային ազդանշանների կրկնությունը, իսկ որպես կանգառի ազդանշան ընդունված է ձեռքի շրջանաձև շարժումը (ցերեկը՝ վառ գույնի լաթով կամ որևէ լավ տեսանելի առարկայով, գիշերը՝ ջահով կամ լապտերով):

Հոդված 35. Երթևեկություն ավտոմայրուղիներով

ավտոմայրուղիներում արգելվում է՝

- հետիոտների, ընտանի կենդանիների, հեծանիվների, մոպեդների, տրակտորների և ինքնագնաց մեքենայի, ինչպես նաև այլ տրանսպորտային միջոցների երթևեկությունը, որոնց արագությունը տեխնիկական բնութագրերից կամ վիճակից ելնելով չի գերազանցում 40 կմ/ժ;
- 3,5 տ ավելի առավելագույն զանգված ունեցող բեռնատար ավտոմոբիլների երթևեկությունը երկրորդ գոտուց ձախ գտնվող այլ գոտիով;
- Կանգառը 5.15, 6.11 նշաններով կահավորված կայանման հատուկ հարթակներից դուրս;
- Հետադարձը և մուտքը բաժանարար գոտու տեխնիոլոգիական խզվածքներ;
- հետընթացը;
- ուսումնական վարումը:

Երթևեկելի մասում հարկադիր կանգառի ժամանակ վարորդը ղեկավարվում է այս օրենքի 26-րդ հոդվածի պահանջների համաձայն, որպեսզի տրանսպորտային միջոցը տեղափոխի սահմանված գոտու վրա (երթևեկելի մասի եզրին նշված գծից դեպի աջ):

Այս հոդվածների պահանջները տարածվում են 5.3նշանով նշված ճանապարհների վրա ևս:

Հոդված 36. Երթևեկություն բնակելի գոտիներում

Բնակելի գոտում մուտքն ու ելքը նշված են 5.38, 5.39 նշաններով: Այստեղ հետիոտների երթևեկությունը թույլատրվում է մայթերով, այնպես էլ երթևեկելի մասով: Բնակելի գոտում հետիոտներն ունեն առավելություն, սակայն նրանք չպետք է անտեղի խոչընդոտեն տրանսպորտային միջոցների երթևեկությունը:

Բնակելի գոտում արգելվում է՝ ***20 կմ/ժ- ավել արագությամբ երթևեկությունը,*** միջանցիկ երթևեկությունը, ուսումնական վարումը, կայանելը աշխատող շարժիչով: Ինչպես նաև 3,5 տ ավելի թույլատրված առավելագույն զանգված ունեցող բեռնատար մեքենաների կայանելը դրանց համար նախատեսված և նշաններով կահավորված և/կամ գծանշված տեղերից դուրս:

Բնակելի գոտուց դուրս գալիս վարորդները ճանապարհը պետք է զիջեն երթևեկության մյուս մասնակիցներին:

Այս հոդվածի պահանջները տարածվում են բակի տարածքներում:

Հոդված 37. Ընդհանուր օգտագործման տրանսպորտային միջոցների առավելությունը

Խաչմերուկներից դուրս, որտեղ տրամվայի գծերը հատում են երթևեկելի մասը, տրամվայն ունի առավելություն ոչ ռելսագնաց տրանսպորտային միջոցների նկատմամբ, բացառությամբ, երբ այն դուրս է գալիս դեպոյից:

Այն ճանապարհներին, որտեղ 5.9, 5.10.1–5.10.3 նշաններով նշված ընդհանուր օգտագործման տրանսպորտային միջոցների համար գոտի ունեցող ճանապարհներին արգելվում է այլ տրանսպորտային միջոցների երթևեկությունն ու կանգառը գոտում: Եթե այդ գոտին մնացած երթևեկելի մասից բաժանված է ընդհատվող գծանշմամբ, ապա շրջադարձ կատարելիս տրանսպորտային միջոցները պետք է վերադասավորվեն այդ գոտու վրա: Ճանապարհ մուտք

գործելիս՝ նման տեղերում թույլատրվում է նաև մտնել այդ գոտի՝ երթևեկելի մասի աջ եզրի մոտ ուղևորներին իջեցնելու և նստեցնելու համար՝ պայմանով, որ դա խոչընդոտ չի ստեղծի ընդհանուր օգտագործման տրանսպորտային միջոցների երթևեկության համար այդ գոտում:

Բնակավայրերում վարորդները պետք է ճանապարհը զիջեն կահավորված և նշված կանգառի կետերի տարածքից երթևեկությունն սկսող տրոլեյբուսներին և ավտոբուսներին, որոնց վարորդներն իրենց հերթին կարող են երթևեկությունն սկսել միայն համոզվելով, որ ճանապարհն իրենց զիջում են:

Թեմա № 17

Արտաքին լուսային սարքերի և ձայնային ադանշանի կիրառումը: Քարշակումը: Ուսումնական վարումը: Բեռների փոխադրումը: Ուղևորների տեղափոխումը: Լրացուցիչ պահանջներ հեծանվի, մոպեդի, քառանիվ սայլակի երթևեկության և անասուններ քշելու նկատմամբ:

Օրվա մութ ժամանակ և անբավարար տեսանելիության կամ օրենսգրքով նախատեսված պայմաններում տրանսպորտային միջոցների վրա պետք է միացված լինեն լուսային սարքերը: Այս սարքերը կողմնորոշող հարմարանք են հանդիսանում, որոնցով ղեկավարվում են ճանապարհային երթևեկության մասնակիցները, որպեսզի խուսափեն ընդհարումից: Նրանց անսարքության դեպում կարող է ճիշտ չընկալվել տրանսպորտային միջոցի տեսակը և եզրաչափերը, որը կարող է վթարի պատճառ դառնալ: Այդ իսկ պատճառով շատ կարևոր է, որ լուսային սարքերը միշտ սարքին լինեն, ինչպես նաև ճիշտ լինեն պահպանված դրանց օգտագործման կանոնները:

Հոդված 38. Արտաքին լուսային սարքերի և ձայնային ազդանշանների կիրառումը

Օրվա մութ ժամանակ և անբավարար տեսանելիության պայմաններում անկախ ճանապարհի լուսավորվածությունից, ինչպես նաև թունելներում երթևեկող տրանսպորտային միջոցների վրա պետք է միացված լինեն հետևյալ լուսային սարքերը՝

- բոլոր մեխանիկական տրանսպորտային միջոցների և մոպեդների վրա՝ լապտերների հեռահար և մոտակա լույսը;
- հեծանիվների վրա՝ լապտերները կամ լապտերիկները;
- լծասայլերի վրա՝ լապտերիկները (առկայության դեպքում) ;
- կցորդների վրա՝ եզրաչափային լույսերը:

Հեռահար լույսը պետք է փոխարկվի մոտակայի՝

- բնակավայրերում, եթե ճանապարհը լուսավորված է;
- հանդիպակաց երթևեկող տրանսպորտային միջոցից 150 մետրից ոչ պակաս հեռավորության վրա հանդիպակաց երթևեկող տրանսպորտային միջոցի վարորդը, պարբերաբար փոխարկելով լապտերների լույսը, տեղեկացնում է դրա անհրաժեշտության մասին;
- ցանկացած այլ դեպքերում հանդիպակաց և համընթաց երթևեկող վարորդներին, շլացնելու հնարավորությունը բացառելու համար:

Տեսնելիության վատթարացման դեպքում վարորդը առանց երթևեկելի գոտին փոխելու միացնում է վթարային ազդանշանը, նվազեցնում է արագությունը և կանգ է առնում:

Օրվա մութ ժամանակ, ինչպես նաև անբավարար տեսանելիության պայմաններում, ճանապարհների չլուսավորված հատվածներում կանգառի և կայանման դեպքում տրանսպորրտային միջոցի վրա միացված լինեն եզրաչափային լույսերը: Անբավարար տեսանելիության պայմաններում եզրաչափային լույսերի հետ լրացուցիչ կարող են միացվել նաև լապտերների մոտակա լույսերը, հակամառախուղային լապտերները կամ հետին հակամառախուղային լապտերիկները:

Հակամառախուղային լապտերիկները կարող են օգտագործվել՝

- անկախ, անբավարար տեսանելիության պայմաններում, ինչպես նաև լապտերների մոտակա կամ հեռահար լույսերի հետ միաժամանակ;
- օրվա մութ ժամանակ ճանապարհների չլուսավորված հատվածներում մոտակա կամ հեռահար լույսերի հետ միաժամանակ;
- լապտերների մոտակա լույսի փոխարեն այս օրենքի 5-րդ կետում նախատեսված դեպքերում:

Օրվա լուսավոր ժամերին երթևեկող տրանսպորտային միջոցը նշելու նպատակով լապտերների մոտակա լույսը պետք է միացված լինի՝

- Կազմակերպված տրանսպորտային շարասյունով երթևեկելիս;
- Ավտոբուսով կամ բեռնատար ավտոմոբիլով երեխաներ փոխադրելիս;
- Վտանգավոր, մեծ եզրաչափերով և ծանրաքաշ բեռ փոխադրելիս;
- Մեխանիկական տրանսպորտային միջոցներ քարշակելիս (քարշակող տրանսպորտային միջոցի վրա):

Լապտեր լուսարձակ- փնտրող լապտեր թույլատրվում է օգտագործել միայն բնակավայրերից դուրս՝ հանդիպակաց տրանսպորտային միջոցների բացակայության դեպքում: Բնակավայրերում այդպիսի լապտերներից կարող են օգտվել միայն սահմանված կարգով կապույտ կամ կապույտ և կարմիր առկայծող փարոսիկներով և հատուկ ազդանշանով կահավորված տրանսպորտային միջոցների վարորդները՝ ծառայողական առաջադրանք կատարելիս:

Հակամառախուղային հետին լապտերները օգտագործվում են միայն անբավարար տեսանելիության պայմաններում: Արգելվում է հակամառախուղային հետին լապտերների օգտագործումը «կանգ» ազդանշանի հետ միացնել:

«Ավտոգնացք» ճանաչման նշանը պետք է միացված լինի շարժման մեջ գտնվող ավտոգնացքի վրա, իսկ օրվա մութ ժամանակ և անբավարար տեսանելիությթան պայմաններում նաև կանգառի և կայանման ժամանակ:

Նարնջագույն կամ դեղին առկայծող փարոսիկը միացնում են այն տրանսպորտային միջոցի վրա, որը ճանապարհին կատարում է վերանորոգման կամ բերքահավաքի աշխատանքներ, ինչպես նաև մեծ եզրաչափերով, վտանգավոր և ծանրաքաշ բեռ տեղափոխելիս, տվյալ բեռի տեղափոխման կանոնները նախատեսված դեպքերում:

Ձայնային ազդանշանները կարող են կիրառվել միայն՝

- Բնակավայրերից դուրս վազանց կատարելու մտադրության մասին մյուս վարորդներին նախազգուշացնելու համար;
- Երբ դա անրաժեշտ է ճանապարհատրանսպորտային պատահարը կանխելու համար:

Վազանցը նախազգուշացնելու համար ձայնային ազդանշանի փոխարեն (կամ նրա հետ միաժամանակ) կարող է տրվել լուսային ազդանշան, որն իրենից ներկայացնում է օրվա լուսավոր ժամանակ լապտերների լույսի պարբերաբար միացումն ու անջատումը, իսկ օրվա մութ ժամանակ՝ լապտերների լույսի բազմակի փոխարկումները մոտակայից հեռահարի:

Հոդված 39. Մեխանիկական տրանսպորտային միջոցների քարշակումը

Կոշտ կամ ճկուն կցիչով քարշակումը պետք է իրականացվի քարշակվող տրասնպորտային միջոցի ղեկին վարորդի առկայության դեպքում, բացի այն դեպքերից, երբ կոշտ կցիչի կառուցվածքը ուղղագիծ երթևեկության ժամանակ ապահովում է քարշակվող տրանսպորտային միջոցի ընթացքը քարշակողի հետագծով:

Կոշտ կամ ճկուն կցիչով քարշակման ժամանակ արգելվում է քարշակվող ավտբուսում, տրոլեյբուսում և բեռնատար ավտոմոբիլի թափքում մարդկանց փոխդրումը, ինչպես նաև մարդկանց գտնվելը քարշակվող տրանսպորտային միջոցի խցիկում կամ թափքում, կամ էլ քարշակող թափքում:

Քարշակող և քարշակվող տրանսպորտային միջոցների միջև պետք է ապահովի ճկուն կցիչով քարշակելիս 4-6 մետր, իսկ կոշտ կցիչով՝ 4մ-ից ոչ ավելի հեռավորություն:

Քարշակումն արգելվում է՝

- Այն տրանսպորտային միջոցներին, որոնց ղեկային կառավարումը չի գործում (բացառությամբ մասնակի բեռնմամբ եղանակով քարշակելիս);
- Երկու կամ ավելի տրանսպորտային միջոցների;
- Այն տրանսպորտային միջոցների, որոնց արգելակային համակարգը չի գործում, և դրա փաստացի զանգվածը գերազանցում է քարշակողի փաստացի զանգվածի կեսը: Քարշակվողի փաստացի զանգվածը քարշակողի փաստացի զանգվածի կեսից քիչ լինելու դեպքում քարշակումը թույլատրվում է, սակայն միայն կոշտ կցիչով կամ մասնակի բեռնման եղանակով;
- Առանց կողային կցորդի մոտոցիկլներով, ինչպես նաև դրանցով;
- Մերկասառույցի պայմաններում ճկուն կցորդով:

Հոդված 40. Ուսումնական վարում

Տրանսպորտային միջոցների վարման սկզբնական ուսուցումը պետք է կատարվի փակ հրապարակներում կամ ավտոդրոմներում, բացի այս օրենքի 17-րդ հոդվածի 2-րդ կետով նախատեսված դեպքերի:

Ճանապարհներին ուսումնական վարումը թույլարվում է միայն սովորեցնողի հետ՝ այն էլ սովորողի մոտ վարման բավարար հմտության դեպքում:

Սովորեցնողը պետք է իր մոտ ունենա տվյալ կարգի տրանսպորտային միջոցի վարման ուսուցման և վարելու իրավունքի վարորդական վկայականներ: Վարորդի կարգավիճակով աշխատելու 3 տարուց ավելի փորձ, բացի այս օրենքի 17-րդ հոդվածի 2-րդ կետով նախատեսված դեպքերի:

Անձը , որը սովորում է վարել ավտոմոբիլ, պետք է լինի առնվազն 16 տարեկան, իսկ մոտոցիկլի դեպքում՝ առնվազն 14 տարեկան:

Մեխանիկական տրանսպորտային միջոցը, որով իրականացվում է վարման ուսուցումը, պետք է ունենա «ուսումնական տրանսպորտային միջոց» ճանաչման նշան և կահավորված լինի հետին դիտման լրացուցիչ հայելիով (սովորեցնողի համար):

Արգելվում է ուսումնական վարում այն ճանապարհներին, որոնց ցուցակը հայտարարվում է սահմանված կարգով:

Հոդված 41.Ուղևորների փոխադրումը

«C» կարգի տրանսպորտային միջոցներով (բեռնատարներով) թույլտրվում է տեղափոխել մինչև ութ ուղևոր և տվյալ կարգի տրանսպորտային միջոց վարելու մեկ տարուց ավելի փորձ, իսկ դրանից ավելի մարդ փոխադրելու դեպքում վարորդը պետքէ ունենա նաև «D» կարգի տրանսպորտային միջոցներ վարելու իրավունք և տվյալ կարգի տրանսպորտային միջոց վարելու երեք տարուց ավելի փորձ:

Մարդկանց փոխադրումը կողային հարթակով ավտոմոբիլի թափքով թույլատրվում է, եթե դա կահավորված է այս օրենքի պահանջների համապատասխան: Երեխաների փոխադրումը թույլատրվում է միայն առանձնահատուկ դեպքերում:

Բեռնատար ավտոմոբիլի թափքով փոխադրվող մարդկանց թիվը չպետք է գերազանցի կահավորած նստատեղերի քանակը:

Մեկնելուց առաջ բեռնատար ավտոմոբիլի վարորդը պետք է ուղևորներին հրահանգավորի թափքում տեղավորվելու և իջնելու կարգի մասին: Շարժվել կարելի է միայն համոզվելով, որ ուղևորների անվտանգ փոխադրման պայմաններն ապահովված են:

Մարդկանց փոխադրելու համար չկահավորված կողավոր հարթակով բեռնատար ավտոմոբիլների թափքում երթևեկության ժամանակ թույլատրվում է գտնվել միայն բեռն ուղեկցող կամ այն ստանալու համար մեկնող անձանց, պայմանով, որ նրանք ապահովված են ավտոմոբիլի կողերի մակարդակից ցածր տեղադրված նստատեղերով:

Ավտոբուսով կամ ֆուրգոն թափքով բեռնատար ավտոմոբիլով երեխաների խմբեր փոխադրելիս նրանց հետ պետք է գտնվի առնվազն մեկ չափահաս ուղեկցող, իսկ կողավոր հարթակ ունեցող բեռնատար ավտոմոբիլի թափքում՝ երկուսից ոչ պակաս: Այդ տրասպորտային միջոցներն առջևից և հետևից պետք է կահավորվեն «Երեխաների փոխադրում» ճանաչման նշանով:

Վարորդը պետք է դռները փակ պահի մինչև տրանսպորտային միջոցի լրիվ կանգնելը, որից հետո միայն հնարավորություն տա ուղևորներին նստել կամ իջնել, իսկ շարժումը սկսել դռները փակելուց հետո:

Մարդկանց փոխադրումն արգելվում է՝

- Ավտոմոբիլի (բացի կողավոր հարթակով բեռնատար ավտոմոբիլի թափքում մարդկանց փոխադրելու դեպքերից) տրակտորի, այլ ինքնագնաց մեքենաների խցիկներից դուրս, բեռնատար կցորդում, կցորդ ամառանացում, բեռնատար մոտոտրանսպորտային միջոցի թափքում և մոտոցիկլետի կառուցվածքի նախատեսված նստատեղերից դուրս;
- Եթե մարդկանց քանակը գերազանցում է տրանսպորտային միջոցի տեխնիկական բնութագրով նախատեսված քանակը (չնախատեսելով մինչև 12 տարեկան երեխաներին): Ընդ որում տրանսպորտային միջոցի փաստացի զանգվածը չպետք է գերազանցի արտադրող գործարանի կողմից սահմանած թույլատրելի առավելագույն զանգվածի մեծությունը:

Արգելվում է մինչև 12տարեկան երեխաներին փոխադրել մոտոցիկլետի հետևի նստատեղին, թեթև մարդատար ավտոմոբիլի առջևի նստատեղին , եթե այն կահավորված չէ երեխաներին պահող հարմարանքով:

Հոդված 42. Բեռների փոխադրում

Ավոտրանսպորտային միջոցի եզրաչափային տվյալները չպետք է գերազանցեն Վրաստանի օրենսդրությյամբ թույլատրված ցուցանիշները կամ/և առաջատար կամ ոչ առաջատար սռնիների առավելագույն ծանրաբեռնվածությունը չպետք է գերազանցի 10 տ (բացառությամբ միաառաջատար սռնիով ավտոտրանսպորտային միջոցի, որի առաջատար առնու առավելագույն բեռնվածությունը չպետք է գերազանգի 11,5 տ) կամ/և ընդհանուր զանգվածը 44տ: Իսկ փոխադրվող բեռի զանգվածը չպետք է գերազանցի արտադրող գործարանի ավտոտրանսպորտային միջոցի համար սահմանված բեռնվածության բաշխման սահմանը: Այն ավտոտրանսպորտային միջոցը, որի եզրաչափային տվյալները չպետք է գերազանցեն Վրաստանի օրենսդրությամբ թույլատրված ցուցանիշները կամ/և առաջատար կամ ոչ առաջատար սռնիների առավելագույն ծանրաբեռնվածությունը չպետք է գերազանցի 10 տ (բացառությամբ միաառաջատար սռնիով ավտոտրանսպորտային միջոցի, որի առաջատար առնու առավելագույն բեռնվածությունը չպետք է գերազանգի 11,5 տ) կամ/և ընդհանուր զանգվածը 44տ: Իսկ փոխադրվող բեռի զանգվածը չպետք է գերազանցի արտադրող գործարանի ավտոտրանսպորտային միջոցի համար սահմանված բեռնվածության բաշխման սահմանը կփոխադրվի նշված տվյալների(պարամետրերը) համապատասխան ճշտումներից հետո: Եթե ավտոտրանպորտային միջոցի եզրաչափային պարամետրերի համապատասխան ճշտումն անհնար է կամ/և բեռի չի ենթարկվում քանդելու, մասնատելու կամ բաշխելու, դրա եթևեկությունը թույլատրելի է Վրաստանի օրենադրության համապատասխան սահմանված երաշխավորանք ստանալուց հետո (23.06.2006. 3395):

Շարժումն սկսելուց առաջ և երթևեկության ընթացքում վարորդը պարտավոր է հսկել բեռի վիճակը, այս հոդվածի առաջին կետին համապատասխան, տեղաբաշխումը և ամրացումը վայր ընկնելու որևէ այլ կերպ երթևեկությանը խոչընդոտ ստեղծելուց խուսափելու համար. (9.11.2005. 2022):

Բեռի փոխադրումը թույլատրվում է, եթե նա՝

- չի սահմանափակում վարորդը տեսադաշտը;
- չի դժվարացնում տրանսպորտային միջոցի ղեկավարումը և թուլացնում կայունությունը;
- չի ծածկում արտաքին լուսային սարքերը ու լուսանդրադարձիչները, համարանիշները կամ ճանաչման նշանները, ինչպես նաև չեն խանգարում ձեռքով տրվող ազդանշանների ընկալմանը;
- զգալի աղմուկ չի բարձրացնում, փոշի չի հանում կամ չի աղտոտում ճանապարհն ու շրջակա միջավայրը:

Եթե բեռի վիճակն ու դասավորվածությունը չեն բավարարում նշված պահանջները, վարորդը պարտավոր է վերացնել խախտումները կամ դադարեցնել հետագա երթևեկությունը:

Տրանսպորտային միջոցի առջևի կամ հետևի եզրաչափերից 1 մ ավելի կամ կողքից՝ եզրաչափային լույսի արտաքին եզրից 0,4մ ավելի դուրս ցցվելու դեպքում բեռը պետք է նշվի «Մեծ եզրաչափերով բեռ» ճանաչման նշանով, իսկ օրվա մութ ժամանակ և անբավարար տեսանելիության պայմաններում նաև՝ առջևից սպիտակ, իսկ հետևից՝ կարմիր գույնի լապտերիկներով կամ լուսանդրադարձիչներով:

Վտանգավոր, մեծ եզրաչափերով և ծանրաքաշ բեռ կամ չվնասազերծված տարա փոխադրելու համար, այնպիսի տրանսպորտային միջոցի երթեկությունը, որի եզրաչափերը բեռով կամ առանց բեռի գերազանցում են լայնության 2,55 մ (իզոթերմիկ կամ սառնարանային թափքով տրանսպորտային միջոցների համար՝ 2,60 մ), ըստ բարձրության երթևեկելի մասի մակերևույթից 4 մ, իսկ ավտոփոխադրողի կամ կոնտեյներ փոխադրելու դեպքում 4,30մ, ըստ երկարության 20 մ (ավտոգնացքը կամ կցորդված (կիսակցորդով) ավտոտրանսպորտային միջոց, լծորդված ավտոբուս), մնացած բոլոր դեպքերում 12մ կամ այնպիսի տրասպորտային միջոցի եթևեկություն, որոնց բեռը դուրս է ցցված հետևի եզրաչափից ավելի քան 2 մ, երկու կամ ավելի կցորդով ատոգնացքների երթևեկությունը իրականացվում է այս պարամետրերի համապատասխան ճշտումների դեպքում կամ Վրաստանի օրենսդրության համապատասխան սահմանված երաշխիքները ստանալուց հետո (25.12.2009 2474):

Հոդված 43. Լրացուցիչ պահանջներ հեծանիվի, մոպեդի, բեռնասայլակի երթևեկության և անասունների քշման նկատմամբ

Հեծանվի, բեռնասայլակի վարումը, ճանապարհներին բեռնակիր կամ հեծկան անասուններով երթևեկությունը կամ նախիրի քշումը թույլատրվում է 14 տարեկան հասակի, իսկ մոպեդի վարումը 16 տարեկան անձի համար:

Աբխազիայի կամ Աճարիայի ինքնավար հանրապետություններում, Թբիլիսի կամ Քութայիսի քաղաքներում այս օրենքի առաջին կետով սահմանված հասակը կարող է պակասեցնել, բայց ոչ ավել քան 2 տարով:

Հեծանվի, մոպեդի, բեռնասայլակի, բեռնակիր կամ հեծկան անասուններով երթևեկությունը թույլատրելի է միայն ճանապարհի եզրային աջ գոտով մեկ շարքով, ինչպես նաև կողնակներով, եթե դա խոչընդոտ չի ստեղծի հետիոտնին:

Հեծանվի, մոպեդի, բեռնասայլակի, բեռնակիր կամ հեծկան անասունների շարասյունները ճանապարհի երթևեկելի մասով երթևեկելիս բաժանվում են խմբերի՝ յուրաքանչյուր խմբում 10 հեծանիվ, բեռնակիր կամ հեծկան անասուններ և 5 լծասայլակ: Վազանցի հեղտացման համար խմբերի միջև հեռավորությունը պետքէ կազմի 80-100 մետր:

Հեծանվի և մոպեդի վարորդներին արգելվում է՝

- երթևեկություն՝ առանց ղեկը գոնե մեկ ձեռքով բռնելու;
- ուղևորների փոխադրում բացառությամբ մինչև 7 տարեկան երեխաների, հուսալի աստիճաններով կահավորված լրացուցիչ նստատեղիով;
- այնպիսի բեռի փոխադրում, որի եզրաչափերը դուրս են ցցված 0,5 մ ավելի լայնությամբ կամ երկարությամբ և խանգարում են վարելուն;
- ճանապարհով երթևեկել, եթե կողքով առկա է հեծանվային արահետը;
- շրջադարձ դեպի ձախ կամ հետադարձ, որտեղով երթևեկում է տրամվայը: Ինչպես նաև այն ճանապարհներով, որոնց վրա տվյալ ուղղությամբ երթևեկելու համար մեկից ավելի գոտի է առկա:

Արգելվում է հեծանվի և մոպեդի քարշակումը, ինչես նաև հեծանվով և մոպեդով քարշակումը, բացի այն կցորդի քարշակումից, որը հեծանվի և մոպեդի հետ համատեղ ենթակա է շահագործման:

Խաչմերուկից դուրս տանող ճանապարհով հեծանվային արահետի չկարգավորվող հատման վրա հեծանվի և մոպեդի վարորդները ճանապարհը զիջում են այս ճանապարհով երթևեկող տրանսպորտային միջոցին:

Լծասայլակի վարորդը ճանապարհի մերձակա տարածքից կամ երկրորդական ճանապարհից վատ տեսանելիության տեղ դուրս գալու ժամանակ անասունը պետք է սանձով տանի:

Անասուններին ճանապարհով տանելը, որպես կարգ տեղի է ունենում օրվա լուսավոր ժամանակ: Սայլապանը անասուններին պետք է քշի դեպի ճանապարհի աջ եզրին հնարավորին չափ մոտ:

Երկաթգծային անցումով անասուններն քշելիս (սայլապանների քանակությունն հաշվի առնելով) ընհանուր քանակը բաժանվում է խմբերի, որպեսզի ապահովվի յուրաքանչյուր խմբի անվտանգ անցումը:

Լծասայլակի վարորդին, բեռնակիր, հեծկան և անասուններին քշողներին արգելվում է՝

- Ճանապարհին անասուններին անուշադիր թողնելը;
- Անասունների քշումը երկաթգծային անցումներով և ճանապարհով, որտեղ դրա համար հատուկ, առանձին տեղ չի հատկացված, ինչպես նաև օրվա մութ ժամանակ կամ անբավարար տեսանելիության պայմաններում;
- Այլ ճանապարհների առկայության դեպքում անասունների քշումը ասֆալտով և ցեմենտբետոնե ծածկույթով ճանապարհներով:

Թեմա № 18

Պատասխանատվություն Վրաստանի ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման վերաբերյալ օրենսդրության խախտման համար: Քաղվածք Վրաստանի

վարչական իրավախախտումների օրենսգրքից, որոնց համար Վրաստանի օրենսգրքով սահմանված է վարչական պատասխանատվություն

Գլուխ VI

Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովության բնագավառում պետական հսկողություն և ստուգում

Հոդված 44. Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովության բնագավառում պետական հսկողություն և ստուգում

Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման բնագավառում պետական հսկողությունն ու ստուգումն իրականացնում են Վրաստանի ներքին գործերի նախարարությունը և համապատասխան ծառայությունները, իրենց իրավասության շրջանակներում, Վրաստանի օրենսդրությամբ սահմանված կարգով:

Գլուխ VII

Պատասխանատվություն Վրաստանի Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովության մասին օրենսդրության խախտման համար

Հոդված 45. Պատասխանատվություն Վրասնատանի Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովության մասին օրենսդրության խախտման համար

Վրասնատանի Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովության մասին օրենսդրության խախտումը առաջացնում է կարգապահական, քրեական և վարչական պատասխանատվություն սահմանված կարգով:

Քաղվածք Վրաստանի վարչական իրավախախտումների օրենսգրքից Ճանապարհային երթևեկության կանոնների հետ կապված վարչական իրավախախտումներ

Հոդված 81. Այնպիսի ավտոտրանսպորտային և այլ շարժվող միջոցների շահագործումը, որոնց արտանետվող աղտոտող նյութերի նյութափոխանակությունը մի քանի անգամ գերազանցում է թույլատրելի նորման

Քաղաքացիների կողմից այնպիսի ավտոտրանսպորտային և այլ շարժվող միջոցների շահագործումը, որոնց արտանետվող աղտոտող նյութերի նյութափոխանակությունը, ինչպես նաև աշխատելիս նրանց կողմից առաջացնող աղմուկի մակարդակը գերազանցում է սահմանված նորմատիվները, առաջացնում է՝ նախաազգուշացում կամ տուգանքի նշանակում սահմանված աշխատավարձի հինգ նվազագույն քանակի չափով:

Կազուս՝

Պարետային ոստիկանության և ՍՊՀ դիագնոստիկայի աշխտակիցների միասնական միջոցառումների ժամանակ, ավտոմեքենա գազ-3110-ը հատուկ սարքավորումներով ստուգելիս

պարզվեց, որ արտանետվող աղտոտող նյութերի նյութափոխանակությունը մի քանի անգամ գերազանցում է թույլատրելի նորման:

Նշված դեպքը ներկայացնում է 81-րդ հոդվածով սահմանված իրավախախտումը: Հոդվածում ուղղակի նշված է, որ ավտոտրանսպորտային և այլ երթևեկող միջոցների շահագործումն, որոնց արտանետվող աղտոտող նյութերի նյութափոխանակությունը գերազանցում է թույլատրելի նորմատիվները, առաջացնում է նախազգուշացում կամ տուգանքի նշանակում սահմանված աշխատավարձի հինգ նվազագույն քանակի չափով: Արտանետվող աղտոտող նյութերի նյութափոխանակության քանակը, ինչպես նաև աշխատելիս աղմուկի մակարդակը սահմանված է հատուկ պետական նորմերով, որոնցով ղեկավարվում են դրանց համար տեխնիկապես կահավորված և համապատասխան թույլտվություն (լիցենզիա) ունեցող, ավտոտրանսպորրտի վրա տեխնիկական հսկողությունն իրականացնող կազմակերպություններ (դիագնոստիկ կենտրոններ): Նրանց կահավորման և աշխատակազմի միջոցով պարետային ոստիկանության կողմից հատուկ սարքած միջոցառումներում պետք է բացահայտվեն այնպիսի խախտումներ, որոնց հիման վրա պարետային ոտիկանության աշխատակիցը առկա օրենքի համաձայն կկազմի վարչական իրավախախտումների արձանագրություն:

Հոդված 116. Հարբած, թմրամիջոցներ օգտագործած կամ հոգեմետ հարբածության վիճակում գտնվող վարորդների ատվտրանսպորտային միջոցների վարումը, կամ էլ տրանսպորտային միջոցի վարելու փոխանցումը այդ վիճակում գտնվող մարդուն

1.տրանսպորտային միջոցի վարումը հարբած վիճակում առաջացնում է տուգանքի նշանակում 200 լարի քանակությամբ:

2. նախնական գիտակցման հարբած վիճակում գտնվող անձին տրանսպորտային միջոցը վարելու համար փոխանցելը կառաջացնի տուգանքի նշանակում 250 լարի քանակությամբ:

3. այս հոդվածի առաջին և 2-րդ մասերով նախատեսված իրավախախտումներ, երբ տրանսպորտային միջոցների շահագործումն իրականացնող անձը չունի տրանսպորտային միջոցը վարելու իրավունք կամ զրկվել է այս իրավունքից այլ խախտումների համար՝

առաջացնում են տրանսպորտային միջոցի շահագործումն իրականացնող անձի և տրանսպորտային միջոցի սեփականատիրոջ նկատմամբ տուգանքի նշանակում 500 լարի քանակությամբ:

4. այս հոդվածի առաջին և 2-րդ մասերով նախատեսված իրավախախտումներ, որոնք գործվել են տարվա ընթացքում կրկնակիորեն՝

կառաջացնի տրանսպորտային միջոցը վարելու իրավազրկում 1 տարի ժամկետով, իսկ տրանսպորտային միջոցը փոխանցող մարդը, եթե նա չունի վարելու իրավունք, կտուգանվի 500 լարի քանակությամբ:

4[1]. այս հոդվածի 3-րդ մասով նախատեսված իրավախախտում, որը տարվա ընթացքում կատարվել է կրնակիորեն՝ կառաջացնի տուգանքի նշանակում 700 լարի քանակությամբ կամ վարչական կալանավորման մինչև 90 օր ժամկետով:

5. տրանսպորտային միջոցի վարումը թմրամիջոց օգտագործած կամ հոգեմետ հարբածության վիճակում կամ էլ նախնական գիտակցման հարբած վիճակում գտնվող անձին տրանսպորտային միջոցը վարելու համար փոխանցելը կառաջացնի՝

տրանսպորտային միջոցի վարելու իրավունքի զրկում 3 տարի ժամկետով, Վրաստանի տարածքում գտնվող օտարերկրյա քաղաքացին և քաղաքացիություն չունեցող անձը (բացի այն անձից, որը օգտվում է Վրաստանի օրենքների և Վրաստանի միջազգային պայնմանագրերի և համաձայնագրերի համաձայն անձեռնմխելիությունից) տուգանվում է 500 լարի քանակությամբ:

6. այս հոդվածի 5-րդ մասով նախատեսված իրավախախտումներ, երբ տրանսպորտային միջոցի շահագործումն իրականացնող անձը չունի տրանսպորտային միջոցը վարելու իրավունք կամ զրկվել է այս իրավունքից այլ խախտումների համար՝

կառաջացնի տրանսպորտային միջոցի շահագործումն իրականցնող ամձի և տրանսպորտային միջոցի սեփականատիրոջ տուգանում 1000 լարի քանակությամբ:

7. այս հոդվածով նախատեսված իրավախախտումները, որոնց հետևել են տրանսպորտային միջոցի, բեռի, ճանապարհի, ճանապարհային կամ այլ շինության, ինչպես նաև այլ ունեցվածքի կամ մարդու մարմնական թեթև վնասվածքներ՝

առաջացնում են տրանսպորտային միջոցը վարելու իրավազրկում 3 տարի ժամկետով և Վրաստանի տարածքում գտնվող օտարերկրյա քաղաքացու և քաղաքացիություն չունեցող անձի (բացի այն անձից, որը օգտվում է Վրաստանի օրենքների և Վրաստանի միջազգային պայնմանագրերի և համաձայնագրերի համաձայն անձեռնմխելիությունից) նկատմամբ տուգանք է նշանակվում 1000 լարի քանակությամբ:

8. այս հոդվածի 7-րդ մասով նախատեսված իրավախախտումներ, երբ տրանսպորտային միջոցի շահագործումն իրականացնող անձը չունի տրանսպորտային միջոցը վարելու իրավունք կամ զրկվել է այդ իրավունքից այլ խախտումների համար, կառաջացնի տուգանքի նշանակում 1000 լարի քանակությամբ:

9. այս հոդվածի 6-րդ և 8-րդ մասերով նախատեսված իրավախախտումներ, որը տարվա ընթացքում կատարվել է կրկնակիորեն՝

կառաջացնի տուգանքի նշանակում 1500 լարի քանակությամբ կամ վարչական կալանավորման մինչև 90 օր ժամկետով:

Նշում՝

1. Ոստիկանը, որը ապահովում է ճանապարհային երթևեկության մասնակիցների անվտանգությունը և հսկում է ճանապարհային երթևեկության կանոնների պահպանումը, պարտավոր է տրանսպորտային միջոցը վարելուց հեռացնի անձին, որի հանդեպ առկա են ահագին հիմքեր, որ նա գտնվում է թմրանյութ օգտագործած կամ հոգեմետ հարբածության վիճակում, և հետազոտման նպատակով ներկայացնի նրան Վրաստանի ներքին գործերի նախարարի կողմից այս առումով իրավասու անձին (28.04.2006. N2962 կգործի 2006 թվականի նոյեմբերի 1-ից):

2. Ոստիկանը, որը ապահովում է ճանապարհային երթևեկության մասնակիցների անվտանգությունը և հսկում է ճանապարհային երթևեկության կանոնների պահպանումը, պարտավոր է տրանսպորտային միջոցը վարելուց հեռացնի անձին, որի հանդեպ առկա են ահագին հիմքեր, որ նա գտնվում է ալկոհոլային հարբածության վիճակում, եթե խախտողը վիճելի չի դարձնում ալկոհոլ ընդունելու փաստը և դա հաստատում է արձանագրությունը ստորագրելով, տեղում կնշանակվի վարչական պատիժ, հակառակ դեպքում՝ տեղում ստուգի նրան: Եթե ստուգման հետևանքով հաստատվի վարորդի կողմից ալկոհոլ ընդունելու փաստը, նա պետք է կազմի վարչական իրավախախտման արձանագրություն, որտեղ արտացոլվում է ալկոհոլային հարբածության հետևանքները:

3. Իրավասու անձի կողմից ալկոհոլային, թմրանյութային և հոգեմետ հարբածության փաստերի հաստատման կարգը սահմանվում է Վրաստանի ներքին գործերի նախարարի և Վրաստանի աշխատանքի, առողջապահության և սոցիալական պաշտպանության նախարարի միասնական հրամանով (28.04.2006. N2962):

4. Այս հոդվածի 3-րդ, 4-րդ, 4^1, 6-րդ և 8-դ մասերով նախատեսված իրավախախտումներ կատարելող անձը վարորդական իրավունքի ընդունելության քննությանը կմասնակցի

նշանակված տուգանքը վճարելուց հետո:

4[1]. Այս հոդվածի 4-րդ մասով նախատեսված իրավախախտման դեպքում առանձնահատուկ հանգամանք հայտնաբերելիս գործը քննող մարմինը կարող է տրանսպորտային միջոցը վարելու իրավունքից զրկելը վերափոխել տուգանքի նշանակմամբ՝ 500 լարի քանակությամբ:

5. Այս հոդվածի 5-րդ մասով նախատեսված դեպքերում վարորդական իրավունքի զրկման ժամկետը լրանալուց հետո անձին վարորդական իրավունքը կվերադարձվի բժշկական հաստատության ախտորոշման հիման վրա, որով հաստատվում է թմրամոլությամբ տառապելու բացասման փաստը:

6. Այս հոդվածի 7-րդ մասով նախատեսված է իրավախախտումներ կատարելիս խախտողի կողմից վնասի կամավոր հատուցման դեպքը, եթե տուժողը չբողոքարկի վարչական իրավախախտման գործում ընդունած որոշումը, գործը քննարկող մարմինը կարող է տրանսպորտային միջոցը վարելու իրավունքից զրկելը փոխել տուգանքով՝ 1000 լարի քանակությամբ:

7. Տուգանքի կամավոր իրագործման համար այս օրենսգրքի 290-րդ հոդվածի առաջին մասով սահմանված ժամկետը լրանալուց հետո այս հոդվածով նախատեսված իրավախախտումների համար անձին հաշվեկցվում է տույժ 500 լարի քանակությամբ, իսկ 290-րդ հոդվածի 1[1] մասով նախատեսված ժամկետում տուգանքի և տույժի չվճարման դեպքում, այս հոդվածի առաջին, 2-րդ, 5-րդ և 7-րդ մասերով նախատեսված դեպքերում, տուգանքը կփոխվի տրանսպորտային միջոցը վարելու իրավազրկմամբ՝ 2 տարի ժամկետով:

8. Տուգանքի վճարումը կամ տուգանքի փոխումը տրանսպորտային միջոցը վարելու իրավազրկմամբ չի ազատում անձին տույժը վճարելուց:

Հոդված 117. Ալկոհոլային, թմրանյութային կամ հոգեմետ հարբածության հաստատման համար ստուգումից խուսափելը՝

1. տրանսպորտային միջոցը վարելիս Վրաստանի օրենդրությամբ սահմանված կարգով ալկոհոլային, թմրանյութային կամ հոգեմետ հարբածության հաստատման համար ստուգումից խուսափելը՝

կառաջացնի տրանսպորտային միջոցը վարելու իրավազրկում 3 տարի ժամկետով, Վրաստանի տարածքում գտնվող օտարերկրյա քաղաքացու և քաղաքացիություն չունեցող անձի (բացի այն անձից, որը օգտվում է Վրաստանի օրենքների և Վրաստանի միջազգային պայմանագրերի և համաձայնագրերի համաձայն անձեռնմխելիությունից) նկատմամբ տուգանք է նշանակվում 500 լարի քանակությամբ:

3. Այս հոդվածի առաջին մասով նախատեսված իրավախախտում, կատարված այն անձի կողմից, որը չունի տրանսպորտային միջոցը վարելու իրավունք կամ այդ իրավունքից զրկվել է այլ խախտումների համար, կառաջացնի տուգանքի նշանակում 700 լարի քանակությամբ:

3. Այս հոդվածի 2-րդ մասով նախատեսված իրավախախտումը, որը տարվա ընթացքում կատարվել է կրկնակիորեն, կառաջացնի տուգանքի նշանակում 1000 լարի քանակությամբ կամ վարչական կալանավորմամբ մինչև 90 օր ժամկետով:

Նշում՝

1. Տուգանքի կամավոր իրագործման համար այս օրենսգրքի 290-րդ հոդվածի առաջին մասով սահմանված ժամկետը լրանալուց հետո այս հոդվածով նախատեսված իրավախախտումների համար անձին հաշվեկցվում է տույժ 500 լարի քանակությամբ, իսկ 290-րդ հոդվածի 1[1] մասով նախատեսված ժամկետում տուգանքի և տույժի չվճարման դեպքում, այս

հոդվածով նախատեսված դեպքերում, տուգանքը կփոխվի տրանսպորտային միջոցը վարելու իրավազրկմամբ՝ 2 տարի ժամկետով:

2. Տուգանքի վճարումը կամ տուգանքի փոխումը տրանսպորտային միջոցը վարելու իրավազրկմամբ չի ազատում անձին տույժը վճարելուց:

3. Այս հոդվածի 2-րդ մասով նախատեսված իրավախախտում կատարելիս անձը վարորդական իրավունքի ընդունելության քննությանը կմասնակցի նշանակված տուգանքը վճարելուց հետո:

Կազուս՝

Մելիքիշվիլու պողոտայի վրա պարետային ոստիկանը կանգնեցրեց մարսեդես մակնիշի ավտոմեքենա, որի վարորդ Գոշաձեի պահվածքում նկատվում էին հարբածության բացահայտ նշաններ: Ստուգվելու նպատակով նա տեղափոխվեց նարկոլոգիական դիսպանսեր հարբեցողության աստիճանը որոշելու համար, չնայած որ վերջինս համառորեն խուսափեց բժշկական ստուգումից:

Գոշաձեի արարքը 117-րդ հոդվածում նշված վարչական իրավախախտումն է, քանի, որ նա հաշվի չառնելով իրեն նարկոլոգիական դիսպանսեր տեղափոխելու փաստը, հրաժարվեց վերջնական ստուգումից: Այս դեպքում պարետային ոստիկանը կազմում է իրավախախտման մասին համապատասխան արձանագրություն:

Հոդված 118. Այն տրանսպորտային միջոցի վարումը, որը չի անցել ճանապարհի համար որակավորման քննություն ավտոտրանսպորտային միջոցի պարբերաբար պարտադիր թեստավորում (քննություն) սահմանված կարգով, կամ ավտորանսպորտային միջոցը վարելու համար այլ անձին փոխանցումը:

1. Այն տրանսպորտային միջոցի վարումը, որը չի անցել ճանապարհի համար որակավորման քննություն ավոտրանսպորտային միջոցի պարբերաբար պարտադիր թեստավորում (քննություն) սահմանված կարգով, սեփականատիրոջ կամ այլ իրավահավասար տիրապետողի ուրիշ անձին այսպիսի տրանսպորտային միջոցը վարելու փոխանցման համար՝ կառաջացնի տուգանքի նշանակում 10 լարի քանակությամբ:

2. Ավտոտրանսպորտային միջոցի շահագործումն իրականացնող իրավական անձի կամ/և անհատ ձեռներեցի կողմից այնպիսի ավտոտրանսպորտային միջոցի շահագործման ենթարկելը, որը սահմանված կարգով չի անցել ճանապարհի համար որակավորման ավտոտրանսպորտային միջոցի պարտադիր պարբերական թեստավորում (քննություն), կառաջացնի շահագործումն իրականացնող իրավական անձի կամ/և անհատ ձեռներեցի տուգանում 100լարի քանակությամբ:

Նշում՝

„1. Տուգանքի կամավոր իրագործման համար այս օրենսգրքի 290-րդ հոդվածի առաջին մասով սահմանված ժամկետը լրանալուց հետո այս հոդվածով նախատեսված իրավախախտումների համար անձին հաշվեկցվում է տույժ 150 լարի քանակությամբ, իսկ 290-րդ հոդվածի 1^1 մասով նախատեսված ժամկետում տուգանքի և տույժի չվճարման դեպքում, տուգանքը կփոխվի տրանսպորտային միջոցը վարելու իրավազրկմամբ՝ 1 տարի ժամկետով:

2. Տուգանքի կամավոր իրագործման համար այս օրենսգրքի 290-րդ հոդվածի առաջին մասով սահմանված ժամկետը լրանալուց հետո այս հոդվածի 2-րդ մասով նախատեսված իրավախախտումների համար անձին հաշվեկցվում է տույժ 500 լարի քանակությամբ, իսկ 290-րդ հոդվածի 1^1 մասով նախատեսված ժամկետում տուգանքի և տույժի չվճարման դեպքում,

տուգանքը կփոխվի ավտոտրանսպորտային միջոցը վարելու իրավազրկմամբ՝ 2 տարի ժամկետով:

3. Տուգանքի հարկադրաբար իրականացումը կամ տուգանքի վերափոխումը ավտոտրանսպորտային միջոցի վարելու իրավունքից զրկմամբ, չի ազատում անձին տույժի վճարումից:

Կազուս՝

Երթուղային միկրոավտոբուսի վարորդը շրջադարձի ժամանակ չկարողացավ կառավարել ղեկը, դուրս եկավ երթևեկելի մասից և հարվածեց լուսավորման սյանը: Պատահարի արդյունքում տուժողներ չեղան: Փորձաքննության հետևանքով պարզվեց, որ պատահարի ժամանակ արագությունը գերազանցում էր թույլատրելի սահմանը, արգելակման համակարգը անսարքին էր: Ավտոմեքենան չէր անցել ամենամյա պարտադիր տեխնիկական զննումը:

Այս դեպքում գործ ունենք մի քանի իրավախախտումների հետ: Դրանք են՝ անմիջապես ամենամյա պարտադիր տեխնիկական զննման չանցկացումը, իսկ փորձաքննության եզրակացության հետևանքով պարզվեց 125-րդ III մասով սահմանված արագության գերազանցում, որին հետևեց տրանսպորտային միջոցի, բեռի, ճանապարհի, ճանապարհային թե այլ կառույցների, ինչպես նաև գույքի կամ մարդու մարմնական վնասվածք: Արարքը իր բովանդակությամբ պարունակում է երրորդ իրավախախտումն էլ՝ 119-րդ II՝ այն տրանսպորտային միջոցի վարումը, որն ունի անսարքին արգելակող համակարգ: Անպայման է արձանագրել բոլոր իրավախախտումները, որոնք կվերաբերվեն պատժին: Նրա սահմանման ժամանակ անպայման կնախատեսվեն 36-րդ հոդվածի պահանջները:

Հոդված 118[1]. Ավտոտրանսպորտային միջոցով երթևեկելիս վարորդի կամ ուղևորի կողմից անվտանգության ամրագոտու չօգտագործումը

Ավտոտրնասպորտային միջոցով երթևեկելիս վարորդի կամ նրա կողքին նստած ուղևորի կողմից անվտանգության ամրագոտու չօգտագործումը կառաջացնի ավտոտրանսպորտային միջոցի տուգանում 40 լարի քանակությամբ:

Նշում՝

1. Այս հոդվածով նախատեսված պատասխանատվությունը չի նշանակվում այն ավտոտրանսպորտային միջոցի վարորդին, որի կառուցվածքը չի նախատեսում անվտանգության գոտիները:

2. Տուգանքի կամավոր իրագործման համար այս օրենսգրքի 290-րդ հոդվածի առաջին մասով սահմանված ժամկետը լրանալուց հետո այս հոդվածով նախատեսված իրավախախտումների համար անձին հաշվեկցվում է տույժ 150 լարի քանակությամբ, իսկ 290-րդ հոդվածի 1[1] մասով նախատեսված ժամկետում տուգանքի և տույժի չվճարման դեպքում, տուգանքը կփոխվի ավտոտրանսպորտային միջոցը վարելու իրավազրկմամբ՝ 1 տարի ժամկետով:

3. Տուգանքի վճարումը կամ տուգանքի փոխումը տրանսպորտային միջոցը վարելու իրավազրկմամբ չի ազատում անձին տույժը վճարելուց:

4. Եթե պարետային ոստիկանը այս հոդվածով նախատեսված իրավախախտման համար դեպքի վայրում չգրի տուգանային չեկ և իրավախախտման այս փաստը արձանագրվի վիդեոֆիրի կամ/և ֆոտոֆիրի վրա, ուրեմն այս հոդվածով նախատեսված տուգանքի վճարումը կփոխանցվի տրանսպորտային միջոցի սեփականատիրոջը, որին տուգանային չեկը կուղարկվի գրանցման տեղին համաձայն: Այս օրենսգրքի 290-րդ առաջին մասով սահմանված ժամկետում

տուգանքը չվճարելու դեպքում սեփականատիրոջը կփոխանցվի տույժ այս հոդվածով նախատեսված համապատասխան չափով: Տույժը հաշվեկցվելուց 30 օրվա ժամկետում տուգանքի և տույժի չվճարելու դեպքում տրանսպորտային միջոցի վաճառքը իրականացվում է տույժի վճարումն ապահովելու նպատակով, Վրաստանի օրենսդրությամբ սահմանված կարգով:

(այս օրենքը կիրառել 2010 թվականի դեկտեմբերի 1-ից):

Կազուս

Թբիլիսի-Բակուրցիխե-Լագոդեխի ավտոմոբիլային ճանապարհին, Պատարձեուլ գյուղի մոտ պարետային հսկիչ-հերթապահի կողմից նկատվեց **BMW**-ի մակնիշի ավտոմեքենա, որի վարորդը զրուցում էր բջջային հեռախոսով: Նա չենթարկվեց ոստիկանի կանգ առնելու պահանջին և մեծ արագությամբ շարունակեց երթեկությունը: Քիչ անց այդ ավտոմեքենան կանգնեցվեց ավտոմոբիլային ճանապարհի 70-րդ կիլոմերտի վրա: Վարորդ Ալեքսանդր Ռոգավան չէր ամրացրել անտվանգության ամրագոտիները:

Առաջին դեպքում Ռոգավան նկատվել էր 118-րդ հոդվածով նախատեսված իրավախախտման մեջ՝ տրանսպորտային միջոցը վարելու ժամանակ օգտագործում էր բջջային հեռախոս, հաջորդ խախտումը նա կատարեց այն ժամանակ, երբ չենթարկվեց պարետային ոստիկանի պահանջին՝ կանգ առնելու վերաբերյալ 123-րդ I, բացի դրանից նա գերազանցեց սահմանված արագությունը, որը համապատասխան սարքավորման վրա արձանագրումից հետո անպայման կսահմանվի որպես իրավախախտում 125-րդ, և վերջում կանգառից հետո պարզվեց, որ ավտոմայրուղով երթևեկելիս նա չէր ամրացրել անվտանգության ամրագոտին: Բոլոր վերոհիշյալ իրավախախտումների նշանները կան նրա արարքում, բայց պատիժ սահմանելիս կնախատեսվեն նաև այլ հանգամանքներ:

Հոդված 118[2]. Մեխանիկական տրանսպորտային միջոցը վարելու ժամանակ վարորդի կողմից բջջային կոմունիկացիայի միջոցից օգտվելը

Մեխանիկական տրանսպորտային միջոցը վարելու ժամանակ վարորդի կողմից բջջային կոմունիկացիայի միջոցից օգտվելը կառաջացնի տուգանքի նշանակում 10լարի քանակությամբ:

Նշում՝

1. Այս հոդվածով նախատեսված պատասխանատվությունը չի փոխանցվում անձին, որը գործում էր «ճանապարհային երթևեկության անվտանգության մասին» Վրաստանի օրենքի 20-րդ հոդվածի 9-րդ կետի „ա[1]“ ենթակետով նախատեսված բացառության դեպքերում:

2. Տուգանքի կամավոր իրագործման համար այս օրենսգրքի 290-րդ հոդվածի առաջին մասով սահմանված ժամկետը լրանալուց հետո այս հոդվածով նախատեսված իրավախախտումների համար անձին հաշվեկցվում է տույժ 150 լարի քանակությամբ, իսկ 290-րդ հոդվածի 1[1] մասով նախատեսված ժամկետում տուգանքի և տույժի չվճարման դեպքում, տուգանքը կփոխվի տրանսպորտային միջոցը վարելու իրավազրկմամբ՝ 1 տարի ժամկետով:

3. Տուգանքի հարկադրաբար վճարումը կամ տուգանքի փոխումը տրանսպորտային միջոցը վարելու իրավազրկմամբ չի ազատում անձին տույժը վճարելուց:

4. Եթե պարետային ոստիկանը այս հոդվածով նախատեսված իրավախախտման փաստի համար դեպքի վայրում չգրի տուգանային չեկ և իրավախախտման այս փաստը արձանագրվի վիդեոֆիրի կամ/և ֆոտոֆիրի վրա, ուրեմն այս հոդվածով նախատեսված տուգանքի վճարումը կփոխանցվի տրանսպորտային միջոցի սեփականատիրոջը, որին տուգանային չեկը կուղարկվի գրանցման տեղին համաձայն: Այս օրենսգրքի 290-րդ առաջին մասով սահմանված ժամկետում

տուգանքը չվճարելու դեպքում սեփականատիրոջը հաշվեկցվում է տույժ այս հոդվածով նախատեսված համապատասխան չափով: Տույժը հաշվեկցվելուց 30 օրվա ժամկետում տուգանքի և տույժի չվճարելու դեպքում տրանսպորտային միջոցի վաճառքը իրականացվում է տույժի վճարումն ապահովելու նպատակով, Վրաստանի օրենսդրությամբ սահմանված կարգով:

Հոդված 118³. Մոտոցիկլով երթեկելիս վարորդի կամ/և ուղևորի կողմից մոտոսաղավարտի չօգտագործում

Մոտոցիկլով երթեկելիս վարորդի կամ/և ուղևորի կողմից մոտոսաղավարտի չօգտագործումը կառաջացնի տուգանքի նշանակում 10 լարի քանակությամբ:

Նշում՝

„1. Տուգանքի կամավոր իրագործման համար այս օրենսգրքի 290-րդ հոդվածի առաջին մասով սահմանված ժամկետը լրանալուց հետո այս հոդվածով նախատեսված իրավախախտումների համար անձին հաշվեկցվում է տույժ 150 լարի քանակությամբ, իսկ 290-րդ հոդվածի 1¹ մասով նախատեսված ժամկետում տուգանքի և տույժի չվճարման դեպքում, տուգանքը կփոխվի տրանսպորտային միջոցը վարելու իրավազրկմամբ՝ 1 տարի ժամկետով:

2. Տուգանքի հարկադրաբար վճարումը կամ տուգանքի փոխումը տրանսպորտային միջոցը վարելու իրավազրկմամբ չի ազատում անձին տույժը վճարելուց:

3. Եթե պարետային ոստիկանը այս հոդվածով նախատեսված իրավախախտման փաստի համար դեպքի վայրում չգրի տուգանային չեկ և իրավախախտման այս փաստը արձանագրվի վիդեոֆիրի կամ/և ֆոտոֆիրի վրա, ուրեմն այս հոդվածով նախատեսված տուգանքի վճարումը կփոխանցվի տրանսպորտային միջոցի սեփականատիրոջը, որին տուգանային չեկը կուղարկվի գրանցման տեղին համաձայն: Այս օրենսգրքի 290-րդ առաջին մասով սահմանված ժամկետում տուգանքը չվճարելու դեպքում սեփականատիրոջը հաշվեկցվում է տույժ այս հոդվածով նախատեսված համապատասխան չափով: Տույժը հաշվեկցվելուց 30 օրվա ժամկետում տուգանքի և տույժի չվճարելու դեպքում տրանսպորտային միջոցի վաճառքը իրականացվում է տույժի վճարումն ապահովելու նպատակով, Վրաստանի օրենսդրությամբ սահմանված կարգով:

Հոդված 119. Տրնասպորտային միջոցի շահագործման կանոնների խախտում

1. Տրանսպորտային միջոցի վարումը անձի կողմից, որը իր հետ չունի՝

ա) վարորդական իրավունք, իսկ վարորդական իրավունքից զրկվելու դեպքում՝ տրանսպորտային միջոցը վարելու ժամանակավոր իրավունք;

բ) տրանսպորտային միջոցի գրանցման փաստաթղթեր՝ կառաջացնի տուգանում 10լարի քանակությամբ:

2. Այն տրանսպորտային միջոցի վարումը, որն ունի անսարքին արգելակող համակարգ, ղեկի կառավարման մեխանիզմ կամ կցորդով հարմարանք, կամ էլ սարքից դուրս է եկել լապտերները, հետևի եզրաչափային լույսերը, օրվա մութ ժամանակ կամ ապակու մաքրիչների մեխանիզմը անձրևի, ձյունաթափի, կամ էլ խախտված է շարժիչի սնուցման համակարգի հերմետիկությունը՝ առաջացնում են տուգանում 15 լարի քանակությամբ:

3. Այն տրանսպորտային միջոցի վարումը, որը արտանետվող ծխի մեջ ունի աղտոտող նյութերի այնպիսի նյութափոխանակություն, որը գերազանցում է սահմանված նորման՝ առաջացնում է տուգանում 30 լարի քանակությամբ:

4. Տրանսպորտային միջոցի շահագործումն իրականացնող իրավական անձի կամ/և անհատ ձեռներեցի կողմից այս հոդվածի 2-րդ և 3-րդ մասերով նախատեսված տեխնիկապես անսարքին տրանսպորտային միջոցի շահագործման ենթարկելը առաջացնում է՝ շահագործումն

իրականացնող իրավական անձի կամ/և անհատ ձեռներեցի տուգանում 100լարի քանակությամբ:

5. Այն տրանսպորտային միջոցի վարումը, որը ինքնակամ է վերասարքավորված (վերասարքավորված է վառելիքի բակ, թափքը կամ տեղադրված է բնական գազի համակարգ, կամ տրանսպորտային միջոցի սարքավորումների օտարում, կառուցվածքի փոփոխություն և դա չի համապատասխանում ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման պահանջները կամ/և արտադրող կազմակերպության ստանդարտներին)՝ առաջացնում է տուգանքի նշանակում 100 լարի քանակությամբ:

6. Տրանսպորտային միջոցի վարումը անձի կողմից առանց այն համապատասխան կարգի վարորդական վկայականի, ինչ տրանսպորտաին միջոց որ նա վարում է առաջացնում է տուգանում 200 լարի քանակությամբ:

7. Այն տրանսպորտային միջոցի վարումը, որի ապակիները մուգացված են առանց Վրաստանի ներքին գործերի նախարարության պարետային ոստիկանության համաձայնության առաջացնում է տուգանում 50 լարի քանակությամբ:

8. Այս հոդվածով նախատեսված իրավախախտումները, որոնց հետևել են տրանսպորտային միջոցի, բեռի, ճանապարհի, ճանապարհային կամ այլ կառույցների, ինչպես նաև այլ գույքի կամ մարդու մարմնական թեթև վնասվածքը առաջացնում են տուգանում 300 լարի քանակությամբ:

Նշում՝

1. Սույն օրենսգրքի 116-րդ, 117-րդ, 118-րդ, 118^1, 118^2, 119-րդ, 120-րդ, 121-րդ, 121^1, 123-րդ, 125-րդ և 127^1 հոդվածներով նախատեսված իրավախախտումների վարորդական վկայականի կամ տրանսպորտային միջոցի գրանցումային փաստաթղթերը չունենալու դեպքում, նախքան խախտողի գործի քննարկումը ժամանակավոր բռնագրավում են տրանսպորտային միջոցը և դա տեղափոխում հատուկ պաշտպանված կայանատեղի: Տրանսպորտը տեղափոխելու և կայանատեղում պահելու ծախսերը հոգում է խախտողը; Տրանսպորտային միջոցը նրա սեփականատիրոջը վերադարձնում են տրանսպորտային միջոցի գրանցման վկայականը կամ հավատարմագիրը ներկայացնելուց հետո: Չի թույլատրվում տրանսպորտային միջոցով տեղաշարժվելը, եթե նա այնպիսի տեխնիկական անսարքին վիճակում է, որի առկայության դեպքում արգելվում է տրանսպորտային միջոցի շահագործումը:

2. Հանված է

3. Այս օրենսգրքում տրանսպորտային միջոց է համարվում բոլոր տեսակի ավտոմոբիլները, տրակտորները և այլ ինքնագնաց մեքենաները, տրամվայը և տրոլեյբուսը, ինչպես նաև մոտոցիկլերը և շարժիչով ընթացող այլ մեխանիկական տրանսպորտային միջոցները (բացի մոպեդից):

4. Տուգանքի կամավոր իրագործման համար այս օրենսգրքի 290-րդ հոդվածի առաջին մասով սահմանված ժամկետը լրանալուց հետո այս հոդվածի 2-րդ, 3-րդ, 4-րդ, 5-րդ և 7-րդ մասերով նախատեսված իրավախախտումների համար անձին հաշվեկցվում է տույժ 150 լարի քանակությամբ, իսկ 290-րդ հոդվածի 1^1 մասով նախատեսված ժամկետում տուգանքի և տույժի չվճարման դեպքում, տուգանքը կփոխվի տրանսպորտային միջոցը վարելու իրավազրկմամբ՝ 1 տարի ժամկետով:

5. Տուգանքի կամավոր իրագործման համար այս օրենսգրքի 290-րդ հոդվածի առաջին մասով սահմանված ժամկետը լրանալուց հետո այս հոդվածի 6-րդ և 8-րդ մասերով նախատեսված իրավախախտումների համար անձին հաշվեկցվում է տույժ 500 լարի քանակությամբ, իսկ 290-րդ հոդվածի 1^1 մասով նախատեսված ժամկետում տուգանքի և տույժի

չվճարման դեպքում, տուգանքը կփոխվի ավտոտրանսպորտային միջոցը վարելու իրավազրկմամբ՝ 2 տարի ժամկետով:

6. Տուգանքի վճարումը կամ տուգանքի փոխումը տրանսպորտային միջոցը վարելու իրավազրկմամբ չի ազատում անձին տույժը վճարելուց:

7. Այս հոդվածի 7-րդ մասով նախատեսված պատասխանատվությունը չի տարածվում այն աձի վրա, որի տրանսպորտային միջոցի ապակիների մուգացումը չի պահանջում Վրաստանի ներքին գործերի նախարարության պարետային ոստիկանության համաձայնությունը:

Կազուս՝

Քութայիսիում Տաբիձե փողոցի վրա պարետային ոստիկանը կանգնեցրեց ավտոմեքենա վազ-2109, որի վարորդին ստուգելու ժամանակ չհայտնաբերվեցին տրանսպորտային միջոցի գրանցման փաստաթղթերը:

Նշված դեպքը պարունակում է 119-րդ հոդվածի I մասի „գ“ կետով նախատեսված դեպքի նշաններ: Սույն հոդվածի նշման I կետին համապատասխան, մինչև գործի քննարկում իրավախախտողին ժամանակավորապես զրկում են տրանսպորտային միջոցից և տեղափոխում այն հատուկ պաշտպանված կայանատեղի, ա/մեքենան տեղափոխելու (եթե հարկ եղավ նրա էվակուատորով տեղափոխելը) և պահելու ծախսերը հոգում է խախտող վարորդը:

Հոդված 119[1]. Ճանապարհի ծածկույթի աղտոտում կամ վնասում

1. Շինարարական կամ այլ տեսակի նյութեր, մնացորդների փոխադրում այնպիսի տրանսպորտային միջոցներով, որոնք ունեն անսարքին բեռնախցիկ կամ կցորդ, որը առաջացնում է ճանապարի ծածկույթը աղտոտելու կամ վնասելու վտանգ:

Առաջացնում է տուգանում 300լարի քանակությամբ:

2. Նույն գործողությունը կրկնակի կատարելիս կառաջացնի տուգանքի նշանակում 900 լարի քանակությամբ (24.07.2006. N3500):

Հոդված 120.Տրանսպորտային միջոցի վրա հատուկ բարձրախոս, լուսային կամ ձայնային սարքավորումների տեղադրման կանոնների խախտումը կամ նրա անտեղի կիրառումը

1. Տրանսպորտային միջոցի վրա հատուկ բարձրաձայն, լուսային կամ ձայնային սարքավորում տեղադրելը առանց Վրաստանի ներքին գործերի նախարարության թույլտվության, կամ էլ օպերատիվ կամ հատուկ ծառայության ավտոմոբիլին հատուկ գունավորման անկանոն կիրառումը, առաջացնում է տուգանքի նշանակում 100 լարի քանակությամբ, ինչպես նաև հատուկ սարքավորումների բռնագրավում:

2. Այս հոդվածի առաջին մասում նշված հատուկ սարքավորումների անտեղի կիրառումը, կամ այսպիսի սարքավորումներով կահավորված տրանսպորտային միջոցի անխոչընդոտ անցման կանոնների խախտում՝ առաջացնում է տուգանքի նշանակում 30լարի քանակությամբ:

3. Այն տրասնպորտային միջոցների երթեկության խոչընդոտումը, որոնց վրա միացված է հատուկ ազդանշաններ, կամ որոնք իրականացնում են շքախմբի ուղեկցումը՝ առաջացնում են տրանսպորտային միջոցի վարորդական իրավունքի զրկում 1 տարի ժամկետով, Վրաստանի տարածքում գտնվող օտարերկրյա քաղաքացու և քաղաքացիություն չունեցող անձի (բացի այն անձից, որը օգտվում է Վրաստանի օրենքների և Վրաստանի միջազգային պայմանագրերի և համաձայնագրերի համաձայն անձեռնմխելիությունից) նկատմամբ տուգանք է նշանակվում 500 լարի քանակությամբ:

4. Այս հոդվածի 2-րդ և 3-րդ մասերով նախատեսված իրավախախտումները, որոնց

հետևում են տրանսպորտային միջոցի, բեռի, ճանապարհային կամ այլ կառույցի, ինչպես նաև գույքի կամ մարդու մարմնական թեթև վնասվածքն՝ առաջացնում է տրասնպորտային միջոցի վարորդական իրավունքի զրկում 1 տարի ժամկետով, Վրաստանի տարածքում գտնվող օտարերկրյա քաղաքացու և քաղաքացիություն չունեցող անձի (բացի այն անձից, որը օգտվում է Վրաստանի օրենքների և Վրաստանի միջազգային պայնմանագրերի և համաձայնագրերի համաձայն անձեռնմխելիությունից) նկատմամբ տուգանք է նշանակվում 500 լարի քանակությամբ:

Նշում՝

1. Հատուկ լուսային սարքավորումի անկանոն տեղադրում է համարվում. այդպիսի սարքավորումի տեղադրումը տրանսպորտային միջոցի վրա կամ նրա խցիկում, ճանապարհային երթևեկության մյուս մասնակիցների համար տեսանելի տեղում Վրաստանի օրենսդրությամբ սահմանված կարգերի խախտմամբ (աշխատող կամ չաշխատող վիճակում):

2. Հատուկ բարձրախոս, լուսային կամ ձայնային սարքավորումների անտեղի կիրառում է համարվում, եթե դրանց կիրառումը կապված չի օպերատիվ կամ հատուկ հնարավորությունից ելնելով պարտականության կատարման հետ:

3. Այս հոդվածի 4-րդ մասով նախատեսված իրավախախտումներ կատարելիս, խախտողի կողմից վնասի կամավոր հատուցման դեպքում, եթե տուժողը չի բողոքարկել վարչական իրավախատման գործում ընդունած որոշումը, գործը քքնարկող մարմինը կարող է տրանսպորտային միջոցի վարելու իրավունքից զրկումը փոխել տուգանքի նշանակմամբ 500 լարի քանակությամբ:

4. Տուգանքի կամավոր իրագործման համար այս օրենսգրքի 290-րդ հոդվածի առաջին մասով սահմանված ժամկետը լրանալուց հետո այս հոդվածի 3-րդ և 4-րդ մասերով նախատեսված իրավախախտումների, ինչպես նաև այս հոդվածի նշումի 3-րդ մասով սահմանված կարգով, համար անձին հաշվեկցվում է տույժ 500 լարի քանակությամբ, իսկ 290-րդ հոդվածի 1^1 մասով նախատեսված ժամկետում տուգանքի և տույժի չվճարման դեպքում, տուգանքը կփոխվի տրանսպորտային միջոցը վարելու իրավազրկմամբ՝ 2 տարի ժամկետով:

5. Տուգանքի կամավոր իրագործման համար այս օրենսգրքի 290-րդ հոդվածի առաջին մասով սահմանված ժամկետը լրանալուց հետո այս հոդվածի առաջին և 2-րդ մասերով նախատեսված իրավախախտումների համար անձին հաշվեկցվում է տույժ 150 լարի քանակությամբ, իսկ 290-րդ հոդվածի 1^1 մասով նախատեսված ժամկետում տուգանքի և տույժի չվճարման դեպքում, տուգանքը կփոխվի տրանսպորտային միջոցը վարելու իրավազրկմամբ՝ 1 տարի ժամկետով:

6. Տուգանքի վճարումը կամ տուգանքի փոխումը տրանսպորտային միջոցը վարելու իրավազրկմամբ չի ազատում անձին տույժը վճարելուց:

7. Եթե պարետային ոստիկանը այս հոդվածի 2-րդ, 3-րդ և 4-րդ մասերով նախատեսված իրավախախտման որևէ փաստի համար դեպքի վայրում չգրի տուգանային չեկ և իրավախախտման այս փաստը արձանագրվի վիդեոֆիրի կամ/և ֆոտոֆիրի վրա, ուրեմն այս հոդվածով նախատեսված տուգանքի վճարումը կփոխանցվի տրանսպորտային միջոցի սեփականատիրոջը, որին տուգանային չեկը կուղարկվի գրանցման տեղին համաձայն: Այս օրենսգրքի 290-րդ առաջին մասով սահմանված ժամկետում տուգանքը չվճարելու դեպքում սեփականատիրոջը հաշվեկցվում է տույժ այս հոդվածով նախատեսված համապատասխան չափով: Տույժը հաշվեկցվելուց 30 օրվա ժամկետում տուգանքի և տույժի չվճարելու դեպքում տրանսպորտային միջոցի վաճառքը իրականացվում է տույժի վճարումն ապահովելու նպատակով, Վրաստանի օրենսդրությամբ սահմանված կարգով:

Հոդված 121. Տրանսպորտային միջոցի վարումը այն անձի կողմից,որը չունի վարելու իրավունք կամ այս իրավունքից զրկել են այլ խախտումների համար , կամ էլ վարելու նպատակով տրանսպորտային միջոցի փոխանցումը անչափահասին կամ այն անձին, որը չունի վարելու իրավունք կամ այս իրավունքից զրկվել է այլ խախտումների համար (28.04.2006. N2962):

1. Տրանսպորտային միջոցի վարումը այն անձի կողմից, որը չունի վարելու իրավունք կամ այս իրավունքից զրկել են այլ խախտումների համար՝ առաջացնում է տրանսպորտային միջոցի շահագործումն իրականացնող անձի տուգանում 200 լարի քանակությամբ:

1^1. Հանված է (25.12.2009. N2456)

2. Տրանսպորտային միջոցը վարելու նպատակով փոխանցումը անչափահասին կամ այն անձին, որը չունի վարելու իրավունք կամ այս իրավունքից զրկվել է այլ խախտումների համար, առաջացնում է տրանսպորտային միջոցի սեփականատիրոջ տուգանում 200 լարի քանակությամբ:

3. Այս հոդվածի առաջին կամ 2-րդ մասերով նախատեսված իրավախախտումները, որոնց հետևում են տրանսպորտային միջոցի, բեռի, ճանապարհի, ճանապարհային թե այլ կառույցի, ինչպես նաև այլ գույքի կամ մարդու մարմնական թեթև վնասվածք առաջացնում են՝ տուգանում 400 լարի քանակությամբ:

4. Այս հոդվածով նախատեսված իրավախախտումները տարվա ընթացքում կրկնակիորեն գործելու դեպքում առաջացնում է տուգանքի նշանակում 500 լարի սահմաններում կամ վարչական կալանավորման մինչև 90 օր (25.12.2009. N2456):

Նշում՝

1. Տուգանքի կամավոր իրագործման համար այս օրենսգրքի 290-րդ հոդվածի առաջին մասով սահմանված ժամկետը լրանալուց հետո այս հոդվածով նախատեսված իրավախախտումների, ինչպես նաև այս հոդվածի նշումի 3-րդ մասով սահմանված կարգով, համար անձին հաշվեկցվում է տույժ 500 լարի քանակությամբ, իսկ 290-րդ հոդվածի 1^1 մասով նախատեսված ժամկետում տուգանքի և տույժի չվճարման դեպքում, տուգանքը կփոխվի տրանսպորտային միջոցը վարելու իրավազրկմամբ՝ 2 տարի ժամկետով:

2. Այս հոդվածով նախատեսված իրավախախտումներ կատարելիս, երբ անձը չունի տրանսպորտային միջոց վարելու իրավունք, նա վարելու իրավունքի ընդունելության քննությանը կմասնակցի նշանակված տուգանքը վճարելուց հետո:

3. Տուգանքի վճարումը կամ տուգանքի փոխումը տրանսպորտային միջոցի վարելու իրավազրկմամբ չի ազատում անձին տույժը վճարելուց:

Կացուս՝

Գոդերձի Կիղուրաձեն իր որդուն՝ Շալվա Կիղուրաձեին, որը չուներ վարելու իրավունք, տվեց սեփական ավտոմեքենան հարևան գյուղ գնալու համար: Շալվա Կիղուրաձեին կանգնեցրեց պարետային ոստիկանը:

Տվյալ դեպքում Գոդերձի Կիղուրաձեն գործեց 121-րդ հոդվածի II մասով նախատեսված իրավախախտում, որը նշվում է նրա նկատմամբ կազմած վարչական իրավախախտումների արձանագրությունում, բայց մեր ուշադրությունից չպետք է վրիպի նաև այն հանգամանքը, որ եթե Շալվա Կիղուրաձեն վարչական իրավախախտում գործելու պահին տասնվեց տարեկան չէր, ուրեմն դրվում է նրա պատասխանատվության հարցը ևս 121-րդ հոդվածի I մասին համապատասխան:

Կազուս՝

Քաղաքացի Գիորգի Ձնելաձեն սրտի նոպայով վատացավ, քանի, որ շտապ բուժօգնության հետ չկարողացան կապնվել, Գիորգիի կինը խնդրեց հարևան՝ Կախա Գաբիսկիրիային իրենց սեփական ավտոմեքենայով հիվանդին բժկական ստացիոնար տեղափոխել: Կախան բացատրեց Գիորգիի կնոջը, որ ինքը չուներ վարորդական վկայական, չնայած, որ երկրորդ անգամ խնդրելուց հետո համաձայնեց և նստեց ավտոմեքենայի ղեկին: Արագությունը գերազանցելու համար ավտոմոբիլային ճանապարհի հատվածներից մեկում նա չկարողացավ հպատակեցնել ղեկը, անցավ հանդիպակաց կողմը և ընդհարվեց այնտեղից երթևեկող միկրոավտոբուսին: Պատահարի արդյունքում մարմնական տարբեր վնասվածքներ ստացան երկու տրանսպորտային միջոցների ուղևորները:

Դրությունը տվյալ դեպքում իրոք լուրջ է, իհարկե ունենք մի քանի իրավախախտումների նշաններ, 121-րդ հոդվածի I մասով՝ տրանսպորտային միջոցի վարումը առանց վարորդական վկայականի, արագության գերազանցում, որին հետևեց ճանապարհատրանսպորտային պատահար 125-րդ III, իսկ եթե ճանապարհատրանսպորտային պատահարի արդյունքում արձանագրվեր առողջության ծանր վնասվածք, ապա կունենայինք հանցանքի նշաններ և գործը քննարկող մարմինը (պաշտոնատար անձը) դա պետք է փոխանցեր հետաքննական մարմիններին:

Հոդված 121[1]. Տրանսպորտային միջոցի վարորդական վկայականի անօրեն կիրառումը

Տրանսպորտային միջոցի վարորդի կողմից առաջում կորցրած, վնասված կամ դրա փոխարեն տրված վարորդական վկայականների միաժամանակ օգտագործումը, կամ/և անձի կողմից վարելու վկայականի կորստի, վնասվելու կամ ոչնչացման մասին իրավասու մարնին սուտ տեղեկություն տալը փոխարենը վարդորդական վկայական ստանալու նպատակով՝ առաջացնում է տուգանում 150 լարի քանակությամբ:

Նշում՝

1. Տուգանքի կամավոր իրագործման համար այս օրենսգրքի 290-րդ հոդվածի առաջին մասով սահմանված ժամկետը լրանալուց հետո այս հոդվածով նախատեսված իրավախախտումների համար անձին հաշվեկցվում է տույժ 500 լարի քանակությամբ, իսկ 290-րդ հոդվածի 1[1] մասով նախատեսված ժամկետում տուգանքի և տույժի չվճարման դեպքում, տուգանքը կփոխվի տրանսպորտային միջոցը վարելու իրավազրկմամբ՝ 2 տարի ժամկետով:

2. Տուգանքի հարկադրաբար վճարումը կամ տուգանքի վերափոխումը տրանսպորտային միջոցը վարելու իրավազրկմամբ չի ազատում անձին տույժը վճարելուց:

Հոդված 122. Տրանսպորտային միջոցի վարումը առանց պետական համարանշանով կամ տրանսպորտային միջոցի գրանցման համար սահմանված կանոնների խախտմամբ

1. տրանսպորտային միջոցի վարումը առանց պետական համարանիշի նախնական գիտակցությամբ, կամ այլ կերպ փոխած պետական համարանշով, կամ տրանսպորտային միջոցի ապակու վրա ամրացված պետական համարանշանով՝ առաջացնում է տուգանում 100 լարի քանակությամբ:

2. տրանսպորտային միջոցի վարումը գրանցման համար սահմանված կանոնների խախտմամբ՝ առաջացնում է տուգանքի նշանակում 300 լարի քանակությամբ:

3. տրանսպորտային միջոցների վարումը նախնական գիտակցությամբ ուրիշի կամ դիմակավորված պետական համարանշով՝ առաջացնում է տուգանքի նշանակում 500 լարի քանակությամբ:

Նշում՝

1. Այս հոդվածի առաջին և 3րդ մասերով նախատեսված իրավախախտումներ կատարելու դեպքում (բացի տրանսպորտային միջոցի ապակու վրա ամրացված պետական համարանշով տրանսպորտային միջոցի վարումից, եթե առկա չէ հիմնովի կասկած պետական համարանիշը փոխելու մասին) մինչև գործի քննարկումը խախտողը ժամանակավորապես զրկվում է տրանսպորտային միջոցից, դա տեղափոխվում է հատուկ պաշտպանված հրապարակ: Տրանսպորտի տեղափոխման և հրապարակում պահելու ծախսերը հոգում է խախտողը: Տրանսպորտային միջոցը իր տիրոջը կվերադառնա գրանցումային վկայականը կամ հավատարմագիրը ներկայացնելուց հետո:

2. Այս հոդվածի 2-րդ մասով նախատեսված իրավախախտումը կատարեու դեպքում կազմվում է վարչական իրավախախտման արձանագրություն և խախտողին տրվում է կազմած օրինակի տեղեկանք, որի գործման ժամկետում տրանսպորտային միջոցի վարորդը պիտի գրանցի տրանսպորտային միջոցը: Տրանսպորտային միջոցը չգրանցելու դեպքում արգելվում է տրանսպորտային միջոցի շահագործումը:

3. Այս հոդվածի նշումի 2-րդ կետում նշված տեղեկանքի ձևն ու նրա լրացնելու կարգը հաստատում է Վրաստանի ներքին գործերի նախարարը:

„4. Տուգանքի կամավոր իրագործման համար այս օրենսգրքի 290-րդ հոդվածի առաջին մասով սահմանված ժամկետը լրանալուց հետո այս հոդվածի առաջին մասով նախատեսված իրավախախտումների համար անձին հաշվեկցվում է տույժ 150 լարի քանակությամբ, իսկ 290-րդ հոդվածի 1^1 մասով նախատեսված ժամկետում տուգանքի և տույժի չվճարման դեպքում, տուգանքը կփոխվի տրանսպորտային միջոցը վարելու իրավազրկմամբ՝ 1 տարի ժամկետով:

5. Տուգանքի կամավոր իրագործման համար այս օրենսգրքի 290-րդ հոդվածի առաջին մասով սահմանված ժամկետը լրանալուց հետո այս հոդվածի 2-րդ և 3-րդ մասերով նախատեսված իրավախախտումների համար անձին հաշվեկցվում է տույժ 500 լարի քանակությամբ, իսկ 290-րդ հոդվածի 1^1 մասով նախատեսված ժամկետում տուգանքի և տույժի չվճարման դեպքում, տուգանքը կփոխվի տրանսպորտային միջոցը վարելու իրավազրկմամբ՝ 2 տարի ժամկետով:

6. Տուգանքի հարկադրաբար վճարումը կամ տուգանքի փոխումը տրանսպորտային միջոցը վարելու իրավազրկմամբ չի ազատում անձին տույժը վճարելուց:

7. Եթե պարետային ոստիկանը այս հոդվածով նախատեսված իրավախախտման որևէ փաստի համար դեպքի վայրում չգրի տուգանային չեկ և իրավախախտման այս փաստը արձանագրվի վիդեոֆիրի կամ/և ֆոտոֆիրի վրա, ուրեմն այս հոդվածով նախատեսված տուգանքի վճարումը կփոխանցվի տրանսպորտային միջոցի սեփականատիրոջը, որին տուգանային չեկը կուղարկվի գրանցման տեղին համաձայն: Այս օրենսգրքի 290-րդ առաջին մասով սահմանված ժամկետում տուգանքը չվճարելու դեպքում սեփականատիրոջը հաշվեկցվում է տույժ այս հոդվածով նախատեսված համապատասխան չափով: Տույժը հաշվեկցվելուց 30 օրվա ժամկետում տուգանքի և տույժի չվճարելու դեպքում տրանսպորտային միջոցի վաճառքը իրականացվում է տույժի վճարումն ապահովելու նպատակով, Վրաստանի օրենսդրությամբ սահմանված կարգով:

Հոդված 123. Ճանապարհատրանսպորտային պատահարի վայրը լքելը կամ տրանսպորտային միջոցը կանգնեցնելու վերաբերյալ ոստիկանի պահանջի չկատարումը

1. Տրանսպորտային միջոցը կանգնեցնելու մասին ճանապարհային երթևեկությունն ապահովող և ճանապարհային երթևեկության կանոնների պաշտպանումը հսկող ոստիկանի

պահանջի չարամտորեն չկատարելը, կամ ճանապարհատրանսպորտային պատահարին մասնակից վարորդի դեպքի վայրը լքելը, առաջացնում է տուգանքի նշանակում 300 լարի քանակությամբ կամ տրանսպորտային միջոցը վարելու իրավունքից զրկմամբ 1 տարի ժամկետով:

2. Այս հոդվածի առաջին մասով նախատեսված իրավախախտումները, որոնց հաջորդում են վթարային իրավիճակի ստեղծում կամ երթևեկության խոչընդոտում, առաջացնում են տուգանքի նշանակում 500 լարի քանակությամբ կամ վարչական կալանավորում մինչև 90 օր ժամկետով կամ վարելու իրավունքի զրկում 2տարի ժամկետով *(17.07.2009 N 1505):*

Նշում՝

1. Տուգանքի կամավոր իրագործման համար այս օրենսգրքի 290-րդ հոդվածի առաջին մասով սահմանված ժամկետը լրանալուց հետո այս հոդվածով նախատեսված իրավախախտումների համար անձին հաշվեկցվում է տույժ 500 լարի քանակությամբ, իսկ 290-րդ հոդվածի 1[1] մասով նախատեսված ժամկետում տուգանքի և տույժի չվճարման դեպքում, տուգանքը կփոխվի տրանսպորտային միջոցը վարելու իրավազրկմամբ՝ 2 տարի ժամկետով (*22.7.007 N 5027):*

2. Տուգանքի վճարումը կամ տուգանքի վերափոխումը տրանսպորտային միջոցը վարելու իրավազրկմամբ չի ազատում անձին տույժը վճարելուց:

3. Եթե պարետային ոստիկանը այս հոդվածով նախատեսված իրավախախտման որևէ փաստի համար դեպքի վայրում չգրի տուգանային չեկ և իրավախախտման այս փաստը արձանագրվի վիդեոֆիրի կամ/և ֆոտոֆիրի վրա, ուրեմն այս հոդվածով նախատեսված տուգանքի վճարումը կփոխանցվի տրանսպորտային միջոցի սեփականատիրոջը, որին տուգանային չեկը կուղարկվի գրանցման տեղին համաձայն: Այս օրենսգրքի 290-րդ առաջին մասով սահմանված ժամկետում տուգանքը չվճարելու դեպքում սեփականատիրոջը հաշվեկցվում է տույժ այս հոդվածով նախատեսված համապատասխան չափով: Տույժը հաշվեկցվելուց 30 օրվա ժամկետում տուգանքի և տույժի չվճարելու դեպքում տրանսպորտային միջոցի վաճառքը իրականացվում է տույժի վճարումն ապահովելու նպատակով, Վրաստանի օրենսդրությամբ սահմանված կարգով*(8.05.2007 N4707):*

4. Այս հոդվածով նախատեսված իրավախախտման դեպքում առանձնահատուկ հանգամանքներ բացահայտվելիս գործը քննարկող մարմինը կարող է տրանսպորտային միջոցը վարելու իրավունքից զրկելը փոխել տուգանքի նշանակմամբ 500 լարի քանակությամբ:

Հոդված 125. Տրանսպորտային միջոցի վարորդի ճանապարհային երթևեկության կանոնների խախտումը (28.04.2006. N2962)

1. Տրանսպորտային միջոցի վարորդի կողմից երթևեկության սահմանված արագության գերազանցում 15 կմ/ժ ավելի արագությամբ՝ առաջացնում է տուգանքի նշանակում 100 լարի քանակությամբ:

2. Այս հոդվածի առաջին մասով նախատեսված իրավախախտումը կատարված տեղական քաղաքային ռեգուլար ուղևորային փոխադրումն իրականացնող անձի կողմից՝ առաջացնում է վարորդի իրավունքից զրկում մեկ ամիս ժամկետով:

3. Այս հոդվածի առաջին մասով նախատեսված իրավախախտումը, կատարված Վրաստանի միջազգային պայմանագրերով կամ համաձայնագրերով սահմանված միջազգային ռեգուլար ուղևորային փոխադրումն իրականացնող անձի կողմից, առաջացնում է տուգանքի նշանակում 300 լարի քանակությամբ:

4. Այս հոդվածի առաջին մասով նախատեսված իրավախախտումը, որին հաջորդել է վթարային իրավիճակի ստեղծում կամ խոչընդոտել է երթևեկությանը, առաջացնում է տուգանքի նշանակում 250 լարի քանակությամբ:

5. Այս հոդվածի առաջին մասով նախատեսված իրավախախտումը, որին հաջորդել է տրանսպորտային միջոցի, բեռի, ճանապարհի,ճանապարհային կամ այլ կառույցների, ինչպես նաև գույքի կամ մարդու մարմնական թեթև վնասվածքներ՝ առաջացնում են տրանսպորտային միջոցի վարելու իրավունքից զրկում 1 տարի ժամկետով, Վրաստանի տարածքում գտնվող օտարերկրյա քաղաքացու և քաղաքացիություն չունեցող անձի (բացի այն անձից, որը օգտվում է Վրաստանի օրենքների և Վրաստանի միջազգային պայնմանագրերի և համաձայնագրերի համաձայն անձեռնմխելիությունից) նկատմամբ տուգանք է նշանակվում 500 լարի քանակությամբ:

6. Հետիոտնային անցումն անցնելուն, ճանապարհի երթևեկելի մասին տրանսպորտային միջոցների դասավորվածության, ճանապարհային նշանի կամ ճանապարհի երթևեկելի մասի գծանշման գծերի, քարշակման, արտաքին լուսային սարքավորումից կամ ձայնային ազդանշանից օգտվելու, երթևեկության սկզբի և մանևրումի, ուսումնական վարումի, բնակելի գոտում կամ ավտոմայրուղով երթևեկելու կանոնների կամ էլ երթուղային տրանսպորտային միջոցի երթևեկության առավելության խախտումը, ինչպես նաև մոտոցիկլով կամ այլ տրանսպորտային միջոցով խմբային երթևեկության մեջ մասնակցությունը քաղաքում կամ այլ բնակելի գոտում, ինչը խոչընդոտում է ճանապարհային երթևեկությանը կամ վտանգ է առաջացնում երթևեկության անվտանգությանը, առաջացնում է տուգանքի նշանակում 20 լարի քանակությամբ:

6[1]. Ավտոտրանսպորտային միջոցներով կազմակերպված կամ խմբային երթևեկության մեջ մասնակցությունը քաղաքում կամ այլ բնակելի գոտում այն ժամանակ, երբ ճանապարհի երթևեկելի մասը ամբողջովին զբաղված է, առաջացնում է վարելու իրավունքի զրկում 2 տարի ժամկետով *(17.07.2009 N 1505):*

7. Կարգավորողի կամ լուսացույցի արգելող նշանով անցակարգի, առավելության („Զիջեք ճանապարհը“, „Երթևեկությունն առանց կանգառի արգելվում է“) կամ արգելող („Մուտքն արգելված է“, „Երթևեկությունն արգելված է“) նշանների պահանջները չպաշտպանելը, հանդիպակաց տրանսպորտային հոսքի բաժանարար հոծ առանցքային գծի հատումը, վազանցի, խաչմերուկի, երկաթգծային անցումն անցնելու կանոնների խախտումը, անցման առավելությունն ունեցող տրանսպորտային միջոցի համար արգելքի ստեղծումը, առաջացնում է տուգանում 50 լարի քանակությամբ:

8. Արգելող նշանի „Կանգառն արգելված է“ և „Կայանումն արգելված է“ պահանջի չպաշտպանումը՝ *(30.12.2008 N 956) առաջացնում է* 10 լարի քանակությամբ:

9. Այս հոդվածի 6-րդ, 7-րդ և 8-րդ մասերով նախատեսված իրավախախտումները, որոնց հաջորդել են վթարային իրավիճակի ստեղծում կամ երթևեկության խոչընդոտում, կամ հանդիպակաց տրանսպորտային հոսքի բաժանարար հոծ առանցքային գծի հատումը, որը խցանում է առաջացրել, առաջացնում է տուգանքի նշանակում 100 լարի քանակությամբ:

10. Այս հոդվածի 6-րդ, 7-րդ և 8-րդ մասերով նախատեսված իրավախախտումները, որոնց հաջորդել են տրանսպորտային միջոցի, բեռի, ճանապարհի, ճանապարհային կամ այլ կառույցների, ինչպես նաև գույքի կամ մարդու մարմնական թեթև վնասվածք, առաջացնում է 250 լարի քանակությամբ:

Նշում՝

1. Լքված տրանսպորտային միջոցը տեղափոխում են հատուկ պաշտպանված կայանատեղի կամ իրագործում տրանսպորտային միջոցի անիվների մեկուսացում հատուկ

միջոցներով, եթե արգելող նշանի հետ է կիրառված նաև համատասխան նշումը; տեղափոխման և կայնատեղում պահելու ծախսերը հոգում է խախտողը: Տրանսպորտային միջոցը տիրոջը (տիրապետողին) կվերադարձվի տեղափոխման և կայանատեղում պահելու ծախսերի վճարումը հաստատող փաստաթուղթ, տրանսպորտային միջոցի գրանցման վկայական կամ հավատարմագիր ներկայացնելուց հետո: Եթե տրանսպորտային միջոցը կայանատեղի տեղափոխելը անհնար է, տրանսպորտային միջոցի վարորդին բացահայտելուց հետո խախտողին ներկայացնում են տուգանք այս օրենսդրությամբ սահմանված կարգով:

2. Այս հոդվածի 5-րդ մասով նախատեսված իրավախախտում կատարելիս խախտողի կողմից վնասի կամավոր հատուցման դեպքում, եթե տուժողը չբողոքարկի վարչական իրավախախտման գործում կայացրած որոշումը, գործը քննարկող մարմինը կարող է տրանսպորտային միջոցը վարելու իրավունքից զրկելը փոխարինել 500 լարի քանակությամբ տուգանքով:

2[1]. Այս հոդվածի 6[1]-րդ մասով նախատեսված իրավախախտման դեպքում առանձնահատուկ հանգամանքներ բացահայտվելիս գործը քննարկող մարմինը կարող է տրանսպորտային միջոցը վարելու իրավունքից զրկելը փոխարինել 500 լարի քանակությամբ տուգանքով:

3. Տուգանքի կամավոր իրագործման համար այս օրենսգրքի 290-րդ հոդվածի առաջին մասով սահմանված ժամկետը լրանալուց հետո այս հոդվածի 3-րդ, 4-րդ, 5-րդ և 10-րդ մասերով նախատեսված իրավախախտումների համար, ինչպես նաև այս հոդվածի նշման 2-րդ մասով նախատեսված դեպքերում անձին հաշվեկցվում է տույժ 500 լարի քանակությամբ, իսկ 290-րդ հոդվածի 1[1] մասով նախատեսված ժամկետում տուգանքի և տույժի չվճարման դեպքում, տուգանքը կփոխվի տրանսպորտային միջոցը վարելու իրավազրկմամբ՝ 2 տարի ժամկետով:

4. Տուգանքի կամավոր իրագործման համար այս օրենսգրքի 290-րդ հոդվածի առաջին մասով սահմանված ժամկետը լրանալուց հետո այս հոդվածի առաջին 6-րդ, 7-րդ, 8-րդ և 9-րդ մասերով նախատեսված իրավախախտումների համար անձին հաշվեկցվում է տույժ 150 լարի քանակությամբ, իսկ 290-րդ հոդվածի 1[1] մասով նախատեսված ժամկետում տուգանքի և տույժի չվճարման դեպքում, տուգանքը կփոխվի տրանսպորտային միջոցը վարելու իրավազրկմամբ՝ 1 տարի ժամկետով:

4[1]. Այս հոդվածի 8-րդ մասով նախատեսված դեպքերում տիրապտողին չբացահայտելիս պատասխանատվության է ենթարկվում ավտոտրանսպորտի սեփականատերը *(30.12.2008 N 956)*

4[2]. Եթե այս հոդվածի 8-րդ մասով նախատեսված տուգանքի կամավոր իրագործման համար տեղական ինքնակառավարման մարմնի համապատասխան ծառայության կամ նրանց կողմից իրավասու ֆիզիկական կամ/և իրավական անձի կողմից արձանագրությունը կազմելուց այս օրենսգրքի 290-րդ հոդվածի առաջին մասով սահմանված ժամկետը լրանալուց հետո անձին հաշվեկցվում է տույժ 150 լարի քանակությամբ: Տույժը հաշվեկցվելուց 30 օր ժամկետում տուգանքի և տույժի չվճարելու դեպքում տրանսպորտային միջոցի վաճառքը իրականացվում է տուգանքի և տույժի վճարումն ապահովելու նպատակով, Վրաստանի օրենսդրությամբ սահմանված կարգով : *(30.12.2008 N 956)*

5. Տուգանքի վճարումը կամ տուգանքի վերափոխումը տրանսպորտային միջոցը վարելու իրավազրկմամբ չի ազատում անձին տույժը վճարելուց:

6. . Եթե պարետային ոստիկանը այս հոդվածով նախատեսված իրավախախտման որևէ փաստի համար դեպքի վայրում չգրի տուգանային չեկ և իրավախախտման այս փաստը արձանագրվի վիդեոֆիրի կամ/և ֆոտոֆիրի վրա, ուրեմն այս հոդվածով նախատեսված

տուգանքի վճարումը կփոխանցվի տրանսպորտային միջոցի սեփականատիրոջը, որին տուգանային չեկը կուղարկվի գրանցման տեղին համաձայն: Այս օրենսգրքի 290-րդ առաջին մասով սահմանված ժամկետում տուգանքը չվճարելու դեպքում սեփականատիրոջը հաշվեկցվում է տույժ այս հոդվածով նախատեսված համապատասխան չափով: Տույժը հաշվեկցվելուց 30 օր ժամկետում տուգանքի և տույժի չվճարելու դեպքում տրանսպորտային միջոցի վաճառքը իրականացվում է տույժի վճարումն ապահովելու նպատակով, Վրաստանի օրենսդրությամբ սահմանված կարգով: *(8.05.2007 N4707)*

Կազուս՝

Ավտոմեքենա մերսեդեսի վարորդը՝ Պետրե Կոմբալաձեն, Ռուսթավելու պողոտայով երթևեկելիս հատեց հանդիպակաց տրանսպորտային հոսքը բաժանող հոծ առանցքային գիծը: Որի արդյունքում վնասեց հանդիպակաց ուղղությամբ երթևեկող օպելի հետևի ձախ թևը: Կոմբալաձեն չկանգնեցրեց ավտոմքենան և արագությունը ավելացնելով՝ շարունակեց ընթացքը նպատակադրված ուղղությամբ: Քիչ անց նա բռնվեց պարետային ոստիկանի կողմից:

Այս դեպքում Կոմբալաձեն գործեց մի քանի իրավախախտում: 125-րդ հոդվածի VII մասով, այսինքն՝ հանդիպակաց տրանսպորտային հոսքը բաժանող հոծ առանցքային գծի հատում, որին հաջորդեց տրանսպորտային միջոցի թեթև վնասվածք, ինչպես նաև 123-ի II ճանապարհատրանսպորտային պատահարին մասնակից վարորդի դեպքի վայրը լքելու արաքի մեջ սահմանված արագության գերազանցման նշաններ կան, չնայած որ մեղավոր ճանաչման համար անհրաժեշտ է նրա արձանագրումը տեխնիկական միջոցով (ռադարով):

Հոդված 125[2]. Մայրաքաղաքի տարածքում ավտոտրանսպորտի կայանման կանոնների խախտումը *(8.06.2007 N4917)*

1. Մայրաքաղաքի տարածքում՝ կայանման տեղում, ավտոտրանսպորտի կայանման համար համար ինքնակառավարման միավորի կողմից սահմանված վարձը առանց չվճարելու ավտոտրանսպորտի կայանումը կառաջացնի տուգանքի նշանակում 10 լարի քանակությամբ, ինչպես նաև այն ավտոտրանսպորտը, որը մայրաքաղաքի տարածքում՝ կայանատեղում կանգնած է 12ժամից ավելի ժամանակով, տեղական ինքնակառավարման համպատասխան մարմնի կամ նրա կողմից իրավասու անձը կտեղափոխի հատուկ պաշտպանված կայանատեղի, եթե դրա մասին նշում կար կայանման նշանը: Տեղափոխման և կայանատեղում մնալու ծախսերը տուգանքի հետ համատեղ հոգում է խախտող վարորդը կամ ավտոտրանսպորտի սեփականատերը:(20.10.2009. N1812)

2. Հանված է (20.10.2009. N1812)

3. Հանված է (20.10.2009. N1812)

4. Հանված է (20.10.2009. N1812)

5. Հանված է ՝ (20.10.2009. N1812)

6. 6. Մայրաքաղաքի տարածքում տեղական ինքնակառավարման մարմնի սահմանած ավտոտրանսպորտի կայանման կանոնների և այլ խախտումները առաջացնում են տուգանում 10 լարի քանակությամբ, ինչպես նաև տեղական ինքնակառավարման մարմինը կամ նրա կողմից իրավասու անձը ավտոտրանսպորտը կտեղափոխի հատուկ կայանատեղի կամ հատուկ միջոցներով նրա անիվները կմեկուսացնի, եթե դրա մասին նշումը կպցված է կայանման նշանին: Հատուկ կայանատեղի փոխադրելը թույլատրելի է, եթե ավտոտրանսպորտը խոչընդոտում է ճանապարհային երթևեկությանը կամ վտանգ է ստեղծում երթևեկության անվտանգությանը: Տեղափոխման և կայանատեղում մնալու ծախսերը տուգանքի հետ համատեղ հոգում է խախտող վարորդը կամ ավտոտրանսպորտի սեփականատերը: (20.10.2009. N1812)

Նշում՝ *(30.12.2008 N 956)*

1. Այն դեպքում, եթե տրանսպորտային միջոցը տեղափոխվի հատուկ պաշտպանված կայանատեղի, տրանսպորտային միջոցը տիրոջը կամ տիրապետողին կվերադարձվի տեղափոխման և կայանատեղում պահելու ծախսերի վճարումը հաստատող փաստաթուղթ, ավտոտրանսպորտային միջոցի գրանցման վկայական կամ հավատարմագիր ներկայացնելուց հետո:

2. Այս հոդվածով նախատեսված դեպքերում տիրապետողին չբացահայտելիս պատասխանատվության է ենթարկվում ավտոտրանսպորտի սեփականատերը:

3. Այս հոդվածով նախատեսված տուգանքի կամավոր իրագործման համար այս օրենսգրքի 290-րդ հոդվածի առաջին մասով սահմանված ժամկետը լրանալուց հետո անձին հաշվեկցվում է տույժ 150 լարի քանակությամբ: Տույժը հաշվեկցվելուց 30 օր ժամկետում տուգանքի և տույժի չվճարելու դեպքում տրանսպորտային միջոցի վաճառքը իրականացվում է տուգանքի և տույժի վճարումն ապահովելու նպատակով, Վրաստանի օրենսդրությամբ սահմանված կարգով

Հոդված 125[3]. Ինքնակառավարվող քաղաքի՝ Բաթումի տարածքում ավտոտրանսպորտի կայանման կանոնների խախտումը

1. **Ինքնավար քաղաքի՝ Բաթումի տարածքում** ինքնակառավարման միավորի կողմից սահմանված կայանման կազմակերպման կանոնների խախտումը առաջացնում է տուգանում 100 լարի քանակությամբ, իսկ իրավական անձի դեպքում՝ 200 լարի քանակությամբ:

2. Այս հոդվածի առաջին մասով նախատեսված տուգանքը ներկայացնելուց հետո երկու օրվա ընթացքում իրավախախտման անուղղելիությունը կառաջացնի ֆիզիկական անձի տուգանում 200 լարի քանակությամբ, իսկ իրավական անձի՝ 400 լարի քանակությամբ:

3. Այս հոդվածի առաջին և 2-րդ մասերով նախատեսված տուգանքները կամավոր չվճարելու դեպքում այս օրենսգրքի 290-րդ հոդվածի առաջին մասով սահմանված ժամկետն անցնելուց հետո անձին հաշվեկցվում է տույժ ներկայացված տուգանքի ամբողջ քանակությամբ:

4. Ինքնակառավարվող քաղաքի՝ Բաթումի տարածքում կայանման տեղի ավտոտրանսպորտի կայանման համար ինքնակառավարման միավորի կողմից սամանված վարձը առանց վճարելու ավտոտրանսպորտային միջոցի կայանումը՝ առաջացնում է տուգանում 10 լարի քանակությամբ:

5. Ավտոտրանսպորտային միջոցի տիրապետողի կամ/և սեփականաիրոջ կողմից ինքնակառավարվող քաղաքի՝ Բաթումի տարածքում կայանատեղի կանոնների այլ խախտումն, առաջացնում է տուգանքի նշանակում 10 լարի քանակությամբ:

6. Այս հոդվածի 4-րդ և 5-րդ մասերով նախատեսված տուգանքների կամավոր չվճարման դեպում, այս օրենսգրքի 290-րդ հոդվածի առաջին մասով սահմանված ժամկետը լրանալուց ետո անձին հաշվեկցվում է տույժ 150 լարի քանակությամբ: Տույժը հաշվեկցվելուց 30 օր ժամկետում տուգանքը և տույժը չվճարելու դեպքում տրանսպորտային միջոցի վաճառքը իրականացվում է Վրաստանի օրենսդրությամբ սահմանված կարգով տուգանքի և տույժի վճարումն ապահովելու նպատակով:

7. Այս հոդվածով նախատեսված դեպքերում տիրապետողին չբացահայտելիս պատասխանատվության է ենթարկվում ավտոտրանսպորտի սեփականատերը:

8. Ավտոտրանսպորտային միջոցը հատուկ պաշտպանված կայանատեղի տեղափոխելու, դրա փոխադրման կամ կայանատեղում պահելու ծախսերը տուգանքի հետ համատեղ ներկայացվում են խախտողին, կամ այս հոդվածով նախատեսված դեպքերում ավտոտրանսպորտային միջոցի տիրոջը: Եթե ավտոտրանսպորտային միջոցը կտեղափոխվի հատուկ պաշտպանված կայանատեղի, այն իր տիրոջը կվերադարձվի տեղափոխման և

կայանատեղում պահելու ծախսերի վճարումը հաստատող փաստաթուղթ, տրանսպորտային միջոցի գրանցման վկայական և ինքնությունն հաստատող փաստաթղթերի հիման վրա:

Նշում՝

1. Այս հոդվածի 2-րդ մասի նպատակների համար իրավախախտումը ուղղված կհամարվի, եթե անձը նորից չի խախտի սույն հոդվածի առաջին մասով նախատեսված կայանման կազմակերպման կանոնները: Իրավախախտման անուղղելիությունից ելնելով՝ տուգանքը ներկայացնելուց հետո, նույն գործողությունը շարունակելը համարվում է անձի կողմից նոր իրավախախտման կատարում, որի պատճառով նրա նկատմամբ նորից է հարուցվում իրավախախտման գործ:

2. Այս հոդվածի 4-րդ և 5-րդ մասերով նախատեսված իրավախախտում կատարելիս ավտոտրանսպորտային միջոցը կտեղափոխվի հատուկ պաշտպանված կայանատեղի կամ էլ ավտոտրանսպորտային միջոցի անիվների մեկուսացում հատուկ միջոցներով, եթե դա սահմանված է տրանսպորտի կայանման կանոներով և կայանման նշանի հետ առկա է համապատասխան նշումը: Հատուկ պաշտպանված կայանատեղի տեղափոխելը թույլատրելի է, եթե ավտոտրանսպորտային միջոցը խոչընդոտում է ճանապարհային երթևեկությունը կամ վտանգ է ստեղծում ճանապարհային անվտանգությանը:

Հոդված 127. Հետիոտնի կամ ճանապարհային երթևեկության մյուս մասնակցի կողմից երթևեկության կանոնների խախտում, ինչպես նաև ավտոմիբիլային ճանապարհի երկայնքով անասուններ արածելու կանոնների խախտումը ***(23.06.2005 N 1753)***

1. Հետիոտնի, հեծանվորդի, բեռնակրի կամ ճանապարհից օգտվող այլ անձի կողմից ճանապարհային երթևեկությունը կարգվորող ազդանշանին չենթարկվելը, ճանապարհային նշանի կամ ճանապարհի երթևեկելի մասի գծանշումների պահանջների չիրագործելը առաջացնում է տուգանում 3 լարի քանակությամբ:

2. Պետական նշանակության ավտոմոբիլային ճանապարհի երկայնքով խոշոր եղջերավոր կամ այլ կճղակավոր անասունների արածելու կանոնների խախտումը կառաջացնի տուգանում 10 լարի քանակությամբ:

3. Այս հոդվածով նախատեսված իրավախախտումը, որին հաջորդել են տրանսպորտային միջոցի, բեռի, ճանապահի, ճանապարհային կամ այլ կառույցների, ինչպես նաև գույքի կամ մարդու մարմնի թեթև վնասվածքը կառաջացնի տուգանում 100 լարի քանակությամբ:

Հոդված 127[1]. Ավտոմոբիլային տրանսպորտով ուղևորների, բեռի փոխադրման, ավտոկայանի աշխատանքի, տրանսպորտային ճանապարհային քարտի արտադրման կամ կիրառման կանոնների խախտում

1. Վրաստանի օրենդրությամբ սահմանված ավտոմոբիլային տրանսպորտով ուղևորների և բեռի փոխադրման (բացառությամբ սույն օրենսգրքի 129[1] հոդվածով նախատեսված դեպքերի) կանոնների խախտումը կառաջացնի տուգանում 30 լարի քանակությամբ:

2. Վրաստանի միջազգային պայմանագրերով, համաձայնագրերով և կոնվենցիաներով սահմանված ավտոմոբիլային տրանսպորտով ուղևորների և բեռի փոխադրման (բացառությամբ սույն օրենսգրքի 129[1]հոդվածով նախատեսված դեպքերի) կանոնների խախտումը առաջացնում է տուգանքի նշանակում 500 լարի քանակությամբ:

3. Ավտոկայարանի աշխատանքի կանոնների խախտումը առաջացնում է տուգանքի նշանակում 300 լարի քանակությամբ:

4. Ավտոմոբիլային տրանսպորտով ճանապարհային քարտի արտադրման և կիրառման կանոնների խախտումն առաջացնում է տուգանում 100 լարի քանակությամբ:

Նշում՝

1. Ճանապարհային երթևեկության մասնակիցների անվտանգությունն ապահովող և ճանապարհային երթևեկության կանոնները հսկող ոստիկանի պահանջի դեպքում, վարորդը պարտավոր է ներկայացնել նրան տրանսպորտային ճանապարհային քարտ: Տրանսպորտային ճանապարհային քարտը չունենալու դեպքում կազմվում է վարչական իրավախախտումների արձանագրություն:

„2. Տուգանքի կամավոր իրագործման համար այս օրենսգրքի 290-րդ հոդվածի առաջին մասով սահմանված ժամկետը լրանալուց հետո այս հոդվածի առաջին մասով նախատեսված իրավախախտումների համար անձին հաշվեկցվում է տույժ 150 լարի քանակությամբ, իսկ 290-րդ հոդվածի 1^1 մասով նախատեսված ժամկետում տուգանքի և տույժի չվճարման դեպքում, տուգանքը կփոխվի տրանսպորտային միջոցը վարելու իրավազրկմամբ՝ 1 տարի ժամկետով:

3. Տուգանքի կամավոր իրագործման համար այս օրենսգրքի 290-րդ հոդվածի առաջին մասով սահմանված ժամկետը լրանալուց հետո այս հոդվածի 2-րդ և 3-րդ մասերով նախատեսված իրավախախտումների համար անձին հաշվեկցվում է տույժ 500 լարի քանակությամբ, իսկ 290-րդ հոդվածի 1^1 մասով նախատեսված ժամկետում տուգանքի և տույժի չվճարման դեպքում, տուգանքը կվերափոխվի տրանսպորտային միջոցը վարելու իրավազրկմամբ՝ 2 տարի ժամկետով:

4. Տուգանքի հարկադրաբար ի կատար ածելը կամ տուգանքի վերափոխումը տրանսպորտային միջոցը վարելու իրավազրկմամբ չի ազատում անձին տույժը վճարելուց:

Հոդված 129^1. Բեռնամբարձիչի սահմանված նորմայից ծանր բեռի փոխադրումը ավտոտրանսպորտային միջոցով (1.12.2009. N2214)

Ընդհանուր գործածման ավտոմոբիլային ճանապարհներով բոլոր տեսակի ավտոտրանսպորտային միջոցներով երթևեկությունը, որոնց յուրաքանչյուր առաջատար և ոչ առաջատար սռնու առավելագույն բեռնվածությունը գերազանցում է 10տ (բացառությամբ մի առաջատար սռնիով ավտոտրանսպորտային միջոցի, որի առաջատար սռնու առավելագույն բեռնվածութունը չպետք է գերազանցի 11,5տ) կամ/և ամբողջական զանգվածը 44 տ կամ/և փոխադրվող բեռի զանգվածը արտադրող կազմակերպության կողմից տվյալ ավտոտրանսպորտային միջոցի համար սահմանված բեռնամբարձիչի սահմանը, կառաջացնի ավտոտրանսպորտային միջոցի օպերատորի կամ/և ավտրոտրանսպորտային միջոցի տիրոջ տուգանում՝ յուրաքանչյուր ավել տոննայի համար 500 լարի քանակությամբ (ոչ լրիվ տոննայի համար տուգանքը հաշվվում է համամասնորեն):

Նշում՝

1. Այս հոդվածի գործողությունը չի տարածվում այն ավտոտրանսպորտային միջոցների վրա, որոնց բեռը չի ենթարկվում քանդելու կամ մասնատելու և որի երթևեկությունը թույլատրվում է Վրաստանի օրենդրության համապատասխան սահմանված երաշխավորագրի ներկայացման դեպքում:

2. Այս հոդվածի գործողությունը չի տարածվում Վրաստանի տարածք մուտք գործող, ծովային նավահանգստում տեղադրված, պորտալային անցումով տեղափոխված ավտոտրանսպորտային միջոցի վրա, որը հետագայում կտեղաշարժվի հարկային մարմնի կողմից սահմանված երթուղով, ծովային նավահանգստի տարածքին ամենամոտ, 10 կմ շառավղում գտնվող, դեպի Վրաստանի հարկային օրենսդրությամբ նախատեսված հսկիչ գոտի:

3. Այս հոդվածի գործողությունը չի տարածվում այս հոդվածով նախատեսված ավտոտրանսպորտային միջոցի վրա (բացառությամբ այն տրանսպորտային միջոցի, որի բեռի ամբողջ զանգվածը գերազանցում է արտադրող կազմակերպության կողմից տրված ավտոտրանսպորտային միջոցի համար սահմանված բեռնամբարձիչի սահմանը), որը

Վրաստանի տարածք մուտք գործելիս տեղաշարժվում է պորտալային անցումով, հարկային մարմնի տեղադրման վայրին ամենամոտ, 25 կմ շառավղով գտնվող դեպի երկաթգծի կայարան՝ դեպի Վրաստանի հարկային օրենսգրքով նախատեսված հսկիչ գոտի, հարկային մարմնի կողմից սահմանված երթուղով:

4. Եթե Վրաստանի տարածքում տեղաշարժվելիս (բացի պորտալային անցումով Վրաստանի տարածքից հեռանալը) ավտոտրանսպորտային միջոցի յուրաքանչյուր առաջատար և ոչ առաջատար սռնու առավելագույն բեռնվածությունը գերազանցում է 10տ (բացառությամբ մի առաջատար սռնիով ավտոտրանսպորտային միջոցի, որի առաջատար սռնու առավելագույն բեռնվածությունը չպետք է գերազանցի 11,5տ) կամ/և ամբողջական զանգվածը 44 տ կամ/և փոխադրվող բեռի զանգվածը արտադրող կազմակերպության կողմից տվյալ ավտոտրանսպորտային միջոցի համար սահմանված բեռնամբարձիչի սահմանը, ավտոտրանսպորտային միջոցի տերը (տիրապետողը) իր ծախսերով է ապահովում ավել բեռի բեռնաթափելը/քանդելը/մասնատելը (Վրաստանի ներքին գործերի նախարարության կամ/և ֆինանսների նախարարության համապատասխան ծառայության իրավասու պաշտոնատար անձի կողմից նշված պաշտպանված տեղում), և հետագայում տեղափոխում:

Հոդված 134. Ճանապարհի, երկաթուղային գծանցի կամ ճանապարհային կառույցների պահպանման կանոնների խախտումը:

Երթևեկության անվտանգության ապահովման համար ճանապարհի, երկաթուղային գծանցի կամ այլ ճանապարհային կառույցների պահպանման համար սահմանված կանոնների խախտումը կամ էլ միջոցներ չձեռնարկելը ճանապարհի առանձին հատվածներում ժամանակին երթևեկությունն արգելելու կամ սահմանափակելու համար, երբ այս ճանապարհով օգտվելը վտանգ է ստեղծում երթևեկությանը, ինչպես նաև ճանապարհի, երկաթուղային գծանցի, թե այլ ճանապարհային կառույցի կամ ճանապարհային երթևեկության կարգավորման տեխնիկական միջոցի վնասումը կամ ճանապարհի ծածկույթի աղտոտումը, ճանապարհի երթեկելի մասով, մայթով կամ կողնակով շինարարական կամ այլ նյութեր թափելը, փողոցային առևտրի իրականացումը, առկա պակասությունների վերացման մասին ճանապարհային ոստկանության կողմից տրված գրավոր նախազգուշացման չիրագործումը՝ առաջացնում է հիմնարկ-ձեռնարկությունների, հաստատությունների, կազմակերպությունների, թե այլ պատասխանատու պաշտոնատար անձի կամ այլ ֆիզիկական անձի տուգանում քսանհինգից մինչև երեսուն լարի քանակությամբ:

Ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային ճանապարհի հետ այլ նշանակություն ունեցող ճանապարհի ինքնակամ միացումը, ճանապարհի առանցքից 100 մետրից մոտիկ կամ փողոցի մերձակա տարածքում որևէ օբյեկտի չթույլատրված կառուցում կամ շինարարության համար սահմանված համաձայնության պայմանների խախտում, պլակատների, տրանսպարատների, աֆիշների, գովազդային ցուցանակների, ոչ ստանդարտային ճանապարհային նշանների առանց իրավունքի տեղադրումը, ճանապարհը ինքնակամ փորելը կամ շինարարության սկսման համար սահմանված համաձայնության պայմանների չիրագործումը, կամ էլ առանց համապատասխան թույլտվության ճանապարհատրանսպորտային պատահարի արդյունքում վնասված տրասնպորտային միջոցը վերանորոգման ընդունելը առաջացնում է հիմնարկ-ձեռնարկությունների, հաստատությունների, կազմակերպությունների ղեկավարի, թե այլ պատասխանատու պաշտոնատար անձի կամ այլ ֆիզիկական անձի տուգանում քսանհինգից մինչև երեսուն լարի քանակությամբ:

Այս հոդվածի առաջին կամ երկրորդ մասերով նախատեսված ճանապարհային երթևեկության կանոնների խախտումը, որին հաջորդել են տրանսպորտային միջոցի, բեռի, ճանապարհի, ճանապարհային, թե այլ կառույցների, ինչպես նաև գույքի վնասում առաջացնում

են տուգանքի նշանակում հարյուր քառասունից մինչև հարյուր հիսուն լարի քանակությամբ:

Կիրառված գրականություն՝

- Վրաստանի օրենքը ճանապարհային երթևեկության անվտանգության մասին: